Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9(47 925)
Ч-42

550
30 AUG 2006
357

ՀԵՐՏ ՏԱՐԻՆ ՀԻՖՓՍԻՄԷ ՊՕՂՈՍԵԱՆ ԲԵՌԼԵԲԵԱՆՑԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՂՈՒՄՆԵՐ

(Արտատպած «Հովիւ» տարարարերից)

Պրակ հինգերորդ

Յովհաննէս Ը. Կաթողիկոս

Մասն I

Կազմեց Եղիշէ ա. ք. Գեղամեանց

ԳԻՆՆ Է 70 ԿՊ.

Историческія выписки. перепеч. изъ журнала „Овивъ". Католикосъ Оганесъ VIII. ч. I. Сост. прот. Е. Гегамянцъ.

ԲԱԿՈՒ
Тип. Н. А. Эриванцова, Баку.
Տպարան Ն. Երիանցեանի
1911

18.03.2013

6896

1677

9(47.925) Ց-42

14.92.43	9/1	87	

05 SEP 2011

9(47.925)
Գ-42
ա.

ՄԻԴ

Իր տեղում մենք տեսանք, ընթերցող, որ Ներսէս արքեպիսկոպոսը Բեսարաբիա ուղևորուելիս՝ Յարութիւն քահանայ Ալամդարեանին վարդապետ ձեռնադրելով Վրաստանի ընդարձակ թեմը,—ողջ Կովկասն ու Անդրկովկասը՝ Քութայիսից մինչև Բագու,—նրան յանձնեց կառավարելու։

Թէպէտ և այդ միջոցին թեմում միքանի եպիսկոպոսներ կային, բայց իսկապէս Ալամդարեանն էր կառավարիչը, իսկ եպիսկոպոսները նրա ներկայացուցիչները այլևայլ գաւառներում։

Իսկ Ալամդարեան նորընծայ վարդապետն էլ գործում, կառավարում էր Ներսէսի անունով, իբրև նրա ներկայացուցիչ։

Աստարէզից հեռացնելով Ներսէսին՝ Պասկեվիչը հարկաւ, պիտի հեռացներ և Ալամդարեանին։

Սակայն կամենալով իր այդ մտադրութեանը վայելուչ ձև տալ և Ալամդարեանի հեռացումը գլուխ բերել նոյնիսկ նրա անմիջական հոգևոր իշխանութեան միջոցաւ, Պասկեվիչը 1828 թուականի հոկտեմբերի 25-ին ծածկաբար հետևեալ նամակը գրեց Եփրեմ կաթողիկոսին.

«Ներսէս արքեպիսկոպոսը Վրաստանից գընալու ժամանակ՝ այստեղի հոգևոր գործերի վարչութիւնը յանձնել է Յարութիւն վարդապետին, որ մի երիտասարդ մարդ է և ձեռնադրուած է նոյնիսկ նրա գնալու ժամանակ։ Ես չեմ հասկանում թէ ինչու՞ Ներսէս արքեպիսկոպոսը իր հօտի կառավարութիւնը յանձնել է հայր Յարութիւնին և ոչ թէ ում և իցէ աւագագոյն եպիսկոպոսներից, որոնք աւելի յայտնի են ժողովրդի մէջ իրենց գործերով ու ջերմեռանդութեամբ։ Խոնարհաբար խնդրում եմ ձերդ վեհափառութիւնից հաղորդել ինձ՝ արդեօք դուք տուած էք ձեր բարեհաճութիւնը Ներսէս արքեպիսկոպոսի այդպիսի կարգադրութեան մասին, և կամ Հայոց եկեղեցական օրէնքներով թոյլ տրւում է միթէ, որ վիճակը կառավարէ մի վարդապետ, երբ նոյն թեմում գտնվում են եպիսկոպոսներ, որոնք իրանց աստիճանին վայել արժանաւորութիւններ ունեն»։

Եփրեմը հասկացաւ Պասկեվիչի միտքը, ուստի փութաց ի պաշտպանութիւն Ներսիսի, հետևեալ պատասխանը գրելով նրան նոյեմբերի 16-ին։

Մին

«Ամսոյս 5-ին ուրախութեամբ ընդունեցի ձեր պայծառափայլութեան հոկտ. 25-ին գրուած ծածկաբար նամակը։ Նրա մէջ ասուած է, որ իբր թէ Ներսէս արքեպիսկոպոսը, Վրաստանից

գնալու ժամանակ, Թիֆլիզի հոգևոր գործերի վարչութիւնը յանձնել է Յարութիւն երիտասարդ վարդապետին, վասն որոյ ցանկանում էք տեղեկանալ ինձանից թէ ըստ Հայոց եկեղեցական օրինաց կարելի՞ բան է, որ աւագագոյն եպիսկոպոսներ եղած տեղը՝ հօտը յանձնուի կրտսերին, և թէ՝ Ներսէս արքեպիսկոպոսի այդպիսի կարգադրութիւնը արդեօք յայտնի՞ է ինձ թէ ոչ»։

«Ողորմած տէր. եկեղեցական օրէնքները բոլորն էլ միևնոյն են ամեն քրիստոնէից մէջ։ Երեսուն տարեկան հասակին հասած արժանաւոր հոգևորականին համարձակ կարելի է յանձնել հօտի հովութիւնը։ Թեմական Ներսէս արքեպիսկոպոսը՝ լինելով գլխաւոր կառավարիչ Հայոց հոգևորականութեան, միշտ և անխոնջ կերպով աշխատած է բարեկարգ վարչութիւն կազմելու և դրանով օրինակելի է դարձել հայոց միւս բոլոր եպիսկոպոսների համար։ Այս պատճառով նրա իրաւասութեան տակ եղած Շամախին՝ յանձնուած է Մինաս եպիսկոպոսին. Շամշադինը՝ Գրիգոր եպիսկոպոսին և Փամբակը՝ Առաքել եպիսկոպոսին։ Ներսէս արքեպիսկոպոսը իր խելքի հասունութեամբ և անկողմնակալութեամբ՝ միթէ կարող էր այնքան անարդար վարուել, որ Թիֆլիզի գլխաւոր վիճակը յանձնէր միմիայն մի երիտասարդ վարդապետի։ Ընդհակառակը՝ գործի ճշմարիտ իրողութիւնը այս է, Սիմէոն արքեպիսկոպոսը, որ միքանի տարուց ի վեր Թիֆլիզումն է գտնվում և Ներսէս արքեպիսկոպոսի

վարչութեանը մասնակից եղած է,—մեր ընդհանուր համաձայնութեամբ՝ նշանակուած է նախանդամ Թիֆլիզի Հայոց հոգևոր գործերի և եկեղեցական վարչութեան։ Սիմէօն արքեպիսկոպոսի իշխանութեան ներքոյ է գտնվում վերոյիշեալ Յարութիւն վարդապետը։

Եւ որովհետև նա ուսած է Մոսկուայի Լազարեան Ճեմարանում և տեղեակ է զանազան լեզուների, վասն որոյ, ըստ մեր հաճութեան, յանձնուած է նրան Թիֆլիզի Հայոց ուսումնարանի վերատեսչութեան պաշտօնը և, միևնոյն ժամանակ, նշանակուած է նա անդամակից Սիմէօն արքեպիսկոպոսի։ Սրանք երկուսը միասին, ամսէ ամիս, ներկայացնում են իրենց զեկուցագիրը Էջմիածնի սրբազան Սինոդին»։

«Ահա, մեր բարեհաճութեամբ, այսպէս խոհեմ կերպով կարգադրեց Ներսէս արքեպիսկոպոսը իրան յանձնուած վիճակը»։

„Ոնարհաբար խնդրում էի ձեզ, ողորմած տէր, մտերմական անկեղծայութեամբ չինայել ձերդ պայծառափայլութեան բարեհաճութիւնը առ վերոյիշեալ Ներսէս արքեպիսկոպոսն և անպակաս անել ձեր խնամքը Հայաստանից և նրա բոլոր բնակիչներից, ընդհանուր Հայոց հայրապետական ծայրագոյն աթոռից, սրա աղօթարար միաբանութիւնից և ընդհանուին ինձ ծերունոյս“։

ՄԻՋ

Ըստ հայկական առածին՝ ընկած եղան վրայ

դանակ բարձրացնողներ շատ են ճարվում։ Այն օրից՝ երբ Ներսէսը Էջմիածնից և Վրաստանից հեռացաւ և երբ յայտնի եղաւ, որ նրա տապալողը Պասկեվիչի նման մի նշանաւոր և հզօր անձն է,—այն օրուանից սկսեալ Աշտարակեցու հակառակորդները իրանց գլուխը բարձրացրին։

Ներսիսի հակառակորդների մէջ՝ այն ժամանակ ամենից աւելի յայտնին էր կաթոլիկութիւնից հայ եկեղեցու գիրկը դարձած Սերոբէ վարդապետը—Պասկեվիչի սիրելին, նրա—եթէ կարելի է այսպէս ասել,—առանձին յանձնարարութիւնների պաշտօնեան։

Սերոբէն միշտ Պասկեվիչի հետն էր լինում պատերազմի դաշտերում, «հայերի մէջ,—ինչպէս կոմսը ինքն էր գրում Պետերբուրգ,—յօգուտ տերութեան թեղադրութիւններ անելու»։

Ինչպէս իր տեղում յիշել ենք, Սերոբէն էր պատրաստել այն սուտակասպաս, միտումաւոր տեղեկագիրը Ներսիսին վերջնականապէս տապալելու համար։

Ահա թէ ինչից առաջացաւ այդ կեղծիքը։

Երբ Եփրեմ կաթողիկոսը համոզուեցաւ, որ Ներսիսին հեռացնողը Պասկեվիչն է, նրանից, նոյնպէս և միաբանութիւնից ծածուկ, մի նամակ գրեց ուղղակի թագաւոր կայսեր։ Նամակը շատ ընդարձակ է և սկսվում է Սաղմոսերգուի հետևեալ տողերով՝ „Դու յարուցեալ զթասցես ի վրայ Սիովնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ„։

Նկարագրելով հայ ազգի կրած նեղութիւն-ներն „ընդ երկաթի լծովք Պարսից, Տաճկաց և Հազարացւոց՝ հետևողաց սատանուն մարգարէին Մահմէդի, — Եփրեմը իր սրտի հրճուանքն է յայտնում, որ „ի վերջին աւուրս վշտալի կենաց իմոց արժանի եղէ տեսանել սքանչելահրաշ փրկութիւն ամենասիրելոյս Հայաստանի»։ Ուստի և, աղերսում է Եփրեմը կայսեր ասելով „ընկալ, ինքնակալ թագաւոր, զնախագահ աթոռն Էջմիածին զսրբազնասուրբ Սիւնոդոսն Հայոց և զամենայն եկեղեցիս՝ որք ընդ նոքօք և զմիլիոնաւոր ազգս Հայոց ի քո հովանի հեզահամբոյր. պաշտպանեա նոցա, եւ պատսպարեա յամենայն զրպարտութեանց, որք ցայսօր ժամանակի վըշտացնեն զնոսա բարեհաճեաց ընդունել ի գութ Ամենազորիս Տէրութեան քոյ և զգերարժան յաջորդն իմ զբարձրապատիւ սրբազան Ներսէս արքեպիսկոպոսն։ Յօրէ յանձն առնելոյն իմ զայս աստիճան իմ, այս մեծանուն հովիւ եկեղեցւոյ, անդադար վաստակի անօրինակ ջերմեռանդութեամբ յօգուտ Աթոռոյս, սրբազնասուրբ Սիւնոդոսին և համօրէն ազգիս։ Մանաւանդ ի ժամանակս եօթնամեայ տարագրութեան իմոյ և հալածանացն ի պարսից՝ դա (Ներսէսն) միայն ընկալաւ զիս, ոփոփեաց և սրբեաց զարտօսր իմ և զարամագին աւուրս ծերութեան իմոյ պեսպիսացոյց կատարեալ որդիական մտերմութեամբ։ Քահանայապետիդ այդմիկ յանձն է ինչն ինել պատկեր իմ, սրբազնասուրբ Արարա-

տեան Սիւնոդոսի և բովանդակ ազգիս Հայոց առ պատուանդանաւ Աստուածապատիւ Աստուածապարգև Աթոռոյ Քոյ. հայեաց, Աստուածընտիր թագաւոր, ի պաղատանս նորա աչօք ողորմութեան Քոյ և բարեհաճեաց ուրախամիտ դարձուցանել զնա, զի նախքան զվախճան կենաց յանձն սուրարից ի դա ցիովին զղեակ Պատրիարքական կառավարութեան»։

«Առ ցաւագին ծերութեանս. — շարունակում է Եփրեմը իր աղերսանքը — և զգայարանացս տկարութեան, որ զայրացեալն է այժմ և զայրանայ որ քան զօր, ցանկամ վաղագոյն զտանել զնա ասս, զի փոխանորդեալ զտեղի իմ, շարունակեսցէ ըստ Աստուածաձիր կարողութեանն բարեգոյն օրինակաւ զկառավարութիւն տանս այսորիկ, հանդերձ հաւատարիմ հպատակութեամբ, արժանաւոր ծառայութեամբ առ թագաւորութիւն Ձեր»։

Այս նամակը Եփրեմը գրեց հոկտեմբերի 18-ին՝ ըստ իմ ենթադրութեան՝ Ներսիսի թելադրութեամբ և թերևս նրա շարադրութեամբ, ինչպէս ասացինք, Պասկեվիչից և միաբանութիւնից ծածուկ։

Բայց Ներսիսի հետաքրքիր հակառակորդները լսեցին, որ կաթողիկոսը մի ինչ որ թուղթ է գրել Կայսեր յօգուտ Ներսիսին։ Բայց թէ ինչ էր նրա բովանդակութիւնը՝ հակառակորդները չկարողացան ստուգել։

Մի է

Հէնց այդ օրերումն էր ահա, որ Բայազէթից Էջմիածին վերադարձաւ Սերոբէ վարդապետը և կաթողիկոսի գրութեան մասին լսելով՝ ժողովեց Ներսիսի հակառակորդ չորս վարդապետներին, որք էին Զաքարիա, Աբրահամ, Ղուկաս և Յովհաննէս (Շահխաթունեան, որ յայտնի է մեր գրականութիւնում) և թելադրեց նրանց երեք կեղծ գրութիւններ ուղղել Պասկեվիչին,— մինը Եփրեմ կաթողիկոսի անունից, միւսը՝ Սիւնոդոսի և երրորդը Էջմիածնի միաբանութեան անունից։

Այդ գրութիւնների սորագրողները շնորհաւորելով Պասկեվիչին՝ իր արած յաղթութիւնների համար՝ նրանից պաշտպանութիւն էին խնդրում իրանց դէմ եղած հալածանքների համար։

Թէ այդ ինչ հալածանքներ էին և ում կողմից, որ իբր թէ գործ էր դրուում կաթողիկոսի, Սիւնոդոսի և միաբանութեան վրայ, — կեղծարարները չէին պարզ ասում՝ չգիտնալով Եփրեմի կայսեր գրած վերոյիշեալ նամակի բովանդակութիւնը։ Բայց շատ պարզ էր, որ նրանց ակնարկութիւնը յատկապէս Ներսիսին էր վերաբերում։

Այս կեղծիքը գլուխ բերելուց յետոյ՝ Սերոբէն մեկնեցաւ Թիֆլիզ Բայազէթում յօդուտ տերութեան կատարած գործերի մասին զեկուցում տալու։

Զեկուցման վերջին մասը կազմում էր և Ներսիսի մասին մի նոր ամբաստանութիւն,— նրա կարծեցեալ հալածանքը ընդդէմ կաթողիկոսի, Սիւնոդոսի և միաբանութեան, որոնք իբրև թէ այդ առթիւ շատ վշտացած են Ներսիսից և իրանց յոյսը դրել են Պասկեվիչի պաշտպանութեան վրայ։

Ի հաստատութիւն Սերոբէի այս խօսքերին՝ Պասկեվիչը միքանի օրից յետոյ ստացաւ վերոյիշեալ երեք կեղծ գրութիւնները և փութաց անմիջապէս առանձին-առանձին շնորհակալութեան պատասխաններ գրել, որոց մէջ նամակագիրներին խոստանում էր „պաշտպանել ամենաչնչին ճնշումներից անգամ“։ Պատասխանները Պասկեվիչը ուղարկեց Եփրեմին՝ ըստ պատկանելոյն յանձնելու։

Մեծ եղաւ անկողնում պառկած հիւանդոտ և զառամեալ Կաթողիկոսի զարմանքը ստանալով Պասկեվիչի շնորհակալութեան պատասխանները, որովհետև ոչ ինքն էր նրան շնորհաւորութիւն գրել և պաշտպանութիւն խնդրել, ոչ Սիւնոդոսը և ոչ էլ միաբանութիւնը։

Անմիջապէս կաթողիկոսը իր մօտ հրաւիրելով Սինոդականներին և միաբաններին, Պասկեվիչից ստացած թղթերը կարդալ տուեց։

Ամենքն էլ անխտիր յայտնեցին, որ իրանք ոչ մի տեղեկութիւն չունեն և Պասկեվիչին ուղ-

ղած գրութիւնների հեղինակն իրանցից ոչ ոք չէ։

Սիւնոդոսը կանոնաւոր և գրաւոր քննութեան ձեռնարկեց իսկոյն։

Այդ ժամանակ տեղ վերայիշեալ չորս սնապլուխները յայտնեցին, որ յիշեալ կեղծիքը իրանք են կատարել՝ Սերոբէ վարդապետի թելադրութեամբ։

Չկամենալով գործին ծանրացումը՝ Եփրեմը ժամանակաւոր ապաշխարութեան ենթարկեց կեղծարար վարդապետներին։ Միևնոյն ժամանակ պարզ ի պարզոյ ամեն ինչ գրեց պասկեվիչին՝ Սերոբէի մասնակցութեան նկատմամբ՝ հետևեալ դիպլոմատիական բառերը գործածելով... „այդ գրերը կազմել են Սերոբէ վարդապետի խորհրդով, երբ նա այստեղ էր գտնւում։ Մեզ յայտնի չէ թէ՝ որ աստիճանի իրաւացի են այս խորհրդարարների (յիշեալ 4 վարդապետների) ամբաստանութիւնը Սերոբէ վարդապետի վերաբերութեամբ, որին ցայսօր մենք ճանաչած ենք հարազատ վանքիս և միշտ ի մատաղութեան ենք ունեցած“։

Սերոբէի մասին կաթողիկոսի այս բանեցրած լեզուն իսկոյն հասկանալի կը լինի, երբ ի նկատի առնենք, որ Եփրեմը գիտէր որ Սերոբէն Պասկեվիչի սիրելին է, որ նա նրա աջ բազուկն է Ներսիսի և առհասարակ հայ գործերի նկատմամբ։—Ուստի և խոհեմութիւն համարեց բացարձակ դատ ու դատաստան չպահանջել Պասկեվիչից։

Վերջինս էլ Եփրեմի այդ խոհեմութիւնը տեսնելով գործը լռութեան տուեց և ոչ կեղծ թղթերը Էջմիածին ուղարկեց, որ մանրամասնութիւնները ստուգուին, ոչ էլ կեղծարարներին դատի յանձնեց։—Ձեռնտու չէր երևի։

ՄԻԸ

Պասկեվիչը ոչ միայն չկամեցաւ կեղծարարներին դատի ու պատժի ենթարկել, այլ նա նրանց կեղծ գրութիւնները իր ձեռին՝ իբրև հայոց կաթողիկոսի, սինոդի և միաբանութեան զգացմունքների արտայայտիչ դոկումենտներ՝ իր մօտ պահելով, իսկ այդ կեղծ գրութիւնների թելադրիչ Սերոբէ վարդապետի բանաւորապէս հաղորդած ստութիւնները՝ իբրև ճշմարտութիւն համարելով վերկացաւ և նոյեմբերի 16-ին, № 82 մի ընդարձակ ամբաստանագիր գրեց Ներսիսի դէմ՝ օտարազգի դաւանանքների գործերի կառավարիչ Բլուդովին։

Մենք աւելորդ ենք համարում այդ ամբաստանագիրը ամբողջապէս մէջ բերել այստեղ*)։

Այսքանս միայն կասենք, որ նրա առաջին մասը բաղկացած է Ներսիսի վրայ բարդուած այն մեղադրանքներից, որոնց արժէք ունենալը իր տեղում ընթերցողն արդէն տեսաւ և որոնց մասին Պասկեվիչը մի անգամ էլ Դիբիչին էր գրած։

*) Տես. Ցանկացողը կարող է տեսնել Акты Кавк. Арх. Ком. том. VII եր. 258—262. № 214.

Գալով յիշեալ ամբաստանագրի երկրորդ մասին.—ահա նա։

«Բեսարաբիա գնալու միջոցին, — գրում է Պասկեվիչը,—Ներսէսը իր բոլոր իշխանութիւնը տուեց Յովսէփ վարդապետին, որին յանձնեց թէ գործերի վարչութիւնը և թէ Էջմիածնի գանձը. իսկ Վրաստանի ընդարձակ թեմի ընդարձակ ղեկավարութիւնը՝ յանձնեց Ալամդարեան աւագ քահանային, որին ձեռնադրեց վարդապետ, չնայելով որ Հայոց հոգևորականութեան մէջ կային և կան ժողովրդից աւելի յարգուած անձինք, որոնք աւագ են ըստ աստիճանի և որոնց աւելի հարկ էր տալ այդպիսի պաշտօն. իսկ Ալամդարեանից Թիֆլիզի բնակիչների մեծ մասը անբաւական է նրա վարք ու բարքի պատճառաւ, որ միանգամայն անհամապատասխան է իր կրած աստիճանին։

Ներսէս արքեպիսկոպոսի Բեսարաբիա գընալիս արած այդ կարգադրութիւնները, որ Եփրեմ կաթողիկոսի չափազանց թուլութիւնից են առաջացած, ի յայտնի խանգարումն սինոդի և Էջմիածնի միաբանութեան իրաւունքների, ընդհանուր զայրոյթ են պատճառել վանքի մէջ։ Ինձ հասած տեղեկութիւններից իմանում եմ, որ սինոդի անդամներից շատերը կամեցել են հրաժարուել իրանց պաշտօնից և հեռանալ վանքից։ Ամենայարգելի եպիսկոպոսներից վարդապետներից ոմանք մինչև անգամ պատրաստ են եղել յայտնի կերպով ապստամբիլ Ներսիսի դէմ և

պահանջիլ որ Սինոդի անդամների նոր ընտրութիւն լինի. իսկ Յովսէփ վարդապետը և Ալամդարեանը ընկնեն պաշտօններից։ Բայց դրանց դիտաւորութեան առաջն առել է Սերոբէ վարդապետը, որ պարսից պատերազմի բոլոր ժամանակ ինձ հետ էր և որին ես ուղարկել էի Բայազէթ այնտեղի հայերի մէջ յօգուտ տէրութեան թելադրութիւններ անելու, իսկ վերադառնալիս նոյն միջոցին Էջմիածին էր հանդիպած։ Այս վարդապետի խելացի խորհուրդները խաղաղացրել են Էջմիածնի հոգևորականութեանը, որ և մնում է սպասելով բարձրագոյն կառավարութեան անելիք կարգադրութիւնը»։

ՄԻԹ

«Այսպէս ահա,—շարունակում է Պասկեվիչը,—նկարագրելով Հայոց հոգևոր գլխաւոր կառավարութեան մէջ վերջին ժամանակներում տեղի ունեցած բոլոր անցքերի կապը, ես պարտք եմ համարում հակիրճ ձևով ներկայացնել Հայոց եկեղեցու ներկայ դրութիւնը։

«Եփրեմ պատրիարքը (կաթողիկոսը), ինչպէս արդէն վերևում յիշուած է,—թոյլ է բնութեամբ և տարիքով զառամեալ, ինքը անկարող լինելով պարապելու ծայրագոյն վարչութեամբ, յանձնել էր այդ Ներսէս արքեպիսկոպոսին դեռ ես այն ժամանակ, երբ գալով մեր սահմանը՝ ընդունուել էր որպէս մի հասարակ հոգևորական

անձն։ այնուհետև նա չունէր այնքան հաստատ կամք, որ զրկէր Ներսէսին ակամայից տուած իշխանութիւնից։

„Պատրիարքի (կաթողիկոսի) հանգամանքներից ստիպուած այդպիսի հաճութեամբը՝ Ներսէսը միքանի տարի անհաշիւ կառավարում էր Հայոց եկեղեցին, իսկ Վրաստանից գնացած ժամանակ՝ չուզեցաւ անիրաւացի կերպով իրան սեպհականացրած իշխանութիւնը վերադարձնել ոչ պատրիարքին և ոչ սինոդին, այլ յանձնեց այն Յովսէփ վարդապետին և Ալամդարեան աւագ քահանային, սրան վարդապետ ձեռնադրելով. իսկ սրանց բոլոր արժանաւորութիւնները այն է, որ անպայման կերպով անձնատուր են Ներսէսին, բայց չունին յարգանք ոչ ժողովրդից, ոչ էլ իրանց կարգակիցներից։ Դիւրին է հասկանալ, որ Ներսէսը յանձնելով բոլորովին իրան անձնատուր եղած այս անձանց ծայրագոյն վարչութեան ղեկավարութիւնը՝ միտք ունէր իր բացակայութեան ժամանակն էլ՝ վարել Հայոց եկեղեցու ծայրագոյն իշխանութիւնը թերևս այն մտքով, որ անյայտ մնան իր առաջուայ արած կարգադրութիւնները ըստ հոգևոր մասին և թոյլ չտալ, որ նրա գործերն ու հաշիւները քննուին։

„Ծայրագոյն Սինոդը և Էջմիածնի միաբանութիւնը զրկուած լինելով իրաւունքից և իրանց տրուած իշխանութիւնից, մի կերպ տարակուսութեան մէջ են, թէ ինչպէս գործեն, որովհետև Ներսէս արքեպիսկոպոսի կուսակիցների ձեռքով միաբանների մէջ տարածուող խառնակչութիւնները հետզհետէ աճում են և այդպիսով հոգևորականութիւնը քայքայւում է։ Եկեղեցական ստորին պաշտօնեաները առհասարակ ընկղմած են խոր տգիտութեան մէջ և նրանց թիւը այնքան բազմացել է, որ ժողովրդին ծանրաբեռնում է. Հայոց ազգը այդ անկարգութիւնները տեսնելով՝ կորցնում է իր յարգանքը դէպի հոգևորականութիւնը և առհասարակ նկատւում է մի առանձին անբաւականութիւն Հայոց եկեղեցու մէջ տիրած այժմեան անկարգութիւնների և խառնակութիւնների պատճառով։ — Ձերդ գերազանցութիւնը դիւրաւ կը հասկանաք, որ Հայոց հոգևոր վարչութեան գործերը այսպիսի դրութեան մէջ մնալ այլևս անկարող են, և թէ հարկ է կտրուկ միջոցներով առաջն առնել այս մասին տեղի ունեցող ապագայ չարիքների, որոնց հետևանքները անհաճելի պիտի լինին»։

Այդ միջոցները, ըստ իմ կարծեաց, առ այժմ պիտի լինին հետևեալները։

ՄԼ

«Առաջին՝—շարունակում է Պասկեվիչը,— Ներսէս արքեպիսկոպոսին, որի անսահման փառասիրութիւնն է Հայոց եկեղեցու այժմեան խանգարման սկզբնապատճառը, պէտք է Բե-

սարաբիայում պահել և ամեն կերպ աշխատել արգելել նրա վերադարձն ի Վրաստան, ուր նա դարձեալ կսկսէ իր խորամանկութիւնները, նա մանաւանդ որ, ինչպէս նրա արարքներից երևում է, նրա գլխաւոր նպատակն է՝ սրբազնագոյն Եփրեմի վախճանից յետոյ՝ դառնալ ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք։

«Երկրորդ՝ համոզել Եփրեմ պատրիարքին, որ նա վեր ի վերոյ և սինոդի օգնութեամբ դեկավարէ Հայոց հոգևոր գործերի գլխաւոր վարչութիւնը։

„Երրորդ՝ վերականգնել և հաստատել Սինոդի իրաւունքներն։ու սահմանել կանոներ, որոց հիման վրայ պիտի վճռուին Հայոց եկեղեցու նշանաւոր գործերը։

„Չորրորդ՝ Յովսէփ վարդապետին բոլորովին հռռացնել եկեղեցական ծայրագոյն վարչութիւնից, նմանապէս և Էջմիածնի վանքի գանձարանից ու գործերից. հեռացնել նմանապէս և Ալամդարեան վերդապետին Վրաստանի թեմի կառավարութիւնից, իսկ այս վիճակի կառավարութիւնը յանձնել մի աւելի յարգելի, թէ ըստ աւագութեան և թէ ըստ յատկութիւնների, եպիսկոպոսի, որին կընարէ Սինոդը և կը հաստատէ ծայրագոյն պատրիարքը։

«Հինգերրորդ՝ թոյլ տալ Սինոդին քննել Ներսէս արքեպիսկոպոսի հաշիւները՝ թէ նրա կաթողիկոսական պաշտօն վարած ժամանակի և թէ Վրաստանի վիճակաւորութեան. իսկ ապա-

գայի վերաբերութեամբ սահմանել մի ընդհանուր կանոնադրութիւն եկեղեցական գումարների օրինաւոր գործածութեան և հաշուապահութեան մասին։

„Վեցերրորդ՝ Հայոց հոգևորականութեանը լաւագոյն կրթութիւն տալու համար հաստատել դպրոցներ և ուսուցիչներ, չափաւորել վիճակների և քահանաների թիւը, միջոց տալ եկեղեցական պաշտօնեաներին առհասարակ՝ առանց չքաւորութեան ապրելու, որպէսզի նրանք չընծանրանան ժողովրդի վրայ և չստորացնեն իրանց հոգևոր աստիճանը անվայել ժողովարարութեամբ։

„Եօթերորդ՝ այժմ իսկ ձեռնամուխ լինել Հայոց եկեղեցու գլխաւոր վարչութեան համար ընդհանուր և դրական սահմանադրութիւն կազմելու, որի մէջ ճշտութեամբ պիտի որոշուած լինի թէ ինչ բանի մէջ պիտի կայանան պատրիարքի, սինոդի և վիճակաւոր եպիսկոպոսների իրաւունքները ու սահման դրուած լինին ամենքի իշխանութեանը։ Ըստ իս՝ ամենեին չը-պէտք է այլ ևս ժամանակ կորցնենք այս մասին մի ընդհանուր կանոնադրութիւն կազմելու համար։

„Այժմեան Եփրեմ պատրիարքը թէ իր բընութեամբ և թէ իր անձնուիրութեամբը Ռուսիային՝ ընդիմադրութիւն չի ցոյց տալ այս մասին մտցնելիք բարեկարգութիւնների և հարկ եղած կարգ ու կանոնների։ Բայց նրա խորին

ծերութեան պատճառով՝ երևի թէ շուտով նրա տեղը կընշանակուի մի ուրիշը, որ շատ կարելի է մի յամառ և ըմբոստ անձնաւորութիւն լինի։ Այն ժամանակ տէրութեան համար դըժուար կը լինի հաշտեցնել ընդհանուրի օգտի և Հայոց հոգևոր վարչութեան բարեկարգման մասին ունեցած իր դիտաւորութիւնները այդպիսի մի քահանայապետի մասնաւոր ձգտումների հետ, որովհետև այդպիսի քահանայապետը կը սկսի հոգ տանել միմիայն իր սեպհական օգուտների համար և կըձգտի պաշտպանել իր իշխանութիւնը օտարի ամեն կերպ ազդեցութիւններից։

„Նմանապէս չպէտք է մոռանալ, որ Էջմիածնի մէջ բնակուող ընդհանուր Հայոց պատրիարքը, ըստ հնագոյն սովորութիւնների և աւանդութիւնների, Հայոց հոգևորականութեան պետն է և հոգևոր հովիւը ամենայն հայերի, որոնք սփռուած են ընդհանուր աշխարհում և որոնք նրան համարում են մի կերպ պետ կամ գլուխ ազգի նաև աշխարհական գործերում։ Եթէ այդ պաշտօնը ըստանձնէ մի ընդունակ և ձեռներէց անձն, որ հակամէտ լինի խորամանկութեան և ըմբոստութեան, այն ժամանակ, երբ տէրութիւնը ձեռնամուխ լինի Հայոց հոգևոր գործերի վարչութիւնը լաւացնելու, նա կարող է դիմել Տաճկաստանի և Պարսկաստանի հայերին և նրանց միջոցով դիմադրել այստեղի քաղաքական իշխանութեան բարի դիտաւորութիւններին։

„Իմ բոլոր դիտաւորեալ ենթադրութիւննե-

ը խոնարհաբար խնդրում եմ ձեզ հաղցնել ի բարձրագոյն տեղեկութիւն թագաւոր կայսեր և յարգել ինձ հաղորդելով թէ՝ այս մասին Ն. Կ. Մեծութեան կողմից ինչ վճիռ կը կայանայ։ Մեծապէս կը պարտաւորացնէք ինձ՝ եթէ ընդ սըմին հրամայէք ուղարկել ինձ տեղեկութիւն թէ որպիսի կարգ է սահմանուած Ռուսաստանի նահանգներում եղած Հայոց թեմերի վարչութեան մասին. նմանապէս եթէ կարելի է, ուղարկէք մի նախագիծ Հայոց հոգևոր վարչութիւն կազմելու համար, որ ըստ իմ կարծեաց, ամենից դիւրին է քաղել ձեզ յանձնուած նախարարութեան մէջ գտնուող տեղեկութիւններից և գործերից։

ՄԼԱ.

Թերևս ընթերցողը գլխի ընկաւ, որ Պասկեվիչը իր այս գրութիւնը ուղղելով և Հայոց եկեղեցու համար ընդհանուր կանոնադրութիւն կազմելու հարցը բարձրացնելով և նրա փութանակի իրագործումը պահանջելով գլխաւոր նըպատակ ունէր միանգամայն ջլատել, անհետացնել Ներսէս Աշտարակեցու մօտաւոր և հեռաւոր ազդեցութիւնը Հայոց եկեղեցու վրայից։ Կոմսի այդ ցանկութիւնը կարմիր թելի նման երևում է նրա ամեն մի տողից։

Իսկ Պասկեվիչի՝ ինչպէս նպատակիցը, նմանապէս և Բլուդովին գրած այս գրութիւնիցը՝ ոչ

մի տեղեկություն չունենալով Եփրեմ կաթողիկոսը՝ երբ տեսաւ, որ կայսեր արձակ ազերսին, Ներսիսին իրան յաջորդ նշանակելու նկատմամբ —պատասխանը յետացաւ,—վերկացաւ և դեկտեմբեր 20 թուակիր մի նամակ ուղղեց կոմսին, որտեղ Ներսիսին մի լաւ գովաբանելուց յետոյ՝ յայտնում է իր դիմումը կայսեր նրան, Ներսիսին, իրան յաջորդ և ժառանգ կառուցանելու համար և ի վերջոյ խնդրում է Պասկեվիչին, որ նա ևս միացնէ իր միջնորդութիւնը կայսեր առաջ։*)

ՄԼԲ

Եփրեմի այս նամակը շատ լաւ առիթ էր Պասկեվիչի համար վերջնականապէս Ներսիսին տապալելու և նրա, Եփրեմի՝ յոյսը խորտակելու, ուստի կոմսը փութաց և 1829 թ. յունվարի 5-ին հետևեալ գրութիւնը ուղղեց Բլուդովին.**)

„Շտապում եմ ուղարկել ձեզ ընդ սմին Եփրեմ պատրիարքից ստացածս նամակի թարգմանութիւնը, որի մէջ նա հաղորդելով ինձ թէ ամենահպատակօրէն խնդրագիր է մատուցել թագաւոր կայսեր, որպէս զի դեռ ևս իր կենդանութեան ժամանակ Ներսէս արքեպիսկոպոսը նշանակուի ծայրագոյն պատրիարք,—այդ մասին պահանջում է նաև իմ միջնորդութիւնը.

*) Այդ նամակը արդէն տպուած է 4-րդ պրակի 324 երեսում։
**) Акты, VII, եր 264, № 219.

„Եփրեմ պատրիարքի տարօրինակ և անբաստասելի ցանկութիւնը՝ յանձնել Ներսէս արքեպիսկոպոսին պատրիարքական իշխանութիւնը որպէս ժառանգութիւն, և մանաւանդ նրա յանդուգն և տնմիտ համեմատութիւնը այդպիսի, բոլոր քրիստոնէական դաւանութեան կանոններին հակառակ լինող, դիտաւորութեան Ռուսիոյ գահի ժառանգութեան մասին եղած բարձրագոյն կարգադրութեան հետ,—այս բոլորը ապացուցանում են, որ յիշեալ ծերունու մտաւոր ոյժերը բոլորովին թուլացել են, և միևնոյն ժամանակ ցոյց են տալիս՝ թէ մինչև որ աստիճանի է հասնում նրան շրջապատող Ներսիսի կուսակիցների յանդգնութիւնը և թէ վերջինիս նպատակին հասնելու համար՝ նրանք ինչ միջոցներ են թոյլ տալիս իրանց»։

«Այսպէս ահա, նոյեմբերի 14-ին իմ առ ձեզ գրած ենթադրութիւնը՝ թէ Ներսէս արքեպիսկոպոսի բոլոր գործերի գլխաւոր նպատակը է՝ ստանալ ամենայն Հայոց պատրիարքութեան աստիճանը,—արդարանում է այս անցքով։ Ներսէսը կարողանալով հաւատացնել Եփրեմ պատրիարքի թէ Պետերբուրգում զօրեղ բարեկամներ ու պաշտպաններ ունի, դեռ ևս Բեսարաբիա գնալուց առաջ ձեռք էր բերել ծերունու հաւատը դէպի ինքը և նրան շրջապատել էր միանգամայն իրան անձնուէր և իրանց բոլոր յոյսը իր վրայ դրած անձինքներով։ Այս մարդիկը կատարելով Ներսիսի Բեսարաբիայից ուղարկուող հրահանգ-

ները, աւելի և աւելի էին հաստատում Եփրեմին այն համոզման մէջ, որպէս թէ Ներսէս արքեպիսկոպոսը Ն. Կ. Մեծութեան դուռը գտել է իր համար ուժեղ զօրավիգն։ Այսպիսով ահա նրանք պատրիարքին հասցրին վերջապէս այն տեղը, որ նա վստահացաւ անհանգիստ անել թագաւոր կայսեր իր անմիտ խնդիրքով պատրիարքական աստիճանը ժառանգաբար Ներսէս արքեպիսկոպոսին յանձնելու համար։ Կասկած չկայ, որ Եփրեմը իր թոյլ բնութեամբ չէր համարձակուիլ մինչև անգամ մտքովն անց կացնել մի այդպիսի խնդիր, եթէ նա յուսադրուած չլինէր թէ նրա գրութիւնը նեցուկ կը գտնէ հզօր անձանց միջնորդութեան մէջ։

Եփրեմ պատրիարքի ցանկութեան անհիմնաւորութիւնը այնքան տեղը ակնյայտնի է, որ հարկ չկայ նրան հերքել, որովհետև Ներսիսի ամենայն Հայոց Կաթողիկոս նշանակելովը, առանց այն ձևերի ու ծէսերի, որոնք ի հնուց ի վեր սահմանուած են հայոց պատրիարքների ընտրութեան համար, կարող է ազգի մէջ պառակտում ծագեցնել և ուրիշ տէրութիւնների մէջ բնակուող հայերն ընդ միշտ կը բաժանուին Էջմիածնի Մայր Աթոռից, նամանաւանդ որ Ներսէս արքեպիսկոպոսը իր ազգայիններն մէջ ոչ սէր է վայելում, ոչ յարգանք։ Տաճկական երկրներում հայերը նրան ատում են թէ իր փառասիրութեան և թէ այն խորամանկութիւնների համար, որոնցով նա հայոց եկեղեցոյ մէջ՝ վեճ և երկարատև երկպա-

ռակութիւն ծագեցրեց։ Բացի այդ՝ եթէ այժմ կատարել Եփրեմ պատրիարքի այդ խնդրածը, այն ժամանակ պէտք է կատարել և նրա յաջորդի դոյն տեսակի խնդիրը և այդպիսով պատրիարքական գահը կը դառնայ մի տեսակ ժառանգութիւն, որ ըստ հաճոյից կամ թէ կտակով, անցնում կը լինի մէկից միւսին, իսկ այս հակառակ է եկեղեցական բոլոր կանոնադրութիւններին և երբէք չպէտք է թոյլատրուի։"

ՄԼԳ

Ի վերջոյ՝ դառնալով Ներսէս արքիեպիսկոպոսի բնութեանը և նրա արած գործերին,—շարունակում է Պասկեվիչը. „անկեղծաբար կասեմ, որ թէ յատկապէս Ռուսիոյ օգտի համար և թէ այս երկրի խաղաղութեան համար չպէտք է թոյլ տալ Ներսէս արքեպիսկոպոսին դառնալ ամենայն հայոց պատրիարք։ Այս հոգևորականի անսահման փառասիրութիւնը, նրա մշտական ցանկութիւնը սեպհականացնել իրան նաև քաղաքական իշխանութիւնը, նրա միակողմանի ձգտումները յօգուտ միմիայն Հայոց հոգևորականութեան և ի վնաս ընդհանուրի շահերի, վերջապէս նրա անզուսպ հակամիտութիւնը դէպի խորամանկութիւնները և նրա ցանկութիւնը միշտ դիմադրել տեղոյն գլխաւոր իշխանութեանը, այս բոլորը ապացուցուած են բազմաթիւ և ստէպ ստէպ պատահած դէպքերով։ Նրա այդպիսի

յատկութիւնները, որոնք կարելի է ասել, կազմում են նրա բոլոր բնութեան արմատը կամ տարրը, ոչ միայն չեն փոխուիլ նրա պատրիարքական գահը բարձրանալովը, այլ աւելի ևս լայնարձակ ասպարէզ կը ստանան։

«Իւր նպատակներին հասնելու համար՝ նա կաշխատէ քաշել իր կողմը բոլոր հարուստ և նշանաւոր հայերին, որոնց մշտական ձգտումն է եղել և է՝ օգտուել ամեն կերպ վաճառականութեան և առևտրականութեան իրաւունքներից առանց որև է հարկ տալու, և միևնոյն ժամանակը ձեռք բերել ազնուականութեան արտօնութիւններ։ Այդ հայերը չեն դադարում ոչ հետամուտ լինելուց, ոչ խորամանկութիւններ գործ դնելուց,—միայն թէ հասնեն իրանց այս նպատակին, որովհետև այս ազգի մէջ ագահութիւնը և պատիւներ ու մեծարանքներ ձեռք բերելու սէրը սահման չունի։ Նրանց ազգայնոց օրինակները Հաշտարխանում և Հիւսիսային Կովկասում, ուր առանձին արտօնութիւններով ազատ են նրանք ընդհանուր հարկերից, և Վրաստանում, ուր ազատօրէն առևտուր են անում նրանք առանց որև է տուրքի, այդ օրինակները կը սովորեցնեն նրանց թէ ինչ ճանապարհով պիտի ընթանան։ Կասկած չկայ, որ Ներսէսը ձեռքից եկածի չափ, ամեն կերպ կօգնէ նրանց այդ բանում և այստեղի իշխանութիւնը չի կարող ամեն անգամ դիմադրել այն բոլոր միջնորդութիւններին և բարեխօսութիւններին յօգուտ Հայոց ազգ անուանեալներին և ի վնաս ընդհանուրի։ Այդ միջնորդութիւնները գործ կը դնուին ոչ միայն այստեղի երկիրներում, այլ և կը հասնին մինչև Պետերբուրգ։ Ես պարտաւոր եմ համարում ինձ կանխապէս զգուշացնել այս մասին կայսերական նախարարութիւնը, որպէսզի յետոյ չարժանանամ մեղադրանքների, որ իբր թէ զուրկ եմ եղել նախատեսութիւնից և չեմ գիտացել իմ կառավարութեանը յանձնուած իրերի հանգամանքները։ Խոնարհաբար խնդրում եմ ձեզ իմ այս բացատրութիւնը հասցնել ի բարձրագոյն տեղեկութիւն թագաւոր կայսեր»։

ՄԼԴ

Բայց նախ քան Պասկեվիչի այս թուղթը Պետերբուրգ հասնելն այնտեղ նախարարական ժողովի որոշմամբ և կայսեր հաստատութեամբ արդէն վճռուած էր Ներսէս արքեպիսկոպոսին «Մաղամավարի պատճառաբանութեամբ» թողնել Բեսարաբիայում և արթուն հսկողութիւն ունենալ նրա նամակագրութիւնների վրայ. հսկողութիւն ունենալ նաև Յովսէփ և Ալամդարեան Յարութիւն վարդապետների վրայ։

Որոշուած էր նմանապէս ձեռնարկել Հայոց եկեղեցւոյ համար մի ընդհանուր կանոնադրութեան մշակման և օտարադաւանների հոգևոր գործերի և արտաքին գործերի նախարարները՝ արդէն այդ մասին իրանց դիւանական գործե-

ՐԸՆ՝ էին քեքրում, այնտեղ եղած տեղեկութիւնները դուրս քերելու և ապագայ „положеніе“-ն կազմելու համար։

Որովհետև այդ մասին մենք, ընթերցող, իր տեղում, առանձին քաղուածքներ ենք անելու,— ուստի այստեղ շարունակենք մեր ծանօթութիւնը Պասկեվիչի և Ներսիսի բանակութիւններին։

Աշտարակեցին Բեսարաբիայում թէև ստանում էր իր կուսակիցներից տեղեկութիւններ Վրաստանում և Էջմիածնում տեղի ունեցած անցքերի մասին, բայց բնականաբար, չէր կարող հաստատապէս գիտենալ Պասկեվիչի իր,— Ներսիսի մասին՝ Պետերբուրգ գրած թղթերի բովանդակութեան հետ։

Նա շատ ցանկանում էր Պետերբուրգ գնալ և անձամբ ներկայանալ կայսրին, տեսակցել նախարարների հետ։ Ի մասնաւորի կոմս Դիբիչի հետ, որ իր ծանօթն էր և բարեկամը։ Սակայն Արհւոյ այդ ցանկութիւնը չէր յաջողւում։

Ներսիսին մեծ բաւականութիւն պատճառեց, որ ռուս-տաճկական պատերազմի պատճառով, կայսրը և Դիբիչը Բեսարաբիայի կողմերը եկան յանկարծ, սակայն նրա դժբաղդութիւնից, առիթ չտրուեցաւ նրան կայսեր տեսնելու։ Կոմս Դիբիչի Քիշնեվ մտնելով մինչանի բոպէով տեսնուեցաւ Ներսիսի հետ, որը միջոց և հնարաւորութիւն չունցաւ իրան հետաքրքրող հարցերի մասին խօսք բացանել։

Անճարացեալ նա մի ընդյարձակ նամակով

1839 թ. յունուարի 7-ին, դիմեց Դիբիչին։

Ահա այդ նամակը։

ՄԼԵ

„Պայծառափայլ Կոմս, ողորմած տէր։ Որպէս եկեղեցւոյ հովուապետ՝ խոնարհութեամբ յանձնս առայ կրելու այն խաչը, որ նախատանքով վրաս բարձուեցաւ։ Լռութիւն պահեցի և ձեր պայծառափայլութեան Քիշնեվից անցած միջոցին ոչինչ չյայտնեցի։ Բայց չափազանց վիշտս և հոգևոր հօտիս պաշտպանութեան կարևորութիւնը ստիպում են ինձ այժմ դառնալ ձեզ։

Մտնելով պաշտօնավարութեանս տապարէզը՝ ես խղճմտանքով կատարեցի պարտքս առաջի Աստուծոյ, առաջի կայսրների (Աղեքսանդր Ա. և Նիկողայոս) և առաջին որբացեալ ազգին Հայոց։ Քսանևութ տարի շարունակ աշխատելով ես չյոգնեցի. իմ հոգատարութիւնս, իմ չափազանց աշխատութիւններս, որքան հիմնուած են եղել անսահման ջերմեռանդութեան և անսասան անձնուիրութեանս վրայ, ես գործ եմ դրել յօգուտ Ռուսիոյ և ի բարեկարգութիւն իմ համացեղ ազգի։ Իշխան Ցիցիանովի ժամանակից սկսած՝ բաղդի բերմամբ վիճակուեցաւ ինձ մասնակցել պատերազմներում և ես ամենուրեք և յամենայն դէպս ջերմեռանդապէս օգնած եմ։ Նախախնամութիւնը միջոց շնորհեց ինձ կատարել ուխտս, այն երկիրը, որ ի հնուստ իմ հայրե-

նիքն է։ Էլ չեմ թուում և ոչ էլ պարծենալ եմ ուզում իմ արած ծառայութիւններով, որոնք բազմաթիւ վկայութիւններով ապացուցուած են։ Մխիթարական է միայն հոգւոյս համար, որ կատարած եմ իմ պարտականութիւնները և դրանով ձեռք եմ բերած երախտագիտութիւնը՝ Ռուսաց կայսրների, կուսակալների, ազգիս և ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարքի՝։

Զնայելով իմ ծերութեանը և թոյլ առողջութեանը՝ համաձայն Սգոստափառ կայսեր հրամանին, ես եկայ այս հեռաւոր երկիրը՝ այստեղի թեմը բարեկարգելու համար։

Սոյն միջոցին Վրաստանից և նրա գաւառներից շատերից անդադար անախորժ լուրեր էին ստացւում։ Ինձ վրայ դիզած ամեն տեսակ ամբաստանութիւնները ես համբերութեամբ տանում էի։ Բայց վերջին անցքերը, որ չար և մեքենայական դաւաճանութեան պտուղ են, սասանեցնում են այժմ Էջմիածնի վանքի սրբազան շինութիւնը։ Որպէս հոգևորականութիւնը, նոյնպէս և հօտը այսօր ապշած է մնացել և թերահաւատ տատանման մէջ է։ Ծայրագոյն պատրիարքին և Սինօդին վշտեր են պատճառւում։ Թիֆլիզի Հայոց եկեղեցիների պատերի վրայ մինչև անգամ անվայել գրութիւնների թղթեր են փակցւում։ Միով բանիւ մի անսպասելի, չըլսուած և անհաւատալի իրողութիւն է կատարւում։ Հայոց ազգի բազմիցս ցոյց տուած նըշանաւոր ծառայութիւններից և մեծամեծ զոհաբերութիւններից յետոյ՝ հարկ էր, որպէս ի տրիտուր նրանց անձնուիրութեան, նոյնպէս և Ռուսիոյ օգտի համար, նաև սրա սահմանը հաստատապէս ապահովացնելու մտքով՝ հարկ էր, ասում եմ, ներկայումս աւելի ոգևորել հայերին, օգուտ քաղել նրանց ոգևորութիւնից և ցնծութիւնից ու հաստատել արդէն տասնև հինգ դար գոյութիւն ունեցող Մայր Աթոռի իրաւունքները և արտօնութիւնները։

«Բայց հակառակ եկեղեցական հինաւուրց կանոնադրութիւններին, հակառակ բարձրագոյն շնորհած և բազմիցս վերհաստատուած կայսերական հրովարտակներին՝ տեղական իշխանութիւնը խառնւում է և միջամտում Հայոց հոգեւոր գործերի կառավարութեան մէջ։

Ընդսմին կցուած՝ Պատրիարքի և Վրաստանի կուսակալի մէջ եղած գրագրութիւնից, որ ուղարկուած են ինձ առանց Պատրիարքի գիտութեանը, պարզ երևում է, որ խռովութիւններ ծագած են վնասակար մարդկանց դաւադրութիւններից և ամբաստանութիւնից. սրանից յառաջանում են տնբարեկարգութիւն և վնաս, բայց կարող են ծագել և աւելի վատ հետևանքներ։ Էջմիածնի վանքը՝ այսպէս ասած, է մի ընդհանուր օղակ, որի հետ սերտ կապուած է ըստ իր դաւանութեան և անձնուիրութեան ընդհանուր Հայոց ազգը, որ ցրուած է երկրագնդիս զանազան մասերում և բաղկացած է 10-ից մինչև 12 միլիոն հոգուց*)։

*) Ա՛ր դեռ գրչի սխալ չկն այս թուերը։

„Ընդհանուր շահերի տեսակէտից կայսրութեան համար կարևոր է՝ մի խմբել այս քրիստոնեայ ազգութիւնը։ Բայց Վրաստանի իշխանութիւնը, իր ձեռք առած միջոցներով, բարեկարգութիւն մտցնելու փոխարէն, ծագեցնում է իրաւացի սրտմտութիւն և տրտունջ։ Այդ ընդսակաը միջոցները կարող են յառաջացնել պառակտումն և մինչև անգամ բաժանել Աւստրիայի Տաճկաստանի և Պարսկաստանի հպատակ հայերին Ռուսաստանի հայերից։

„Այն ժամանակ թէ Ռուսիան և թէ Հայաստանը միատեսակ կը տուժեն, որովհետև այլևս չի լինիլ ընդհանուր կապ Ռուսաց տէրութեան և Հայոց ազգի մէջ, որը կարող էր շատ օգտաւէտ գտնուել, եթէ միայն հոգ տարուէր նրա բարօրութեան մասին“։

ՄԼԶ

„Ձերդ պայծառափայլութիւնը Վրաստանում եղած միջոցին,—շարունակում է Ներսէսը,—անձամբ ծանօթացաք տեղական հանգամանքների հետ, նաև ճանաչեցիք ինձ, նախկին կուսակալները ըստ արժանւոյն գնահատած են իմ հանրօգուտ գործունէութիւնը։ Գեներալ Երմոլովը միմիայն վերջին ժամանակներում դժգոհ եղաւ ինձանից ձեր պայծառափայլութեան հետ ունեցած յարաբերութեանց պատճառով, երբ դուք եկել էիք Վրաստան։

„Կոմս Պասկեվիչ Երևանսկին թէ մինչև իր պաշտօն ստանձնելը և թէ յետոյ՝ կուսակալ դարձած միջոցին՝ ինձ օգտաւէտ անձն էր համարում։ Նրա բարի յարաբերութիւնները ինձ հետ շարունակում էին մինչև Երևան գալը, ուր գտնուում էի ես գեներալ Բենկենդորֆի յառաջապահ զօրաց հետ։ Այդ միջոցին դժգոհութիւններ ծագեցին այդ երկու գեներալների մէջ։ Կոմս Պասկեվիչը՝ թողնելով ինձ գեներալ Կրասովսկու հետ էջմիածնում, ինքը գնաց Նախիջևան։

„Վերադառնալով Նախիջևանից՝ կոմսը պատերազմական անյաջողութեանց պատճառաւ, անբաւական եղաւ ինձանից, իբր թէ դուք իմ դեղդելովն էիք ուղարկել զօրքերը Պարսկաստան և այս բանը նա բացարձակ յայտնեց։ Թէև ցաւ էր լսել ինձ զանազան նախատինքներ, բայց առ Թագաւորն և առ հայրենիքս ունեցած ջերմեռանդութիւնից ես մոռացայ իմ անձնաւորութիւնը և տեսնելով զօրաց պաշարի պակասութիւնը, ես մեծամեծ վտանգի ենթարկեցի ոչ միայն ինձ, այլ և ազգականներիս, մինչ որ կարողացայ համոզել Կողբայ հայերին շուտով գալ մեր բանակը։

„Մօտ 150 Կողբեցի հայեր եկան և յայտնեցին թէ ուր են պահուած սարդարի հացի պաշարները։

„Գեներալ Բենկենդորֆը և կոմս Սուխտէրէնը բերին ամբողջ հացի պաշարը։ Ուրեմն կոմս Պասկեվիչին ես շատ անգամ եմ գործով

ազնած Պարսից պատերազմի ժամանակ, նամանաւանդ Սարդարաբատի և Երևանի բերդերը վեր առնելիս։ Նոր նուաճած երկրում կոմսը նշանակեց ինձ անդամ վարչութեան. թէ ես և թէ ինձ մօտ գտնուած հոգևորականներն ու աշխարհականներն ամեն կերպ նպաստած ենք, որ կարող են վկայել գենեռալ Կրասովսկին և նրա պաշտօնակիցները։ Վերադառնալով Թաւրիզից, երախտապետ լինելու փոխարէն, կոմսը առանց որև է առիթի ինձ չարակամութիւն ցոյց տուեց։ Միայնակ պատճառը, որ ես կարծում եմ, այն պիտի լինի, որ գործերի վերաբերմամբ՝ ես մօտիկ յարաբերութեանց մէջ էի գտնւում Բենկենդորֆ, Կրասովսկի և Սիպեագին գեներալների հետ"։

ՄԼԷ

„Իմ նպատակը էր եղել միշտ ծառայել Արքային և հայրենիքիս և ոչ թէ գեներալներին։ Թէ բնութեամբ և թէ պարտականութիւններովս ես միշտ խոյս եմ տուած շողոքորթութեամբ լաւը վատ անուանելուց։ Մինչև պարսկական խաղաղութեան դաշնադրութիւնը՝ ես գեներալ Կրասովսկու ձեռքով պնդում էի և հաստատում, որ Ռուսիայի սահմանների բնական պատսպարանք ունենալու համար՝ կարևոր է որ մեր ձեռքում մնայ այնպիսի նշանաւոր և ամուր կէտը, որպիսին էր Մակուի մահալը, վասն զի պարսիկ-

ները այդտեղից միշտ կարող են յաջողութեամբ յարձակուել մեզ վրայ։ Կոմսը չլսեց իմ խորհրդին։

Յետոյ միայն իմացուեցաւ սխալը և ստուգուեցաւ, որ բանակցութեանց ժամանակ այս կէտի վերաբերութեամբ՝ Աբաս Միրզան խաբել է կոմսին։—Ահա գլխաւոր պատճառները կոմս Պասկեվիչի իմ դէմ յարուցած կասկածանաց, թշնամութեան և նոյնիսկ հալածանաց, որոնցով ուզում է նա ստեր ձգել իմ բազմամեայ ծառայութեանս վրայ և թուլացնել տէրութեան դէպի ինձ ունեցած վստահութիւնը։

«Բայց Աստուած պաշտպան է ճշմարտութեան։ Զգացմունքներիս և գործերիս մէջ մաքուր լինելով՝ չեմ վախենում հալածանքից, մանաւանդ որ բոլոր անբաստանութիւնները իմ դէմ հիմնուած են ստերի և զրպարտութիւնների վրայ, անձնական շահերից և կրքերից յառաջացած։ Մի բանից եմ միայն վախենում, ու չլինի թէ տեղական գլխաւոր իշխանութեան ձեռնարկած վնասակար միջոցների պատճառաւ՝ բարձրագոյն բանմաթիւ դիտաւորութիւնները և ձեռնարկութիւնները չկարողանան հասնել իրանց բարեբեր նպատակին։ Յաղթութիւններից և երևելի դէպքերից յետոյ՝ հարկ է քաղել պտուղը՝ այն զանազան ազգաբնակութիւնների հեռաւոր երկրում բարեկարգութիւն մտցնելով, բայց դժուար է այդ անել, քանի որ զոհաբերութիւններին պատասխանում են արտմտութեամբ։

ՄԼԸ

«Յայտնելով Ձեզ ճշմարտութիւնը բոլոր իսկութեամբ,—շարունակում է Աշտարակեցին,— պէտք է ասեմ, որ ես սրանով զոհ եմ բերում Մայր Աթոռը և Վրաստանի նահանգներում բնակուող Հայոց ազգը, վասն զի այսուհետև աւելի ևս պիտի սաստկանայ վրէժխնդրութեան հալածանքը և բազմանան զրպարտութիւնները։ Հարկ եմ համարում յարակցել, որ այս բոլոր խորամանկ որոգայթներ լարողը է Սերոբէ վարդապետը։ Կոմս Պասկեվիչը չճանաչելով նրան, ի մնաս իր և ազգիս, ընդունում է նրան ոմն յոյն դէյստվիդելնի ստատսկի սովէտնիկ Վլանգալիի խօսքով, որի հետ վարդապետը առաջուց բարեկամացած է եղել Պետերբուրգում։

«Բայց Սերոբէ վարդապետը իր կրթութիւնը ստացել է Հռոմում, քանիցս փոխելով իր հաւատը՝ երբեմն յարել է կաթոլիկութեանը, երբեմն ընդունել է Հայոց դաւանութիւնը։

«Ապա երկար ժամանակ առանց պաշտօնի օտար երկիրներում դեգերելով՝ այժմ էլ յայտնի չէ թէ ինչ գաղտնի նպատակաւ խռովութիւն է ցանում և անկարգութիւններ մտցնում իր համար օտար եղած հայրենիքում։

«Ուր որ այս Սերոբէ վարդապետը եղած է, ամեն տեղ էլ կասկածել են նրա մասին և զգուշացել են, և ապա, փորձով տեսնելով նրա անօգտաւէտութիւնը՝ հեռացրել են գործերից։

«Նորագոյն ստացած տեղեկութիւններից իմանում եմ, որ կոմս Պասկեվիչը իմ մասին մի աննպաստ առաջարկութիւն է արել օտար դաւանութեանց գլխաւոր կառավարչին։

«Յայտնի չէ թէ իրաւ է այս և կամ ինչ է գրել կոմսը։ Սակայն հաւանական է, որ այս գրութիւնը լիքը լինի զանազան չարամիտ անձանց ամբաստանութիւններով։ Ես պատրաստ եմ համարձակ պատասխանել, կատարելապէս համոզուած լինելով որ ամեն բանի մէջ հաստատելով ճշմարտութիւնը, ցոյց կուտամ զրպարտութիւնների անհիմնաւորութիւնները։ Բարեհաճեցէք միայն հաղորդել ինձ այն առաջարկութիւնը, որ բացատրութիւններ տամ։ Եթէ իմ դէմ իրաւացի անբաւականութիւններ և գանգատներ լինէին, ամեն ոք կարող էր իր բողոքը մատուցանել Ծայրագոյն Պատրիարքին, որ եօթը տարի բնակուեցաւ ինձ յանձնուած թեմում։ Աստուծոյ արդար դատաստանը չիք է դարձնում ամենայն սուտ մեղադրանք։

«Պայծառափայլ կոմս, Ձեզ յատուկ ճշմարտասիրութեամբ՝ պաշտպանեցէք այդ հեռաւոր երկիրը այն չարիքներից, որ նրան սպառնում են.—Սրտանց հոգ տարէք թագաւորին հաւատարիմ եղող իմ համազգիների վիճակի և դրութեան մասին։ Շարունակեցէք օգնական լինել Հայոց ազգին, որ Ձեզ իր պաշտպանների թուումն է դասած։

«Ներեցէք որ երկար խօսեցայ։ Առանձին յարգանքով. մնամ» և այլն։ *)

ՄԼԹ

Մինոն այս նամակի բովանդակութեամբ՝ մի նամակ էլ՝ Ներսէսը Բլուդովին գրեց՝ խնդրելով որ Պասկեվիչի ամբաստանգիրը իրան ուղարկուի բացատրութիւն տալու համար։ **)

Բայց նրա բոլոր ջանքն ու խնդիրը իզուր անցան։—Կառավարութեան համար ոչ մի հաշիւ չկար՝ Ներսիսի պատճառաւ Պասկեվիչին վշտացնել, նամանաւանդ որ օր աւուր ռուս տաճկական պատերազմ էր սպասւում։

Բայց որպէսզի, իր հերթում, Ներսէսը ևս կառավարութիւնից չվշտանայ՝ մանաւանդ որ նա էլ առաջիկայ պատերազմի ժամանակ օգտակար էր, ուստի կառավարութիւնը դարձեալ սկսեց իր շոյշոյանքն ու փայփայանքը Ներսիսին։

Այս բանը ակներև բղխում է այն պատասխանից, որ Բլուդովը գրեց Ներսիսին մարտի 21-ին, հետևեալ բովանդակութեամբ՝ «Սրբազնագոյն հովուապետ, ողորմած տէր։ Մինչև այժմ իսկ շարունակւող հիւանդութիւնս և առանձին կարևորութիւն ունեցող գործերի ընթացքը ցայսօր արգելում էին պատասխանել Ձեր սրբազնութեան ներկայ թուականիս յունուարի 21-ին գրութեանը։

*) Ամենայն հայոց կաթողիկ. 491—498.

**) Акты, VII եր. 270.

«Այժմ շտապում եմ օգուտ քաղել հէնց առաջին ազատ րոպէից և կատարելով քաղցր պարտաւորութիւնս, հաղորդել Ձեզ, Ողորմած տէր, իմ կարծիքս Ձեր յայտնած վախի մասին։ Կը համարձակեմ ասել թէ այդ վախը իզուր է։ Ինձ ճշտութեամբ յայտնի չեն Ձեր՝ կոմս Պասկեվիչ Երևանսկու հետ ունեցած յարաբերութիւնները։ Ես մինչև անգամ չեմ էլ կարող այդ յարաբերութիւնները քննելու, որովհետև այդ գրեթէ չի վերաբերում ինձ յանձնուած մասին։ Բայց քանի որ դուք Ձեր բոլոր գործողութիւնների մէջ, ի հարկէ, ձգտել էք դէպի ընդհանուր օգուտը և պահպանած էք պատշաճաւոր յարգանք առ Բարձրագոյն կամօք նշանակուած գլխաւոր կառավարիչն երկրի (Պասկեվիչն՝ ուզում է ասել), կարող էք առանց բացատրութիւնների էլ բոլորովին հանգիստ մնալ։

«Թագաւոր կայսրը գիտէ Ձեր ջերմեռանդութիւնը դէպի Ինքն և Ձեր անձնուիրութիւնը Ռուսաստանին։

Բացի այդ, համարձակւում եմ կցել, որ մեր տէրութիւնը, ոչ մի գանգատ չէ ընդունում առանց քննութեան։ Արդարադատ արքայն նայում է գործերին և ոչ թէ անձնաւորութիւններին, և թագաւոր կայսրը՝ իրան յատուկ հաստատամտութեամբ՝ ամեն դէպքում խստիւ հետևում է այս անփոփոխելի կանոնին։

«Դուք, Ողորմած տէր, Ձեր կողմից շարունակելով գործել յօգուտ ծառայութեան Ն. Կ.

Մեծութեան և միևնոյն ժամանակ յարմարեցնելով Ձեր արածը օրէնքով հաստատուած կարգերի հետ, կարող էք հաւատացած լինել, որ արդարութեամբ կը շարունակուի առ Ձեր այն բարեհաճութիւնը, որին արժանացած էք քանիցս անգամ։

«Դուք ահա միջոց ունիք այժմ բոլորովին արդարացնել տէրութեան առ Ձեզ ունեցած վստահութիւնը։

«Բեսարաբիայի սահմանակից եղած Մոլդաւիայի և Վալաքիայի, ինչպէս նաև տաճկական միւս գաւառների, որ գրաւած ունին մեր զօրքերը, բնակիչ Հայոց դրութիւնն առանձին ուշադրութիւն է պահանջում եւ սրա համար հարկաւոր է մի անձն, որ դէպի գահոյքը ունեցած ջերմեռանդութեան հետ ունենայ եւ պաշտօնական խոհեմութիւն ու ճիշտ տեղեկութիւններ այս մասին»։

«Թագաւոր կայսեր անձնական ընտրութեամբ, որ այնքան հրապուրական է Ձեր սրբազնութեան համար, այդ պաշտօնը կրելու Դուք էք նշանակուած, և Դուք, գործելով հարկ եղած ամենայն զգուշութեամբ, կարող էք օգնել մեր զօրքերի յաջողութեանը ներկայ բացուող պատերազմում, այլև նպաստել Ն. Կ. Մեծութեան անշահասէր և վեհանձն քաղաքականութեանը ազդելով ձեր կողմից Եւրոպական Տաճկաստանում ապրող հայերի վրայ։ Այդպիսի Ձեր ծառայութիւնը արդարապէս կը բարձրացնէ Ձեզ տէրութեան աչքում և, ի հարկէ, չի մնալ առանց Ձեզ արժանաւոր պարգևի»։

Մի

Բացի Բլուդովի այս նամակից՝ Եփրեմի անունով դուրս էր եկել, միևնոյն մարտի 12 թուով, և կայսեր նամակը իբրև ի պատասխանի կաթողիկոսի աղերսական գրութեանը 5 ամիս ա... ջ *)

Նիկողայոս կայսեր սոյն այս նամակը Բլուդովը՝ իր վերոյիշեալ նամակի հետ՝ Պասկեվիչին ուղարկեց, որպէսզի կարդայ նախապէս և ապա ուղարկէ Եփրեմ կաթողիկոսին։ Ուղարկած էր նաև Ներսիսի բողոքագիրը ընդդէմ իրան՝ Պասկեվիչի, յունուարի 21-ին։

Այս ամենի հետ Բլուդովը իր կողմից մի ծածուկ նամակ ևս Պասկեվիչին իրան ուղղեց հետևեալ բովանդակութեամբ։ *)

«Ես արդէն պատիւ ունեցայ հաղորդել ձեզ թէ ձեր նոյեմբերի 16-ին գրած Հայոց եկեղեցւոյ վարչութեան մէջ նկատուած անբարեկարգութեանց մասին, բարձրագոյն բարեհաճութեամբ, արտաքին գործոց նախարարութիւնը և ինձ յանձնուած գլխաւոր վարչութիւնը ինչ և ինչ միջոցներ են ենթադրում գործ դնելու։ Այդ ենթադրութիւնները արդէն անմիջապէս գործ դրուեցին։ Հայոց այն հոգևորականների վրայ,

*) Այդ նամակը արդէն տպած է 4-րդ պրակի 326 երեսում
*) Акты, VII, եր. 268 № 221.

որոնց պատճառ ունէք դուք կասկածաւոր համարելու կարգուած է զգուշաւոր հսկողութիւն և արժանահաւատ պաշտօնից յանձնուած է ժողովի լի ու լի տեղեկութիւններ Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ունեցած կանոնադրութեանց մասին։ Սակայն այս գործի մէջ երևան եկած միքանի նոր հանգամանքներ պահանջեցին միքանի նոր կարգադրութիւններ։

«Արդէն ձեզ յայտնի է, որ Եփրեմ պատր. Ալամդարեան վարդապետի ձեռքով առ Բարձրագոյն անուն ամենահպատակօրէն խնդրագիր էր ուղարկել, որի մէջ յայտնելով իր անձնուիրութիւնը Ռուսիոյ Տէրութեանը և յանձնելով Թագաւոր Կայսեր ողորմած հոգատարութեանը նրան, Էջմիածնի Աթոռը, Սինոդը և առհասարակ ամբողջ Հայ ազգը, խնդրում է առանձին պաշտպանութիւնը Նորին Մեծութեան Ներսէս արքեպիսկոպոսի վրայ և աղերսում է, որպէսզի Թոյլ տրուի սրան վերադառնալ Էջմիածին և օծուիլ պատրիարք։ Շուտով սրանից յետոյ և գրեթէ միևնոյն ժամանակը, երբ հասաւ ինձ ձեր յունուարի 5-ին գրութիւնը, որ բովանդակում էր պատրիարքի այս տարօրինակ ցանկութեան մասին Ձեր հիմնաւոր դատողութիւնները,—ես ստացայ Ներսէս արքեպիսկոպոսից մի նամակ, որի պատճէնը ընդամին ուղարկում եմ։ Այս նամակը, ինչպէս դուք էլ կը բարեհաճէք նկատել, լիքն է գանգատանքով Վրաստանի գլխաւոր վարչութեան վրայ, որ իբր թէ՝ հակառակ նախկին կանոնադրութեանց և շնորհած հրովարտակների և հաւատ ընծայելով չարամիտ անձանց բանսարկութեան, ի թիւս որոց են Վրանգալին և նրա բարեկամ Սերոբէ վարդապետը ի վնաս Ներսիսի առաջադրութիւններ է ներկայացնում։

«Ներսիսի այսպիսի գանգատ գրելու պատճառները ակներև են։ Այդ նամակի նպատակը և պատրիարքի խնդրածը գրեթէ միայն այն բանի մէջ են կայանում, որպէսզի տէրութեանը համոզին՝ վերադարձնել Ներսիսին Էջմիածին։ Թագաւոր նշմարելով այդ և առանձին ուշադրութեամբ քննելով Հայոց եղեղեցւոյ բարեկարգութեանը վերաբերեալ բոլոր թղթերը՝ բարեհաճեց հաստատել հետևեալ եզրակացութիւնները։

«Առաջին՝ որ համաձայն ձեր կարծեաց, երբէք չըպէտք է թոյլ տալ, որ պատրիարքը իրաւունք ունենայ իրան յաջորդ նշանակելու, այլ ընդհակառակը հարկ է աշխատել վերականգնեցնելու Պատրիարքական ընտրութեան այն կարգը, որ համապատասխան է Հայոց եկեղեցւոյ նախկին կանոններին և սովորութիւններին, միայն թէ յարմարացնելով այդ բոլորը Հայաստանի ներկայ դրութեան հետ։

«Երկրորդ՝ որ բաղմաթիւ երևելի պոլիտիկական (քաղաքական) պատճառներով կարևոր է, որ Հայոց պատրիարքը սիրելի և յարգելի լինի ոչ միայն ռուսահպատակների կողմից, այլև միւս հայերից, այնպիսի մի անձնաւորութիւն, որ կարողանար գոնե միխանի ժամանակից յետոյ

հանձնել Տաճկաստանի Հայերին միանալ Էջմիածնի Աթոռի հետ, բայց Ներսիսի անվստահելի բնութիւնը ի նկատի ունենալով՝ չի կարելի սպասել դրա իրագործումը, եթէ նա նշանակուի սրբազնագոյն Եփրեմի յաջորդ։

«Երրորդ՝ որ սակայն հարկ չկայ վճռական կերպիւ յայտնել այս մասին ոչ իրան՝ Ներսիսին, ոչ էլ Պատրիարքին. բաւական է, որ պատասխանելով Պատրիարքի խնդրագրին, հասկացնել սրան թէ անկարելի է յաջորդ նշանակելու մասին մտածելն անգամ, այլ ընդհակառակը, յորդորել իրան, որ աւելի ժիր կերպով զբաղուի եկեղեցական վարչութեան գործերով։ Իսկ Ներսիսին, ինչպէս առաջ էլ վճռուած էր, թողնել Բեսարաբիայում և հաղորդելով նրան այս մասին, ամենևին չմտնել որև է բացատրութեանց իր գանգատանաց մասին, պատճառաբանելով թէ այդ գրեթէ չէ վերաբերում օտար դաւանութեանց հոգևոր գործերի գլխաւոր վարչութեան։

«Չորրորդ՝ որ գլխաւոր և ամենանշանաւոր է գործերի համար՝ այսինքն է պատրաստել նախագիծ կանոնադրութեան Հայ Լուսաւորչական եկեղեցւոյ, կարելւոյն չափ պահպանելով նրա բոլոր նախկին օրէնքները և ծէսերը, որ անշուշտ շատ թանգ են ազգի համար,—պէտք են մանրամասն և ամենաճիշտ տեղեկութիւններ այդ եկեղեցւոյ թէ նախկին և թէ ներկայ դրութեան մասին, որ ամենից յարմարն է ժողովել

Նոյնիսկ «Հայոց աշխարհում»։—Մինչև անգամ այն սակաւաթիւ տեղեկութիւնները, որ ժողոված են այստեղ մասամբ արտաքին գործոց նախարարութեան դիւանատնից, մասամբ Հայաստանին վերաբերեալ զանազան շարադրութիւններից, պէտք է, որ վերստուգուին և լրացուին։ Այս բանի հոգատարութիւնը յանձնուում է ձեր պայծառափայլութեանը և այդ նպատակով ուղարկելով ընդդիմին ի հայեցողութիւն ձեր վերոյիշեալ տեղեկութիւններից կազմած մի պատմական տեսութիւն Էջմիածնի Պատրիարքների ընտրութեան կարգերի մասին, ձեզ է թողնում նկարագրել թէ Էջմիածնի Աթոռը և առհասարակ Հայոց հոգևորականութիւնը այժմ ինչ կարգերով է ընտրութիւն կատարում (կաթողիկոսին) և կամ առաջ ինչ ձևով է կատարել։ Հարկ է նմանապէս նշանակել թէ այդ կանոններից որը աւելի յարգելի է ժողովրդի աչքում և որ համապատասխանելով Հայոց աշխարհի ներկայ կացութեան պայմաններին և մեր քաղաքական կապակցութիւններին պէտք է, ըստ ձեր կարծեաց, մտցնուի Լուսաւորչական եկեղեցւոյ համար նախագծուող կանոնադրութեան մէջ։ Ի թիւս այլոց, պէտք է նմանապէս քննել և իմանալ թէ արդեօք պահվում է մինչև այսօր հին աւանդութեան վրայ հիմնուած այն սովորութիւնը, որ նոր Պատրիարք ձեռնադրելիս՝ դրում է նրա գլխին սրբազան Գրիգորի անապական աջը, որի մասունքները գտնվում են Էջմիածնում և

չի կարելի արդեօք օգուտ քաղել այդ հանգամանքից Էջմիածնի քահանայապետների ազդեցութիւնը Ցաճկատանի Հայերի վրայ տարածելու համար։ Նմանապէս չի կարելի արդեօք վերաբերձնել Էջմիածնին նրա նախկին բացառական իրաւունքը մեռոն օրհնելու մասին,—մի իրաւունք, որ այժմ Սսոյ պատրիարքը իրան է սեպհականացրել։

Հինգերորդ՝ որ հարկ է Նմանապէս, մանաւանդ ի նկատի առնելով արքեպիսկոպոս Եփրեմի տարիքը և առողջութիւնը, առաջուց այլի առաջ ունենալ Պատրիարքութեան համար Հայ հոգևորականներից մի քանիսին, որոնք արժանի լինեին տերութեան վստահութեանը եւ վայելում լինեին իրանց ազգայնոց յարգանքը, որպէսզի պաշտպանելով նրանց, բայց ի հարկէ, ոչ բացայայտ կերպով, օգնելով նրանց գործունէութեանը եւ յառաջադիմութեանը, միջոց տալ այդպիսիներին մեծ ազդեցութիւն ձեռք բերել Հայոց ազգի վրայ ընդհանրապէս։ Այս մասին կարևոր է, որ ձեր կարծիքը հաստատուի ի բարձրագոյն գիտութիւն։

Վեցերորդ՝ վերջապէս Ցովսէփ և Ալամդարեան վարդապետներին (որոնց Ներսէսը շքանշանի էր ներկայացրել) ոչ միայն պէտք չէ Ներսիսի առաջադրութեամբ պարգևատրել, այլ հարկաւոր կը լինի այս մասին էլ ձեր կարծիքը ստանալուց յետոյ, հեռացնել իրանց յանձնուած պաշտօններից, բայց եթէ կարելի է, որևէ ճ

բարեպաշտեն պատճառով եւ նոյնիսկ պատրիարքի ձեռքով, տալ նրանց մի ուրիշ յանձնարարութիւն միայն այն պայմանով, որ դրանով նրանք նորից ՀԱՍԱԿԱՐ չդառնան։ Միևնոյն ժամանակ շարունակել պահպանել թէ նրանցից և թէ ներսիսից իրանց գործած փողերի հաշիւը։ Նոյնպէս պարզել և իմանալ թէ Հայոց հոգևորականութիւնը որ արքունական կալուածներն ու եկամուտներն է իրան սեպհականացրել։ Հոգ տանել նաև ուսումնարաններ հաստատելու հոգևոր կոչման համար պատրաստուող հայերին կրթելու համար։

«Հաղորդելով ձեզ այս ինձ յայտնած բարձրագոյն կամքի մասին, ի կատար ածելու համար՝ պատիւ ունիմ իմ կողմից ուղարկելու ձեզ՝

1) Բարձրագոյն հրամարակ յանուն Եփրեմ Պատրիարքի ի պատասխանի իր խնդրագրին, որպէս իսկական, իրան հասցնելու համար, նոյնպէս և պատճէնը՝ ձեր տեղեկութեանը համար։

«2) Վերոյիշեալ պատմական տեսութիւնը Հայոց Պատրիարքների ընտրութեան կարգ ու կանոնների մասին։

«3) Քանի մի ուրիշ տեղեկութիւններ և մի ցուցակ հարցերի Հայոց եկեղեցւոյ վարչութեան մասին։

«Ընդսմին համարձակւում եմ խնդրել ձեզ, որ Հայոց եկեղեցւոյ կանոնադրութեան նախագիծը կազմելու համար նիստերը ժողովելիս՝ դուք

չբաւականանանք միմիայն իմ թղթի մէջ նշանակուած խնդիրների լուծելով, որովհետև դրանք մեծ մասամբ քաղուած են (վրայ) Վախտանգ թագաւորի Հայոց օրէնքներից, այլ աշխատանք յանձն առնէք հաղորդել ինձ ձեր այդ մասին արած նկատողութիւնների հետ՝ այն բոլոր տեղեկութիւնները նախկին և այժմեան եկեղեցական կազմակերպութեան և Հայոց աշխարհի վարչութեան մասին, որն որ դուք որև է պատճառով ուշադրութեան արժանի կը համարէք, որովհետև շատ հնարաւորական է, որ չնայած իմ բոլոր ջանքերին՝ իմ կազմած ցուցակում բաց թողնուած լինին միքանի և գուցէ, ըստ տեղական հանգամանաց շատ կարեւոր, խնդիրներ»։

Մեծ

Ներսիսի բողոքագրերի պատճէնները Պասկեվիչը ստացաւ բացի Բրուդովից, այլ նաև Զերնիշով նախարարից։ Վերջինս նոյնիսկ կայսեր հրամանով Պասկեվիչից բացատրութիւն էր պահանջում Ներսիսի գրածների առթիւ։

Փառասէր Պասկեվիչը սաստիկ զայրացած էր ինչպէս Ներսիսից, որ համարձակուել էր իրան դէմ բողոք ուղղել Պետերբուրգ, նոյնպէս և կոմս Դիպիչից, որ Ներսիսի բողոքագիր յանձնել էր Զերնիշովին կայսեր զեկուցանելու համար։

Ուստի Զերնիշովին տուած բացատրութեան

մէջ՝ Պասկեվիչը հարուածում է ինչպէս Ներսիսին, նոյնպէս և Դիբիչին։

—«Եթէ երեք անգամ իմ յայտնած կարծիքների մասին,—գրում է Պասկեվիչը,—կոմս Դիբիչը օրինաւոր կերպով հասցրած լինէր բարձրագոյն ունկնդրութեան, այն ժամանակ այդ արքեպիսկոպոսի գանգատը ինձ վրայ ինքնստինքեան հասկանալի կը լինէր և դուք մինչև անգամ տեղիք չէիք ունենալ նրա Ներսիսից ստացած նամակը թագաւոր կայսեր զեկուցանելու, որովհետև նորին Մեծութեանը բոլորովին յայտնի կը լինէին Ներսիսի բոլոր արածները և իմ վարմունքը դէպի նա։ Այնժամանակ շատ հեշտ կը լինէր տեսնել, որ Ներսիսի իմ վրայ բարդած ամբաստանութիւնների և մեղադրանքների շարժառիթը այն է, որ նա իմացել է թէ ինչպէս ես յայտնել եմ տէրութեանը նրա վարմունքը և թէ այդ պատճառով Ներսիսին մնում է ամենաուժեղ միջոց, որև է կերպ արդարանալու փոխարէն՝ մեղադրել ինձ, որ ես գիտութեամբ դաւադրութիւն եմ կազմում Հայոց եկեղեցւոյ դէմ, շարժում եմ էջմիածնի վանքի սրբազան շինութեան հիմունքը, խանգարում եմ Հայոց հոգևորականութեանը բարձրագոյն շնորհած հրովարտակները և այլն։ Եւ այս մեղադրանքները Ներսէսը չի հաստատած ոչ մի ապացոյցով, որովհետև նա շատ վստահ է եղել առանց ապացոյցների էլ գտնել իմ դէմ վկայութիւններ»։

ՄԽԹ

«Իմ քաղաքությունների մեջ,— շարունակում է Պասկեվիչը,— մանրամասն նկարագրված են այն բոլոր դեպքերը երբ ես կամ դիմադրել Ներսիսին և կամ հասկացրել եմ իրան իր վարմունքի անվայելչությունը։ Իր փառասիրական դիտավորությունները ի կատար ածելու համար՝ նա երկու անգամ ոտնատակ տվեց զօրքերը վտանգի ենթարկեց։ Իշխելու համար նրա ունեցած սէրը և միակամության նպատակները այն արին, որ «Հայոց աշխարհի» քաղաքական վարչության մէջ ոչ միայն անծգուտ կռիւ, այլ և ֆանատիկոս։ Ներսեսում անիրաւացի ձգտումներ երևացան՝ արքունական կալուածները Հայոց եկեղեցու սեպհականություն դարձնելու համար։ Նրա ինքնիշխան գործերը հակառակ այն կանոնների, որ հարկատուներին հոգևոր պնդումներ դարձնելու համար են սահմանուած՝ այլևս անտանելի եղան։

«Վերջապէս չնայած, որ ես պահանջում էի, որ նա առանց մարմնաւոր իշխանության դիտությանը՝ երբէք յարաբերություն չունենայ սահմանակից պարսիկ և տաճիկ իշխանաւորների հետ, իմացուցաւ, որ նա պատերազմի ժամանակ գրագրություն է ունեցել թշնամիների հետ և այդ գրագրությունների մէջ ներկայացնելով ինքնիրան որպէս դրացի և իշխող, բաժանել է իր շահերը տերության ընդհանուր օգուտներից։

«Զեղ եմ թողնում դատել թէ ես, բազմաձրագոյն կամքով ինձ յանձնարարուած կոչմանը, կարող էի արդեօք թոյլ տալ, որ յիշեալ արքեպիսկոպոսը շարունակէ իր աղօրինակ վարմունքը առանց որև է ընդդիմադրության իմ կողմից։ Ես արդեօք ես իրաւացի պատասխանատուության տակ չէի ընկնիլ, եթէ այդպիսի դէպքերում ես թոյլ շարժէի ի հաճոյն նրա։ Ի նկատի առնելով և այդ, որ Հայոց եկեղեցին միշտ գտնել է այսպէսի կառավարության հսկողության ներքոյ, կարծում եմ թէ ես միղաւորը կը լինէի, եթէ այս դրդիչը չքաղաքտրէի տերությանը։

«Ներսէս արքեպիսկոպոսի հետ ծառայական դրդիչների վերաբերությամբ ոչինչ յարաբերություն չունենալով, ես երբէք չեմ կարող այն աստիճան ինձ սարսռացնել, որ թոյլ տալի ինձ որև է անձնական կիրք կամ մասնաւոր անպատասխանություն։ *)

«Իմ թէ գրաւոր և թէ բերանացի յարաբերությանց մէջ այս Արքեպ. հետ՝ ես միշտ ցոյց եմ տուած պատշաճաւոր յարգանք դէպի նրա աստիճանը և ի հարկէ, ապագայում էլ չեմ փոխել իմ բնությունը այն աստիճան, որ իմ անձով վրէժխնդիր լինէի Ներսիսին կամ նրա համախոհների այն ամբաստանությունների համար, որ նրանք ինձ վրայ բարդում են։ Իսկ ինչ կը

*) Ծանօթ. Զերնիշովը իր նամակում յորդորում էր Պասկեվիչին կայսեր անունից՝ Հայ հոգևորականության հետ քաղաքավարի լինել։

վերաբերի սրբազնագոյն Պատրիարքին և Հայոց հոգևորականութեանը, ես միշտ արտայայտում եմ առանձին առ նոսա ուշադրութիւն և ջանք, որ ցոյց տամ նրանց իմ բոլոր յարգանաց նշանները։ Կարող եմ հաւատացնել, որ այս մասին ես կանխապէս կատարած եմ այն Բարձրագոյն բարեհաճութիւնը, որ այդ առարկայի վերաբերութեամբ ինձ յայտնուած էր։ *)

ՄԽԴ

Լոկ այս գրութեամբ չբաւականացաւ Պասկեվիչը՝ այլ Ներսիսին միանգամայն ջախջախել կամենալով Սերոբէ վարդապետին Էջմիածին ուղարկեց, որ այնտեղից նորանոր մեղադրանքների պաշար գտնի ու իրան հասցնի։

Սերոբէն այդ դերը ևս կատարելով իր հաւաքած տեղեկութիւնները հաղորդեց կոմսին, որ շտապեց և Բլուդովին հետևեալ ծածուկ նամակն ևս գրեց. **)

«Անցեալ 1828 թուի դեկտեմբերի 25-ին Բարձրագոյն հրամանով Հայոց եկեղեցւոյ կազմակերպութեան մասին՝ ի թիւս այլոց պատուիրուած է. 1) Ներսէս արքեպիսկոպոսին մի յարմարաւոր պատճառաբանութեամբ թողն. Բէսարաբիայում և նրա գրագրութիւնների վրայ լուրջ հսկողութիւն սահմանել։ 2) Իրաւունք տալ

*) Акты, VII, եր. № 275, № 222.
**) Акты, VII, եր. № 276, № 223.

ինձ նմանապէս գաղտնի հսկողութիւն ունենալ Յովսէփ և Ալամդարեան վարդապետների վրայ։

«Այժմ ես ստացայ (Սերոբի միջոցաւ) հետևեալ տեղեկութիւնները։

ա) Ներսէս արքեպիսկոպոսը շարունակում է ուղարկել այստեղ Բեսարաբիայից իր թղթերը՝ նրանց տակ ստորագրելով «արքեպիսկոպոս Թիֆլիզի եւ Բեսարաբիայի» և Հայոց եկեղեցիներումն էլ յիշատակւում է որպէս Թիֆլիզի արքեպիսկոպոս։

„Այս այն մտքով է կատարւում, որ այստեղի հայերին կարողանայ հաւատացնել թէ նա իր ձեռքում երկու նշանաւոր թեմերի կառավարութիւնը ունենալով, մեր տէրութիւնից այժմ աւելի իրաւունքներ է վայելում և յարգանք, քան առաջ։

բ) „Իր մասնաւոր նամակների մէջ նա անդադար կրկնում է թէ շուտով կը վերադառնայ Վրաստան, որպէս Պատրիարքի լիազօր օգնական։

„Այս լուրը տարածում են նրա կուսակից Յովսէփ և Ալամդարեան վարդապետները այն մտքով, որպէսզի այստեղի հայերին վախի և հնազանդութեան մէջ պահեն առ Ներսէս և չթոյլ տան՝ Հայոց եկամուտները անհաշիւ վատնելու մասին՝ գանգատ յարուցանելու։

գ) „Այս նպատակին հասնելու համար նրանք մի յիմար լուր են տարածել, որ իբր թէ թագաւոր կայսեր աչքերը ցաւում են եղել և բուժելու համար Ներսէս արքեպիսկոպոսին Պե-

տերբուրգ են հրատիրել, ուր նա ազօթքով բոլորովին բժշկել է կայսեր աչքերը և այդ պատճառով այժմ Սրքուսնիքում է լինում, վայելելով Նորին Մեծութեան կատարեալ վստահութիւնն ու բարեհաճութիւնը։

դ) „Իմ ապրիլի 6-ին գրութեան մէջ ես պատիւ ունեցայ հաղորդել ձեզ Եփրեմ Պատրիարքի ինձ գրած պատասխանը, իբր թէ Յովհաննէս Կարբեցի արքեպիսկոպոսը, որին նա առաջ նշանակել էր Աժտարխանի թեմը կառավարելու համար, հիւանդացել է և թէ այդ պատճառով նա ընտրել է Ռուսաստանի Հայոց հովուապետի պաշտօնի համար Բարսեղ արքեպիսկոպոսին։ Իսկ այժմ իմացուեցաւ, որ Յովհաննէս արքեպիսկոպոսը երբէք հիւանդ չէ եղել և թէ սկզբում իրաւ որ պատրիարքը նրան նշանակած է եղել Աժտարխանի առաջնորդ, բայց յետոյ՝ Յովսէփ վարդապետը Ներսիսից կամ նրա Թիֆլիզի արբանեակների մէկից նամակ է ստացել թէ՝ մի ամբողջ տարի ոչ ոք չնշանակուի Աժտարխանի առաջնորդ և այդպիսով համոզել է Պատրիարքին փոխել իր առաջուայ որոշումը և դրդրութիւն բանալ, որպէսզի ժամանակը ձրդձղուի, մինչև որ Ներսէս արքեպիսկոպոսը կը վերադառնայ այստեղ Հայոց եկեղեցին լիազօր իրաւունքներով կառավարելու համար։

„Եփրեմ Պատրիարքի անցեալ տարուայ նոյեմբերի 16-ին ինձ ուղարկուած գրութեան մէջ, որի պատճէն ներկայացրած է ձեզ Ներսէսը՝ իմ

դէմ արած դանդատանաց հետ միասին, ասած է որ Ներսէսը Բեսարաբիա գալիս յանձնել է Շամախու թեմը Մինաս եպիսկոպոսին, Շամշադինը՝ Գրիգոր եպիսկոպոսին, Ղարաբաղը՝ Սարգիս արքեպիսկոպոսին և Փամփակը՝ Առաքել եպիսկոպոսին, իսկ Թիֆլիզի Հայոց հոգևոր գործերի և եկեղեցական վարչութեան նախանդամ նշանակել է Սիմէօն արքեպիսկոպոսին, տալով նրան իբրև օգնական անդամ և վերատեսուչ Թիֆլիզի Հայոց ուսումնարանի Ալամդարեան վարդապետին։ Պատրիարքի այդպիսի բացատրութիւնից հարկ էր իբր եզրակացնել, որ Ներսէսը իր գնալուց առաջ բաժանելով եկեղեցական վարչութիւնը գաւառների վրայ, ոչ իրան և ոչ Թիֆլիզում նշանակուած իր Սիմէօն արքեպիսկոպոսին չէ վերապահած իրաւունք և իշխանութիւն այդ ասոնցին վիճակները կառավարելու մասին. բայց այժմ կատարելապէս յայտնի է. որ Սիմէօն արքեպիսկոպոսը և նրան ղեկավարող Ալամդարեանը՝ Ներսիսի Բեսարաբիայից ուղարկած հրահանգներով, լիազօր իշխանութեամբ են վարում այս բոլոր թեմերի գործերը և իրանց երկուսի ստորագրութեամբ՝ հրամաններ են ուղարկում նրանց, չնայելով որ յիշեալ թեմերում կան եպիսկոպոսներ, որոնք աստիճանով իրանցից բարձր են։ Այդպիսի կարգադրութեանց պատճառով բոլոր եկեղեցական եկամուտները բերում են Թիֆլիզ և առաջուայ նման առանց հաշուի ծախս են լինում։

„Վերոյիշեալ Բարձրագոյն հրամանի համաձայն՝ հարկաւոր համարելով այս բոլոր հանգամանքները հասցնել ի գիտութիւն ձեր և որպէս ապացոյց այդ տեղեկութիւններին ուղարկելով Յովհաննէս Կարբեցի արքեպիսկոպոսի Էջմիածնից յանուն Թիֆլիզի քաղաքացւոց գրած երկու նամակներից քաղուածներ, պատիւ ունիմ աւելացնելու, որ Ներսէս արքեպիսկոպոսի խորամանկութիւնները, նրա ազդեցութիւնը Եփրեմ ծայրագոյն Պատրիարքի վրայ և վերջապէս նրա այստեղի կուսակիցների տարածած ψեսակար լուրերը և տեղեկութիւնները միմիայն այն ժամանակ վաղճան կունենան, երբ պաշտօնապէս Վրաստանում մի ուրիշ արքեպիսկոպոս կը նշանակուի փոխանակ Ներսիսի, իսկ սա մշտականապէս կը հաստատուի Բեսարաբիայի կամ մի ուրիշ թեմի արքեպիսկոպոս“։

ՄԵՆ

Դրանով էլ չբաւականացած՝ Պասկեվիչը հետևեալ գրութիւնն էլ Եփրեմ Կաթողիկոսին ուղղեց՝ „Անցեալ տարուայ Նոյեմբերի 16-ին սրբազնակատարութիւնը յարգելի գրութեամբ ինձ հաղորդած էիք, որ Ներսէս արքեպիսկոպոսը իր իշխանութեան տակ եղած Հայոց հոգևորականութեան գլխաւոր կառավարիչը լինելով՝ Շամախին յանձնել է Մինաս եպիսկոպոսին, Շամշադինը Գրիգոր եպիսկոպոսին, Ղարաբաղը՝ Սարգիս

եպիսկոպոսին և Փամփակը՝ Առաքել եպիսկոպոսին։ Որովհետև 1817 թուի Նոյեմբերի 24-ին Բարձրագոյն հաստատուած հոգևոր գործերի և ազգային լուսաւորութեան նախարարութեան 143 պարբերութեամբ սահմանուած է, որ Հռոմէականաց, Յունաց և Հայոց վիճակաւոր եպիսկոպոսները նշանակւում և արձակւում են Բարձրագոյն հրովարտակներով յանուն կառավարիչ Սենատի,—վասն որոյ ես խոնարհաբար խնդրում եմ ձեր սրբազնակատարութիւնից յարգել ինձ ծանուցանելով՝ ա) արդեօք ռուսաց տէրութիւնից եղած է թոյլտուութիւն, որ Ներսէս արքեպիսկոպոսը համարուի գլխաւոր կառավարիչ Հայոց հոգևորականութեան։ բ) Վերոյիշեալ չորս վիճակները ե՞րբ է յանձնել նա Մինաս, Գրիգոր, Առաքել եպիսկոպոսներին և Սարգիս արքեպիսկոպոսին, այսինքն՝ իր Բեսարաբիա գնալու միջոցին թէ առաջ։ գ) Ի՞նչ պատճառով Ներսէս արքեպիսկոպոսը չի խնդրած Նորին Կայսերական Մեծութեան Բարձրագոյն բարեհաճութիւնը յիշեալ հոգևորականներին իրանց պաշտօնների մէջ հաստատելու մասին։ Եւ դ) արդեօք նրանք իրանց պաշտօնները ստանձնած միջոցին՝ երդուե՞լ են Նորին Մեծութեանը հաւատարիմ հպատակ լինելու մասին։—Այս տեղեկութիւնները, որ ինձանից պահանջում է օտար դաւանութեանց նախարարը, խոնարհաբար խնդրում եմ հաղորդել ինձ ամենակարճ միջոցում»։

Դեռ այս գրութեան պատասխանը չստացած՝ Պասկեվիչը բարձրից հրահանգ ուղարկեց Ներսիսի մասին իր ունեցած բանակցիները և առհասարակ այդ առթիւ եղած ամեն տեսակ գործերը վերջացած համարելով՝ ձեռնարկել ռուսական պատերազմին։ *)

Այսպէս էլ եղաւ։

Պասկեվիչը պատերազմի դաշտը մեկնեցաւ՝ երկրի քաղաքական վարչութիւնը ժենեռալ Սարեկալովին յանձնելով և նրան՝ ի միջի այլոց, պատուիրելով խիստ հսկողութիւն ունենալ Ներսիսի գրագրութեանց և նրա կուսակից Յովսէփ և Ալամդարեան վարդապետների վրայ և „բոլոր այն անձանց վրայ, որոնց հետ նրանք սերտ յարաբերութիւն և կապեր ունեն և առհասարակ առաջն առնել, եթէ նրանք նորանոր խարդախութիւններ և նենգութիւններ հնարեն։ „այս առարկայի վերաբերութեամբ, գրում էր Պասկեվիչը Սարեկալովին,—ինչ տեղեկութիւն որ հասնի ձեզ, հաղորդեցէք ինձ“։

ՄԽԶ

Ինչպէս Ներսէսը, նոյնպէս և նոր հոգևորական և աշխարհական կուսակիցները միանգամայն տեղեկութիւն չունենալով թէ իրանք գաղտնի հսկողութեան տակ են և թէ իրանց գրագրութիւնքը բռնւում են՝ շարունակում էին միմեանց հետ իրանց գրաւոր յարաբերութիւնները, որոնցից և Վրաստանի քաղաքացիական իշխանութիւնը կարողանում էր ճիշտ տեղեկութիւններ ստանալ Ներսիսի և նրա կուսակիցների գործունէութեան մասին։

Այդ տեղեկութիւններից՝ կառավարութեան համար ամենահետաքրքրականն այն էր, որ Ներսէսը Բեսարաբիայից կառավարում և իշխում էր ինչպէս Եփրեմ կաթողիկոսի, նոյնպէս և Սինոդի ու միաբանութեան վրայ։

Սինոդը այն աստիճան ընկճուած էր, որ Ներսիսին դիմում էր միշտ „ամենախոնարհ յայտարարութիւններով“։ Եւ ոչ մի գործի չէր ձեռնարկում առանց նրա թոյլտուութեան։ Նոյնը անում էր և Եփրեմը, որի կաթողիկոսութիւնը անուանական էր։

Այս ամենի մասին Պասկեվիչին հաղորդում էր Սարեկալով ժենեռալը և Պասկեվիչը պատերազմի վերջանալուն էին սպասում, որպէսզի Ներսիսին վերջնականապէս տապալէ։

Ընթերցողը արդէն տեսաւ, որ Ներսիսի կաթողիկոսանալուն բացարձակապէս հակառակ էր Պասկեվիչը, որի հետ համամիտ եղան և Պետերբուրգում։

Եւ այնտեղից պատուիրել էին արդէն նրան, որ Հայոց եպիսկոպոսներից մինին աչքի առաջ

*) Акты, VII, եր. 277, № 224.

ունենայ կաթողիկոսութեան համար և փոքր առ փոքր նրան առաջ քաշէ և պատրաստէ Հայրապետի գահի վրայ բազմեցնելու։

Էջմիածնի այն ժամանակուայ միաբանութեան մէջ մի այդպիսի յարմարաւոր անձն էր Յովհաննէս եպիսկոպոս Կարբեցին, Մայր Աթոռի աւագ լուսարարը, չափաւոր զարգացման տէր, փառասէր, ճարպիկ և որ Պասկեվիչի համար ամենագլխաւորն էր, Ներսիսին ատող, նրան չհամակրող։

Ուստի երբ որ ռուս-տաճկական պատերազմը վերջացնելուց յետոյ Պասկեվիչը Թիֆլիզ վերադարձաւ՝ 1829 թուի հոկտեմբեր ամսին՝ խկոյն իր մօտ կանչեց Կարբեցուն կարևոր գործերի մասին խորհրդակցելու համար։—Այդ խորհրդակցութեանը մասնակից էր և Սերոբէ վարդապետը։

Որոշուեցաւ, որ Կարբեցին առայժմ նշանակուի Վրաստանի առաջնորդ, իսկ Սերոբէն նրա օգնականը դառնայ։ Նոր առաջնորդի առաջին գործը պիտի լինէր՝ Ներսիսի մարդկանց գործերից հեռացնել և նրանցից հաշիւ պահանջել։

Բայց որպէսզի այս որոշումը իրագործելու համար՝ արտաքին ձևերն էլ պահպանուած լինին, հարկ էր Յովհաննէս արքեպիսկոպոսին վերադառնալ Էջմիածին, տանելով հետը Պասկեվիչի նամակը, որի մէջ կոմսը Վրաստանի թեմի անբարեկարգութիւնը նկարագրելով՝ խնդրելու էր Եփրեմ կաթողիկոսից՝ Կարբեցուն առաջնորդ կարգելով՝ առաջարկել Պետերբուրգ ի հաստատութիւն։

Միևնոյն ժամանակ Սերոբէ վարդապետն էլ, իր հերթում, պիտի դրդեր Թիֆլիզցի հայերին մի-մի խնդրագիր ներկայացնել թէ Պասկեվիչին և թէ կաթողիկոսին, յայտնել որ իրանք ցանկանում են Յովհաննէս արքեպիսկոպոս Կարբեցուն իրանց առաջնորդ ունենալու։

Այս ամենը շատ հրապուրիչ թուաց Կարբեցուն, որի առաջ լայն ասպարէզ էր բացւում անարգել հայրապետական գահը բարձրանալու։

Ուստի փութաց նա և Սերոբէի օգնութեամբ՝ հետևեալ զեկուցագիրը տուեց Պասկեվիչին, իբր ի հրահանգութիւն նրա գործելու եղանակի մասին։*)

Մեկ

„Ներսէս արքեպիսկոպոսը,—գրում էր Կարբեցին կոմս Պասկեվիչին,—Թիֆլիզից Բեսարաբիա գնալով, լիազօր իրաւունք է տուել Վրաստանի թեմը կառավարելու համար Ալամդարեան վարդապետին և որպէս սրան օգնական՝ նշանակել է Սիմէօն եպիսկոպոսին։ Թիֆլիզի ամեն մի եկեղեցւոյ համար՝ նա իր մերձակայ մարդկերանցից նշանակել է երեցփոխներ, որոց հրամայել է եկեղեցիների բոլոր եկամուտները

*) Акты, VII եր. 278—280, № 227.

ցանկանալ թեմական Ալեքսանդրին Վասիլ Ալպիդարեան
եղեալ ի Պոլսոյ Զիր ի Քրիստոս ասելոյ ի Փոքրագոյն
Բեսարաբիա Ներսիսին»։

Մինչև 1826 թուականը Երբ Էջմիածնի վանքի պաշտ-
պանից ծիսական ազատուեցաւ Ներսէս արքեպիսկոպոսը
մի Սինոդ հաստատեցաւ որ բնակուած էր իր կոնդակներից
ապրելն չկարողանալով դիմեր հանձնել
ազգաւորների մէջ։ Յովհաննէս արքեպիսկոպոսին, որ աւանդուած էր Թէ բուն իր ծառայու-
թիւնները թէ ընդհանրապէս թէ նոր ապ յարդանքի որ նա վայելում էր Սակայն ցանկա-
նալով Յովհաննէս արքեպիսկոպոսի ազդեցու-
թիւնը նուազեցնելու և ըստ իր վարմունքի Կաս-
պարով բացնոյ Եղեալ դիմեալ Պատրիարքին
հանձնարարել վանդակներին իր գնդի վրայ
պահել, Ներսէսը վիրաւոր լինելով մուտք
Յովսէփ վարդապետին թէ Սինոդի վրայ և թէ
Պատրիարքական բոլոր գործերի վարչութեան
վրայ ու հրամանագրեց նրան վարուել ամենքի
հետ բանութեամբ։

Հնգեալ Ներսէս արքեպիսկոպոսը Թիֆ-
լիսից գնաց, նրա երկրորդ արքեպիսկոպոսը, որ թէ
բնաւորութեամբ և թէ մանաւորապէս ամենքի
հետ վարուելու մարդ էր։ Սարգիս Սիմէոնեանը վարդապետ Սիմէ-
օնը գնաց պատուիրակութեամբ նշանաւոր
դատարանի կողմից։ Զարթանոցի
Ներսիսեան Ելեալ Հայերից։ Կարծում
է թէ այդ փոքրերի մեծ մասը դարձել են

Ներսիսին, իսկ մեծագոյնը պաներ ենք։ Հիմա
Ներսէս Կանխեցի Յովսէփ Վարդապետին
սեղկրում Վարդապետներին, որոնք
քանանդներին Աստուածաշունչին Վրայ
հիւանդանում են քանի մանրամասնութիւնները
Թիֆլիզ Ներսիսի արքեպիսկոպոսը
ճամբարդ։

Էջմիածնի Յովսէփ Պատրիարքը, որ
դիմելով հրամանով Ճանաչուն
լով թէ Պատրիարքին թէ Սինոդին
վարդապետներին, ցաւանդամ
էր Սինոդին թէ արտաքին
կրկին Պատրիարքը վանքի
իր հրամանները ցնոր
Պատրիարքը վանքի
ուրեմն Յովսէփից
թիթեղը, որպէս
Որովհետև մեզ
ոչն, Պատուոյ Էջմիածնի
ամենամի ժամանակ
քերը վճռեցին
ամենամի
Միաբանները
Յովսէփը
թիթեղ վանքը
արքեպիսկոպոսը

տով Վրաստան դառնալ և Պետերբուրգ գնալու միջոց չգտնելով՝ մօտերումս պահանջում էր Պատրիարքից, որ նրան տրուի նաև Աժտարխանի թեմը, և թոյլ պատրիարքը Յովսէփ վարդապետի սիրմամբ, բայց առանց Յովհաննէս արքեպիսկոպոսի և միւս՝ Սինօդական անդամների համաձայնութեան, տուեց իր հաւանութիւնը։

Այդպէս ահա, որպէս զի վերջ տրուի այն բոլոր անկարգութիւններին, որ թեմերում կատարւում են և արգելք դրուի էջմիածնի վանքի քայքայմանը՝ ամենից առաջ հարկաւոր է դիմադրել Ներսիսի մտադրութիւններին և սահմանափակել նրա իշխանութիւնը միմիայն Բեսարաբիայի թեմով։ Այս պատճառով հարկ էր, որ ի պատասխան Պատրիարքի դրութեանը թէ նա Աժտարխանի հանգուցեալ Յովհաննէս արքեպիսկոպոսի տեղ առաջնորդ է ուզում կարգել Ներսէս արքեպիսկոպոսին՝ գրել նրան,—հրահանգում է Կարբեցին Պասկեվիչին,—թէ „որովհետև Պետերբուրգի նախարարութիւնը և ես (Պասկեվիչը) յայտնած եմք Ն. Կ. Մեծութեան կամքը, որ Ներսիսի փոխարէն Աժտարխանի թեմի կառավարութեան համար ընտրուի էջմիածնի եպիսկոպոսներից մէկը վասն որոյ ես շատ զարմանում եմ, որ ձերդ սրբազնակատարութիւնը այժմ վարում էք նրանց (Նախարարութեան և իրան՝ Պասկեվիչին) հակառակ, ինչպէս որ ձեր տեղապահ Յովհաննէս արքեպիսկոպոսին էլ ես բացատրած էի։ Ես նմանապէս շատ զարմացայ,

տեսնելով ձեր նամակից, որ դուք ոչ մէկին չէք գտնում, որ արժանի լինէր Աժդարխանի թեմը կառավարելու համար և այդ պատիւ չէք բերում Պատրիարքական Աթոռին։—Այն ինչ հարցուփորձ անելով Յովհաննէս արքեպիսկոպոսին և Սերոբէ վարդապետին՝ ես իմացայ, որ ձեզ մօտ գտնւում են արժանաւոր անձինք թէ եպիսկոպոսներից և թէ վարդապետներից։ Օրինակ՝ Սինոդի անդամ Ստեփան արքեպիսկոպոսը, միւս Ստեփան արքեպիսկոպոս Զմիւռնացին և Գէորգ արքեպիսկոպոսը, որ մի խելօք, արժանաւոր և վերոյիշեալ երկուսից էլ աւելի ընդունակ մի անձնաւորութիւն է։ Իսկ ինչ կը վերաբերի վարդապետներին, ի հարկէ, նրանց մէջ էլ կան այնպիսիներ, որոնք կարող էին եպիսկոպոս ձեռնադրուիլ և թեմեր կառավարել, օրինակ՝ Սերոբէ, Էմմանուէլ և Յովսէփ Ղրիմցի վարդապետները“։

ՄԽԸ

„Դառնալով Վրաստանին,—շարունակում է Կարբեցին իր հրահանգները տալ Պասկեվիչին,—պէտք է ասել թէ՝ որովհետև այս թեմի կառավարութիւնը անմիջապէս կապուած է էջմիածնի հետ և վանքական ու պատրիարքական գործերը կարող էին կարգին գնալ այն յարգանաց պատճառով, որը պիտի վայելէր Թիֆլիզի եպիսկոպոսը, վասն որոյ ձերդ պայծառափայլութիւնը

կարող էիք տեղեկացնել պատրիարքին թէ քանի որ Թիֆլիզի ազնուականութիւնը, ժողովուրդը և հոգևորականութիւնը ցանկանում է, որ Վրաստանի առաջնորդ նշանակուի Յովհաննէս արքեպիսկոպոսը Ներսիսի փոխարէն, որոյ բացակայութեան միջոցին Թիֆլիզի թեմում այնպիսի անկարգութիւններ են մտել, որ եկամուտները վատնուած են, եկեղեցիքը դատարկուած և հոգևորականութիւնը մեռցել է առանց հոկողութեան, վասնորոյ պէտք է շուտով Վրաստան ուղարկել տալն այս Յովհաննէս արքեպիսկոպոսին, որպէս ամենախելացի և ժուժկալ անձնաւորութեան (գրում է Կարբեցին ինքն իր մասին), ժանաւանդ որ սա է սրբազնագոյն Պատրիարքի փոխանորդը և նախանդամ Սինոդի։ Սա կըկատարէ թեմիս գործերը, իսկ իրան փոխանորդ և օգնական կունենայ Սերոբէ վարդապետին, որ տեղեակ է քրիստոնէական օրինաց, Ռուսիոյ և Հայոց ազգի սովորութիւններին, յարգելի է երկրի կառավարչապետի առաջ և կարող է վերոյիշեալ Յովհաննէս արքեպիսկոպոսի հետ միասին օրինաւոր կերպով կառավարել թեմը և ժողովրդի բոլոր գործերը վարել արժանապէս և ըստ օրինաց“։

„Այսպէս ահա Յովհաննէս արքեպիսկոպոսը՝ ձերդ պայծառափայլութեան նամակի հետ կը վերադառնայ Էջմիածին, կըկարողանայ պատրիարքին համոզել նուազեցնելու Ներսէս արքեպիսկոպոսի և Յովսէփ վարդապետի ունեցած

ազդեցութիւնը և ապա կուգայ Վրաստան Պատրիարքից ստացած լիազօր իրաւունքով, որպէսզի գործէ համաձայն ձեր հրամանների և տերութեան նպատակների։ Ինչ որ վերաբերում է Յովհաննէս արքեպիսկոպոսի Վրաստանի առաջնորդ նշանակուելուն, այդ մասին Թիֆլիզի նշանաւոր հայերը, նմանապէս և հոգևորականութիւնը, չեն հրաժարուիլ ձերդ պայծառափայլութեանը յատուկ խնդիր մատուցանելու»։

Այսպէս ինքն իր մասին գրեց Կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսը և Պասկեվիչի նամակն ի ձեռին մեկնեցաւ Էջմիածին, այնտեղից յետոյ առաջնորդական պաշտօնով Թիֆլիզ գալու դիտաւորութեամբ։

Պասկեվիչի նամակը ստանալով և նրա բովանդակութեանը վերահասու լինելով՝ Եփրեմ կաթողիկոսը նոր գլխի ընկաւ թէ բանն ինչումն է, թէ ինչի Պասկեվիչը Կարբեցուն Թիֆլիզ է կանչել։

Բայց Եփրեմը մինչև հիմա ինչ էր արել ինքնուրոյնաբար, որ հիմայ կարողանար մի բան անել։

Գալով Ներսիսին՝ նա արդէն տեղի ունեցած եղելութիւնների մասին տեղեկութիւններ թէև ստացել էր, սակայն նա ևս անզօր էր Պասկեվիչի ծրագիրները ոչնչացնելու։

Ուստի և ինքնիրան մորմոքում էր Բեսարաբիայում և իր Թիֆլիզի բարեկամների հետ ունեցած գրագրութեան մէջ՝ սուրբ գրքի խօս-

քերով էր թափում իր սրտի մաղձը Կարբեցու վրայ՝ «Ատեցի զամենայն վաստակս իմ, զոր ջանացայ ի ներքոյ արեգական, վասնզի թողում զայս մարդոյ, որ լինելոց է զկնի իմ։ Եւ ո՞վ գիտիցէ՝ իմաստո՞ւն լինեցի թէ անմիտ իշխողն ամենայն վաստակաց իմոց զոր ջանացայ» (Ժողովող. Բ. 18 19)։

ՄԽԹ

Վրաստանի Հայոց առաջնորդութեան խնդրի հետ Պասկեվիչը զբաղուած էր միաժամանակ նաև Աժտարխանի Հայոց առաջնորդութեան խնդրով։

Վերջի թեմի առաջնորդը սկսեալ 1817 թուականից, էր Վաղարշապատի Յովհաննես արքեպիսկոպոս Յակոբեանը՝ Գառնակերեանց մականունով, որ 1829 թուականի սկզբներին վաղճանուեցաւ։

Ներսէս Աշտարակեցին, որ իրան համարում էր Հայոց բոլոր հոգևոր գործերի կառավարիչ, իրաւունք համարեց այժմ իր իշխանութիւնը տարածել նաև Աժտարխանի թեմի վրայ։

Ուստի Յովհաննէս Գառնակերեան առաջնորդի մահը Եփրեմ կաթողիկոսին իմացնելով Ներսէսը աւելացրեց, որ առ այժմ հարկ չկայ Աժտարխան առաջնորդ ուղարկելու, այլ նա ինքը ևս կը կառավարէ։ Եւ առանց կաթողիկոսի հաճութեանը սպասելու Ներսէսը իր թղթերի տակ արդէն սկսեց ստորագրել այսպէս «Արքեպիսկոպոս Վրաստանու և վերատեսուչ հոգևորական գործոց

Հայոց ի Բեսարաբիայ, ի Վալախիա, ի Մոլդավիա և ի Ռուսաստան և այլն»*)։

Սերովբէ վարդապետից Ներսիսի այս վարմունքի մասին տեղեկանալով՝ Պասկեվիչը շատ զայրացաւ, որ Աշտարակեցին, առանց տէրութեան կամքին, համարձակւում է սեպհականացնել իրան նաև թափուր մնացած Աժտարխանի թեմը, ուստի փութաց և խնդրեց Եփրեմին, որ Աժտարխանի թեմի համար մի արժանաւոր եպիսկոպոս նշանակէ առաջնորդ։ Նոյնպիսի խնդիրքով Աժտարխանի հայերն ևս դիմեցին կաթողիկոսին։ Սա նշանակեց Եփրեմ անունով մի արքեպիսկոպոսի, որ մի ցաւագար անձն էր։ Նա հրաժարուեց և քիչ յետոյ էլ վաղճանուեց։ Յետոյ կաթողիկոսը առաջարկեց Կարբեցի Յովհաննէս Արքեպիսկոպոսին, բայց նա չուզեց՝ տկար ձևանալով։ Այնուհետև կաթողիկոսը նշանակեց Կեսարացի Բարսեղ արքեպիսկոպոսին և այդ առթիւ Պասկեվիչին իմաց տալով գովում էր նրան՝ Բարսեղին, իբրև մի ընդունակ և փորձառու անձի։

Սակայն Սերովբէի տուած վկայութիւնից երևեցաւ, որ Բարսեղը Ներսէս Արքեպիսկոպոսի բարեկամն է և անշուշտ նրա ձեռքին գործիք կը դառնայ։

Ուստի աճապարեց Պասկեվիչը և եղելութիւնը տեղեկագրեց Պետերբուրգ։ Այնտեղից նախարարը գրեց կաթողիկոսին թէ՝ «Թագաւոր կայսրը

*) Այն ժամանակ Աժդարխանի թեմը կոչվում էր Ռուսաստանի թեմ։

չուզենալով նորին սրբութեանը Բարսեղի նման փորձառու և վստահելի օգնականից զրկել, իր բարձրագոյն կամքն է յայտնում, որ Աժտարխանի թեմի համար մի ուրիշ արքեպիսկոպոս նշանակուի Պասկեվիչի համաձայնութեամբ»։

Մի քանի ժամանակից յետոյ՝ Եփրեմը պատասխանեց կոմսին, որ նախ քան Ն. Կ. Մեծութեան կամքը՝ Բարսեղ արքեպիսկոպոսը ինքը հրաժարուել է Աժտարխանի առաջնորդութիւնից։ Եւ որովհետև ինքը ուրիշ յարմարաւոր անձն չունի Աժտարխանի թեմի համար, ուստի այդ թեմի առաջնորդութիւնն ևս առժամանակ մի ևս յանձնում է Ներսէս Արքեպիսկոպոսին։

Պասկեվիչի գայրոյթը իր գագաթնակէտին հասաւ, որովհետև լաւ զգում էր, որ կաթողիկոսը Ներսիսի թելադրութեամբն է շարժում։

Այդ պատճառաւ կոմսը վեկացաւ և դեկտեմբեր 26-ին №107 մի խիստ ընդարձակ գրութիւն ուղղեց նախարարին*), որին հաղորդում էր այն ամեն տեղեկութիւնները, որ Ներսիսի մասին իրան հաղորդել էին Սերովբէ վարդապետը և Կարբեցի Հովհաննէսը և իր գրութիւնը վերջացնում էր հետևեալ տողերով.

«Վերջ ամենայնի պարտաւոր եմ համարում ինձ ասել, որ եթէ տէրութիւնը կամենում է, որ Հայոց հոգևորականութեան պետը լինի մի վտանգաւոր և նենգամիտ անձն, որ իր խորամանկութեամբ ընդդիմադրէր տէրութեան դիտա-

*) Акты Кавк. арх. Ком. VII. եր. 280—282

նորութիւններին և աշխատէր հաւաքել իր ձեռքի մէջ ոչ միայն հոգևոր գործերի ծայրագոյն իշխանութիւնը, այլև խառնուում լինէր քաղաքական գործերում ևս,—այն ժամանակ կը մնայ ընտրել այդ պաշտօնի համար Ներսէս արքեպիսկոպոսին։ Իսկ եթէ, ընդհակառակը, տէրութեան հարկաւոր է մի ժուժկալ անձն, որ իր անձնական և միակողմանի նպատակների համար չխառնուէր վարչութեան գործերում, այլ լինէր հնազանդ և պատրաստ միշտ գործել համաձայն տէրութեան կամքին,—այն ժամանակ պէտք է ընտրել Կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսին»։

ՄԾ

Պասկեվիչի այս գրութիւնից յետոյ՝ Պետերբուրգի արքունիքը վճռական տնօրէնութիւններ արաւ, որոյ զօրութեամբ՝ Նոր-Նախիջևանն ու Բեսարաբիան առանձին թեմ կազմեցին. և Ներսէս Աշտարակեցին միմիայն այդ թեմի վրայ առաջնորդ անուանեցաւ։

Պատուիրուեցաւ կաթողիկոսին, որ Աժտարխանի թեմի համար, որից Մոսկուան ու Պետերբուրգը դուրս էր հանած, մի նոր եպիսկոպոս ընտրէ Պասկեվիչի փոխադարձ համաձայնութեամբը և առաջարկէ կայսեր ի հաստատութիւն։

Կայսերական այս կարգադրութեան առաջին մասից՝ այն է Նոր-Նախիջևանից և Բեսարաբիայից առանձին թեմ կազմելուց և Ներսէսին

յանձնելուց՝ շատ դժգոհ մնաց Պասկեվիչը և իր այդ դժգոհութիւնը մակագրեց հէնց նախարարի թղթի վրայ ըստ այսմ՝ «Ռուսաստանի Հայոց թեմերի նոր բաժանմունքը փոխանակ հոգևոր գործերի վարչութիւնը բարւոքելու, հազիւ թէ նոր չարիքներ չծնեցնէ։

Աժտարխանի թեմը, որ առաջ ամենանշանաւորն էր համարվում Ռուսաստանում, հիմա կը դառնայ մի բոլորովին աննշան վիճակ։

Իսկ Ներսէս արքեպիսկոպոսի Բեսարաբիոյ, կամ աւելի լաւ է ասել, ամենայն Ռուսիոյ առաջնորդ նշանակելովը՝ փոխանակ Էջմիածնի Սինոդի և ուրիշ հայոց հօտերի վրայ ազդեցութիւն ունենալու, տալիս ենք նրան մի նոր և լայնածաւալ ասպարէզ։ Ներսիսի բնութիւնը և արարքները յայտնի են նախարարութեանը։ Հարկ էր նրան զսպել, սանձահարել, մինչև իսկ պատասխանատուութեան ենթարկել։

Հարկ էր նրան զրկել ամենայն ազդեցութիւնից ընդհանուր վարչութեան վրայ։ Բայց տալ նրան մի թեմ, որի մէջ մտնում է գրեթէ ամբողջ Ռուսիան և Պետերբուրգը, մի՞թէ չէ նշանակում ուժեղացնել նրա ազդեցութիւնը ընդհանուր վարչութեան վրայ, տալ նրան աւելի մեծ ասպարէզ հնարագործութեանց համար և այդ հնարագործութիւններին էլ աւելի մեծ ոյժ տալ։

Նախարարութեան այդպիսի կարգադրութեանց հետևանքները կարող են այն լինել, որ Հայոց հոգևորականութեան գործերում եղած

չարիք ու անկարգութիւնները, որ մեծ մասամբ առաջ են գալիս Ներսէս արքեպիսկոպոսի ազդեցութիւնից՝ ոչ միայն չեն վերանալ, այլև կը մեծանան։ Նրա նոր պաշտօնը չի նուազացնիլ այդ ազդեցութիւնը. նա հնարք կը գտնէ օգտուիլ այդ պաշտօնից և այդ բանը կը ներկայացնէ Էջմիածնին իբրև ապացոյց տէրութեան դէպի ինքն ցոյց տուած առաւելագոյն վստահութեան։

Այն չարամիտ հոգևոր անձինք, որոնք Ներսիսի արարքների համար գործիք են, մնում են տակաւին իրանց պաշտօններում, և առաջուայ անկարգութիւնը դեռ ևս երկար կը շարունակուի։

Յայտնի է, որ Ներսէսը հնարքներ գիտէ՝ շլացնելու ում և իցէ առաջին անգամից։ Երկարացնելով իր իշխանութեան ժամանակամիջոցը զանազան խոստումներով, նա հնարք կը գտնի գործ դնել այդ իրա օգտին։

Բայց վաղ թէ ուշ նախարարութեան աչքերը պիտի բացուին և այն ժամանակ նա (նախարարութիւնը) ստիպուած կը լինի վերադառնալ այն միջոցներին, որ այժմ նրան առաջարկում են։

Իսկ մինչև այն ժամանակ՝ այդ վտանգաւոր մարդուն բարձրացնելով (գուցէ մինչև պատրիարքութեան աստիճան) չէ կարելի չնախատեսել այն բազմաթիւ չարիքը, որ այն ժամանակ աւելի դժուար կը՞ լինի վերացնել։ Այժմ ամենայարմար ժամանակն է և հարկ էր դրանից օգուտ քաղել»։*)

*) Акты, VII եր. 287

ՄԾԱ.

Մինչև որ Պասկեվիչի այս և սրա նման միքանի նկատողութիւնները Պետերբուրգ կը հասնէին՝ այնտեղ արդէն Ներսէս արքեպիսկոպոսի մասին դուրս եկաւ հետևեալ բարձրագոյն հրովարտակը՝ կառավարիչ Սենատի անունով «Տեսնելով թէ ի պատճառս բազմանալոյ ի միջոյ տէրութեանս Մերոյ և մանաւանդ ի Նախիջևան, ի Գրիգորիսապօլիս, ի Ղարասուբազար և յայլ քաղաքս նոր Ռուսաստանի և Բեսարաբիոյ նահանգի հայ լուսաւորչական ժողովրդոց՝ բաւական չերևի միայնակ վիճակաւոր առաջնորդութիւն, ու մինչև ցայժմ էր Աժտարխան, հրամայեմք սահմանել զնոր թեմ Հայոց՝ անուանակոչեալ զայն Նախիջևանու և Բեսարաբիոյ, ներ առեալ յայն (նրանում ընդունելով) և զամենայն եկեղեցիս Ս. Պետերբուրգի, Մոսկուայի և քաղաքաց նոր Ռուսաստանի և Բեսարաբիոյ»։

«Ամենաողորմածաբար հրամայեմք առաջնորդ լինիլ այսր թեմի Ներսէս արքեպիսկոպոսի Հայոց Վրաստանի, արձակելով զնա յառաջին պաշտօնէն»։

Այս հրովարտակը՝ գրուած 1830 թուականի ապրիլի 23 ին, Բլուդովը իր, նոյն ամսոյ 30-ին նամակով ուղարկեց Ներսիսին տեղեկացրեց նա և Եփրեմին ու Ներսեսին։*) Նամակի մէջ՝ նախարարը յայտնում էր, որ, ըստ իր միջնորդութեան, կայ-

*) Акты, VII եր. 287—288.

որը նրա, - Ներսիսի տրամադրութեան տակն է թողնում Բեսարաբիայում գրանուած 2000 դեսեատին գետինը, սրպէսզի նրա արդիւնքովը թեմական կոնսիստորիայ հիմնո ի ու պահպանի։

Բացի դրանից 5000 ռուբլի էլ արքունուստ տարեկան ռոճիկ սահմանուեցաւ Ներսիսին, իբրև թեմի առաջնորդի։

Կայսեր վերոյիշեալ հրովարտակից յետոյ՝ Պասկեվիչը հաստատուեց, որ այլ ևս աւելորդ էր Ներսիսի տեղին ու պաշտօնին մասին գլուխ թակել, այլ հարկաւոր էր Աժտարխանի թեմի համար գտնել իր ո զած անձին նշանակել տալ. որպէսզի Ներսէսը իր ձեռքը այնտեղ ևս չտարածէ։

Իսկ Պասկեվիչի ուզած մարդիկը երկուսն էին՝ Կարբեցին և Սերոբէն։

Առաջինը արդէն Վրաստանի առաջնորդացու և Եփրեմից յետոյ կաթողիկոսացու էր։ Մնում էր ուրեմն Սերովբէն, բայց սա էլ սոսկ վարդապետ էր և այն ժամանակուայ հասկացողութեամբ թեմական Առաջնորդ չէր կարող լինել։

Անհրաժեշտ էր ուրեմն նրան եպիսկոպոս ձեռնադրել տալ։

ՄԾԲ.

Այդ նպատակաւ Պասկեվիչը Սերովբէին յանձնելով Բլուդովի վերոյիշեալ նամակը առ Եփրեմ, նրան Էջմիածին ուղարկեց յանձնարարելով «Հայոց աշխարհի» նոր նահանգապետ իշխան Վասիլ

Օսեպիչ Բեհբութեանին, որ Սերովբէի հետ միասին Էջմիածին գնալով ամեն կերպ աշխատի նրան անյապաղ եպիսկոպոսացնել և Աժտարխանի համար առաջնորդ նշանակել տալ։

1830 թ. մայիսի 11-ին, Սերովբէն Երևան հասաւ և իշխան Բեհբութովի հետ խորհրդակցելով, վճռեցին, որ իրանց հետ Էջմիածին տանեն Շահնազարեան Դաւիթ խանին, որ թէ պատրիարքին և թէ միաբանութեանը սիրելի անձն էր։

Հասնելով Էջմիածին յիշեալ անձինքը և Բելուդովի նամակը կաթողիկոսին յանձնելով՝ յայտնեցին Պասկեվիչի ստիպողական պահանջը Սերովբէին եպիսկոպոսացնելու առթիւ։

Կաթողիկոսը անձնական տկարութիւնը առաջ բերելով հրաժարվում էր։ Այդ միջոցին Յովհաննէս Կարբեցին՝ հանգամանքից օգտուել կամենալով, առաջարկեց որ թող իրան կաթողիկոսացնեն, յետոյ ինքը իսկոյն Սերովբէին կը ձեռնադրէ եպիսկոպոս։*)

Բայց փառամոլ և անմիտ եպիսկոպոսի այդ առաջարկութիւնը մերժուեցաւ, որովհետև այդ մասին կոմսից հրահանգ չկար։

Դարձեալ դիմեցին Եփրեմին։ Անճարացեալ ծերունի հայրապետը միաբանական ժողով գումարելով՝ նրանց որոշմանը թողեց հարցի լուծումը։

Միաբանութիւնից կանոնական մի կարծիք, կամ խորհուրդ լսելու համար արդեօք Եփրեմը այդ ժողովը կազմեց թէ, գուցէ, պատասխանատուութիւնը իր վրայից թեթևացնելու համար, — չենք կարող հաստատ ասել, այսքանս յայտնի է, որ երբ Եփրեմը միաբանութեան կարծիքը հարցրեց, նրանք տհաճութեամբ պատասխանեցին. «գործէ՝ որպէս վեհափառութեանդ կամքն է»։

Միաբանութեան այդ պատասխանի ներքին միտքը չհասկացող ձևանալով և նրան բառացի իմաստիցը կպչելով իշխան Բեհբութովը դարձաւ դէպի կաթողիկոսը այս խօսքերով. «ազգի հայրապետը Դուք էք և Ձեզ տուած է իրաւունք եպիսկոպոսացնել ում որ Դուք արժան կը համարէք. Դուք ամենեին պարտական չէք ում և իցէ կարծիքները իմանալ և կամ հաշիւ տալ»։*)

Ժողովը առանց մի հետևանքի ցրուեց։ Վանքումը շշնջիւն ընկաւ։

Յովսէփ վարդապետը, Ներսիսի կուսակիցը, որին ցարդ վանքում «պստլիկ Ներսէս» անունն էին տալիս, սկսեց իր ձայնը բարձրացնել ընդդէմ Պասկեվիչի պահանջին։ Բայց... քիչ յետոյ լռեց։ Եւ ոչ միայն լռեց, այլ նաև Ներսիսին դաւաճանելով նրա հակառակորդների կողմն անցաւ։ Նրա այդ օրինակին հետևեցան Ներսիսի և միւս կուսակիցները ևս։

Ահա ինչից առաջացաւ Էջմիածնի «պստլիկ Ներսիսի» այդ իսկական պստկութիւնը, նրա այդ փոքրոգութիւնը։

Իշխան Բեհբութովը Էջմիածին գալուց առաջ՝ Պասկեվիչից գաղտնի հրահանգ ունէր՝ աշ-

*) Акты, VII, № 235.

*) Акты, VII, եր. № 233, № 233.

խատիլ և այս կամ այն կերպով՝ Յովսէփ վարդապետին որսալ, գրաւել։ Իսկ եթէ այդ չյաջողեց, այն ժամանակ նրա հետ վարուիլ, ինչպէս մի խռովարար, անբարեյոյս անձի հետ և կալանաւորել ու վանքից հեռացնել։

Ամենայն հաւանականութեամբ կալանաւորման և աքսորման երկիւղիցը՝ Յովսէփը տեղի տուեց։

ՄԾԳ

Յովսէփ վարդապետի մէջ կատարուած փոփոխութեան մասին՝ Սերովբէն Պասկեվիչին գրած ֆրանսերէն նամակում այսպէս էր գրում՝ «Յովսէփ վարդապետը սկզբում ծածկեց այն տպաւորութիւնը, որ իր վրայ ունեցաւ իմ եպիսկոպոս ձեռնադրուելը, բայց իր սիրտը տէրութեան և ձեր պայծառափայլութեան դիտաւորութեանց դէմ մաքառելու համար շատ անզօր լինելով՝ նա ստիպուած էր լռել»։

«Սա Ներսէս արքեպիսկոպոսից աւելի խորամանկ է և խաբեբայ,—շարունակում է Սերոբէն, — բայց չունի ոչ նրա միջոցները և ոչ նրա կրթութիւնը»։

Գալով Իշխան Բեհբութովին՝—նա էլ իր զեկուցագրի մէջ Յովսէփի մասին հետևեալն է գրում Պասկեվիչին՝ «Ես կարող եմ ձեզ հաւատացնել, որ այսօրուանից Յովսէփ վարդապետի արարքները համապատասխան կը լինին իմ նրան

տուած խրատներին և նշանաւոր գործերում՝ թէ պատրիարքը և թէ Սինոդի անդամները, ինձ կը դիմեն խորհուրդներ հարցնելու. վասն որոյ կարծում եմ, օգտաւէտ կը լինէր, եթէ այդպիսի դէպքերում, ես կախապէս նախազգուշացրած լինէի ձեր կողմից»։

«Ոչ իբրև անձիս գովաբանութիւն,- շարունակում է հայ ազգի ժեներալ Բեհբութովը,— զեկուցանում եմ ձեզ, որ ես այս կարճ միջոցում ձեռք բերի պատրիարքի և բոլոր այստեղի հոգևորականութեան վստահութիւնն ու հաւատարմութիւնը և ապագայում կարող եմ աւելի մեծ ազդեցութիւն ունենալ էջմիածնի վանքի գործերու վրայ և ուրեմն, օգտաւէտ գործիք կարող եմ լինել ձեզ՝ Հայոց եկեղեցու վարչութեան մասին բարի դիտաւորութիւնների իրագործման համար»։*)

Այսպէս ահա, սիրելի ընթերցող, Սերոբվէ նորընծայ եպիսկոպոսը և պայծառափայլ իշխան Բեհբութովը՝ ի հաշիւ Ներսիսի և նրա կուսակիցների և առհասարակ էջմիածնեցիների, իրանց համար տաքուկ ու փափուկ տեղեր էին պատրաստում։ Ե. ոչ մի աւելի ձեռքից չէին բաց թողնում Պասկեվիչին հաճոյանալու, նրա հանդէպ Ներսիսին անուանարկելու, վատաբանելու։

Իշխան Բեհբութովի յանդգնութիւնը մինչև այնտեղ հասաւ, որ Եփրեմի և միաբանութեան վրայ գործ դրած բռնութիւնն ու ստոր միջոց-

*) Акты, VII, եր. 289, № 234.

ները՝ իբրև իր անձնական բարեմասնութեան արգասիք հրատարակելով՝ Պասկեվիչի առաջ պարծենում էր իբր թէ՝ ինքը արդէն կատարեալ գործիք է շինել կաթողիկոսին և միաբանութեանը։

Մինչդեռ բուն իրողութիւնն այն է, որ կաթողիկոսը, իր, այսպէս ասած, բնածին թուլութեամբ, ստիպուած եղաւ զիջանել Բեհբութովի բռնի ու բռի վարմունքի առաջ։ Ահա դրա ապացոյցը։

*

ՄԾԴ

Չնայած իշխան Բեհբութովի ճոռամոքանութեանը թէ՝ Եփրեմը իբրև ազգի Հայրապետ եպիսկոպոս ձեռնադրելու համար ոչ ոքից կարծիք հարցնելու և ոչ ոքի հաշիւ տալու պարտական չէ, — այնուամենայնիւ զառամեալ կաթողիկոսը չէր կամենում Սերովբէին ձեռնադրել։ Նոյնիսկ Յովսէփի շուռ գալը՝ նրան, կաթողիկոսին չվհատացրեց։

Բայց սակայն՝ իշխան Բեհբութովը նրա կողքիցը չէր հեռանում և ամենայն անհերեսութեամբ պնդում և Սերովբէի ձեռնադրութիւն էր պահանջում, Պասկեվիչի նախընթաց պատուէրի համաձայն։

Կաթողիկոսը շարունակ մերժում և տատանվում էր։

Վերջապէս նա յայտնեց Բեհբութովին թէ՝

որովհետև աչքերը խաւար լինելու պատճառաւ՝ կարող չէ հանդիսին վերաբերեալ միքանի կարևոր աղօթքները կարդալ, — ուստի հարկ կը լինի Սերովբէի ձեռնադրութիւնը առ ժամանակ մի յետաձգել, մինչև որ ինքը յիշեալ աղօթքները անգիր անելու ժամանակ ունենայ։*)

Այս պատճառաբանութեամբ, ճիշտ է, ձեռնադրութիւնը էլի միքանի օր յետաձգեց կաթողիկոսը, բայց որովհետև Բեհբութովը դրակատօրէն յայտնում էր, որ ինքը Էջմիածնից չի հեռանալ, մինչև որ Սերովբէն չձեռնադրուի, — ուստի խեղճ ու մոլոր ծերունի հայրապետը մայիսի 22-ին ստիպուած եղաւ անկողնից վեր կենալ, դողդոջուն ոտքերով տաճարն իջնել և առանց պատարագ մատուցանելու Սերովբէին մի կերպ, եպիսկոպոսացնել «վայնաչարի»։

Այս տարօրինակ բռնի ձեռնադրութեանը ներկայ էին ի պարտուէ՝ 12 եպիսկոպոսներ։

Եւ ահա այս ձևով ու եղանակով կատարուած ձեռնադրութիւնն էր, որ Պասկեվիչի աչքում էլ աւելի կշիռ տուեց իշխան Բեհբութովի իբր անձնական բարեմասնութեանը, նրա իբր բարոյական ազդեցութեանը և հեղինակութեանը Եփրեմի և միաբանութեան վրայ։

Այս տեսակ ազդեցութեան հետևանք էր անշուշտ և այն որ Եփրեմը՝ Սերովբէին ձեռնադրելուցը երկու օր յետոյ, իբրև թէ ցանկացել է, որ Յովհաննէս Կարբեցին էլ՝ Թիֆլիս գնայ

*) Акты. VII. եր 2-9 № 233.

Ներսիսի հաշիւները քննելու։ Այսպէս է գրում գոնէ ինքը՝ իշխան Բեհբութովը։

Ահա նրա մայիս 25-ին ս. Էջմիածնից Պասկեվիչին գրած գրութիւնը՝ «կատարած լինելով ձեր հրամանները, ես պարտք եմ համարում զեկուցանել հետեւեալը։ Եփրեմ պատրիարքը արդէն 80-ամեայ լինելով և պարսից պատերազմի նախընթաց տարիքը բաւական վիշտ կրելով՝ այժմ շատ թոյլ է թէ առողջութեամբ և թէ աչքերով։ Իմանալով վճռական Բարձրագոյն կամքը Ներսէս արքեպիսկոպոսին Բեսարաբիա տեղափոխելու մասին՝ նա շատ բաւական էր և, կարծես թէ, նոր զուարթութիւն ստացաւ։

«Ես այստեղ եղած ժամանակս շատ անգամ առիթ ունեցայ առանձակի խօսել նրա հետ և միշտ տեսայ, որ այս ծերունին շատ խելացի և կատարելութեամբ է խօսում։ Նա սրտանց գաւում էր, որ Էջմիածնի գործերը խանգարուած են և թէ նա չունի լաւ օգնականներ։ Վերջ ամենայնի՝ շատ ծածկաբար ինձ յայտնեց թէ՝ «գուցէ ինքն եղ վերջի կարողիկոսն է»։

Ես աշխատում էի ամեն կերպ հաւատացնել նրան, որ սխալ է այդ կասկածը, և որքան կարողացայ հասկանալ, այդպիսի լուրեր տարածած են Ներսիսի արբանեակները, որպէսզի պատրիարքին և Էջմիածնի Սինօդին ստիպեն կատարութեան հակառակ գործելու։ Ըստ իմ կարծեաց, Ներսէսը ցանկանում է ձեռք բերել պատրիարքական աստիճանը։

Ներսիսի Թիֆլիզում գանուող գործակալները՝ դեռ Սերոբէն այստեղ չհասած, արդէն նրա մասին հաղորդել էին թէ Ներսէսը արդէն Պետերբուրգ է և շուտով Թիֆլիս պիտի ժամանէ։ Սերոբէի դալուց յետոյ՝ երբ Բարձրագոյն կամքը հաստատուեցաւ, ամեն ինչ լսեց։

Սակայն Վրաստանի և Աժարիստանի կանոնիատանների (Կարբեցու և Սերոբէի) ընտրութիւնը չի կարող գաղտնի մնալ և մինչև որ Թիֆլիզում առաջնորդ նշանակուի, Ներսիսի այնտեղի գործակատարները կարող են եկեղեցական գոյքերից շատ բան թագցնել*)։ Այս անկարգութեան առաջն առնելու համար,—գրում է իշխան Բեհբուդովը, պատրիարքը կը-ցանկանար, որ դուք համաձայնութիւն տայիք Կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսին Թիֆլիզ դալ կանխապէս և ուստից որ հարկն է՝ հաշիւ պահանջել»։

«Յովսէփ վարդապետը, — շարունակում է պայծառափայլ իշխանը, որ մի խելացի և ճարպիկ վարդապետ է, այժմ կառավարիչ է Էջմիածնի տնտեսական մասին, անդամ է այստեղի Սինօդի և մեծ ազդեցութիւն ունի թէ վանքի գործերի վրայ, թէ պատրիարքի և թէ նոյն իսկ Սինօդի անդամների վրայ։

*) Ոչ Պասկեվիչի և ոչ էլ նրա զուգակով պար եկող Բեհբութովի հոգը՝ ի հարկէ հայոց եկեղեցու գոյքերը չէին, այլ օր առաջ Կարբեցուն Թիֆլիզ տանել իբրև Ներսիսի հաշուառեալ և առաջնորդ։

Ծան. յոդ.

Հոգևոր վարչության զանազան անկարողության մասին, Թիֆլիզի հոգևոր իշխանության՝ պատրիարքին չհպատակվելու մասին և պատրիարքի իշխանության գրեթե ոչնչանալու մասին հարցուփորձ անելով՝ ես Յովսէփից իմացայ, որ այս բոլորը կատարվում էր Ներսիսի կամքի և կարգադրությունների համաձայն։ Ներսէսը ստիպելով պատրիարքին հրաժարվել իր աստիճանից որոշ մասին գրված է Պօլիս, Հընդկաստան և ամենուրէք, ուր որ միայն հայեր կան, ստանձնեց պատրիարքի բոլոր իշխանությունը և գործում էր ըստ իւր կամքի և ոչ ոքի մի բանում ամենևին հաշիվ չտալով։ Նրա սպառնալիքները սաստիկ ներգործում էին հոգևորականության վրայ և սա ստիպված էր ծառայողաբար խոնարհիլ նրա կամքի առաջ, մանավանդ որ Ներսէսը աշխատում էր տարածել թէ՝ ինքը գործում է համաձայն Ռուսիոյ տէրության կամքին։ Պատրիարքի նախարարության ուղղած վերջին գրությունը՝ Ներսիսին Բեսսարաբիայի և Աժդարխանի թեմերի, և միևնոյն ժամանակ, Վրաստանի էլ առաջնորդ պահելու մասին՝ սահագրությամբ ստացված էր Նոյնիսկ Ներսիսից և հետն էլ հրաման Սինոդի անդամներին, որ ստիպեն պատրիարքին անպատճառ ստորագրել այդ գրությունը և ուղարկել ըստ պատկանելոյն, առանց ձեր պայծառափայլության գիտությանը։

«Ահա ապագիսի դրության մէջ էր գտնվում մինչև ցայժմ էջմիածնի հոգևորականության

յարաբերությունը Ներսիսի հետ. իսկ այսուհետև գործերը տարբեր ուղղություն կը ստանան. .ս։*)

Եւ ստացան էլ։

Արդէն տեսանք, որ Յովսէփ վարդապետը իր դերը փոխեց։

Տեսանք որ Ներսիսին միմիայն Նոր-Նախիջևանի ու Բեսսարաբիայի թեմը վիճակուեցաւ։

Սերովբէն եպիսկոպոս դառնալով Աժդարխանի առաջնորդ կարգուեցաւ, իսկ Յովհաննէս Կարբեցին առաջարկուեցաւ կայսեր ի հաստատություն Վրաստանի թեմի համար։

Բայց նախքան հաստատությունը Կարբեցին, իբրև թէ կաթողիկոսի ցանկությամբ, շտապով Թիֆլիզ բերուեցաւ՝ Ալամդարեանին և առհասարակ Ներսիսի կո սակիցներին գործերից հեռացնելու։

Ալամդարեանին Պասկեվիչը քշել տուեց Էջմիածին՝ պահանջելով Եփրեմից որ նրան պատժէ և այլևս Թիֆլիզ չվերադարձնէ։

Բայց որովհետև Պասկեվիչին քաջ յայտնի էին, որ Եփրեմը այս կամ այն պատճառաւ Ներսիսի ազդեցության տակն է գտնվում և նրա ու նրա ծրագիրները պաշտպանելու միշտ պատրաստակամություն է ցոյց տալիս,—ուստի Պասկեվիչը արդէն պատրաստի ունենալով կաթողիկոսացուին—Կարբեցի Յովհաննէսին, այնուհետև աւելորդ էր համարում Եփրեմի անուանա-

*) Акты, VII եր. 289, 290 № 234.

կան կաթողիկոսութիւնը ևս։

Այսուհետև ահա ծագեցաւ Եփրեմի վերջնական հրաժարականի միտքը, որ նրան թելադրեց իշխան Բեհբութովը անուղղակի կերպով և գլուխ բերեց։

ՄԾԵ

Իշխան Բեհբութովը հոկտեմբերի 19-ին հետևեալ գրութիւնն*) ուղղեց Պասկեվիչին՝ «Եփրեմ պատրիարքը սոյն հոկտ. 8-ին № 179, մի յայտարարութիւն է տուել Էջմիածնի վանքին (Սինոդոսին), որով բոլորովին հրաժարւում է իր բարձր աստիճանից ու պաշտօնից և ինձ յատուկ մարդ էր ուղարկել նամակով և շատ խնդրում, որ գնամ վանքը՝ ինձ յատուկ գործ ունի յանձնելու։

«Ամսոյս 11-ին ես եկայ Էջմիածին և պատրիարքը անձամբ յայտնեց ինձ [illegible] հրաժարուելու մասին, ասելով թէ՝ նա զառ[illegible] թիւնից և լսողութիւնից զրկուած, դժուար է հոգևոր գործերի կառավարելը։—Նոյնիսկ նա անկարող է, վերոյիշեալ պատճառներով, կատարել իր բարձր աստիճանի երկու գլխաւոր պարտաւորութիւնները, որ ներկայումս շատ կարևոր են, այն է՝ միւռոն օրհնելը և եպիսկոպոս ձեռնադրելը։ Այս երկու գործողութիւնների զգաստացնելը, գլխաւոր խորհրդի, այսինքն մկրտութեան

*) Акты, VII, եր. 293, № 239.

վերաբերութեամբ. մեծ դժուարութիւններ է առաջ բերում Հայոց եկեղեցիների համար, և նորին սրբազնակատարութիւնը վախենում է, որ տաճկահայոց վիճակները, որոնք միշտ կախու�են ունեցել Էջմիածնի վանքից և այժմ մնում են առանց թեմական առաջնորդների, չլինի թէ Սսոյ կաթողիկոսի հնարքներով բաժանուին վանքից, որով սա բոլորովին կը զրկուի նրանց վրայ ունեցած իր ազդեցութիւնից, վանքի Սսոյ կաթողիկոսը՝ սկսելով Էջմիածնի ստորագրեալ թեմերի համար եպիսկոպոսներ ձեռնադրել և նրանց թեմեր բաժանելով՝ իր իշխանութիւնը նոյն թեմերի վրայ կը տարածէ։

Այս պատճառով Եփրեմ պատրիարքը չը-կամենալով իր կենդանութեան ժամանակ խանգարուած տեսնել այդ հին կարգը, ինքնայօժար կամքով հրաժարւում է իր բարձր աստիճանից, որպէսզի նորընտրուած կաթողիկոսը՝ իր պաշտօնը ժրութեամբ կատարելով և շատպելով միւռոն օրհնելու և եպիսկոպոսներ ձեռնադրելու, մատակարարէր բոլոր Հայոց եկեղեցիներին և ուր որ չկայ, տաճկնորդներ կարգէր, ու այդպիսով Հայոց հոգևոր վարչութեան և եկեղեցիների հատանելի չարիքների առաջն առնէր։

Այս հանգամանքը կաթողիկոսին ստիպել է ինձ իր մօտ հրաւիրել և խնդրել, որ նրա այս վճռական վարմունքի մասին, որքան կարելի է շուտ, տեղեկացնեմ ձեզ և ձեր բարեհաճութիւնը

խնդրեմ նոր կաթողիկոսի ընտրութեանը ձեռնարկելու համար»։

ՄԾԶ

«Կաթողիկոսի հետ տեսնուելուց յետոյ,— շարունակում է Բեհբութովը,- Էջմիածնի Սինոդի անդամները, դահլիճում ժողովելով, ինձ էլ հրաւիրեցին։ Այդ տեղում կարդալով Եփրեմ կաթողիկոսի հրաժարականը, որ իր ձեռքով է ստորագրած, անդամները խորհրդակցեցին երկու խնդիր վճռելու մասին. ա) Էջմիածնի հին կանոնադրութիւններով և օրէնքներով՝ կաթողիկոսը իրաւունք ունի՞ արդեօք հրաժարուել իր վեհ աստիճանից, և բ) վանքի հինաւուրց կարգ ու կանոնների համաձայն՝ ոչո՞ւ արդեօք անյապաղ կաթողիկոսի ընտրութիւնը և ընտրուածին առաջարկելով ձեռ և օտար դաւանութեանց նախարարին՝ խնդրել Բարձրագոյն հաստատութիւն, թէ՞ սպասել նախ ձեր թոյլտուութեանը։

«Առաջին խնդրի վերաբերութեամբ՝ միաձայն վճռուեցաւ, որ սկզբից ի վեր Էջմիածնում եղած օրէնքների և կանոնադրութիւնների համաձայն՝ կաթողիկոսը կատարեալ իրաւունք ունի կենդանութեան ժամանակ հրաժարուել իր բարձր աստիճանից, և այս հաստատեցին օրէնքներով և բազմաթիւ օրինակներով։

Իսկ երկրորդ խնդիրը Սինոդի անդամները ինձ առաջարկեցին վճռել, յայտնելով թէ նրանք

իմ կարծիքի համաձայն կը վարուին, ի նկատի ունենալով այս հանգամանքի ծանրակշիռ լինելը Էջմիածնի գործերի ներկայ դրութեան վերաբերութեամբ և խորատոյզ լինելով դրդող պատճառներին, մանաւանդ սուրբ միւռոնի պակասութեանը, առանց որոյ Հայոց եկեղեցիները չեն կարող կառավարուիլ,—այնպիսի պատճառներ, որոց համար, իմ կարծիքով, հարկ է փութացնել նոր կաթողիկոսի ընտրութիւնը, ցանկանալով ընդ սմին, որ Էջմիածնից կախումն ունեցող և այժմ առանց առաջնորդների մնացող Տաճկաստանի թեմերը չբաժանուէին նրանից (Էջմիածնից), վերջապէս տեսնելով Եփրեմ կաթողիկոսի խորին ծերութիւնը, թուլացած, աչքերի տեսութիւնից և ականջների լսողութիւնից զրկուած,— ես այնուամենայնիւ Սինոդի անդամներին յայտնեցի, որ տեղեակ լինելով թէ Եփրեմ պատրիարքը որանից առաջ և դարձեալ նոյնիսկ պատճառներով ամենահպատակօրէն խնդրած էր, որ ամենաողորմածաբար թոյլ տուի իրան հրաժարուել իր վեհ աստիճանից և նրա տեղը նշանակել Ներսէս արքեպիսկոպոսին, բայց առ այս Բարձրագոյն հաճութիւն չկայացաւ, ես այժմ չեմ կարող թոյլ տալ, որ Սինոդի անդամները ումիցէ կաթողիկոս ընտրեն, առանց նախապէս այդ մասին ձեր պայծառափայլութեանը հաղորդելու, որի մասին խնդրած է ինձ նաև ինքը կաթողիկոսը և որ ես պարտական եմ կատարել։ Այնուամենայնիւ՝ ես առաջարկեցի, որ

կաթողիկոսի հրաժարման պատճառով՝ նրանք (սինոդականները) ուշի ուշով պարապին հոգևոր վարչութեան վերաբերեալ գործերով, կարևոր դէպքերում խնդրեն նաև նորին սրբազնակատարութեան գոնէ խորհուրդները, նրանից բնաւ չպահանջեն պատրիարքական կնիքը և նրա հրաժարման պատճառով՝ ձեռնամուխ չլինին ոչ մի գործողութեան, մինչև որ ձեր պայծառափայլութեան թոյլտուութիւնը չստացուի։

Սինոդի բոլոր ներկայ եղող անդամները իմ ասածները միաբերան ընդունեցին և քանի այսմ՝ հոգևոր գործերի վարչութեանը ձեռնարկելով՝ կը սպասեն ձեր այս մասին անելիք հրամաններին։

Պարագ համարելով այս փոփոխութեանց մասին հաղորդել ձեզ՝ պատիւ ունիմ յայտնել, որ Եփրեմ պատրիարքը, իրաւ, բոլորովին թուլացել է, գուրկ է աչքերի տեսութիւնից և ականջի լսողութիւնից և այլ ևս հոգևոր գործերի վարչութեան մէջ չիտոնուելով՝ միմիայն իր անունն է ստորագրում։

«Այս բոլորը ձեր բարեհայեցողութեանը ներկայացնելով՝ ես կըսպասեմ ձեր հրամանին, որ ըստ այնմ վարուեմ, այսինքն թէ՝ թոյլ տալ արդեօք Էջմիածնի Սինոդի անդամներին, որ վաղուց ի վեր այս վանքում եղած կանոնադրութիւնների հիման վրայ կատարեն նոր կաթողիկոսի ընտրութիւնը,

կամ թոյլ տալ նրանց, որ ընտրեն երկու կանդիտատներ և այս երկու դէպքերումն էլ՝ ըստ կարգին ներկայացնել Բարձրագոյն հաստատութեան, թէ բոլորովին արգելել այս մասին որևէ կարգադրութիւն անելու։

Բայց աւելի լաւ իմանալու համար այն պատճառները, որոնցից ստիպուած Եփրեմ պատրիարքը վճռել է հրաժարուիլ իր բարձր աստիճանից, պատիւ ունիմ ընդսմին ներկայացնել նրա Էջմիածնի սրբազան Սինոդին տուած յայտարարութեան թարգմանութիւնը»*)։

ՄԾԷ

Իշխան Բեհրութովը իր այս նամակի հետ միաժամանակ ուղարկեց Պասկեվիչին նաև հետևեալ գաղտնի գրութիւնը, որից միանգամայն պարզւում է Եփրեմի հրաժարման, աւելի ճիշտը՝ հրաժարեցուցման պատճառները։

Ահա այդ գրութիւնը.

«Նախընթաց յայտարարութեանս մէջ բա-

*) Այս թարգմանութիւնը տպուած է Акты Кавк. арх. Ком. VII. եր. 244. իսկ ընագիրը միքանի հայ պատմիչների գրքերում, ուստի մենք այստեղ չենք արտագրում։ Այդքանս միայն յայտնում ենք ի տեղեկութիւն ընթերցողին, որ հրաժարականի մէջ, տաճկական թեմերի մասին մի խօսք անգամ չկայ։ Եւ հրաժարման իսկական պատճառը Ծերունի կաթողիկոսը սիրա չէ անում, կամ զուցէ թոյլ չեն տալիս, յայտնելու։ Ուստի նա ցանկացողին իմանալու հրաժարման պատճառը՝ հրաւիրում է «բանիւ բերանոյ լսել յինեն զլուծումն այնոցիկ»։ Ծան. յօդ.

ցանրած պատճառներով՝ Եփրեմ պատրիարքի իր բարձր աստիճանից հրաժարուիլը՝ Էջմիածնի Սինոդի անդամներին ստիպեց, որ ձեր պայծառափայլութեան թոյլտուութիւնը ստանալուց առաջ՝ նախապէս խորհրդակցեն թէ արքեպիսկոպոսներից որը պէտք է կաթողիկոս ընտրուի։ Այս նպատակաւ նրանք երկրորդ անգամ ժողով կազմեցին, ուր իմ ներկայութեամբ, երկար խորհրդակցելուց յետոյ, բոլոր ներկայ եղողները, թուով 9 հոգի միաբերան որոշեցին՝ 1) թէ ընտրութիւնը պէտք է կատարուի Էջմիածնի միաբանութիւն կազմող հոգևորականներից։

2) Կոստանդնուպօլսոյ պատրիարքին (Ստեփանոս Աղաւնի մականուանեալ) ընտրել անկարելի է թէ այն պատճառաւ, որ չլինի թէ տաճկաց տերութիւնը կասկածի ենթարկէ, որի համար այնտեղի հայերը կարող են հալածանքների ենթարկուել։ Բացի այդ՝ եթէ Կ. Պօլսոյ պատրիարքին առանց իր հաւանութեանը ընտրել և յետոյ նա այդ աստիճանի մէջ չհաստատուի, - այն ժամանակ նա կարող է անբաւական մնալ և այդ հանգամանքը շատ արդելք կլինի տաճկաց տէրութիւնից ֆերման ձեռք բերելուն, առանց որոյ նոր կաթողիկոսը ոչինչ ազդեցութիւն չի կարող ունենալ Տաճկաստանում բնակուող հայերի վրայ։

3) Էջմիածնի հոգևորականութեան մէջ, կաթողիկոսական վեհ աստիճանի համար՝ արժանաւոր են համարում Մարտիրոս արքեպիսկոպոսին (որ տեղապահ էր) և Յովհաննէս Կարբեցի արքեպիսկոպոսին, որ Վրաստանի Հայոց առաջնորդ է կարգուած։

«Սրանից առաջինը (Մարտիրոսը) նմանապէս շատ ծեր է, և առողջութեամբ շատ թոյլ լինելով, ենթակայ է հիւանդութիւնների։ Իսկ վերջինը (Կարբեցին) լինելով առոյգ և վանքիս մէջ ընդհանուր յարգանք վայելելով՝ բազմիցս ցոյց է տուած իր ջերմեռանդութիւնը Էջմիածնի վանքին և արժանի է կաթողիկոս ընտրուելու։

4) Եթէ ձեր պայծառափայլութիւնը կը բարեհաճէք ձեր համաձայնութիւնը տալ, որ ընտրութիւնը կատարուի Էջմիածնում եղած հինաւուրց կանոնադրութիւնների համաձայն — այն ժամանակ ընտրելին պիտի լինի Յովհաննէս արքեպիսկոպոս Կարբեցին, իսկ եթէ կը հրամայուի ներկայացնել կանդիտատներ, այդ դէպքումն էլ պիտի լինեն վերոյիշեալ երկու արքեպիսկոպոսները և սրանից աւելի արժանաւոր ուրիշ ոչ ոք չեն գտնում իրանց մէջ։

«Հարկաւոր համարելով հաղորդել ձեզ այս հանգամանքը՝ համարձակւում եմ ներկայացնել այդ մասին իմ կարծիքը, որ սինոդականների առաջարկած պատրիարքութեան առաջին կանդիտատ Մարտիրոս արքեպիսկոպոսը, 76 տարեկան լինելով՝ իրաւ որ հիւանդոտ է և վատառողջ, այնպէս որ հազիւ կարողանում է իր սենեակից դուրս գալ։ Բացի այդ՝ լսելով որ սինոդականների մէջ՝ իր ընտրութեան մասին

խօսք է եղել, — վճռաբար ինքը ինձ յայտնեց, որ երբէք չի համաձայնիլ իր ցաւագին վիճակով ընդունել կաթողիկոսական լուծը և թէ մէկ զառամեալ կաթողիկոսի տեղ միւս զառամեալին ընտրել՝ նշանակում է բոլորովին հեռանալ այն նպատակից, որ պահանջում են Էջմիածնի վանքի և Հայոց եկեղեցիների շահերը»։

«Իսկ երկրորդ կանդիտատը, որ է Կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսը, մօտ 60 տարեկան է, լաւ ընդունակութիւնների տէր և քաջ ճանաչելով Էջմիածնի վանքի իրերի դրութիւնը, առանձին յարգանք է վայելում Էջմիածնական ընդհանուր հոգևորականութիւնից. միշտ գանըւելով Էջմիածնի մէջ, նա յայտնի է եղել իր գործունէութեամբ, բարեպաշտութեամբ ու առաքինութեամբ և այս պատճառներով արժանի է կաթողիկոս ընտրուելու։ Իսկ ինչ որ կլվերաբերի արքեպիսկոպոսութեան մէջ ունեցած աւագութեանը (ըստ ձեռնադրութեան), սա ամենից էլ աւագն է, նոյնիսկ Ներսէս արքեպիսկոպոսից»։

ՄԾԸ

«Սինոդականների մէջ, — շարունակում է իշխան Բեհբութով, — Ներսէս արքեպիսկոպոսի մասին էլ խօսք եղաւ՝ թէ արդեօք մոցնել նրան կաթողիկոսական ընտրելիների շարքում՝ թէ ոչ։ Բայց ներկայ եղող ինքը անդամներից ոչ ոք

յօդուտ նրա ձայն չտուեց հետևեալ պատճառներով՝

1) Ներսէս արքեպիսկոպոսը՝ Դանիէլ պատրիարքի հետ գտնուելով, խախտեց Էջմիածնի վանքի հիմնական օրէնքները՝ Դանիէլին կաթողիկոս օծելով Բայազէթի փաշայութեան մէջ գըտնուող վանքում (Իւչ-Քիլիսա), այն ինչ Դաւիթը արդէն Էջմիածնում կաթողիկոս օծուած պրծած էր, այդպիսով խառնակութիւն և անմիաբանութիւն ձգեց Էջմիածնի հոգևորականութեան և Հայոց ազգի մէջ։

2) Ներսէսն էր գլխաւոր գործիչը՝ Դաւիթ կաթողիկոսի մօրուքը ածելելու և նրան զանազան տանջանքներ պատճառելու մէջ։

3) Օգուտ քաղելով Դանիէլի թուլութիւնից, Ներսէսը իր ձեռքն առաւ Էջմիածնի գործերի ղեկավարութիւնը և վանքապատկան առ ձեռն եղած մեծաքանակ գումարների վատնելու ըսկզբնապատճառը նա եղաւ. ապա Վրաստան ուղևորդ գնալով, նա վանքի վրայ մեծ պարտք թողեց։

«Բայի այդ, որովհետև Եփրեմ պատրիարքը ամենահպատակօրէն խնդրած էր թագաւոր կայսրից, որ իր տեղը հաստատուի Ներսէս արքեպիսկոպոսը, և առ այս Բարձրագոյն հաճութիւն չեղաւ, վասն որոյ Սինոդի անդամները կարծում են, որ իրաւունք չունին Ներսիսի կաթողիկոսանալու մասին նորից հարց բարձրացնելու»։

«Ընդ սին պատիւ ունիմ յարակցել, որ եթէ ձեր պայծառափայլութեան կամքը կը լինի թոյլ տալ, որ պատրիարքի ընտրութիւնը կատարուի համաձայն Էջմիածնի մէջ եղած նախկին ծէսերի և կանոնադրութիւնների, որ շատ օգտաւէտ կլինի,—այն ժամանակ իմ կարծիքով, հարկաւոր է ընդմիջտ վերացնել աշխարհականների ազդեցութիւնը այդպիսի ընտրութեանց վրայ, որովհետև ի նկատի առնելով վանքիս մէջ այս մասին եղած նախկին կարգ ու կանոնները, երբ Էջմիածնի հոգևորականութիւնը եպիսկոպոսներից մէկին էր ընտրում կաթողիկոս, իսկոյն Էջմիածնի կողմից վարդապետներ կամ նշանաւոր աշխարհական անձինք էին ուղարկում ամեն տեղ, ուր որ հայեր կային, որպէսզի նրանք հոգևորականների և աշխարհականների անունից մի համախոհական ստորագրութիւն կազմէին թէ՝ նրանք այդ ընտրութեանը համաձայն են։

Այս կարգը շատ անգամ կատարուել է առանց որևէ արկածի, բայց երբեմն շատ ծանր հետևանքներ է ունեցել Էջմիածնի վանքի համար, որովհետև փառասէր վարդապետները, այս սովորութիւնից օգուտ քաղելով և կաթողիկոսութիւն ցանկանալով, իրանց ծանօթների և համախոհների ձեռքով՝ իրանց կուսակիցներ էին դնում հոգևորականների և նշանաւոր աշխարհականների մէջ։ Այստեղից յառաջ էին գալիս ժողովրդի մէջ խռովութիւններ և տարաձայնութիւններ։ կաթողիկոսի ընտրութիւնը երկար ժամանակ կասկածելի էր մնում և միշտ անտարբերակածներով և վանքի համար մեծ ծախսերով էր վերջանում միմիայն այն պատճառաւ, որ սա կամ նա հասնեն իրանց փառասէր ձգտումներին։ Բայց այս բոլորը կատարւում էր դեռ այն ժամանակ, երբ Էջմիածնի վանքը գտնւում էր մահմեդականների լծի տակ, որոց աչքում կաթողիկոսի ընտրութեան արժանիքը, առանց որա անձնական յատկութիւնները ի նկատի առնելու, նրա մէջն էր կայանում թէ յօգուտ ում աւելի են ստորագրւում և ամենևին ուշք չէր դարձնւում այն բանի վրայ թէ՝ ստորագրութիւնների մեծ մասը կարող է ձեռք բերուել կաշառքով, կամ թէ այս սրբազան աստիճանին հետամուտ եղող անձանց բարեկամների աշխատանքով։ Շատ անգամ էլ պատահում էր, որ մելիքների, իւզբաշիների և ուրիշ նշանաւոր անձանց հնարագիտութեամբ և խանների իշխանութեամբ, բռնի ստիպում էին կաթողիկոս օծել ըստ իրանց կամաց։ Իսկ այժմ քանի որ Հայոց այս Մայր Աթոռը մեր սահմաններումն է և բարերար տէրութեան հովանաւորութեան ներքոյ կատարեալ ազատութիւն է վայելում և քաղաքական իշխանութիւնը հոգևոր վարչութեան գործերումը չի խառնւում, ես կարծում եմ, որ այսպիսի դէպքերում, որ միայն եկեղեցուն է վերաբերում, այդ վանքը այժմէն իսկ չպէտք է լինի մելիքների և իւզբաշիների ազդեցութեան ներքոյ, և

ոչ էլ պարտաւոր է աշխարհական մարդկանց համաձայնութիւնն ստանալ, որոնք բոլորովին օտար մարդիկ են այս գործում։—Այս, կարող եմ ասել,— անվայել սովորութեան վերացմամբ՝ կը վերանան փառասէր վարդապետների և նրանց համախոհների բոլոր խորամանկութիւնները և ձգտումները. կը վերանայ նաև այսպիսի դէպքերում կուսակցութիւններ կազմելու սովորութիւնը, որով ժողովրդի և ազգի մէջ խռովութիւններ էին ծագեցնում։ Որքան ես կարողացայ նշմարել, այս փոփոխութիւնը ամենևին վատ ազդեցութիւն չի ունենալ Հայոց հոգևորութեան վրայ»։*)

ՄԾԹ

Բացի այս գրութիւններից՝ Նահանգապետ Բեհբութովը մի երրորդ նամակ ևս գրեց հոկտ. 19-ին, Պասկեվիչին, որ ամբողջապէս վերաբերում է Ալամդարեան վարդապետի եպիսկոպոսանալուն, ինչպէս որ Բգնունի Սիմոն արքեպիսկոպոսը, Գէորգ Արծրունին, միքանի մոքաքներ և առհասարակ Ներսիսի կուսակիցները մի յատուկ խնդրագրով խնդրել էին Եփրեմ կաթողիկոսից։

Նամակից երևում է թէ ինչպէս Իշխան Բեհբութովը արգելք դարձաւ Ալամդարեանի ձեռնադրութեանը, որ վերջ ի վերջոյ, փոխանակ եպիսկոպոս դառնալու Հաղբատ ուղարկուեցաւ իբրև վանահայր,—ճիշտը իբրև աքսորական։

Եւ այդպիսով մի անգամ ևս սատուեցաւ Իշխան Բեհբութովի նախընթաց երկրորդ նամակում գրածը, իբր թէ՝ «մաղտական Իշխանութիւնը չի խառնուում հոգեւոր վարչութեան գործերում»։

Ալամդարեանին Հաղբատ աքսորել տալովը չբաւականացած Իշխան Բեհբութովը՝ այս ևս գրեց Պասկեվիչին, որ Ալամդարեանը Հաղբատից «անպատճառ մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ Ներսէս արքեպիսկոպոսին թէ Եփրեմ պատրիարքի հրաժարականի մասին և թէ Սինոդի դիտաւորութեան մասին՝ որ էր ընտրել Յովհաննէս Կարբեցուն։ Այս անցքերի ժամանակ Ալամդարեանը էջմիածնում գտնուելով՝ անշուշտ ամենն բան մանրամասնաբար իմացաւ. իսկ Ներսէսը իր Ռուսաստան լինելուց օգուտ քաղելով, անկասկած իր փառասիրութիւնը գոհացնելու համար կաշխատէ ընտրութիւնը իր օգտին դարձնել, եթէ միայն հայերին իրաւունք տրուի ըստ նախկին սովորութեան այս մասին ստորագրութիւններ հաւաքել»։*)

ՄԿ

Կոմս Պասկեվիչը, ի հարկէ, Իշխան Բեհ-

*) Акты, VII, եր. 295, № 240.

*) Акты, VII, եր. 296, № 241.

բութովի ոչ խելքին էր կարօտ, ոչ էլ նրա ցու-
ցումներին, բայց այդ շողոքորթ հայ ազգի իշ-
խանի գրածները՝ նրա համար մի տեսակ վա-
ռագոյր էին Արքունիքի առաջ ծածկելու համար
իր անձնական կրքերն ու հաշիւները Ներսիսի
նկատմամբ։ Ուստի կոմսը աճապարեց Բեհբու-
թովի վերոյիշեալ նամակները և Եփրեմի հրա-
ժարականը ներկայացնել Բլուդովին հետևեալ
գրութեամբ իր կողմից.

«Այս գրութիւններից դուք կարեհաճէք
տեսնել, որ Եփրեմ Պատրիարքը՝ նեղուած իր
ծերութիւնից և տկարութիւնից, հրաժարւում է
էջմիածնական գահից։

«Սինոդը այդ հրաժարականն ընդունեց և
մատադիր է երկու աւագ եպիսկոպոսների կան-
դիտատ ընտրել։ Նրանցից մէկը նոյնքան ևս
զառամեալ և թոյլ առողջութեամբ, որքան և
Եփրեմը, ինքն էլ չէ կամենում պատրիարք լի-
նել. միւսը՝ Յովհաննէսը, տակաւին առոյգ թէ
մարմնով թէ հոգւով, ամեն բանի վերաբերու-
թեամբ յայտնի է լաւ կողմից։ Ինչ որ կը վե-
րաբերի իշխան Բեհբութովի այն առաջարկու-
թեանը որ աշխարհական անձանց՝ մելիքներին
և իւզբաշիներին հրաժարեցնեն նոր կաթողիկոս
ընտրելու գործից,—նրա այդ նկարագրած պատ-
ճառների հիման վրայ՝ շատ օգտաւէտ կլինէր և
բոլորովին համաձայն այն կանոնների հետ, որոնք
արտայայտած են իմ առ ձեզ ուղարկած Հայոց

հոգևոր գործերի կազմակերպութեան նախա-
գծիս մէջ։

«Հաղորդելով այս մասին ձեր գերազան-
ցութեանը, խնդրում եմ այս հան-
գամանքները հասցնել Բարձրագոյն ունկնդրու-
թեան և խնդրել Ն. Կ. Մեծութեան թոյլատու-
թիւնը սոյն առարկայի վերաբերութեամբ և
կարելոյն չափ շուտ հաղորդել ինձ։ Իսկ մինչև
այն ժամանակ Էջմիածնի Աթոռի գործերը ներ-
կայ դրութեամբ կը մնան, որովհետև ես ինքնա-
գլուխ չուզեցայ թոյլ տալ նոր կաթողիկոսի
ընտրութիւն կատարելու»։*)

ՄԿԱ

Իշխան Բեհբութովի և կոմս Պասկեվիչի
առաջարկութեան վերջին մասն,—առանց ժողո-
վուրդի մասնակցութեանը կատարել ընտրու-
թիւնը,—Պետերբուրգում չանցաւ։

Եփրեմի հրաժարականի և նամանաւանդ
նրան յաջորդի ընտրութեան եղանակը այնտեղ
լուրջ խորհրդածութեան առարկայ դարձաւ և
վերջ ի վերջոյ մի որոշ եզրակացութեան յան-
գելով, առաջադրուեցաւ Պասկեվիչին ի գոր-
ծադրութիւն։

Այդ ամենը դուրս է բերուած՝ 1830 թուի
դեկտ. 20-ին Բլուդովի առ Պասկեվիչն գրած
հետևեալ ընդարձակագոյն նամակից, որ մենք

*) Акты, VII, 243.

ամբողջութեամբ առաջ ենք բերում.*)

«Սատանալով ձեր նոյեմբերի 9-ի գրութիւնը,—գրում է Բլուդովը,—ես անմիջապէս հասցրի ի բարձրագոյն տեղեկութիւն Ն. Կ. Մեծութեան թէ Եփրեմ պատրիարքի դիտաւորութիւնը եկեղեցւոյ կառավարութիւնից հրաժարուելու մասին և թէ Սինոդի այդ հրաժարականն ընդունելու մասին, նաև սինոդականների մտադրութիւնը երկու աւագագոյն արքեպիսկոպոսներին կանդիտատներ ընտրելու և ձեր կարծիքը, հեռացնել նոր կաթողիկոսի ընտրութեանը մասնակցելուց աշխարհական անձանց,—մելիքներին և իշխաններին։ Ընդամին ներկայացրի բարձրագոյն բարեհաճութեան ձեր իսկական գրութիւնը և նրան կից եղած բոլոր յաւելուածները։

«Թագաւոր կայսրն՝ ի նկատի առնելով՝ որ Հայոց կաթողիկոսների ընտրութեան կարգը կը վերաբերի նաև մեր արտաքին քաղաքականութեանը, մանաւանդ որ նրանք մինչև այժմ հաստատուում էին այդ ասպիճանի մէջ երեք պետութեանց ձեռքով՝ Ռուսիոյ, Պարսկաստանի և Տաճկաստանի,—Բարձրագոյն հրամայեց ինձ բանակցել վիցէ-կանցլերի (արտաքին գործոց նախարար) հետ և մեր դատողութիւնները՝ հանդերձ տեղեկութիւններով թէ մինչև այժմ ինչ կարգ է պահպանուած պատրիարքական ասպիճանի համար կանդիտատներ ընտրելու վերաբերութեամբ՝ ներկայացնենք ի Բարձրագոյն բարեհաճութիւն։—Ընդամին Ն. Կ. Մեծութիւնը աւելորդ համարելով և գործերի ներկայ դրութեանն ես անհամապատասխան, որ օտար տէրութեանց թոյլ տրուի մասնակցել պատրիարքի հաստատութեան գործում, բարեհաճեցաւ յայտնել, որ այդ հաստատութիւնը նա վերապահում է միմիայն իր իշխանութեանը։

«Այս բարձրագոյն կամքը ես յայտնեցի կոմս Նեսսէլրոդին։ Այս մասին մեր ունեցած խորհրդակցութեանց մէջ, որոց ներկայ էր նաև Օսմանեան Բ. Դռան մօտ նշանակուած մեր մինիստր—դեսպան Բուտենևը, ամենայն ուշադրութեամբ քննեցինք ձեր գրութեան հետ ինձ ուղարկած թղթերում եղած բոլոր հանգամանքները Հայոց եկեղեցւոյ կազմակերպութեանը վերաբերեալ առաջուայ Բարձրագոյն հաւանութեանը արժանացած նպատակների և մտադրութեանց հետ, նաև այն կանոնների հետ, որոնք կան այս եկեղեցւոյ կառավարութեան համար ձեր ծրագրած նախագծի մէջ։

«Նախ և առաջ հարկ էր մեզ համաձայնել. որ այժմ այլ ևս անկարելի է չընդունել Եփրեմ պատրիարքի հրաժարականը, որ դեռ 1822 թուին ցանկացաւ հրաժարուել Էջմիածնական Աթոռից։ Ընդհակառակը, մեզ թւում է, թէ պէտք է օգուտ քաղել այդ բանից, որպէսզի այս քահանայապետի ազդեցութեամբը նոր պատրիարքի ընտրութեանը աւելի վսեմութիւն և սրբութիւն տրուի։ Մեր կարծիքով, այս գործում ամենա-

*) Акты, VII, եր. 289—302.

գլխաւոր դժուարութիւնն է այնպիսի միջոցներ գտնել, որ ընտրութեան այդ ծիսակատարութիւնը, քանի որ առաջին անգամ տեղի պիտի ունենայ ռուսաց տերութեան քաղաքական ազդեցութեան ներքոյ, չլինի թէ Հայերին թուայ որպէս նրանց իրաւունքների խանգարումն և միևնոյն ժամանակ այնպէս անել, որ այդ ընտրութիւնը միանգամայն համապատասխան լինի Ն. Կ. Մեծութեան բարերար դիտաւորութիւններին։

«Ի նկատի ունենալով, որ Հայոց եկեղեցւոյ ներկայ դրութիւնը և կարիքները շուտափոյթ և վճռական միջոցների են կարօտ, ես որքան որ ժամանակը ներեց, ժողովեցի և վիճէ-կանցլէրին հաղորդեցի բաւականին լի ու լի տեղեկութիւններ այդ եկեղեցւոյ կանոնադրութեանց և սովորութեանց մասին՝ վերաբերեալ պատրիարքների ընտրութեան և օծման։ Եւ ահա այդ տեղեկութեանց վրայ մենք էլ աշխատեցինք հիմնել մեր առաջադրութիւնը։

«Որպէս ձեզ յայտնի է, IV դարից սկսեալ մինչև XVII դարը Հայաստանում եղած են ժողովներ կամ խորհուրդներ, որոնք վճռում են եղել եկեղեցական նշանաւոր գործերը, ընտրում կամ գահից վայր իջեցնում պատրիարքներին։

«Այդ ժողովները միշտ հրաւիրւում են եղել և կազմւում թագաւորի (Հայոց) հրամանով։ Ժողովին նախագահել են պատրիարքի հետ միասին՝ կամ ինքը թագաւորը անձամբ և կամ աշխարհական կառավարիչներից մէկը, օրինակ՝

զօրքերի սպարապետը։ Ժողովներին մասնակցել են ոչ միայն հոգևորականները, այլև բոլոր աշխարհական առաջնակարգ անձինք։ Ժողովը կամ խորհուրդը ընտրում է եղել երեք թեկնածուներ, որոնցից մէկին թագաւորը հաստատում էր կաթողիկոսական կոչման մէջ։

«Բայց այն ժամանակից ի վեր, երբ Հայաստանը ընկճուեց մահմեդական լծի տակ, մշտական ժողովներ այլևս չեղան, և վերջապէս նրանք բոլորովին դադարեցին և վերջինը եղաւ Երուսաղէմումը 1651 թուին։ Սակայն ի հետեւումն այդ ժողովների, շատ անգամ պատրիարքական ընտրութեանց մէջ մասնակցում էին այն բոլոր անձինք, որոնք թագաւորների ժամանակ՝ իրաւունք ունէին հասարակական ժողովներում ձայն տալու։

«Յընթացս հինգ դարերի 18 պատրիարքներ ընտրուած են հոգևորականութեան և ժողովրդի ձեռքով միասին, իսկ 20 պատիարքներ նշանակուած են այդ կոչման մէջ Էջմիածնի վանքի միաբանութեան ձեռքով երբեմն մահմեդական կառավարիչների ազդեցութեան ներքոյ։

«Գլխաւոր վարչութեան մէջ եղած թղթերից երևում է, որ Երկայնաբազուկ Արղութեան Յովսէփ իշխանին պատրիարքութեան հրաւիրողները եղան Վրաց թագաւորը և սրանց ժառանգը, Արտրատեան աշխարհի և Թիֆլիզի իշխանները, նշանաւոր Հայք Երևանի խանի հետ միասին և բացի այդ, նա ստացաւ հրաւիրական

թուղթ ընդհանուր հոգևորականութիւնից և Կ. Պոլսոյ Հայոց հոգևորականութիւնից։*)

«Հոգևորականութեան հրաւիրման թղթի մէջ՝ Կ. Պոլսոյ Հայոց վերաբերութեամբ յատկապէս ասուած է, որ «Ճնում է Աստուծոյ նախախնամութեանը ղեկավարել նրանց միաբանութեանը և ընտրութեանը, և նրանք ում վիճակին որ կը հրամայեն առաւելութիւն տալ, նրան մենք ևս (Էջմիածնի հոգևորական.) պարտաւոր ենք յետոյ տալ մեր համաձայնութիւնը»։

«Երևանի Հիւսէյին-սարդար-խանը Եփրեմ արքեպիսկոպոսին գրած է թէ Դաւիթ եպիսկոպոսը առանց քրիստոնէայ ժողովրդի կամքին և Էջմիածնի Մայր Աթոռի միաբանութեան համաձայնութեան թշնամաբար և անիրաւացի է յափշտակել կաթողիկոսական գահը։**)

«Դանիէլին ընտրող ժողովը կազմուած էր Էջմիածնի միաբանութիւնից, քահանաներից, աշխարհական մեծամեծներից և Էջմիածնի բոլոր բնակիչներից։ Այժմեան (Եփրեմ) պատրիարքը, նշանակուած է այդ կոչման մէջ իր նախորդ Դանիէլի կտակով, բայց ընտրուած է բոլոր հոգևորականութեան համաձայնութեամբ։ Հայոց ամեն դասակարգի ժողովրդականների՝ ամենա-

*) Իր տեղում ընթերցողն արդէն տեսաւ, որ այդ ամենը կազմել և տարբեր էր ռուս կառավարութիւնը և նրա Պոլսոյ դեսպանը։ Ծան. յոգ.

** Իր տեղում նոյնպէս տեսաւ ընթերցողը, որ այդ ևս կատարուել է ռուս կառավարութեան դաղտնի թելադրութեամբ։ Ծան. յոգ.

հայտակօրէն խնդրագրի մէջ նրա հաստատութեան մասին (1809 թուականում) յիշուած է, որ Ռէթէոս արքեպիսկոպոսը (վարդապետը) հրաւիրակ է ուղարկուում նրա մօտ ի դիմաց Պարսից Շահզադէի (Աբաս Միրզի) և Երևանի խանի, տանելով հետը ընտրողական և հրաւիրանաց թղթերը։ Այն ժամանակից ի վեր՝ երբ Ռուսիան աւելի շատ է մասնակցում Պատրիարքների գործում (1800 թուականից սկսեալ) Հայոց ժողովների բոլոր ընտրողական գրութիւնները և նրանց ամենահպատակօրէն խնդրագրերը Պատրիարքի հաստատութեան մասին՝ գրուած են ոչ միայն հոգևորականութեան կողմից, այլ և ի դիմաց մելիքների, իւզբաշիների և համայն Հայոց ազգի։ Վերջապէս մեր տերութիւնն էլ մի կերպ ընդունած է այդ ընտրողների իրաւունքը և նրանց խնդրագրերին պատասխանելով հետևեալ ձևերն է գործածած՝ «յառանձին բարեհաճութիւն մեր՝ համաձայնութեամբ ընդհանուր Հայոց ազգի, ընտրուած է» և այլն. կամ թէ «Հայոց ազգը հրաւիրելով Ձեզ ի գահ» և այլն։

«Ինչ որ Էջմիածնի Սինօդին է վերաբերում՝ հաստատուած է միմիայն Դանիէլ պատրիարքի ձեռքով։ Սինօդի անդամները այդ կոչումը տացան միմիայն պատրիարքի կամքով և ընտրութեամբ. նրանցից ոմանք մինչև անգամ նշանաւոր հոգևորականներից չեն։ Թուում է թէ՝ այդ Սինօդը քիչ զօրութիւն ունի և, ինչպէս փորձը ցոյց տուեց, շատ անգամ բոլորովին

կախուած է եղել որևէ փաստաբեր բարձրագոյն հոգևորականից և սրան է հպատակուել»։*)

ՄԿԲ

«Այս բոլորը աչքի առաջ ունենալով—շարունակում է Բլուդովը—մենք այնպէս խորհեցինք, որ Սինոդի այդ թուլութիւնը և նոյնիսկ նրա գոյութեան նորութիւնը կարող է նորընտիր պատրիարքի թշնամիներին և Ռուսիոյ չարակամներին տեղիք տալ կասկածներ յարուցանելու թէ արդեօք ընտրութիւնը օրինաւոր էր և իրաւացի թէ ոչ, և անբարեյաջող հանգամանքներում կարող է մինչև անգամ Հայոց եկեղեցոյ մէջ վէճեր, մացնել նոր կռիւներ և անջատումներ, նման այն վէճերին, որ տեղի ունեցան Դանիէլ և Դաւիթ պատրիարքների մէջ և որոց հետևանքը այն եղաւ, որ Տաճկաստանի հայերը բոլորովին անջատուեցան Էջմիածնից։ Սակայն, միւս կողմից ի նկատի ունեցանք և այն, որ եթէ առաջուայ օրինակներով դատենք, կասկածելի է դառնում թէ Հայոց պատրիարքների ընտրութեան համար երբևիցէ եղած լինեն հաստատուն կարգ ու որոշ կանոններ։—Մենք տեսնում ենք, որ կաթողիկոսները երբեմն հոգևոր կտակներով իրանք էին իրանց յաջորդ նշանակում։ Երբեմն Էջմիածնում եղած որևէ կորուկ կուսակցութիւն ինքն իրան հայրապետա-

*) Ակնարկութիւն Ներսէս Աշտարակեցու վրայ։ Ծան. յոդ.

կան գահի վրայ է բազմեցնում իր ուզած անձին։

«Իսկ երբեմն Երևանի խանները՝ կամենալով Էջմիածնում եղած շփոթներին և խառնակութիւններին վերջ տալ, իրանք էին գահ բարձրացնում և դրանով համարեա գործը վերջացած էր համարւում։

«Կ. Պոլսում և ուրիշ տեղերում հաւանութիւն էին ցոյց տալիս ընտրածին և շտապում էին յայտնել իրանց հնազանդութիւնը, վախենալով, որ չլինի թէ անհամաձայնութեամբ տեղիք տրուի եկեղեցւոյ բաժանման։ Այդպէս ահա Կ. Պոլսոյ հայերը Ռուսիոյ Արքունիքի կամքը կատարելու համար 1800 թուին ընդունեցին Յովսէփ Արղութեանի կաթողիկոսութիւնը, իսկ նրանից յետոյ՝ Դաւթին։ Հակառակը եղաւ Դանիէլը նշանակելու ժամանակ, բայց դրա պատճառը էլ այն էր, որ ինչպէս պէտք էր կարծել, Դաւիթը այդ միջոցում արդէն օծուած էր։ Մեր տէրութիւնը սկզբում սրա (Դաւթի) համար էր աշխատում, բայց յետոյ յառաջացած փոփոխութիւնը այստեղի միքանի հայերի արարքն էր։ Մեր արտաքին գործոց նախարարութիւնը շուտով խոստովանեց իր սխալը, բայց արդէն ուշ էր։

«Ի հարկէ ցանկալի էր, որ պատրիարքների ընտրութեան նոր և պարզորոշ եղանակը սահմանուած լինէր առաջ՝ նախքան այս՝ Ռուսիոյ կառավարութեան ժամանակ եղող առաջին ընտրութիւնը, բայց ժամանակի հանգամանքները

այդ չեն ներում։ Խնդիրը այնքան ծանր է, որ վոանգաւոր կը լինէր այժմեանից և եթ որևէ վճռական որոշում անել. հարկաւոր է աւելի հիմնաւոր կերպով խորհել ու քննել սրա համար նախագծած կանոնները, և աւելի ևս լաւ քննադատելու համար՝ դուցէ օգտաւէտ կը լինէր պահանջել այդ մասին նոր պատրիարքի կարծիքի։ Սա երևի թէ անաչառ խորհուրդներ կըտայ, որովհետև այլևս հարկաւորութիւն չի ունենալ առաջուայ եղած օրինակների և սովորութիւնների վերաբերութեամբ ծածկել ճշմարտութիւնը։

«Մինչ այս մինչ այն՝ ներկայ դէպքում վիցեկանցլերի և իմ կարծիքով, որպէսզի վերոյիշեալ միքանի անյարմարութիւնները և դժուարութիւնները վերացուին, որպէսզի յուզուած ժողովուրդը խաղաղի, որ ի հարկէ նախնական սովորութիւններին շատ է կպած, վերջապէս՝ որպէսզի կարելոյն չափ բաւականութիւն տրուի ժողովրդական ամեն դասակարգերին, որոնք մինչև այսօր իրաւունք են ունեցել պատրիարքական ընտրութեան ժամանակ ձայն տալու,— կարելի կըլինէր, եթէ ժամանակի հանգամանքները և Անդր-Կովկասեան երկրի դրութիւնը այդ թոյլ կը տան, մի կերպ միացնել ընտրութեան բոլոր եղանակները և ի մի ձուլել, այնպէս որ դա համաձայն լինի նաև թէ ձեր մտադրութեանց և թէ մեր տէրութեան նպատակների հետ»։

ՄԿԳ

«Վասն որոյ,—եզրափակում է Բլուդովը,— մեր կարծիքը հետևեալն է՝

ա) Համաձայն ձեր մտադրութեան թոյլ տալ Էջմիածնի Սինոդին, որ նախագահութեամբ Նոյնիսկ Եփրեմ կաթողիկոսի, ընտրէ երկու կանդիտատներ պատրիարքական գահի համար և իր այդ ժողովին մասնակցելու համար, ըստ կամաց պատրիարքի և ըստ ձեր հաւանութեան, հրաւիրէ մօտակայ Հայոց թեմերի կառավարիչներին և քանի մի ուրիշ այդտեղի նշանաւոր հոգևորականներին։ Ներկայ դէպքում եթէ պատրիարքը հաւանութիւն կը տայ իր համար ընտրած յաջորդին՝ նրա ձայնը մի տեսակ նոյն կշիռը կունենայ, իբր թէ աւանդած է կտակով, որ յաճախ է պատահում Հայոց ծայրագոյն քահանայապետութեան պատմութեան մէջ։

բ) Երբ որ այսպէս կազմակերպուած Էջմիածնի Սինոդը կանդիտատներ կընտրէ, տալ Եփրեմ պատրիարքի ստորագրած շրջաբերականով հանդերձ՝ առաջարկել ընտրուածների անունները նաև մերձակայ թեմերի հոգևորականութեանը, մելիքներին, իւզբաշիներին և միւս ականաւոր անձինքներին։

Շրջաբերականի մէջ՝ պէտք է բացատրուած լինի, որ կաթողիկոսի տեղ՝ այս նոր կանդիտատներ ընտրելու ժամանակ Էջմիածնի Սինոդը՝

իր գործունեությունները յարմարեցրած է նախկին Հայաստանեայց եկեղեցւոյ հնաւանդ և մաքուր կանոնների հետ և թէ՝ ամենքը, ինչպէս հոգևորականները, նոյնպէս և մելիքներն ու իշխանները հրաւիրւում են յայտնել, — որպէսզի Ն. Կ. Մեծութեան ունկնդրութեանը հասցնուի, — թէ Սինոդի ընտրած երկու համահաւասար արժանաւոր արքեպիսկոպոսներից՝ որին աւելի կը ցանկալին Հայաստանեայց եկեղեցւոյ Պետ տեսնել։

գ) Հարկ է միջոցներ գործ դնել, որ մեր տերութեան նպատակներին համապատասխան կանդիդատներ ընտրելուց յետոյ՝ նրանց միասին շրջաբերական գրութիւնը՝ նախապէս այն անձանց հասցնուի, որոնք բոլորովին անձնատուր են Ռուսիային, որպէսզի դրանց ձայնի բազմութեամբը գրաւել եւ նրանց, որոց գուցէ հաճելի չեն ընտրուած կանդիդատները։

դ) Երբ այդպէս ամենուրեք կը յայտարարուին և հաւանութիւն կը գտնեն պատրիարքական գահի համար Սինոդի ընդրած կանդիդատները ապա օտարազգաւան հոգևոր գործերի գլխաւոր վարչութեան ձեռքով ներկայացնել նրանց անունները ի Բարձրագոյն հաստատութիւն Ն. Կ. Մեծութեան։

ե) Թէ ընտրութեան և թէ մանաւանդ ձեռնադրութեան և օծման հանդէսները կատարել, կարելոյն չափ, շքեղ կերպով, պահպանելով բոլոր հնաւանդ օրէնքները և ծէսերը, ինչպէս

օրինակ Հոգոյն Սրբոյ շնորհաց, սրբոյն Գրիգորի անապական Աջի՝ օծուողի վրայ դնելը՝ և այլն, և այլն։

զ) Նոր ընտրեալ պատրիարքին պարտաւորեցնել, որ Հայոց եկեղեցոյ ներքին բարեկարգութեան վերաբերեալ կարևոր դէպքերում, նա դիմէ այժմեան Եփրեմ կաթողիկոսի խորհուրդներին ու խրատներին, օգտուելով նրա երկար տարիների փորձառութեան վրա հիմնուած գիտութիւնից։ Այս միջոցը կը ցոյց տայ մեր տէրութեան առանձին ուշադրութիւնը դէպի այդ ծերունին և կամրապնդէ նրա յաջորդի հոգևոր իշխանութեան ազդեցութիւնը Հայոց հոգևորականութեան և ազգի վրայ։

է) Նոր ընտրուած և ձեռնադրուած կաթողիկոսը պէտք է, որ առանձին շրջաբերական կոնդակով յայտնէ, որ ինքն ընդունել է Հայոց եկեղեցւոյ պետի ծայրագոյն աստիճանը և միևնոյն ժամանակ հրաւիրէ Ցաճիկասանի և Պարսկաստանի սահմաններում գտնուող բոլոր հայերին միշտ եւ հոգևոր կարևոր դեպքերի ժամանակ դիմել էջմիածնին, ուր պահւում են նրանց կրօնի յիշատակները և աւանդները։

ը) Յանձնել Ն. Կ. Մեծութեան Կ. Պոլսում ունեցած դեսպանին և Թեհրանի արքունեաց մօտ գտնուող մեր դիպլոմատիքական գործակատարին, որ միջոցներ գործ դնեն ձեռք բերելու՝ ոչ թէ կաթողիկոսի հաստատութեան ֆերմանը, ինչպէս որ այդ առաջ էր լինում, այլ միայն

թոյլատրութիւն, որ Տաճկաստանի և Պարսկաստանի հայերը բոլոր իրանց նշանաւոր եկեղեցական օրինակաւորութիւնների և մանաւանդ մեռօն տանելու համար՝ դիմեն Էջմիածնի Աթոռին։

Թ) Յայտնելով մեր Կ. Պոլսոյ դեսպանի ձեռքով նորընտիր կաթողիկոսի մասին՝ հասկացնել Կ. Պոլսոյ, Սսոյ, Աղթամարի և Երուսաղէմի պատրիարքներին, թէ այս անդամուայ ընտրութեան կարգը, որ սահմանափակուած էր միմիայն Էջմիածնի հոգևորականութեան մասնակցութեամբ, գործ դրուեցաւ միայն հարկից ստիպուած և այն էլ առաւելապէս նրա համար, որ ծերութիւնից և հիւանդութիւնից վհատուած Եփրեմը անդորրութիւն զգայ, որովհետև նա ինքն էր պահանջում որ շուտով իր համար յաջորդ նշանակեն։ Բայց թէ այսուհետև և ապագայում մեր տէրութիւնը ամենևին մտադիր չէ հեռացնել Էջմիածնի գահը ժառանգելուց նաև Տաճկաստանի մէջ բնակուող Հայոց արժանաւոր արքեպիսկոպոսներին, եթէ որ նրանցից մէկնումէկին վիճակուի ընտրուել։ Այս բանի համար, և ուրեմն, նոյնիսկ իրանց օգուտ համար, նրանք (Տաճկաստանցիք) պէտք է աշխատեն, որ Հայոց եկեղեցւոյ միութիւնը անխախտ մնայ և դէմ դնեն ու առաջն առնեն, երբ որ նրանց թեմերից և վիճակներից մէկնումէկին անջատուելիս լինի Էջմիածնից»։

ՄԿԴ

«Այս բոլոր ենթադրութիւնները,—վերջացնում է Բլուդովը իր նամակը,—ամենահպատակօրէն ներկայացնելով ի բարեսեռութիւն Ն. Կ. Մեծութեան, ես յարակցեցի, որ եթէ Բարձրագոյն հաւանութեան արժանանան, այն ժամանակ, ըստ իմ կարծեաց, որի հետ կոմս Նեսէլրոդէն նմանապէս բոլորովին համաձայն է, պէտք է որ նրանց գործադրութիւնը միանգամայն թողնուի ձեր պայծառափայլութեան կամքին, առանց սակայն սահմանափակելու այսպիսի նշանաւոր գործում ձեր անելիքը, և եթէ մեզ այստեղ անյայտ կամ չնախատեսնուած պատճառներով մեր այս նախագծած ընտրողական կարգերի մէջ այնպիսի անյարմարութիւններ գտնէք, որոնք կարող են մեր տէրութեան նպատակներին հակառակ հետևանքներ պատճառել, այն ժամանակ դուք, իբրև անընդմիջական պետ և կառավարիչ այդ երկրի և իբրև աւելի ճիշտ տեղեկութիւններ ունեցող թէ Հայոց եկեղեցւոյ ներկայ դրութեան մասին և թէ Հայոց ազգի ցանկութիւնների և կարիքների մասին, պէտք է որ կոնխապէս և կատարեալ իրաւունք ունենաք փոխել այդ կարգերը թէ մասամբ և թէ ամբողջապէս, աշխատելով միայն, որ պատրիարքութեան կանդիտատները բոլորովին վստահելի անձինք լինեն ընտրուած, այսինքն այնպի-

սի անձինք, որոնք յայտնի լինեն իրանց ջերմեռանդութեամբ առ Ռուսիան և վստահութիւն ու յարգանք լինեն վայելում իրանց դաւանակիցներից, մանաւանդ նրանց այն նշանաւոր անձինքներից, որոնք ասելի մեծ ազդեցութեամբ կարող են ուրիշների վրայ ներգործել։

«Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեցաւ Բարձրագոյն հաւանութիւն տալ որպէս այս գլխաւոր մտքի մասին, նմանապէս և մեր միւս մտադրութիւններին։

«Հաղորդելով այս մասին ձեր պայծառափայլութեանը հոգևոր և քաղաքական մասանց վերաբերեալ պէտք եղած կարգադրութիւններն անելու համար, պարտ եմ համարում աւելացնել, թէ որպէսզի կարելոյն չափ առաջն առնուի այն անբաւականութիւնների, որ կարող են ծագել Հայոց բարձրագոյն հոգևորականութեան մէջ, ցանկալի կլինէր, որ կաթողիկոսական առաջնի համար երկու կանդիտատներ ընտրուեն այնպիսի անձինք, որ թէ ըստ բնութեան և թէ ըստ իրանց դիրքին անպատուութիւն չհամարէին իրանց՝ թէ ինչու հաստատութեան առաւելութիւնը տրուեցաւ ոչ իրան, այլ միւսին, որ գուցէ թէ տարիքով և թէ ծառայութեամբ նրան հաւասար է։

«Այսուամենայնիւ դուք, ի հարկէ, պէտք եղած միջոցներ գործ կդնէք, կանխապէս հասկացնելու ընտրողներին թէ՝ նրանց մէկի հաստատելովը ամենևին չեն ստորանում միւսի

արժանաւորութիւնները, և թէ վերջինս դրանով չի կորցնում իր իրաւունքը, ի դէպս վախճանի առաջինի, նորից ընտրուելու և ներկայացնելու ի Բարձրագոյն հաստատութիւն։

Մկն

Կայսերական այս կարգադրութիւնն ընդունելով կոմս Պասկեվիչը՝ Սերոբէ եպիսկոպոսի հետ որոշեցին, որ ընտրութիւնը, որքան կարելի է, շուտ կատարուի, այն 1831 թուի մարտի 15-ին վաղն կերպ աշխատել, որ Յովհաննէս Կարբեցին ձայների առաւելութիւն ստանայ։

Այդ բանները պիտի դուխ բերէր Սերոբէն իշխան Բեհբութովի օգնութեամբ։

Այդպիսի հրահանգով, յունուարի վերջին Սերոբէն Էջմիածին մեկնեցաւ, հետը տանելով Պասկեվիչի երկու նամակները Եփրեմին և Բեհբութովին։

Առաջին նամակում կոմսը տեղեկացնելով կաթողիկոսին վերոյիշեալ կայսերական կարգադրութեան բովանդակութեան հետ, սովորական քաղաքավարի խօսքերով՝ հրաւիրում է ծերունի հայրապետին իր նախագահութեամբ ձեռնարկել նոր կաթողիկոսի ընտրութեանը՝ ճամաձայն կայսեր տրած կարգադրութեանը, որ մանրամասն կերպով ձեզ կը հաղորդէ, — գրում է Պասկեվիչը, — որա հետ Էջմիածին եկող Ասարա-

խանի «արքեպիսկոպոս Սերոբէն»։

Իսկ իշխան Բեհբութովին ուղղուած նամակը ահա այս է՝

«Ինձ քաղցր է յայտնել ձեզ իմ շնորհակալութիւնս այն խոհեմութեան համար, որ դուք ցոյց էք տալիս ձեզ յանձնուած Հայոց հոգևորականութեան գործերում։ Հաւատացած լինելով, որ այսուհետև ևս դուք կը գործէք նոյն ջերմեռանդութեամբ և ճշտութեամբ յարմարուելով տերութեան նպատակների հետ, շտապում եմ հաղորդել ձեզ թագաւոր կայսեր Բարձրագոյն հրամանը, նոր պատրիարքի յառաջիկայ ընտրութեան պատճառով։

«Ձեր յայտարարութիւնը և կից նրան Եփրեմ պատրիարքի հրաժարականը ու Էջմիածնի Սինօդի վճիռը՝ ես բախտ ունեցայ հասցնել յունկնդրութիւն Ն. Կ. Մեծութեան։

«Թագաւոր կայսրը, ի նկատի առնելով այն յարգելի պատճառները, որոնք Եփրեմ պատրիարքին ստիպեցին հրաժարական տալ, ամենաողորմածաբար յայտնեց առ այդ իր Բարձրագոյն համաձայնութիւնը։ Սակայն նոր պատրիարքի ընտրութիւնը պէտք է կատարուի այն կանոններով, որպէս գրուած են Սերոբէ արքեպիսկոպոսին տուած հրահանգներում։

«Վրաստանում գտնուող բոլոր հայ եպիսկոպոսներից, ինչպէս ձեզ յայտնի է, ամենամեծ յարգանաց տէր է և տերութեան նպատակներին յարմար Թիֆլիզի առաջնորդ Յովհաննէս

արքեպիսկոպոսը։ Կարծիք չկայ, որ ձայների բազմութիւնը նրա կողմը կը լինի։ Բայց որպէսզի խոչնդոտների առաջն առնուի, ես Էջմիածին եմ ուղարկում Սերոբէ արքեպիսկոպոսին, որ իմ վստահութիւնս է վայելում։ Նա իր հետ բերում է պատրիարքի ընտրութեան վերաբերեալ Բարձրագոյն հրամանը։ Բացի այդ, ես նրան յանձնեցի, որ այս ընտրութեան մէջ ցանկալի յաջողութիւն ունենալու համար՝ նա գաղտնի կերպով համաձայնեցնի պատրիարքի և միւս եպիսկոպոսների կարծիքները տերութեան նպատակների հետ։ Սերոբէ արքեպիսկոպոսը ինձանից հրաման ունի հաղորդել ձեզ այս գործի վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները։ Նրա (Սերոբէի) հետ համաձայնութիւն կայացնելով, դուք ևս ջանացէք գործ դնել այս բանում նոյն խոհեմութիւնը և զգուշութիւնը, որ առաջ էլ էք ցոյց տուած, և այդպիսով կատարել Ն. Կ. Մեծութեան Բարձրագոյն հրամանը։

«Հոգևորականութեան նիստերը պէտք է բացուին եկող մարտի 15-ին և դուք կարգ ու կանոն պահպանելու և այս գործը յաջողութեամբ վերջացնելու համար, պէտք է ներկայ լինիք նիստը բացուելու ժամանակ, բայց ժողովներին անձամբ չխառնուիք։

«Բոլորովին յոյս դնելով ձեր խոհեմութեան և տէրութեան նպատակների համաձայն վարուեցողութեան վրայ, ես հաւատացած եմ, որ այս գործը կը վերջանայ կատարեալ յաջողու-

թեամբ և համաձայն Հայոց ազգի ցանկութեանը»։*)

ՄԿԶ

Պասկեվիչի այս նամակից երևում է, որ իսկապես Կարբեցի Յովհաննէսը արդէն ընտրուած պրծած էր։ Մնացել էր միմիայն այդ ընտրութիւնը ձևակերպել, այսինքն այնպէս անել, որ յայտարարուի թէ ընտրութիւն անողը՝ հայ հոգևորականութիւնը և աշխարհականներն էին իրը։

Այդպէս էլ եղաւ։

Սերոբէն և Բեհրութովը միքանի անգամ Էջմիածին եկան և Երևան վերադարձան։ Ժողովներ կազմեցին թէ ի պաշտօնէ և թէ ի մասնաւորի։

Այդ ժողովներից պաշտօնականներին ներկայ էր լինում նախագահի իրաւունքով, ինքը գառամեալ Եփրեմ կաթողիկոսը, որ այդ օրերում մանաւանդ՝ Սերոբէի և Բեհրութովի համար, մանէկէնի–խրատուլակի դեր էր խաղում։ Ժողովների ժամանակ Սերոբէն էլ, միւսներն էլ, հարկաւ իրանց ճառերի մէջ անդադար պնդում էին, որ ժողովը կարող է ընտրել՝ ում որ ինքն է ուզում, որին որ ինքը արժանաւոր է համարում։

Սակայն... նրանք որ համարձակւում էին հակառակ կարծիք յայտնելու տրամադրութիւն

*) Акты, VII № 248.

ցոյց տալ խօսքով, կամ թէկուզ երեսի արտայայտութեամբ,—այդպիսիների հետ՝ իշխան Բեբութովն շտապում էր առանձին տեսակցել ժողովից առաջ կամ յետոյ և կամ նրանց խցերում, կամ Սերոբէի մօտ, առաւելապէս գիշերները։ Եւ որոց որ չէր դաղողում որսալ, տէրութեան նպատակների հետ համակերպել,—այնպիսիներին էլ ապառնում, ղեկցնում էր իր սովորական „цыцъ"! և „смотри"! բառերի զործածմամբ եւ ցուցամատի շարժմամբ։

Զմոռանամ յիշել, որ թէպէտ և Եփրեմ կաթողիկոսի հրաւիրագրերով, թեմերի առաջնորդները, վանահայրերը և փոքր ի շատէ յայտնի միւս հոգևորականները, ընտրութիւնից առաջ, հրաւիրուած էին Էջմիածին գալու և ընտրութեան մասնակցելու, — այնուամենայնիւ կաթողիկոսի յիշեալ հրաւիրագրերը՝ Ներսէս Աշտարակեցու վանքից դուրս գանուող կուսակիցների ձեռքը կամ ընաւ չհասաւ, կամ ժամանակին չհասան։ Իսկ Կարբեցու կուսակիցները և այսպէս ասենք, անկուսակցականները՝ Էջմիածին հասան ոչ թէ ժամանակին, ընտրութիւններից առաջ, այլ նոյնիսկ կաթողիկոսի հրաւիրագրերը ստանալուց էլ առաջ,—Սերոբէի նախրօք գրած մասնաւոր նամակների զօրութեամբ։

Այսպէս ահա կատարուած ընտրութեան համար ի հարկէ, արձանագրութիւն կազմուեցաւ, Սերոբէի «ներածութեամբ»,—ինչպէս որ

գրեց Բեհբութովը Պասկեվիչին ուղղած զեկուցագրումը։ Արձանագրութեան մէջ ի հարկէ գրուեցաւ թէ՝ 1831 թուի մարտի 16-ին ընտրութեան ժամանակ կանդիտատներ ընտրուեցան միաձայն «տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոսը և Վրաստանի սրբ. արքեպիսկոպոս Յովհաննէսը»։

Այնուհետև այդ արձանագրութեան միքանի պատճէնները «յայտարար գրութիւն» անուանով թեմերն ուղարկուեցան աշխարհական հայերի ձայները ևս ժողովելու։ Այս դէպքումն էլ, հարկաւ տեղական քաղաքական իշխանութիւնները, ըստ նախնթաց նախարարական հրահանգի, ձայներն այնպէս ժողովեցին, որ աշխարհականների ամենատուար մասը՝ իրանց ձայնը Յովհաննէս Կարբեցուն տուին,—ինչպէս ասում է պատմիչը, — ակամայացեալ ի ասիպանաց կոմսին» —Պասկեվիչի։*)

Եւ ի հետևումն այս ամենին Յովհաննէս Կարբեցին ընտրուեցաւ ամենայն Հայոց կաթողիկոս։

Կարբեցու ընտրութեան թերթերը, դեռ Թիֆլիզ չէին ուղարկուած,—վանդի աշխարհականների ձայների հաւաքումը տակաւին չէր վերջացած, - երբ կոմս Պասկեվիչը, կայսեր հրամանով՝ ապրիլի վերջին Պետերբուրգ գնաց և այնտեղից էլ Լեհաստան անցաւ, ծագած ապըստամբութիւնն ընկճելու։

*) Պատմ. կաթողիկ. էջմ. եր. 142

Բայց նախքան կովկասից մեկնելը նա՝ Պասկեվիչը իր պաշտօնակատար ժենեռալ Պանգրատեվին, այլ և այլ հրահանգներ տուեց Հայոց եկեղեցւոյ գործերի վերաբերութեամբ։ Եւս և հետեւեալ գաղտնի գրութիւնը՝ ապրիլի 24-ին ըստորագրած։*)

Մէկ

«Յանձնելով ձեր գերազանցութեանը Անդրկովկասեան գործերի զեկավարութիւնը, — գրում է Պասկեվիչը Պանգրատևին, - ես ընդսմին անօգուտ չեմ համարում հաղորդել ի գիտութիւն ձեր քանի մի մանրամասնութիւններ ձեր ձեռքը անցնող ամենանշանաւոր գործերից մէկի վերաբերութեամբ, - այն է Հայոց հոգևորականութեան գործի մասին։

Այն հանգամանքները, որոց պատճառով ես այդ գործը ամենանշանաւորներից մէկն եմ համարում, որանք են՝

«Հայերը, որոնք վաճառականութեան մէջ վերին աստիճանի ընդունակ մի ժողովուրդ են և այդ պատճառով տէրութեան համար օգտաւէտ կարող էին լինել, ցրուած լինելով ամենաշատ թուով Ռուսաստանում, Տաճկաստանում և չունենալով քաղաքական անկախութիւն, միմեանց հետ կապուած են միմիայն կրօնով։ Նրանք միայն մի ընդհանուր իշխանութիւն ու-

*) Акты, VII եր. 306—083. № 253.

նին, որ շատ մեծ ազդեցութիւն ունի նաև նրանց աշխարհային գործերի վրայ։ Այդ Հայոց հոգևորականութեան պետն է, Էջմիածնի կաթողիկոսը։ Վասն որոյ պատրիարք նշանակել մի այնպիսի մարդու, որ անձնուէր լինի Ռուսիային և Հայերին մեր կողմը գրաւելու ցանկութիւնը—պատճառ են եղած, որ մեր տէրութիւնը առաջուայ ժամանակներումն էլ, միշտ փոքր ի շատէ խառնուել է պատրիարքի ընտրութեան գործում։ Որ տէրութիւնը ցանկացել է Հայերին դէպի մեր երկրները քաշել, — այդ ապացուցում է այն մեծամեծ արտօնութիւններով, որ Ռուսիայում ամեն տեղ տրուած է հայերին, որոնք գրեթէ ոչինչ հարկ չեն տալիս։ Այդ արտօնութիւնները և մեր ու նրանց կրօնի նրմանուրիւնը պատճառ եղան, որ Հայերը մեծ քանակութեամբ մեր երկիրները գաղթեցին։

Այն օրից՝ երբ Երևանեան նահանգը և սրա հետ էլ Կաթողիկոսական Աթոռը Ռուսիայի հետ միացաւ՝ ես առանձին ուշադրութիւն դարձրի Հայոց հոգևորականութեան գործերի վրայ։ Ես այդ գործերը ամենազարհուրելի խանգարմունքների մէջ գտայ։*)

Եփրեմ պատրիարքը՝ որ մի առաքինի, բայց ընութեամբ և առողջութեամբ թոյլ և տարիքով լցուած մի անձն է, թոյլ է տուել, որ իր վրայ իշխեն անարժան մարդիկ, որպիսիք են՝

*) Ռուս-պարոկական պատերազմի և քաղաքական այլևայլ խաղերի երևից, — ուելացնում ենք մենք Ծան. Ցոդ.

Ներսէս արքեպիսկոպոսը և սրա արբանեակները՝ Յովսէփ վարդապետը Էջմիածնում, Յարութիւն վարդապետը Թիֆլիզում և միքանի ուրիշ անձինք, որոց շատերին Ներսէս արքեպիսկոպոսը Սինոդի անդամ էր նշանակել։

«Վանքի հարստութիւնները վատնուած և կողոպտուած են*)

Եկեղեցիքը ամայացած են։ Հոգևորականութիւնը վերին աստիճանի ագիտութեան մէջ է ընկղմած և իր անվայել վարքը ու բարքով դայթակղեցնում է աշխարհականներին։

Այս բոլորը տեղիք տուեց ընդհանուր անբաւականութեան մինչ այն աստիճան, որ Տաճկաստանի հայերը բոլորովին անջատուեցան Էջմիածնի Աթոռից և կառավարուում էին Կ. Պոլսոյ պատրիարքի ձեռքով**)։

«Որպէսզի ներկայումս այդ անկարգութիւններին վերջ տրուի, ես ստիպուած եղայ խնդրել, որ այստեղից Ներսէսը հեռացուի և նա արդէն Բեսարաբիա է փոխադրուած, Յովսէփ վարդապետի տեղափոխութեան մասին՝ նամանդէս Բարձրագոյն հաճութիւն կայացաւ։

*) Երևի մեր ընթերցողները չեն մոռացել, որ Մայր Աթոռի առաջին և գլխաւոր կողոպտիչներն եղան Իշխան Ցիցիանով և ժենեռալ Նեովէտայեվ

**) Տաճկահայերի անջատման պատճառը Մայր Աթոռի և առհասարակ հայ հոգևորականութեան, ներքին պակասութիւնները էին, այլ Եփրեմի կաթողիկոսանալը՝ ասանց Տաճկաց Սուլթանի հաստատութեանը — ուրեմն զուտ քաղաքական պատճառ. որ իր տեղումն էլ յիշել ենք արդէն։

բայց երբ գեներալ մայեոր իշխան Բեհրութովը (որ այս առարկայի վերաբերութեամբ շատ լաւ էր գործում) հաղորդեց թէ՝ Յովսէփը իր վարքը փոխել է,—այդ Բարձրագոյն հրամանի ի կատար ածելը՝ մի առժամանակ յետաձգուեց*)։

«Որպէզի ապագայի վերաբերութեամբ՝ այդպիսի անկարգութեանց առաջն առնուի, ես ցանկացայ մի հաստատ կանոնագրութիւն կազմել հայոց հոգևորականութեան գործերի կառավարութեան համար։ Այս նպատակով ես մի առանձին կոմիտէտ կազմեցի և նրա այս առարկայի վերաբերութեամբ պատրաստած ծրագիրը ուղարկեցի օտարազգիների հոգևոր գործոց նախարարութեանը։

«Մինչ այս մինչ այն Եփրեմ պատրիարքը ծերութեան և հիւանդութեան պատճառով՝ ցանկացաւ հրաժարուել Էջմիածնական Աթոռի գործերի վարչութիւնից։

«Առ այս ամենաողորմածաբար թոյլատրութիւն շնորհուեցաւ և միևնոյն ժամանակ՝ Բարձրագոյն հաստատուեցան նոր պատրիարքի ընտրութեան կանոնները, որ ինձ հաղորդած է ստատս-սեկրետար Բլուդովը»։

ՄԿԸ.

«Գործից կը տեսնէք,—շարունակում է

*) Այդ մշտական սպառնալիքից ու երկիւղից էր անշուշտ, որ Յովսէփը յետոյ Կարբեցու Ջերմ պաշտպանն էլ դարձաւ և... ի հարկէ նրանից վարձատրուեց։

Պասկեվիչը,—որ Ն. Կ. Մեծութեան այդ Բարձրագոյն կամքը կատարելու համար՝ Էջմիածնում գումարուեցաւ Հայոց ամենանշանաւոր հոգևորականութիւնը, որն որ պատրիարքութեան համար երկու կանդիտատներ ընտրեց։ Այս կանդիտատների անունները յայտարարուեցան գրեթէ բոլոր գաւառներում, ուր որ Հայերը բնակուում են և այժմ սրանցից ստորագրութիւն է ժողովում թէ՝ երկու կանդիտատներից որին են ուզում պատրիարք ունենալ։ Այս ստորագրութիւնները և հետն էլ երկրիս կառավարչապետի կարծիքը, պիտի ներկայացուին ի Բարձրագոյն բարեհայեցողութեան, և թագա որ կայսեր ամենաողորմած ընտրութիւնից կախած կը լինի կանդիտատներից մէկն ու մէկի հաստատուիլը կաթողիկոսական կոչման մէջ։

«Պարսկաց և Տաճկաց տէրութիւնների մասնակցութիւնը նոր պատրիարքի ընտրութեան գործում բոլորովին մերժուում են. բայց այդ տէրութիւններին կը հաղորդուի նոր պատրիարք նշանակելու մասին և միևնոյն ժամանակ նրանցից թոյլատրութիւն կը խնդրուի, որ իրանց հպատակ հայերին իրաւունք տրուի ամեն հոգևոր գործերում Էջմիածնի պատրիարքին դիմելու։ Կանդիտատներ ընտրուած են երկու արքեպիսկոպոսներ՝ Էջմիածնի Սինոդի անդամ Մարտիրոսը և Թիֆլիզի թեմի կառավարիչ Յովհաննէսը։ Մարտիրոսը մի զառամեալ ծերունի է և թոյլ է առողջութեամբ. Յովհաննէսը առոյգ է

մարմնով ու հոգով և յարգուած է։

Մինչև հիմա ինձ հասցրած Հայոց առուած ատրաքրութիւններից երևում է, որ նրանք բոլորքեանք ցանկանում են*) կաթողիկոս ունենալ Յովհաննէս արքեպիսկոպոսին։

Իմ կողմից պիտի ասեմ, որ անձամբ անձին ճանաչելով Յովհաննէս արքեպիսկոպոսին և հաւատիանալով նրա խելացիութեանը և լաւ ընդունակութիւններին և որ գլխաւոր է, նրա անձնուիրութեանը Ռուսային և պատրաստակամութեան, որ նա ցոյց է տալիս օգնելու մեր տերութեանը իր նպատակների հասնելուն,—ոչինչ համեմատութիւն չի կարող լինել նրա և Ներսէս արքեպիսկոպոսի մէջ։

«Վերջինս (Ներսէսը) առանց մեր իշխանութեան գիտութեանը՝ յարաբերութիւններ էր ընկսում Պարսկաց արքունիքի և Տաճկաց փաշաների հետ**) և ժողովրդին ազգարարութիւններ —պրոկլամացիա էր ուղարկում,***) որով յայտնապէս ցոյց տուեց, որ ձգտում է իշխանութեան իրաւունք տեսկանել իրան։

«Այսպիսի մի բան Յովհաննէս արքեպիսկոպոսից անկարելի է սպասել ոչ թէ նրա համար, որ սա շատ անձնուէր լինէր գտնուում Ռուսիային, այլ լոկ իր բնութեան անձեռնահաս լինելու պատճառով։

Պատիւ ունենալով հաղորդել ձեզ բոլոր վերոյիշեալը ձեր կշռադատութեան և հարկաւոր դէպքում, գործադրութեան համար, պարտք եմ համարում յարակցել, որ վերոյիշեալ պատճառներով Յովհաննէս արքեպիսկոպոսը, ըստ իմ կարծեաց, ամենից արժանաւորագոյնն է Էջմիածնի պատրիարքութեան համար։

Եւ ես ձեզ խոնարհաբար խնդրում եմ անտ այս տեսակ ներկայացնել սոյն իմ այս կարծիքը հոգևոր գործոց նախարարին, որին ես էլ իմ կողմից նոյնը կը հաղորդեմ»։

Պասկեվիչի ցանկանութիւնը կատարուեցաւ, 1831 թուականի Յունիսի 30-ին հրովարտակով՝ կայսրը Յովհաննէս Կարբեցուն հաստատեց ամենայն Հայոց կաթողիկոս՝ շնորհելով նրան, միևնոյն ժամանակ ս. Ալէքսանդր Նեւսկու առաջին կարգի շքանշանը։*)

Մի այլ հրովարտակ էլ Եփրեմի անունով դուրս եկաւ, որով նրան էլ ս. Անդրէաս նախակոչի շքանշանը էր շնորհուում։**)

Շքանշաններ շնորհուեցան նաև տեղապահ Մարտիրոս և Աշտարխանի առաջնորդ Սերոբէ

*) Քիչ առաջ մենք արդէն ասել ենք, թէ հայերից ինչ ձևով էին ժողովում այդ ձայները։

**) Իր տեղում մենք յիշել ենք այդ յարաբերութեան ինչ անմեղ բան լինելը։ Պասկեվիչը, ուրիշ անդամների նման՝ այս անգամ ևս այդ անմեղ բանը ուսեցնում և չափազանցում և նոյնիսկ զրպարտում է Ներսիսին։

***) Պասկեվիչը գիտամբ չի յիշում, որ Ներսիսի այդ կոչերը գրվում և ցրուում էին Երմոլովի և յետոյ Պասկեվիչի իրան խնդրանքով։

*) Պատմ. կաթ. Էջմիածնի եր. 224.

**) Նոյնը եր. 225.

Արքեպիսկոպոսներին՝—երկուսին էլ՝ ս. Աննայի առաջին կարգի։

Մի երրորդ հրավարտակ ևս դուրս եկաւ յանուն «Բարձրաստիճան Եփրեմի՝ գահերէց պատրիարքին Էջմիածնի, կաթողիկոսին ամենայն Հայոց, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վանահարց, սիւնոդոսին Էջմիածնի և ամենայն եկեղեցականացն Հայոց, արգոյ Մելիքաց, Իզբաշեաց և կառավարչաց և ամենայն պատուելի ազգի Հայոց», որոց Եփրեմի հրաժարուելու և Կարբեցու ընտրուելու և հաստատուելու համառօտ պատմութիւն անելուց յետոյ՝ հաւաստիացնում է նրանց իր Կայսերական ողորմածութեան և հովանաւորութեան մէջ, «որք հանապազ մնալոց են անկողոպտելի»։

ՄԿԹ

Երբ Ներսէս Աշտարակեցին՝ Քիշնեվում լսեց Եփրեմի հրաժարականի ընդունելն ու Կարբեցուն կաթողիկոս ընտրելը, այլայլմամբ բացականչեց՝«պատերազմ ունիմ Նիկոշայի հետ. նա պետք է իր կայսերական խոստմունքը կատարէ. ես չեմ թողնիլ, որ Յովանէսը պղծէ հայրապետական աթոռը» *)։

Բայց մեծ հայրենասէրի այս պոռնկոտութիւնը, հարկաւ, արգելք չեղաւ, որ Յովհաննէսը՝ արքունի գանձարանից 12,000 ռ. ճանապարհածախք առանալով՝ մեծ հանդէսով Թիֆլիզից համբայ ընկնի Էջմիածին գնալու և հայրապետական Աթոռի վրայ բազմելու։

Յիշեալ մեծաքանակ գումարը՝ կաթողիկոսի ճանապարհի ծախքերի համար՝ արքունի գանձարանը առաւել ըստ միջնորդութեան կառավարչապետի պաշտօնակատար Ժենեռալ Պանգրատիի։ Իսկ վերջինս էլ՝ նախ քան իր այդ միջնորդութիւն անելը՝ Յովհաննէսի կողմից երկու առանձին ծառայութիւն էր տեսել յօգուտ տէրութեան։

Առաջին ծառայութիւնը այն էր, որ Կարբեցին Ներսիսեան հինգդասարանեան դպրոցը, ուր 400 աշակերտներ կային 11 ուսուցիչներով, երկդասարանեանի վերածեց, 160 աշակերտներով և 3 ուսուցիչներով, և շինութեան պարապ մնացած սենեակները յանձնեց զինուորական վարչութեան, որ այնտեղ ամբարուին օսմանեան պատերազմի ժամանակ ձեռք բերուած զինուորական առարկաները։

Իսկ երկրորդ ծառայութիւնը այս էր՝ Թիֆլիզի մօտ եղած յայտնի Կոջոր ամարանոցի մի մասը, այդ միջոցներում վրացի իշխան Բագրատիոններին էր պատկանում, որոնք ցանկացան ծախել այդ ամարդարձնակ, մացառուտ և անարդիւնք կալուածքը։ Ներսէսը վճարեց գնեց 500 ռուբլիով այդ միքանի հազար դեսեատին կալուածքը յանուն Թիֆլիզի վանաց մայր եկեղե-

*) «Լուսոյ» ամսագիր. 1908 յունուար. Թ. 44, էջ 27—30։

ցու և իբրև սեպհականութիւն իւրաշէն (Ներսիսեան) դպրոցի։

Վրաստանի նահանգապետ և Ներսիսի բարեկամ ժենեռալ Սիպեագինը 1827 թուին արհւոյ, իրան թոյլատրութեամբ կոջորում իրան համար մի փոքրիկ տուն—ամարանոց էր շինել։

Մի այդպիսի թոյլտուութիւն այժմ էլ Պանգրատեվն էր խնդրում Յովհաննէսից։

Կարբեցին ոչ միայն Պանգրատեվի այդ խնդիրը յարգեց, այլև կոջորն ընդմիշտ տէրութեան ընծայեց։ Զմայլած կաթողիկոսի այդ նուիրաբերութիւնից՝ Պանգրատեվը 1631 օգոստոսի 20-ին կոմս Զեռնիշեվին հետևեալը գրեց՝ «Ռուս պաշտօնեաների ապահովութեան համար ամառը Կոջոր տեղափոխուելու մասին, ես խընդրեցի Հայոց Յովհաննէս կաթողիկոսի բարեհաճութիւնը և նա, առանձին ջերմեռանդութեամբ դէպի տէրութեան շահերը վերաբերուելով, ցանկութիւն յայտնեց բոլորովին ընծայել տէրութեանը Կոջոր կալուածի այն կէսը, որ պատկանում է քաղաքիս Վանայ եկեղեցուն։ Ստանալով այս մասին իմ համաձայնութիւնը, նա գրեց դատարանին պարտուպատշաճը տնօրինելու։ Յովհաննէս պատրիարքը պաշտօնապէս հաղորդում է ինձ, որ Վանայ եկեղեցին այդ կալուածից գրեթէ ոչինչ եկամուտ չէր ստանում բայց ես չուզենալով Վանքը առանց վարձատրութեան թողնել, հրամայեցի տալ փոխարէնը Թիֆլիզում հրած պարապ գետին՝ խանութներ շինելու, որոց

եկամուտը կը գերազանցէ քան զտէրութեան արած նուիրաբերութիւնը...։

Պարտք համարելով հաղորդել ձեզ Յովհաննէս պատրիարքի այսպիսի ջանասիրութեան մասին յօգուտ տէրութեան. խնդրում եմ հասցնէք ի տեղեկութիւն թագաւոր կայսեր»։

Մէջ

Դանձարանից 12,000 ռուբլին (4000 ոսկի) ստանալով՝ Յովհաննէս կաթողիկոսը գրեց Էջմիածին, որ հրաւիրակներ ուղարկեն իրան տանելու։

Երկու արքեպիսկոպոս և երկու վարդապետ սեպտեմբերի սկզբին հասան Թիֆլիզ. իրանց հետ բերելով սթռռականների հրաւիրագիրը և կաթողիկոսական գաւազանը։ Այնուհետև, սեպտեմբերի 16-ին կաթողիկոսը ճանապարհ ընկաւ «ընդ հրաւիրակաց իւրոց և պատուելի հոգևորականաց և մարմնաւորականաց քաղաքին Տրպխիսայ մեծաւ շքով, փառաւորութեամբ և ողջունագիրք»։

Հասնելով Էջմիածին և լսելով «թէ յամենայն կողմանց յատուկ փափագմամբ (ճիշտը յատուկ կարգադրութեամբ) դիմեալ գան յէջմիածին բազմութիւն ուխտաւորաց և այլ պատուելի աստիճանաւորաց հայոց, ուսաց և թըրքաց ի հանդէս հայրապետական օծութեան և մանաւանդ օսմանցւոց, կաթողիկոսը իւր օծման

հանդէսը յետաձգել տուեց մինչև նոյեմբերի 6-ը և այդ ու հետևեալ երկու օրերում, այն է 7-ին և 8-ին վերջացրեց՝ եկեղեցական ամենաշքեղ և ճիգ հանդիսով, որին ներկայ լինելու համար Էջմիածին եկած էին նաև, բացի ամեն կարգի և աստիճանի հայ հոգևորականութիւնից և հայ ու այլազգի տեղական ժողովրդից, այլ նաև Թիֆլիզի նահանգապետ իշխան Բեհբութովը և Երևանեան նահանգի գրեթէ բոլոր քաղաքացիական և զինուորական պաշտօնեաներ և հայ, թուրք ու տաճիկ ազգաբնակութեան ներկայացուցիչները։

«Որպէսզի հանդիսին աւելի շքեղութիւն տուի,—նոր կառավարչապետ բարոն Ռոզէնը տեղեկագրում էր Պետերբուրգ Բլուդովին,— Էջմիածին ուղարկուած էր նաև մի վաշտ զինուոր, թնդանօթներ, զինուորական նուագածու խումբ»։

Հանդիսի որոշեալ ժամանակին, զինուորները մի քանի անգամ համազարկ տուին և 101 անգամ թնդանօթ արձակեցին։*)

Տէրութեան հաշուով, 300 մարդու ճաշ և ընթրիք տրուեցաւ, որոց ժամանակ, ի հարկէ. ճառեր խօսուեցան, բարեմաղթութիւններ եղան, կենաց բաժակներ խմուեցան։

Երեկոյեան ամբողջ վանքը լուսաւորուած էր, շատ շքեղներ,—ֆեյերվերկ բաց թողին։

Այն դահլիճում ուր ընթրում էին հիւրերը, մի փառաւոր դրուագաձև նկար էր պատրաստուած՝ Էջմիածնի կաթողիկոսական իշխանութիւնը ձեռացնող՝ Եփրեմ և Յովհաննէս կաթողիկոսների անուանների փակագրութեամբ, որոց վրայ տարածուած՝ հովանաւորում էր երկգլխանի արծիւը՝ Ն. Կ. Մեծութեան անուան փակագրութեամբ։

Կարճ ասած, Կովկասեան իշխանութիւնը ըստ ամենայնի կատարել էր Պետերբուրգից նախօրօք տրուած հրահանգը՝ Կաթողիկոսի օծման հանդէսը, որքան կարելի է, շքեղ անելու համար։

Եւ այդ ընդհանուր շուքի և հանդէսների մէջ՝ եթէ կար մի բան, մի պակասութիւն, որ աչքի էր ընկնում,—դա Եփրեմ կաթողիկոսի բացակայութիւնն էր։ Ինչպէս պաշտօնական տեղեկութիւնները վկայում են, ծերունի Եփրեմը՝ միանգամայն ուժից ընկած՝ անկարող եղաւ անկողնից վեր կենալ և եկեղեցի իջնելով՝ հանդիսադիր լինել։ Ծերունին հազիւ հազ կարողացաւ վեհարանում դիմաւորել նորընծայ կաթողիկոսին, յանձնեց նրան կաթողիկոսական կնքեռնը, մատանին, բարեմաղթութիւններ արաւ և խոկոյն տանձնացաւ իր սենեակը, մասնակից չլինելով բնաւ ոչ ճաշերին և ոչ խրախճանքներին։

ՄՀՍ.

Դեռ այդ խրախճանքները Էջմիածնում չէին վերջացած, երբ Թիֆլիզում դիւանագիտութիւնը

*) Акты, VII, էջ. 262 № 172.

ձեռնարկեց իր իսկական գործին։
Վերևում մենք տեսանք, ընթերցող, որ Կարբեցին իր օծման հանդէսը մինչև նոյեմբեր ամիսը յետաձգեց, որպէսզի սպասուած հիւրերը էջմիածին հասնեն։

Հիւրերի մէջ՝ առաջին տեղն էր բռնելու ինքը՝ կառավարչապետի պաշտօնակատար ժենեռալ Պանգրատեվը, որ խոստացած էր Կարբեցուն՝ հանդիսին ներկայ լինել։

Սակայն հարկից ստիպուած՝ ժենեռալը Կովկասեան լեռնականների վրայ գնալով՝ անկարող եղաւ խոստումը կատարել։

Պանգրատեվին պատերազմի դաշտը ուղարկելով՝ տէրութիւնը Կովկասի կառավարչապետ նշանակեց, Պասկեվիչի փոխարէն՝ բարձր Գրիգորի Ռօզէնին։

Ռօզէնը իր բոլոր պաշտօնավարութիւնը Ռուսաստանումն էր կատարել և այժմ առաջին անգամ ուրք գնելով Կովկասում՝ մտնում էր իրան համար բոլորովին մի անծանօթ աշխարհ, ուր տեղական պայմանները այնքան բարդ էին և դժուար։

Այդ իսկ պատճառներով Ռօզէնը աշխատելով սխալների մէջ չընկնելու, հարկաւոր էր համարում քայլ առ քայլ հետևել իր նախորդ Պասկեվիչի բռնած ուղղութեանը և շարունակել նրա սկսածը։

Այդպէս վարուեցաւ բարձրը նաև Հայոց եկեղեցական գործերի վերաբերութեամբ։ Նա

ինքն էր, որ Կարբեցու օծման հանդէսը այնպէս շքեղութեամբ կատարել տուեց՝ համաձայն նախարարի նախընթաց կարգադրութեանը։

Կարդալով Հայոց կաթողիկոսութեան վերաբերեալ գործը՝ Ռօզէնը նրանում, ի միջի այլոց, հանդիպեցաւ Պանգրատեվի մի յայտարարութեանը՝ նորընծայ կաթողիկոսի իրաւունքներից մէկի սահմանափակման մասին։

Ուստի աճապարեց և նոյեմբերի 26-ին № 551 հետևեալ յայտարարութիւնը գրեց կոմս Զերնիշեվին։*)

ՄՀԲ

«Գեներալ-ատիւտանդ Պանգրատեվը,—գրում է Ռօզէնը,—անցեալ սեպտեմբերի 14-ին, № 321 յայտարարութեամբ ձեր պայծառափայլութեանը իր կարծիքն է յայտնում այն անյարմարութիւնների առթիւ, որ կարող են ծագել, եթէ որ օտար դաւանութիւնների մինիստրը անմիջական յարաբերութիւններ ունենայ Հայոց կաթողիկոսի հետ՝ երկրիս մէջ թեմական առաջնորդներ նշանակելու ժամանակ՝ առանց տեղական իշխանութեան նախընթաց գիտութեանը։

Պանգրատեվ գեներալը իր այդ կարծիքը ձեզ հաղորդելով՝ խնդրած է ձեզ ներկայացնել ի բարեյայտեցողութիւն Թագաւոր կայսեր, միջնորդելով որպէսզի Ն. Կ. Մեծութիւնը բարեհաճի

*) Акты, VIII, եր. 263, № 178.

բարձրագոյնս հրամայել, որ Վրաստանում հայոց առաջնորդները ոչ այլ կերպ նշանակուին, եթե ոչ մասնակցութեամբ երկրի կառավարչապետին, որին յայտնի են բոլոր առաջնորդացու անձինքը։ Նմանապես եւ Հայոց եկեղեցոյ միւս նշանաւոր գործերում Կովկասեան քաղաքացիական իշխանութիւնը պետք է որ անմիջական մասնակցութիւն ունենայ, որպէսզի այդպիսով հոգեւոր վարչութեան մէջ տեղի ունեցող գործուածների առաջ առնուի։

«Գենեռալ Պանդրատեվի յիշեալ առաջարկը՝ ես ես իմ կողմից միանգամայն արդարացի համարելով և իմ այստեղ եղած կարճ ժամանակուս հաւատացանալով, որ հոգեւոր բարձր պաշտօնի համար տեղի ունեցած ամեն մի ընտրութիւն, կամ կրքով է լինում կամ կաշառքով, քան թուն պետական շահերի տեսակետով եւ ընտրուած անձի տերութեան նուիրուած լինելու համար,—խնդրում-եմ ձեր պայծառափայլութեանը միջնորդել Թագաւոր Կայսեր առաջ, որպէսզի օտար դաւանութիւնների մինիսթրը՝ առանց այստեղի իշխանութեան գիտութեանը՝ հայոց կաթողիկոսների հետ ուղղակի յարաբերութեան մէջ չմտնի։

Որովհետև միմիայն այս միջոցը կարող է հայ հոգեւորականութեանը հնազանդութեան պատշաճաւոր ոգեմտներում պահել և զսպել կրքերի և շահախնդրութեան արդիւնքը, որոնք այնքան արմատացել են նրա՝ հոգեւորականութեան մէջ։

ՄՀԳ

Երբ կաթողիկոսի օծումը վերջացաւ և հիւրերը հեռանալ սկսան,—Վլանգալին և Սերոբէ եպիսկոպոսը, ի ներկայութեան իշխան Բեհբութովի և իշխան Փալավանդովի, կաթողիկոսին յայտնեցին, որ նա իրաւունք չունի առանց բարձրագոյն թոյլտուութեան և քաղաքացիական գլխաւոր իշխանութեան նախընթաց գիտութեանը՝ ոչ եպիսկոպոս ձեռնադրել, ոչ վարդապետ և ոչ էլ մինչեւ անգամ քահանայ։

Այս պատուէրը Վլանգալին և Սերոբէն ըստացել էին Թիֆլիզում բարձն Ռոզէնից։ Իսկ սա էլ այդ բանը վերցրել էր «Պոլօժենիայի» նախագծից, որ Պասկեվիչն էր կազմել տուել և դեռ հաստատուած չէր։

Կարբեցու վրայ վերին ատիճանի անախորժ տպաւորութիւն գործեց և նրան կատարելապէս ցնցեց կառավարութեան այդ հրամանը։ Եւ նա հէնց առաջին անգամ այդտեղ զգաց, որ ինքը թէև ձեռնադրուեցաւ իբրև ամենայն հայոց կաթողիկոս, բայց զրկուելով այն տարրական իրաւունքից, որ ցարդ ունեցել են ոչ միայն կաթողիկոսները, այլ նոյն իսկ ամեն մի թեմի առաջնորդ՝ վարդապետ և քահանայ ձեռնադրելու նրկատմամբ։

Այս ամենը զգալով և տեսնելով հանդերձ, Յովհաննէս կաթողիկոսը ոչ ընդունակութիւն և

քաջութիւն ունէր խոկոյն և եթ բողոքելու կառավարչապետի այդ տարօրինակ կարգադրութեան դէմ, ոչ էլ ժամանակը թոյլ էր տալիս մի այդպիսի քայլ անել՝ առանց Եփրեմի խորհրդին, Եփրեմի, որին հետ խորհրդակցելու, որի ցուցմունքներովշարժուելու պատուէր՝ նոյնիսկ կայսրը էր տուել Կարբեցուն սրա հաստատութեան հրովարդակումը։

Վլանգալին և Սերոբէն մեկնեցան Թիֆլիզ, իսկ իշխան Փալավանդովը Նախիջևանի կողմերը՝ Ռօզէնի մի յանձնարարութեամբ։

Երբ Փալավանդովը Նախիջևանից յետ եկաւ Երևան, այնտեղ նա պատահեց Եփրեմի և Յովհաննէսի կողմից գնացած մի վարդապետի, որ կաթողիկոսների անունով խնդրեց իշխանին Էջմիածին մտնել։

Փալավանդովը եկաւ։ Եփրեմը՝ ի ներկայութեան Յովհաննէսի, յայտնեց իշխանին, որ իրան նեղութիւն են պատճառել, յատկապէս Ռօզէնի արած կարգադրութեան մասին իրանց (կաթողիկոսների) զգացած ցաւը յայտնելու և նրա միջնորդութիւնը խնդրելու՝ յիշեալ կարգադրութիւնը փոխել տալու նպատակով։

Ծերունի հայրապետը բացատրեց իշխան Փալավանդովին, որ ա) կաթողիկոսին արգելելով առանց բարձրագոյն թոյլտուութեան եպիսկոպոս ձեռնադրելու, դրանով կառավարութիւնը զբաղում է նրան—կաթողիկոսին ոչ միայն ինքնուրոյնութիւնից, այլ և նրա պատիւը վայր կը ձգէ

ոչ միայն ռուսահայերի, այլ նաև նամանաւանդ, արտասահմանի հայերի վրայ։ Մինչդեռ կառավարութեան վարմունքից, նոյնիսկ նոր կաթողիկոսի օծման առթիւ կազմուած հանդէս ուշքից՝ պարզ այն է դուրս գալիս, որ կառավարութիւնը կաթողիկոսութիւնը բարձրացնել է ուզում։

բ) Ձեռնադրութիւնների նկատմամբ սահմանափակելով կաթողիկոսի իրաւունքը՝ կառավարութիւնը, հակառակ իր քաղաքական ձգտմանը, Սսի կաթողիկոսի և Կ. Պոլսոյ պատրիարքի դիրքն էլ աւելի է բարձրացնում։ Եւ այդպիսով, նրանց ազդեցութեանն է ենթարկում այն վիճակները, որոնք ցարդ Էջմիածնից են կախու�ունեցել։

գ) Զրկելով իր իրաւասութեան տակ գտնուած վիճակներից՝ Էջմիածինը միաժամանակ կը զրկուի և այդ վիճակներից հասանելի արդիւնքներից,—գանձանակադրամ, անշարժ կալուածքների եկամուտ, պատահական նուիրաբերութիւններ,—իսկ առանց դրան Մայր Աթոռը միանգամայն անկարող է իր գոյութիւնը պահել։

Եփրեմի այդ բացատրութիւնները լսելուց յետոյ՝ Փալավանդովը դարձաւ դէպի Կարբեցին և հարցրեց չէ՞ որ Պոլժենիայի նախագծով եպիսկոպոսների ձեռնադրութիւնը՝ առանց բարձրագոյն թոյլտուութեան արգելուած է։ Իսկ այդ նախագիծը մշակողների և խմբագրողների մէկն էր և ինքը այժմեան Յովհաննէս կաթողիկոսը։

Կարբեցին պատասխանեց, որ ինքը այն ժամանակ էլ հակառակ է եղել այդ մտքին. և թէ վերջապէս, յեշեալ նախագիծը՝ դեռ մի ծրագիր է, որ տակաւին հաստատուած չլինելով՝ չի էլ կարող պարտադիր լինել։*)

ՄՀԴ

Եփրեմ կաթողիկոսի այս բացատրութիւնները նոյնութեամբ Փալավանդովը հաղորդեց Ռոզէնին։ Սա էլ իր հաւանութիւնը տալով՝ հաղորդեց**) Պետերբուրգ, որտեղից 1832 թ. յունուարի 26-ին № 200 հաղորդագրութեամբ՝ Բլուդովը հաղորդեց***) Ռոզէնին, որ կայսրը թոյլ է տալիս կաթողիկոսին, ըստ իր ազատ կամքի, եպիսկոպոսներ ձեռնադրել թէ ռուսահայերի և թէ արտասահմանեան հայերի համար։ Միայն թէ արտասահմանի հայերի համար ձեռնադրած եպիսկոպոսացուներից՝ կաթողիկոսը ոչինչ նուէր, աջահամբոյր ստանալու չէ։ Մէկ էլ, որ այդ դէպքում կաթողիկոսը պարտաւոր լինի, ամեն անգամ հաղորդել Կովկասի կառավարչապետին, սա էլ արտաքին գործոց նախարարին, թէ արտասահմանի որ վիճակի համար և որ վարդապետին՝ կաթողիկոսը եպիսկոպոս է ձեռնադրել։

*) Акты, հատ. VIII. № 180.
**) Նոյնը եր. 181.
***) Նոյնը եր. 186.

Կաթողիկոսը պարտաւոր լինի նաև, ռուսահայերի համար առաջնորդ նշանակելիս՝ եպիսկոպոսներից երկու թեկնածու առաջարկել կայսրը ի հաստատութիւն։ Եւ այդ առաջարկութիւնը կատարուի Կովկասեան իշխանութեան միջոցով։

Քահանաների ձեռնադրութեան մասին, ինչպէս Եփրեմը, նմանապէս և Յովհաննէսը նոյնպէս դիմումներ արին։

Բանը նրանումն է, որ կառավարութիւնը թոյլ չէր տալիս, առանց իր գիտութեանը, քահանաներ ձեռնադրելու գլխաւորապէս երկու պատճառով։ Նախ՝ որ հայ քահանաները շատ ազէտ էին և հետևաբար ոչ մի ազդեցութիւն չունէին և չէին էլ կարող ունենալ ժողովրդի վրայ։ Իսկ կղերի այդ ազդեցութիւնը կառավարութեան համար հարկաւոր էր՝ ճիշտ այնպէս, ինչպէս որ հարկաւոր էր կուսակրօնների ազդեցութիւնը։

Երկրորդ՝ որովհետև քահանայացուներ ընտրուում էին ամենամեծ մասամբ հարկատու դասակարգի ժողովրդից, հետևաբար կառավարութիւնը այդ դէպքում, որոշ չափով, նիւթական վնաս էլ էր կրում։

Ի զուր Յովհաննէս կաթողիկոսը աշխատում էր համոզել կառավարութեանը, որ քանի հայերը դպրոցներ և դպրանոցներ չունին՝ ակամայից պէտք է պատշաճաւոր կրթութիւն չունեցողներին ձեռնադրեն, նամանաւանդ որ դրանց ընտ-

ում է ինքը համայնքը և պահանջելով պահանջում է նրանց ձեռնադրությունը։ Կառավարությունը շարունակ բացատրում էր կաթողիկոսի դիմումներին և վերջերում, այն էլ Ռոզէնի միջնորդությանը զիջանելով և ի նկատի առնելով, որ հարկատու անձի հոգևոր կոչման մէջ ընդունելով նրա բաժին ընկած արքունի հարկը՝ նրան ընտրող համայնքն իր վրայ է ստանձնում, — կառավարությունը սկսաւ աչքի տակով մտիկ տալ քահանաների ձեռնադրության գործին և այլևս ցենզ չպահանջել նրանցից։

Այդ դրությունը, ինչպէս Յայտնի է, շարունակւում է ցարդ։*)

Զմոռանանք այս ևս յիշել, որ ինչպէս Եփրեմը, նոյնպէս և Յովհաննէսը խնդրում էին կառավարությունից, որ փոխարինաբար հինգ տարուց յետոյ, մաս առ մաս յետ ստանալու պայմանով 50,000 ռուբլի տրուի էջմիածնի պարտքերը թափելու համար։

Այդ առթիւ Բլուդովի 1832 թ. փետր. 25-ին № 484 գրությունից առ Ռոզէն երևում է, որ կայսրը՝ ֆինանսների մինիստրի զեկուցման վրայ, կաթողիկոսների այդ խնդիրը ևս բացատել է։**)

Բայց մի բան, որ ամենից աւելի վիշտ, ցաւ պատճառեց նոր օծուած կաթողիկոսին և

*) Ասողներ կան, թէ Ռոզէնը արգելից Յովհաննիսին քահանաներ ձեռնադրելը, ի նկատի ունենալով նրա կաշառակերությունը Թիֆլիզի առաջնորդության ժամանակ։

**) Акты, VIII, եր. 269, № 188.

նրան հիասթափեցրեց, դա այն ընդդիմադրությունն էր, որ կաթողիկոսին ցոյց էր տալիս կառավարությունը՝ տաճկահայերի հետ ունենալիք յարաբերության նկատմամբ։

ՄՀԵ

Պէտք է գիտենալ, որ չնայած գաղթականությունները, Տաճկաստանում գտնուած հայերը դարձեալ մեծամասնություն էին կազմում։

Նախնթաց երկու դարերում տաճկահայերը, մասնաւորապէս Կ. Պոլսոյ հայերը, Մայր Աթոռի և նրա գահակալների վերաբերմամբ՝ մեծ դեր են խաղացել թէ բարոյական և թէ նիւթական տեսակէտներով։ Կ. Պոլսոյ ազգայինք, իրանց պատրիարքներով՝ միշտ ձեռք ենք բերել Սուլթանի ֆէրմանը կաթողիկոսի հաստատության մասին և անմիջական յարաբերություններ են ունեցել էջմիածնի հետ, ինչպէս և էջմիածինը նրանց հետ։

Ինչպէս իւր տեղում տեսանք այդ յարաբերությունը յանկարծ խզուեցաւ Եփրեմի կաթողիկոսության օրով։ Տեսանք որ Եփրեմը հայրապետական գահը բարձրացաւ միմիայն Ռուսիոյ կայսեր հրովարտակով, որին յետոյ հետևեցաւ Պարսից շահի բերաթը։ Իսկ Օսմանեան տէրության հաւանությունն ու հաստատությունն աւելորդ համարուեցաւ։

Դրա հետևանքը այն եղաւ, որ Պոլսոյ ազ-

գայինները թէև սկզբում ընդունեցին Եփրեմի կաթողիկոսութիւնը և Տաճկաստանի եկեղեցիներում սկսեցին նրա անունը յիշատակել, բայց Սուլթանի հրամանով շուտով ստիպուած եղան փոխել իրանց յարաբերութիւնները Մայր Աթոռի հետ։ Եւ Եփրեմին «Ռուսաստանի մարդը» համարելով՝ Պոլսեցիք հեռագրեցին չափաւորեցին իրանց համակրութիւնը դէպի Էջմիածինը և ապա բոլորովին խզեցին եղած կապերը։

Եփրեմը երկու անգամ,—1812 և 1820 թուականներում,—նուիրակ ուղարկեց Պոլիս իր այժմեան յաջորդ՝ Յովհաննէս Կաբրեցի արքեպիսկոպոսին, բայց սա երկու անգամն էլ ձեռնունայն յետ դարձաւ։ Տաճկաց մայրաքաղաքում չընդունեցին նրան։ Եւ այնուհետև 1820 թուականից սկսեալ՝ Եփրեմ կաթողիկոսի անուան յիշատակութիւնը՝ բոլորովին վերացաւ Տաճկաստանի եկեղեցիների միջից։

Այս դրութիւնը տեւեց մինչև Յովհաննէս Կաբրեցու կաթողիկոս դառնալը, որ տեղի ունեցաւ ռուսական երկրում և լոկ ռուսական կայսեր հաստատութեամբ։

Այս այսպէս լինելով հանդերձ՝ ռուս կառավարութիւնը չդադարեցաւ Էջմիածնի կաթողիկոսութեան վրայ, ըստ առաջնոյն, նայել իր քաղաքական տեսակէտով, ուստի և բարձրագոյնը հրամայուեցաւ Յովհաննէս կաթողիկոսին, որ իր ընարութիւնն ու օծումն ընդունելը՝ շրջաբերական կոնդակով յայտնէ հայ ազգին և

«Տաճկաստանի ու Պարսկաստանի սահմաններում գտնուող բոլոր հայերին հուսիրեմ ընդմիշտ եւ նոցեւոր կարեւոր պետերի ժամանակ դիմել Էջմիածին»։

Բացի դրանից, նոյն բարձրագոյն հրամանով յանձնուեցաւ Կ. Պոլսոյ ռուս դեսպանին, նոյնպէս և Թէհրանի դիպլոմատիքական գործակատարին, որ միջոցներ գործ դնեն ձեռք բերելու ոչ թէ կաթողիկոսի հաստատութեան ֆերմանը, ինչպէս որ այդ լինում էր առաջ, այլ միմիայն թոյլտուութիւն, որ Տաճկաստանի և Պարսկաստանի հայերը՝ բոլոր իրանց նշանաւոր եկեղեցական օրինակատարութիւնների և վանականաց մեռոն ստանալու համար՝ Էջմիածնի Աթոռին դիմեն։

ՄՀՁ

Ի կատարումն այս բարձրագոյն հրամանի, որ կաթողիկոսի ցանկութեանն էլ շատ համապատասխան էր, Յովհաննէսը, իշխան Բեհբութովի հետ խորհրդակցելով, մի շրջաբերական կոնդակ պատրաստեց Կ. Պոլսոյ հայ հասարակութեան անունով, որի մէջ Եփրեմի հրաժարուելը և իր ընտրուելն ու հաստատուելը ծանուցանելով՝ յորդորում էր հաստատ պահել իրանց առաջուայ հաւատարմութիւնը Էջմիածնին։

Բայց որպէս զի ասողներ չլինին թէ Եփ-

բեմի հրաժարությունը և նոր կաթողիկոսի դահ նստելը՝ ապօրինի է կատարուել, հարկ համարուեց, որ ծերունի Եփրեմն էլ իր կողմից մի յորդորական կոնդակ գրէ։*) Վճռեցին որ երկու հայրապետների կոնդակները Կ. Պոլիս տանեն Բարսեղ արքեպիսկոպոսը և Շահրիարցի Յովհաննէս վարդապետ Շահխաթունեանը, որոց յանձնուեցաւ նաև Պոլսոյ «Աղաւնի» մականուանեալ Ստեփանոս պատրիարքին համոզել, որպէսզի Տաճկաստանի եկեղեցիների մէջ Յովհաննէս կաթողիկոսի անունը յիշատակեալ լայ։

Երբ երկու կաթողիկոսների կոնդակները և նրանց մանաւոր նամակները Կ. Պոլսոյ պատրիարքի և Երուսաղէմի պատրիարքի փոխանորդի անուններով՝ գրուեցան, պատրաստուեցան. Յովհաննէսը ըստ խորհրդոյ Բեհբութովին, այդ բոլոր թղթերը նախապէս Թիֆլիզ ուղարկեց բարոն Ռոզէնին, որ սա էլ կարդայ և իր հաւանութիւնը տայ։

Թղթատարին, որ էր ոմն Գալուստ Էլիմիրզեան, կաթողիկոսի մտերիմ անձն, յանձնարարուած էր Կ. Պոլիս գնացող Բարսեղ արքեպիսկոպոսի և Յովհաննէս վարդապետի համար էլ՝ անցաթղթեր և պարտուպատշաճ յանձնարարականներ ստանալ Կովկասեան գլխաւոր վարչութիւնից։

Ռոզէնը հայրապետների կոնդակները և նամակները քննելով՝ հաւանեցաւ և սկզբում որոշեց ընթացք տալ ըստ ցանկութեան Կարբեցոյն։ Սակայն յետոյ Յովհաննէս Մելիք-Ադամեանի հետ խորհրդակցելով՝ որոշմունքից յետ կանգնեց։

Մելիք-Ադամեանը Ռուսաց Կ. Պոլսոյ դեսպանի ադեռնան էր, բնիկ Ղարաբաղցի։ Այդ օրերում Թիֆլիզ էր եկած դեսպանի յանձնարարական նամակով աւ Ռոզէն, որ հետամուտ լինի ձեռք բերելու իր հայրենական կալուածները Ղարաբաղում։

Սոյն այս Յովհաննէս Մելիք-Ադամեանը, որ Կ. Պոլսոյ ազգայնոց և ազգային գործերի մասին ճիշտ և լաւ տեղեկութիւն ունէր, խորհուրդ տուեց Ռոզէնին որ կաթողիկոսների կոնդակները և նամակները չուղարկէ Պոլիս, ասելով թէ ներկայ ժամանակում լաւ ընդունելութիւն անկարելի է սպասել։

Այս պատճառով Ռոզէնը՝ Էլիմիրզեանին ձեռնունայն յետ ուղարկեց Էջմիածին և փութաց արտաքին գործոց նախարարին հետևեալ գրութիւնը ուղղել դեկտեմբեր 12 թուով։*)

ՄՀԷ

«Դեկտեմբերի 2-ին ես պատիւ ունեցայ ուղարկել ձեզ Հայոց կաթողիկոսների շրջաբերական կոնդակները և նամակները։ Սկզբում հաւանութիւն տալով՝ ես միտք ունէի այդ գը-

*) Իր կոնդակում Եփրեմն ասում է, որ Յովհաննիսին ինքն է օծել։

*) Акты, VIII եր. 263. № 179.

բութիւնները Էջմիածին վերադարձնել, որ այնտեղից Պոլիս ուղարկեն։ Այժմ ես կանգ առայ այդ կարգադրութիւնս իրագործելու այն պատճառով, որ Բիւզանդիոնից ստացածս տեղեկութիւնները պարտք են դնում վրաս կանխապէս բանակցել այդ մասին արտաքին գործոց նախարարութեան հետ։ Կ. Պոլսից եկած այնտեղի բնակիչ Յովհաննէս Մելիք-Ադամեանը ինձ յայտնեց, որ թէև Էջմիածնայ Աթոռը ընդհանուր Հայ ազգին յարգելի է և կաթողիկոսը այդ ազգի վրայ մեծ ազդեցութիւն ունի, բայց այժմ Տաճկաստանի հայերը իրանց զսպում են Էջմիածնի կաթողիկոսին ճանաչելու և նրա հետ ուղղակի յարաբերութեան մէջ մտնելու, վախենալով որ չլինի թէ այդ պատճառով տրամեցնեն Սուլթանին և տուիթ տան կասկածելու իրանց անձնուիրութեան մասին առ Ռուսիան։

Միքանի ժամանակից ի վեր ինքը Բարձրագոյն Դուռն էլ՝ մեծ ուշադրութիւն է դարձնում Էջմիածնից գնացող անձինքների վրայ։ Մելիք-Ադամեանը վկայում է, որ երբ Եփրեմ կաթողիկոսը օծուեցաւ, երկու եպիսկոպոս ուղարկեց Կ. Պոլիս իր հաստատուելը ծանուցանող կոնդակներով՝ Բիւզանդիոնի հայերը Սուլթանից ֆերման խնդրեցին դուրս քշելու եկողներին, որովհետև դրանք ուղարկուած էին Եփրեմից, որ առաջ եղել է ռուսահպատակ և Աժտարխանի արքեպիսկոպոս»։

«Ուրեմն եթէ դեռ այն ժամանակ, երբ

Էջմիածինը պարսից տիրապետութեան ներքոյ էր գտնուում, այդ հայերը վախենում էին կաթողիկոսին ճանաչել, որ հպատակ է եղել ռուսաց, ապա այժմ, երբ Էջմիածինը մեր տիրապետութեան ներքոյ է և կաթողիկոսի ընտրութիւնն էլ կախուած է թագաւոր կայսեր կամքից, ուրեմն էլ չեն համաձայնիլ նրան ճանաչել առանց նախապէս Սուլթանի թոյլտուութիւնն ըստանալու, իսկ հայերը իրանց գլխու Բարձրագոյն Դռնից չեն խնդրիլ թէ թոյլ տուէք մեզ հպատակուել Էջմիածնի Աթոռին, որպէսզի դրանով կասկածանքի տակ չընկնեն։

«Այս ամեն պատճառների հիման վրայ՝ դուք ինձ հետ կը համաձայնուիք, որ կասկածելի է թէ Կ. Պոլսում ընդունեն կաթողիկոսների կողմից ուղարկուող հոգևոր անձերին և կամ ճանաչեն Յովհաննիսին կաթողիկոս ամենայն Հայոց։

«Ուրեմն՝ թողնել բաղդի կամքին թէ արդեօք Օսմանեան տէրութիւնը կը համաձայնի՞ Բարձրագոյն որած կարգադրութիւնների հետ թէ ոչ,—ինձ այնպէս է թւում, որ հակառակ կը լինի թէ Ռուսիոյ պատուին և թէ մեր քաղաքականութեանը։ Այս պատճառով ես կարծում եմ, որ հարկաւոր է նախ իմանալ Բարձրագոյն Դռան միտքը և այնուհետև վճռել ուղարկելու շրջաբերական կոնդակներն ու նամակները»։

ՄՀՐ

Մինչդեռ Ռօզէնը այս գրութիւնն էր ուղղում արտաքին գործոց նախարարութիւնը՝ Յովհաննէս կաթողիկոսը փութաց իր կողմից ուղղակի յայտներով ներքին գործոց նախարարին իր նպատակը՝ հոգևոր պատգամաւոր ուղարկելու նկատմամբ ի Պոլիս, խնդրեց նրա թոյլտուութիւնը։

Նախարար Բլուդովը, ինչ ասել կուզի, աւելի շուտ Ռօզէնին կրլսէր, քան Յովհաննիսին, վասն որոյ փութաց խնդրել Ռօզէնին, որ Էջմիածնից ուղեւորուելիք դեսպանութեան գնալը՝ «որևէ պատճառաբանութեամբ դադարեցնել»։ Որովհետև այդ դեսպանութիւնը «կարող է առիթ տալ անհաճելի բացատրութիւններ ունենալու Թուրքիայի նախարարութեան հետ»։*)

Բայի Ռօզէնին գրած գրութիւններից՝ ներքին գործոց նախարարը՝ մի գրութիւն էլ դեկ. 28-ին կաթողիկոսին իրան ուղղեց՝ հետևեալ բովանդակութեամբ։ «Տակաւին սեպտեմբերի 28-ին ես պատիւ ունեցայ ծանուցանել ձեր բարձրատիճանութեանը՝ թէ արտաքին գործոց նախարարը՝ Բարձրագոյն կամքի համաձայն՝ յանձնեց մեր Կ. Պոլսոյ դեսպանին և Թեհրանի դիպլոմատիքական գործակատարին պէտք եղած միջոցները գործ դնել, որպէսզի թոյլ տուի այն

*) Акты, VIII, եր. 264, № 180.

երկիրների հայերին՝ իրանց հոգևոր, գլխաւոր գործերի վերաբերութեամբ՝ դիմել Էջմիածնի Աթոռին։ Այժմ արտաքին գործոց նախարարութեան ձեռքով ես տեղեկացայ թէ՝ ինչ ու ինչ են արել այս մասին մեր Կ. Պոլսոյ դեսպան Բուտենեվը և Պարսկաստանի մեր գործերի վարիչ Բէզակը։

«Բուտենեվը հաղորդում է, որ նրա խորհրդակցութիւնները Կ. Պոլսոյ և Երուսաղեմի Հայոց պատրիարքների հետ՝ շատ յաջող հետևանքներ են ունեցել։ Այս պատրիարքները՝ խորին յարգանքով վերաբերուելով դէպի Էջմիածնի Աթոռը, որին ընդունում են որպէս նախամեծար Հայաստանեայց եկեղեցւոյ, յայտնեցին, որ ամեն նշանաւոր հոգևոր արարողութիւնների վերաբերութեամբ՝ պարտ են միշտ դիմելու այդ Աթոռին, որպէս իրանց ընդհանրական Մայր Աթոռին։ Բարձրագոյն դուռը մինչև այսօր ոչ մի դիտաւորութիւն չէ ցոյց տուել Տաճկահայերի յարաբերութիւնները Էջմիածնի հետ խզելու մասին և Բուտենեվը, այդ հովուապետների դատողութեամբ, կարծում է որ այժմ հարկ չկայ այդ մասին որ և է պաշտօնական յարաբերութեան մէջ մտնելու Տաճկաց աէրութեան հետ»։

«Պարսկաստանից էլ Բէզակը հաղորդում է, որ նա դիմել է Ատրպատականի գլխաւոր կառավարիչ Էմիրնիզամին և սա անյապաղ յայտնել է այդ երկրի մէջ գտնուող հայերին, որ նրանք

իրանց բոլոր նշանաւոր, հոգևոր արարողութիւն-
ների համար շարունակեն դիմել ձեր վեհաս-
տիճանութեանը։

«Միևնոյն ժամանակ Էմիր-Նիզամը դիմել է
միւս, և իրանից կախումն չունեցող, կառավա-
րիչներին, որ նրանք էլ Պարսկաստանի միւս
մասերում բնակուող հայերին նոյնպիսի թոյլ-
ատութիւն տան։

«Ի վերայ այսր ամենայնի ձեր նոյեմբերի
20-ի գրութիւնից ես իմացայ, որ դուք մտա-
դիր էք մի արքեպիսկոպոս և մի վարդապետ
ուղարկել Կ. Պոլիս և Պարսկաստան յայտնելու
այնտեղի հայերին և Կ. Պոլսոյ պատրիարքին
ձեր կաթողիկոսական ծայրագոյն աստիճանն
ընդունելու մասին։

«Զեկուցանելով այդ թագաւոր կայսրին՝ ես
ներկայացրի Ն. Մեծութեանը, որ ըստ իմ կար-
ծեաց, առանձին հոգևոր դեսպանութիւն Տաճ-
կաստան և Պարսկաստան ուղարկելն, այլևս
միաք չունի և աւելորդ է։ Զէ կարելի այժմ
իսկութեամբ առաջուայ օրինակներին հետևել,
որովհետև առաջ տաճկայ և պարսից տերու-
թիւններից ֆէրմաններ էին խնդրւում նոր ընտ-
րուած կաթողիկոսների պաշտօնապէս հաս-
տատման մասին, իսկ այսուհետև, Բարձրագոյն
կամքի համաձայն, որ ես կոմս Պասկեվիչին
յայտնած եմ դեռ ես անցեալ 1830 թուականի
վերջին, Կ. Պոլսում և Թէհրանում եղած մեր
դիպլոմատիքական գործակատարների միջնոր-

դութեամբ ձեռք կը բերուի միմիայն թոյլատու-
թիւն, որ այն երկիրների հայերը իրանց նշան-
նաւոր հոգևոր պէտքերի համար, անարգելք դի-
մեն Էջմիածնի Աթոռին. բայց կաթողիկոսների
հաստատութիւնն արդէն պէտք է պատկանի
միմիայն Ռուսիոյ պետութեանը, որի սահման-
ներումն է գտնուում Հայոց հայրապետական
Աթոռը։

«Իսկ ինչ կը վերաբերի ձեր վեհաստիճանու-
թեան և Եփրեմ կաթողիկոսի կոնդակներին և
միւս գրութիւններին, այդ բոլորը կարելի է
հեշտութեամբ և առանց որքան և իցէ ծախքի
տեղ հասցնել մեր դիպլոմատիքական գործակա-
տարների ձեռքովը, որոց յանձնուած են ըստ
Բարձրագոյն կամքի ամեն մի գործողութիւն
տաճկահայերի և պարսկահայերի համար անար-
գել յարաբերութիւն կազմելու համար Էջմիած-
նի Աթոռի հետ։ Իմ այս ենթադրութիւնս՝ ար-
ժանացաւ Բարձրագոյն հաւանութեան Ն. Կ.
Մեծութեան։

Ծանուցանելով այս ամենը Ձեր Բարձրաս-
տիճանութեանը՝ պարտք եմ համարում խնդրել,
որ եթէ յիշեալ հոգևորականները տակաւին չեն
գնացել, յետաձգել նրանց ուղարկելը. իսկ ձեր
կոնդակներն ու նամակներ Կ. Պոլիս և Պարս-
կաստան ուղարկել յանուն մեր այն տեղերի
դիպլոմատիքական գործակատարների տեղ հաս-
ցնելուհամար, միայն թէ այդ անել, ինչպէս
այժմ, նոյնպէս և այնուհետև միշտ նախապէս

Անդրկովկասեան գլխաւոր կառավարիչ գենեռալ բարոն Ռոզէնի հետ բանակցելով»*)

ՄՀԹ

Թէև արտաքին գործոց նախարարը Կ.Պոլսոյ դեսպանին մի շարք հրահանգներ էր ուղարկել՝ թէ ինչպէս պէտք է վարուել այն դէպքում, երբ Էջմիածնի հոգևորական դեսպանութիւնը տաճկաց մայրաքաղաքը հասնի, — այնուամենայնիւ նախարար կոմս Նեսէլրոդէն առանձին հաճութիւն զգաց բարոն Ռոզէնի գրութիւնից տեղեկանալով, որ դեսպանութիւնը յետաձգուել է։

Իր այդ հաճութիւնը Ռոզէնին յայտնելով, նախարարը գրեց նրան «Շատ հաւանական է, որ ռուսաց երկիրներից գնացող հայ եպիսկոպոսի և վարդապետի երևալը Տաճկաստանի մայրաքաղաքում կասկածներ պիտի յարուցանէր։ Վասն որոյ պէտք է բոլորովին չուղարկել բարձրաստիճան հոգևորականներին ոչ միայն Կ. Պոլիս, այլ և Տաճկաստանի միւս տեղերը։

«Բայց որովհետև Հայոց Էջմիածնի պատրիարքական Աթոռի թէ բարեվայելչութիւնը և թէ նոյնիսկ շահերը պահանջում են, որ այդ ազգի Կ. Պոլսի պատրիարքը տեղեկանար հոգևոր իշխանութեան այս փոփոխութիւնների մասին, որ կատարուել են ամեն մի հայի համար յարգելի վայրում,— ես խոնարհաբար խնդրում եմ,

*) Акты, VIII, եր. 265, № 182.

որ այդ կոնդակները, որ մտադրութիւն կար Կ. Պոլիս ուղարկելու, հասցնել ինձ և ես մեր դեսպանին կուղարկեմ ըստ պատկանելոյն տեղ հասնելուն, հանգամանքներին վայել պարտաւ պատշաճ հրահանգներ տալով նրան։ Այսպիսով թէ Էջմիածնի վանքը ազատ կմնայ այն ծախքերից, որ պիտի տնէր արքեպիսկոպոսին և վարդապետին հեռաւոր ճանապարհ ուղարկելով, թէ քաղաքավարութիւնը պահպանուած կը լինի և թէ վերջապէս, Բարձրագոյն դուռն էլ անբաւականութիւնների առիթ չի ունենալ»։*)

ՄԶ

Արտաքին գործոց նախարարութեան այս կարգադրութիւնը մեծ գժգոհութիւն պատճառեց Յովհաննէս կաթողիկոսին, որ կարծեց թէ այդ կարգադրութիւնը Նէսէլրոդէն արել է՝ հիմնուելով միմիայն Կ. Պոլսոյ պատրիարքի և Երուսաղէմի պատրիարքական փոխանորդի յայտնած կարծիքների վրայ։ Ուստի և Ռոզէնին հետևեալ գրութիւնն ուղղեց 1832 թ. յունուարի 30-ին.

«Նախարար Բլուդովի՝ անցեալ դեկտ. 25-ի գրութեան միքանի հանգամանքները ստիպում են մեզ դառնալ ձեզ և խոնարհաբար խնդրել ձեր աջակցութիւնը և բարեհաճութիւնը։

ա) Ըստ մեր կարծեաց՝ շատ անբաւարար

*) Акты, VIII, եր. 268, № 184.

պէտք է համարել Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքների հաւատացումը իբր թէ տաճկաց տէրութիւնը մինչև այսօր որ և է մատդրութիւն չէ ցոյց տուած՝ այնտեղի հայերի յարաբերութիւնները Էջմ. Աթոռի հետ խզել, և կամ այսուհետև հոգևորականութիւնը՝ նրանց հոգևորականութեան հետ։ Վասն որոյ կարևոր ենք համարում, որ Կ. Պոլսոյ դեսպանին սուլտանական պաշտօնական բանակցութեան մէջ մտնի Բարձրագոյն Դռան հետ, որպէս եղաւ Պարսկաստանում, այսինքն՝ որ նախ տաճիկ տէրութիւնը այս մասին իր հրամանները հրատարակէ, և ապա Կ. Պոլսոյ պատրիարքը իր շրջաբերականով յայտարարէ այնտեղի հայերին ու մեզ ծանուցանէ ի տեղեկութիւն, որպէսզի եթէ այնուհետև հարկ լինի ուղարկել այնտեղ մեր հոգևորականներին հոգևոր գործերով՝ նրանք կարողանային ճշտութեամբ կատարել իրանց սրբուած յանձնարարութիւնը, առանց որևէ արգելքի։

բ) Մեր կարծիքով՝ մենք շատ օգտաւէտ ենք համարում ուղարկել այժմ Պոլիս մի արքեպիսկոպոս, մեր նախնիքների կանոններով, ամենահին կաթողիկոսից սկսած մինչև հիմա, կաթողիկոսական շրջաբերականները կամ նրանց օրհնութեան թղթերը եկեղեցիներում պիտի կարդան Էջմիածնի միաբան եպիսկոպոսները և ոչ թէ ուրիշները, և այս սովորութիւնը մենք այժմ աւելի կարևոր ենք համարում (պահել), քան առաջուայ ժամանակներում այն պատճառ, որ Տաճկաստանի հայերը եօթը տարուց աւելի է, որ իրանց մէջ Էջմիածնի միաբան եպիսկոպոս չեն տեսել։

«Եթէ տաճկաց տէրութիւնը հարիւր անգամ էլ նրանց հաւատացնէ, նրանք դարձեալ չեն կարող հաւատալ թէ իրանց առաջուայ յարաբերութիւնը վերականգնած են բոլորովին Էջմիածնի Աթոռի հետ, մինչև որ չտեսնեն մեր ուղարկած եպիսկոպոսին, որ կարողանար ճշտութեամբ հաւատացնել նրանց թագաւոր կայսեր շնորհած ողորմութեանց մասին։ Սակայն այդ բանը պիտի կատարուի այնպէս, որ թէ կոնդակների և թէ եպիսկոպոսի ուղարկելը Բլուդովի դրութեան համաձայն լինի, այսինքն՝ դեսպանների ձեռքով և նախապէս ձեզ հետ բանակցելուց յետոյ»։ *)

ՄՁՍ.

Յովհաննէս կաթողիկոսի այս դրութիւնը Ռօզէնը փետրուարի 11-ին ուղարկեց Բլուդովին՝ յարակցելով իր կողմից հետեւեալը՝ «բոլորովին հաւանանելով կաթողիկոսի կարծիքի հետ թէ՝ Էջմիածնի նախամեծարութիւնը պահպանելու համար հարկ է հին սովորութիւններին հետևել և կարելի չէ կաթողիկոսի օծման յայտարարութիւնը օտար անձին յանձնել,—այնուամենայնիւ ես կարծում եմ, որ անկարելի է թոյլ տալ

*) Акты, VIII, եր. 269,

էջմիածնի եպիսկոպոսին Տաճկաստան ուղարկել, մինչև որ տաճկաց սերութիւնը չըյայտարարէ թէ իրաւունք է տալիս իր հպատակ հայերին իրանց բոլոր հոգևոր պէտքերի համար՝ էջմիածնի վանքին դառնալ։ Ի վերայ այսր ամենայնի ես իմ պատասխանը կաթողիկոսին կյետաձգեմ, մինչև ձեզանից տեղեկութիւն ստանալս»*)

Եւ այսպէս՝ մինչ Կովկասի կառավարչապետի և ներքին ու արտաքին գործոց նախարարների ու Կ. Պոլսոյ դեսպանի մէջ այս մասին գրագրութիւններ էին լինում, Եփրեմի և Յովհաննէսի շրջաբերական կոնդակները յանուն տաճկահայերի՝ մնում էին Թիֆլիզում բարոն Ռոզէնի մօտ, որ, ինչպէս տեսանք, Յովհաննէս կաթողիկոսի հոգևոր դեսպանութեան առաքումը ի Պոլիս՝ արգելած էր մինչև Պետերբուրգից հրաման ստանալը։

Ժամանակը անցնում էր և «ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը կրելով՝ Յովհաննէսը տեսնում էր, որ տակաւին իր իրաւասութիւնից դուրս են մնում տաճկահայերը, որ ընդհանուր ազգի գրեթէ երկու երրորդ մասն էին կազմում։ Նրանք դեռ ևս պաշտօնապէս չըգիտէին Յովհաննէսի կաթողիկոսական գահ նստելու մասին։ Յովհաննէսը ոչ կարողանում էր կոնդակներ ուղարկել Կ. Պոլիս և ոչ էլ եպիսկոպոս։

1825 թուականից սկսեալ, ուրեմն եօթը

*) Акты, հատ. VIII. № 187.

տարի, Տաճկաստանի եկեղեցիների մէջ՝ էջմիածնի կաթողիկոսի անունը չէր յիշատակւում և Մայր Աթոռի համար գանձանակ չէր ժողովւում։ Մօտ 12 տարի էր, որ Թիւրքիայի թեմերի համար՝ կաթողիկոսը եպիսկոպոս չէր ձեռնադրած, մեռոն չէր բաժանած, ժողովարարութեան համար՝ նուիրակ չէր ուղարկած։ Աթոռը այլևս ոչ մի նուէր և դրամական օգնութիւն Տաճկաստանից չէր ստանում և նախկին ժամանակներում նուիրուած կալուածների եկամուտներն էլ, Կ. Պոլսոյ պատրիարքարանն էր ժողովում։

Ինքը պատրիարքը իր յարաբերութիւնները էջմիածնի հետ բոլորովին խզել էր և ոչ միայն Աթոռապատկան դրամների մասին հաշիւ չէր տալիս, այլև դադարել էր կաթողիկոսի հետ՝ որև է պաշտօնական գրութիւններ անելուց։

Դադարել էր նմանապէս տաճկաստանցի ուխտաւորների երթևեկութիւնը, որ առաջուայ ժամանակներում կաթողիկոսների համար՝ եկամուտի նշանաւոր աղբիւրներից մէկն էր։

Իրերի այս դրութիւնից օգուտ էր քաղում Սսոյ կաթողիկոսը և հարկ եղած ժամանակ, իր թեմերիցը դուրս՝ մեռոն էր բաժանում, եպիսկոպոսներ ձեռնադրում և այդպիսով, փոքր առ փոքր, իր ազդեցութիւնը տարածում էջմիածնի իրաւասութեանը ենթարկուած թեմերի վրայ։

Իրաւ է՝ ժողովրդի սէրը և յարգանքը դէպի Լուսաւորչի Աթոռը տակաւին վառ էր, բայց կարող էր հեռահեռ թուլանալ և Տաճկաստանի

հայերը մի օր կարող էին անջատուիլ Էջմիածնից և միմիայն Սսոյ կաթողիկոսութիւնը ճանաչել։

Դիտակցաբար արդեօք թէ անգիտակցաբար՝ Կիլիկիոյ (Սսոյ) Տան կաթողիկոսները՝ այնուամենայնիւ չկամեցան սամանեան տէրութեան այդ արամադրութիւնից օգտուիլ։

ՄՁԲ

Կարբեցին կարծում էր, որ Ելթէ Պասկեվիչը և նրա միջոցաւ առաս կառավարութիւնը՝ իրան կաթողիկոսացրին և այնքան շքեղ հանդէսներով հայրապետական դահի վրայ բազմեցրին,—այդ նրա համար էր, որ ինքը այդ աստիճանին վայելուչ բարեմասնութիւններ ունէր, որոնցից օգտուել էր ուզում կառավարութիւնը։

Ուստի, ինչպէս տեսանք և կրկին կը տեսնենք, այդ կաթողիկոսը, իր կարճ խելքովը, կառավարութեանը խելք սովորեցնել էր ուզում, ամենևին գլխի չնգնելով, որ կառավարութիւնը նրա վրայ հարում է ինչպէս մի կատարեալ դործիքի վրայ իր թէ ներքին և թէ առաւելապէս արտաքին քաղաքականութեան համար։

Տեսնելով որ իր ընտրութեան և օծման տոթիւ տաճկահայերին ուղղած կոնդակը՝ կառավարութիւնը չի ուզում տեղ հասցնել իր կողմից նշանակուած հոգևոր դեսպանութեան միջոցով,—Կարբեցին մի ուրիշ միջոց մտածեց

իր ներկայացուցիչն անպատճառ Թիւրքիոյ մայրաքաղաքն ուղարկելու համար։ Այդ միջոցը մեռոնի բաշխման հարցն էր։

Յայտնի է, որ ըստ վաղեմի սովորութեան, Էջմիածնի կաթողիկոսները իրանց յատուկ արտօնութեամբ միքանի տարէնը մի անգամ մեռոն էին օրհնում և բաշխում թեմերին։

Վերջին անդամ մեռոն օրհնուած էր 1820 թուին Եփրեմի ձեռքով և այնուհետև ծերունի հայրապետը թէ իր բացակայութեան և թէ տրկարութեան պատճառով՝ մօտ 12 տարուայ մէջ մեռոն օրհնէք չէր կատարած. ուստի և ամեն տեղ ժողովուրդը մեծ նեղութիւն էր զգում մեռոնի։

Ինչպէս վերևում յիշեցինք, Սսոյ կաթողիկոսը օգուտ էր քաղում այդ հանգամանքից և իր օրհնած մեռոնից՝ մատակարարում էր Տաճկաստանի թեմերին։

Յայտնի է նմանապէս որ խոշոր թեմերին մեռոն բաշխելը՝ կաթողիկոսը յանձնում էր իր եպիսկոպոսներին, որոնք յետ էին վերադառնում Սվեռը առատ նուիրաբերութիւններով։

Յովհաննէս կաթողիկոսը կամեցաւ օգուտ քաղել իր այդ բացարձակ իրաւունքով և մեռոն օրհնելով՝ ուղարկել Տաճկաստանի հայոց պատրիարքին՝ իր եպիսկոպոսի ձեռքով։ Նա կարծում էր, թէ այս անգամ արգելքի չպէտք է հանդիպի։

Ուստի 1832 թուի մայիսի 8-ին, սահմա-

նեալ կարգով, առաջին անգամ մեռոն օրհնելով՝ գրեց բարոն Ռոզէնին, որ սա միջնորդէ թագաւոր կայսեր առաջ՝ հրաման տալ իրան յարաբերութիւն սկսել տաճկահայերի հետ և Կ. Պոլիս մեռոն ուղարկել Էջմիածնի եպիսկոպոսի ձեռքով։

Սակայն լեռնականների դէմ Ռոզէնը պատերազմի գնացած լինելով. գրեթէ մի տարի յետոյ կարդաց կաթողիկոսի նամակը և Բլուդովին հաղորդելով նրա բովանդակութիւնը՝ խորհուրդ էր տալիս նախարարին՝ օգտուելով մեր (ռուսաց) ներկայ բարեյաջող յարաբերութիւններից տաճկաց տէրութեան հետ, «առաջարկել նրան՝ ընդունել Էջմիածնից ս. մեռոն տանող եկեղեցական դեսպաններին և այդպէս ահա վերականգնեցնելով տաճկահայերի յարաբերութիւնները այս վանքի հետ, հետզհետէ և անընդգալի կերպով հպատակեցնել նրանց Աթոռին՝ ըստ եկեղեցական գործոց»։*)

Ցիրաւի այդ միջոցում ռուսների և տաճիկների յարաբերութիւնը շատ լաւացած էր, որովհետև Նիկոդայոս կայսրը օգնել էր Սուլթանին, մի բանակ զօրք և ռուսական նաւատորմիղը նրա տրամադրութեան տակ դնելով՝ Եգիպտոսի Մէհմէտ Ալի փաշային զսպելու համար, — բայց և այնպէս նախարարութիւնը հարկ չհամարեց Կարբեցու խնդիրը յարգելու և տեսնելով որ Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքների աչքում Յովհաննէս կաթողիկոսը յարգ չունի՝ ինքն ևս,

*) Акты, VIII, եր. 271 № 190.

կարելի է ասել, աչքից ձգեց նրան և տաճկահայերի յարաբերութիւնը Էջմիածնի հետ ձեռնարկեց վերականգնել՝ առանց Կարբեցուն։ Եւ թերևս այս նպատակով էր, որ կայսրը Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքներին մի-մի ականակուռ խաչ շնորհեց։

Անտեղեակ նախարարութեան այս ծրագրին՝ Յովհաննէս կաթողիկոսը երկու-երեք ամիսը մի անգամ յիշեցնում էր Ռոզէնին իր խնդիրը։ Նա էլ դիմում էր երբեմն այս երբեմն այն նախարարութեանը, բայց նրանցից ոչ մէկը ոչ մի վճռական պատասխան չէր կարող տալ։ Այսքանը միմիայն յայտնում էին Ռոզէնին, որ Կ. Պոլսոյ դեսպանից տակաւին այդ մասին պարտուպատշաճ պատասխան ստացուած չէ Պետերբուրգում։

ՄՁԳ.

Վերջապէս 1833 թուի դեկտեմբերի 5-ին Կ. Պոլսոյ դեսպանը, Բուտէնեվը, բարոն Ռոզէնին գրեց հետևեալ նամակը.

«Ն։ երքին գործոց նախարարի հետ ձեր ունեցած գրագրութիւնների պատճառով՝ որ Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի և տաճկահայերի մէջ եղած յարաբերութիւնները վերականգնեն ըստ վաղեմի սովորութեան, — արտաքին գործոց նախարարութիւնը այս տարուայ մայիսին ինձ յանձնեց, որ բարձրագոյն Դռան հետ

բանակցեմ՝ Էջմիածնից հոգևոր դեսպանութիւն ուղարկելու թոյլատրութեան մասին։

«Այդ առարկայի վերաբերութեամբ՝ պաշտօնական բանակցութիւններս Տաճկած տէրութեան հետ՝ ես ստիպուած էի յետաձգել մինչև այսօր այն պատճառներով, որ մանրամասնաբար նկարագրում եմ արտաքին գործոց նախարարութեանը ուղղած ծածկագրութեանս մէջ, որի պատճէնը աւելորդ չհամարեցի կցել սրա հետ։ Բայց այս օրերում ես դիմեցի Բէյլիս-էֆէնդիին՝ որ թոյլ տրուի յիշեալ դեսպանութեանը Կ. Պոլսի գալու։ Ինձ հասած տեղեկութիւններից նկատում եմ, որ շնորհիւ այն սերտ բարեկամութեան, որ այժմ մեր և տաճիկների մէջ կայ, գործը հազիւ թէ բարձրագոյն Դռան կողմից արգելքների հանդիպի։ Եւ որովհետև այդ գործը ձեր կառավարութեանը յանձնուած երկրի շահերի համար շատ նշանաւոր է. — ես ինձ պարտաւոր համարեցի այժմ իսկ հաղորդել ձեզ բոլոր վերոգրեալը։ Թէ յետագայում ինչ հետևանք կունենայ Հայոց գործը,—այդ մասին Կ. Պոլսոյ դեսպանատունը չի յապաղիլ իր ժամանակին ծանուցանել ձեզ»։*)

ՄՁԳ

Բուտէնեվի սոյն գրութեան մէջ յիշած ծածկագրութիւնը, որ նա նոյեմբերի 25-ին արտաքին գործոց նախարարութեանն է ուղղած եղել, ահա այս է՝ «Ի նկատի ունենալով նախարարութեանդ ինձ տուած հրահանգները ու ցուցմունքները՝ ես չեմ դադարած ամեն կերպ գործ դնելու ջանքերս, որ ի կատար ածեմ տէրութեան և Վրաստանի մեր գլխաւոր վարչութեան մտադրութիւնները, որպէսզի Էջմիածնի պատրիարքի կողմից բարձրաստիճան հոգևորական ուղարկուի այստեղ, որ վերականգնեցնէ տաճկահայերի առաջուայ յարաբերութիւնները Հայոց եկեղեցու նախամեծար Աթոռի հետ, որ հին ժամանակներից ի վեր հիմնուած է Էջմիածնում։

«Մինչև այսօր իմ եռանդուն և անդուլ հոգատարութիւնս արգելքների կամ թէ վախկոտ երկմտութեան էին հանդիպում այստեղի Հայոց բարձրագոյն հոգևորականների կողմից, որոց համաձայնութիւնը և օգնութիւնը միայն կարող էին առհաւատչեայ լինել իմ պաշտօնական ձգտումների յաջողութեանը բարձրագոյն Դռան մօտ։—Վերջապէս այժմ ինձ յաջողուեց ներշնչել Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքին և Երուսաղէմի արքեպիսկոպոսին (Երուսաղէմի պատրիարքական փոխանորդին)՝ աւելի զիջողաբար նայելու այս գործին։

«Գործի այսպիսի բարեյաջող ելք ստանալուն համար՝ ես պարտական եմ Զաքարեան վաճառականի (коммерціи совѣтникъ) հարպիկ և եռանդուն միջնորդութեանը։

*) Акты, VIII եր. 276. № 195.

«Նրա ձեռքովն է որ ես կատարեցի այս սկզբնական բանակցութիւնները և մանաւանդ թէ՝ նա հնուց բարեկամական յարաբերութիւնների մէջ է գտնւում արքունի փողերանոցի վերատեսուչ Ղազազ Յարութիւնի (Պեղճեան Յարութիւն ամիրան) հետ, որ Տաճկաստանում Հայոց ազգի գլխաւոր անձն է և նեցուկը։ Այս Ղազազ Յարութիւնը, որ վայելում է Սուլթանի շնորհը և վստահութիւնը, քանի մի ամիս ծանր՝ հիւանդ էր և այդ պատճառաւ ստիպուած էր Անատոլիայի ջերմուկները գնալ բուժուելու համար, որտեղից մօտ ժամանակներս վերադարձաւ։ Միմիայն նրա զօրեղ ազդեցութիւնը կարող էր վերջ տալ այն դժուարութիւններին, որ ինձ ցոյց էր տալիս այստեղի հայոց հոգևորականութիւնը։ Այդ դժուարութիւնները իրաւ որ նշանաւոր են և հիմնաւոր, որովհետև մեր վերջին պատերազմի ժամանակ տաճիկների հետ, Բարձրագոյն Դուռը իր հպատակ հայերից պաշտօնական ստորագրութիւն է առել, որ նրանք իրանց յարաբերութիւնը կը խզեն Ռուսիոյ հովանաւորութեան ներքոյ եղած հայոց հոգևոր վարչութեան հետ»։*)

ՄՁԵ

«Այնուամենայնիւ,—շարունակում է դեսպանը,—Ղազազ Յարութիւնը՝ ի նկատի առնելով

*) Акты, VIII, եր. 268.

իր դաւանակիցների պարտաւորութիւնները առ Էջմիածնի կաթողիկոսական գահը և ներկայ բարեկամական յարաբերութիւնները Ռուսիոյ և Բարձրագոյն Դռան մէջ՝ կարողացաւ համոզել Հայոց հոգևորականներին թէ՝ նրանք անեղկիւղ կարող են իրանց համաձայնութիւնը տալ և մինչև անգամ պիտի ցանկանան, որ, ըստ նախկին սովորութեան, Էջմիածնի կաթողիկոսի կողմից՝ այստեղ ուղարկուի նրա հաւատարմութիւնը ունեցող մի եպիսկոպոս։ Վասն որոյ Զաքարեանի ձեռքով ահա այս տեսակ մի վճռական պատասխան ստացայ այս օրերս Կ. Պոլսի Հայոց պատրիարքից և նրա միքանի խորհրդականներից։ Սակայն նրանք կցում են իրանց խնդիրը, որին Ղազազ Յարութիւնն էլ հաւանութիւն է տալիս, թէ նախքան Էջմիածնից բարձրատիճան հոգևորականների գալը՝ թող Յովհաննէս կաթողիկոսը ուղարկէ այստեղի Հայոց հոգևորականութեանը հանդիսաւոր ծանուցումն (կոնդակ) իր կաթողիկոսական գահի վրայ բազմելու մասին, ինչպէս որ այդ եղել է առաջուայ ժամանակներում։

«Սրանից յետոյ ես այլևս ոչինչ անյարմարութիւն չեմ տեսնում, որ այժմէն իսկ սկսեմ պաշտօնապէս ձգտիլ, որպէս զի Բարձրագոյն Դուռը չարգելէ Էջմիածնից եկող բարձրատիճան հոգևորականի մուտքը ի Կ. Պոլիս, և այդ բանը ես մտադիր եմ անելու կարճ ժամանակում և համաձայն ինձ տրուած հրահանգների։

«Պարաք եմ համարում այս ամենը ծանուցանել ձեզ, խնդարհարար խնդրելով հաղորդել այս մասին ում որ հարկ կը համարէք։ Ընդ սմին աւելորդ չեմ համարում յարակցել, որ ձեր մայիսի 29-ին ուղարկած թանկագին բուլանթներով զարդարած խաչերը այստեղի հայոց պատրիարքներին հասցնելու համար՝ տակաւին չեմ յանձնած նրանց, թէև այդ պարգևների մասին նրանք արդէն ինձնից տեղեկացած են։ Ղազազ Յարութիւնի կարծիքով, որ ինձ էլ հիմնաւոր է թւում, աւելի վայելուչ կը լինի այդ պարգևները յանձնել ըստ պատկանելոյն միայն այն ժամանակ, երբ դեսպանատան ձգտումները այս առարկայի վերաբերութեամբ՝ ցանկալի յաջողութիւն կը գտնեն Բարձրագոյն Դուռն մօտ,—միանգամայն մեր տերութեան նպատակներին համեմատ»։*)

Մ29

Միքանի ժամանակից յետոյ՝ բարձն Ռօզէնը ստացաւ նաև Բլուդով նախարարի գրութիւնը, որից երևում է, որ ներքին և արտաքին նախարարների և Կ. Պոլսոյ դեսպանի մէջ արդէն վերջնական որոշում կայացել պրծել է, որ Յովհաննէս կաթողիկոսը իր կողմից ուղղակի մի եպիսկոպոս ուղարկէ Պոլիս, որ 1831 թուից ի վեր Ռօզէնի մօտ վերընկած հայրապետական

*) Акты, հատ. VIII. եր. 277.

(Եփրեմի և Յովհաննէսի) կոնդակները տանի և անձամբ Կ. Պոլսոյ պատրիարքին յանձնէ։

Այս մասին Ռօզէնից ազդարարուելով, Յովհաննէս կաթողիկոսը խսկոյն Թիֆլիզ ուղարկեց Բարսեղ եպիսկոպոսին, որպէսզի Ռօզէնից կաթողիկոսական կոնդակները առնելով՝ ճանապարհ ընկնի ի Պոլիս։

Կաթողիկոսը Բարսեղ եպիսկոպոսին յանձնարարել էր նաև Ռօզէնի և սրա միջոցով Պոլսոյ դեսպանի աջակցութիւնը խնդրել, որպէսզի՝

ա) Էջմիածնի կաթողիկոսի անունը յիշատակուի տաճկահայ բոլոր եկեղեցիների մէջ՝ պատարագի և ժամասացութեան միւս պատշաճաւոր միջոցներում,—մի պարագայ որ 1826 թուականից ի վեր բոլորովին դադարած էր։

բ) Ըստ անօրէնութեան կաթողիկոսի երեք տարէնը մի անգամ բոլոր տաճկահայերին ս. մեռոն բաշխուի, որպէսզի այս մասին նրանք պակասութիւն չզգան։

գ) Առաջուայ նման տաճկահայոց բոլոր եկեղեցիների մէջ, յօգուտ Էջմիածնի Աթոռի՝ գանձանակ տեղադրուի, որ նոյնպէս 1826 թուից սկսեալ վերացել էր։ Վերջապէս՝

դ) Կ. Պոլսում Էջմիածնի կողմից շարունակ մի յատուկ վերահսկիչ գործակալ գտնուի, վեհիշ անունով, որպէսզի նա հսկողութիւն ունենայ այնտեղի հայերից յօգուտ Էջմիածնի Աթոռի նուիրած տների, կրպակների և ուրիշ եկամուտների վրայ։

ՄՁԷ

Սակայն Բարսեղ եպիսկոպոսը հազիւ Թիֆլիզ էր հասել, երբ Ռօզէնը ներքին գործոց նախարարից մի նոր գրութիւն ստացաւ, որով Բլուդովն առաջարկում էր Ռօզէնին կաթողիկոսական կոնդակները Կ. Պոլիս հասցնել ոչ թէ Բարսեղ եպիսկոպոսի, կամ առհասարակ որևէ բարձրաստիճան հոգևորականի միջոցով, այլ Բուտենէվ դեսպանի միջոցով։

Այդպէս էլ արաւ Ռօզէնը։ Բարսեղ եպիսկոպոսը յետ դարձաւ Էջմիածին. իսկ հայրապետական կոնդակները բարձրը ինքը ուղարկեց դեսպանին, որին յանձնեց նաև Յովհաննէս կաթողիկոսի յանձնարարած վերոյիշեալ չորս կէտերը։

Դեսպանը կոնդակները ստացաւ 1834 թուի հոկտեմբերին, ուրեմն գրուելուցը մօտ երեք տարի յետոյ։ Նոյն ամսոյ 21-ին ստացումը Ռօզէնին յայտնելով աւելացրեց «Յիշեալ կոնդակները, խողովակաձև փաթաթած, ես ստացայ միայն վերջին փոստային և այդ պատճառով ըստիպուած էի մի ան ժամանակ յետաձգել ձեր պահանջի կատարումը։ Բայց այժմ ես արդէն սկսեցի իմ բանակցութիւնը Տաճկաց նախարարութեան յետ, այստեղի հայոց հոգևորականութեան նախկին յարաբերութիւնները Էջմիածնի հայրապետական գահի հետ վերականգնելու համար։ Իմ ունենալիք յաջողութիւնների մասին՝ ես չեմ յապաղիլ ժամանակին տեղեկացնելու ձեզ։

«Այնուամենայնիւ,—շարունակում է դեսպանը,—նախապէս տաճկաց նախարարութեանը ծանուցանելուց յետոյ՝ յանձնեցի այստեղի հայոց պատրիարքներին ձեր ուղարկած կոնդակները, որ նրանք ընդունեցին հանդիսաւոր կերպով արտայայտելով իրանց ջերմեռանդական յարգանքը իրանց եկեղեցու նախամեծար Աթոռին։

«Այսպէս ահա,—շարունակում է դեսպանը,—սկիզբն դրուեցաւ Էջմիածնի հոգևոր յարաբերութիւնների վերականգման գործին տաճկահայերի հետ, և ես այժմ յարմար համարեցի օգուտ քաղել այստեղի պատրիարքների բարեհաճ տրամադրութիւնից, որ նրանց համոզեմ, կարելոյն չափ, օգնելու Յովհաննէս կաթողիկոսի ցանկութիւնների իրագործմանը, որ դուք ինձ հաղորդած էիք (խօսքը՝ վերոյիշեալ չորս յանձնարարութիւնների մասին է) և թէև այս մասին նրանցից տակաւին ոչինչ պատասխան չեմ ստացել, այնուամենայնիւ յոյս ունիմ, որ իմ յորդորները ցանկալի յաջողութեամբ պըսակուին»։*)

ՄՁԸ

Եփրեմ և Յովհաննիսի կոնդակները Պոլսոյ

*) Акты, VIII, եր. 290, № 206.

և Երուսաղէմի պատրիարքները ուստաց դեսպանից ընդունելով՝ նրանց, ևս և Բարսեղ եպիսկոպոսին պատասխան գրեցին։ Գալով կաթողիկոսի չորս յանձնարարութիւններին,—«սկզբի երեք կէտերի գործադրութեան մասին,—գրում է դեսպանը արտաքին գործոց նախարարին,—պատրիարքները իրանց կողմից կատարեալ պատրաստակամութիւն յայտնեցին, բայց երկիւղ կրելով տաճկաց տէրութեան կասկածաւոր բնութիւնից, նրանք յայտնեցին թէ՝ իրանք այն ժամանակ միայն կարող են այդ կէտերն ևս գործադրել, երբ բարձրագոյն դռնից պաշտօնապէս, գրաւոր թոյլաւութիւն կըստանան։ Իսկ այդ թոյլաւութիւնը ձեռք բերելու համար՝ նրանք—պատրիարքները, դիմեցին թախանձանօք թոյլ տալ, որ կարելւոյն չափ առաջուայ սովորութիւններին յարմարուին, երբ Էջմիածինը դեռ Պարսից տիրապետութեան ներքոյ էր։

Դեսպանի այս բառերից այն է դուրս գալիս, որ Պօլսոյ և Երուսաղէմի պատրիարքները ցանկանում էին որ Յովհաննէսի կաթողիկոսութիւնը Սուլթանը ևս իւր կողմից վաւերացնէ, որ ապա թէ կարելի լինի Կարբեցու յանձնարարութեան առաջին երեք կէտերը կատարել։

Դեսպանը պատրիարքներին պատասխանեց, որ «այժմ Սուլթանից հաստատութեան բարաթ տանելը՝ թէ բոլորովին անտեղի է և թէ անհամապատասխան Ռուսիոյ տէրութեան արժանաւորութեանը»։

Այն ժամանակ պատրիարքները յայտնեցին, որ Յովհաննէս Կարբեցու կաթողիկոսութեան հաստատման մասին՝ թող Էջմիածնի միաբանութիւնը ի պաշտօնէ հաղորդէ իրանց, որպէս զի յետոյ իրանք էլ իրանց կողմից անօրինութիւն անեն նրան, Կարբեցուն, ճանաչելու՝ ըստ նախկին սովորութեան։

Բանը նրանումն է, ընթերցող, որ Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքները կասկածում էին,—և նրանց այդ կասկածը հիմնուած էր Ներսիսի կուսակիցներից իրանց ստացած տեղեկութիւնների վրայ, - որ Եփրեմին բռնութեամբ են հեռացրել և Յովհաննէսին էլ բռնութեամբ նրան յաջորդ կարգել, և հիմա ուզում են, բռնի կերպով կատարուած իրողութիւնները՝ տաճկահայերի վզերովն ևս փաթաթել, նրանց միջոցով ևս սրբագործել։

Ճիշտ է, Եփրեմի և Յովհաննէսի կոնդակներում պատրիարքները կարդացին և տեղեկացան գործի հանգամանքների հետ, սակայն կոնդակներին նրանք շատ հաւատ չէին ընծայում։ Ուստի և ցանկանում և դեսպանին էլ առաջարկում էին որ Յովհաննէսի ընտրութեան և հաստատութեան օրինաւորութիւնը ու ճշմարտութիւնը գրաւորապէս վկա է նաև Էջմիածնի միաբանութիւնը»։

Ստանալով միաբանութեան թուղթը՝ պատրիարքները յոյս ունէին, և դեսպանին խոստանում էին, բարձրագոյն դռնից թոյլաւութիւն ձեռք

բերել կաթողիկոսի յանձնարարութեան առաջին չորս կէտերը ի կատար ածելու։

Իսկ վերաբերութեամբ չորրորդ կէտին, այն է՝ Պօլսում մի յատուկ ռուսատանցի եպիսկոպոս մշտապէս ունենալուն, իբրև Էջմիածնի կաթողիկոսի փոխանորդ կամ վէքիլ,—պատրիարքները չընդունեցին՝ այն պարզ հիման վրայ, որ այդ եպիսկոպոսը՝ կաթողիկոսի վէքիլ անուան տակ՝ ռուս քաղաքականութեան շահերին պիտի ծառայէր*)։

ՄԶԹ

Մինչև Պօլսոյ և Երուսաղէմի պատրիարքների վերջին առաջարկութեան՝ Էջմիածնի միաբանութիւնից թուղթ պահանջելուն՝ մասին Պօլսից Պետերբուրգ, այնտեղից էլ Թիֆլիզ Ռոզէնի գրուին՝ դարձեալ ամիսներ վրայ անցան և տաճկահայերի ու Էջմիածնի յարաբերութեան գործն ճիշտ այն կէտի վրայ էր մնացել, ինչ կէտի վրայ որ սկսուել էր $3^1/_2$ տարի առաջ։

Անճարացեալ Յովհաննէս կաթողիկոսը 1835 թուի սկզբին՝ Թիֆլիզ եկաւ, անձամբ անձին Ռոզէնի հետ խօսելու և մի կերպ վաղճան տա-

*) Ծանօթ։ Իր տեղում կը տեսնենք, որ վէքիլութեան հարցը ռուս կառավարութիւնն աշխատում էր զլուխ բերել մինչև Գևորգ Դ.-ի ժամանակ, երբ Զալալեան Սարգիս եպիսկոպոսը վէքիլ նշանակուեցաւ յայտնի հրահանգներով։ Սակայն Ալի փաշան նրան հընդունեց և յետ դարձրեց

լու, ի միջի այլոց, և այդ յարաբերութեան դժբախտ հարցին։

Վճռեցին որ, ըստ ցանկութեան տաճկահայոց պատրիարքների, Էջմիածնի միաբանութիւնը իր կողմից, ըստ վաղեմի սովորութեան, մի մանաւորական կամ համախօսական թուղթ գրէ և ծանուցանէ Յովհաննէսի ընտրութեան և օծման մանրամասնութիւնները։

Էջմիածին վերադառնալով Կարբեցին իր մտերիմ միաբաններին պարզելով գործի դրութիւնը՝ սինոդականաց կողմից գրել տուեց յիշեալ մանաւորական թուղթը և ուղարկեց Թիֆլիզ կառավարչապետին՝ տեղ հասցնելու։ Ռոզէնն էլ այդ թուղթը նոյեմբերի 21-ին ուղարկեց արտաքին գործոց նախարարին հետևեալ գրութեամբ։

ՄՂ

«Կ. Պօլսոյ հայոց գլխաւոր հոգևորականութիւնը,—գրեց Ռոզէնը,—իր ուղիղ դիտաւորութիւնները ծածկել կամենալով՝ արտաքուստ այնպէս է ցոյց տալիս իբր թէ աջակցում է մեր դեսպանին, այն ինչ գանազան միջոցներով խոկապէս աշխատում է ուշացնել բանակցութիւնների յաջողութիւնը։ Պարզ երևում է, որ Կ. Պօլսոյ և Երուսաղէմի պատրիարքները առ Էջմիածնի ունեցած ջանասիրութեան պատրուակով իրանց իշխանութիւնն ու ազդեցութիւնը

ևեթ զօրեղացնել են մտածում և ի սրտէ ոչ թէ տաճկահայերին Էջմիածնին մօտեցնել են ուզում իսկապէս, այլ հեռացնել։

«Մխիթարն հայոց ազգի մշտական անձնուիրութիւնը և դարերով նրա մէջ արմատացած յարգանքը առ այդ սուրբ վանքը՝ արգելում են նրանց աշխարհայ պաշտպան հանդիսանալ Էջմիածնի նախամեծարութեան դէմ, բայց զաղտնի՝ նրանք չեն զադարած ի ՁԵԱՍ վանքին գործելով։*)

«Այս պատճառով, որպէսզի գործը երկարացնեն և ապարդիւն հանեն դեսպանի սաիպոդական պահանջները, նրանք իբր թէ օսմանեան տէրութիւնից երկիւղ կրելով և հին սովորութիւնները պահպանելու կարևորութեան պատրուակով, չբաւականացան հայոց նախկին և այժմեան կաթողիկոսների յայտարարական կոնդակներով, այլ առաջարկեցին որ այժմեան կաթողիկոսի դահ բազմելու մասին՝ Էջմիածնի հոգևորականութիւնը ծանուցանէ նրանց։ Ես այս բանի մէջ նրանով աւելի չարամտութիւն եմ նկատում, որ երևի թէ Էջմիածնում պատահած անկարգութիւնների**) մասին նրանց տեղեկութիւն են տուել մի քանի անբարեմիտ հոգևորականներ, որոնք Յովհաննէսի ատիճանը անպատուել համարձակեցան։

*) Կարբեցին և,—ինչպէս կարծում ենք,—նրանից թելադրուած այս և հետևեալ տողերը գրող Ռօզէնը՝ իրանց կարճամտութեամբ չէին կարող տաճկահայերի պատրիարքների ոչ գրութեան մէջ մտնել, ոչ էլ նրանց բուն նպատակն ըմբռնել, ուստի և ամեն ինչ նրանց անձնական հաշիւներին էին վերագրում։

**) Այդ անկարգութիւնների մասին իր տեղում կը խօսենք։

«Երևի թէ նրանք կարծում էին թէ (այդ շփոթների պատճառով) միաբանութեան կողմից ծանուցագրի (մահէր) ուղարկելն՝ արգելքների կը հանդիպի»։*)

ՄՂԱ.

«Միւս կողմից,—շարունակում է բարձն Ռօզէնը, մտածելով որ Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքների առաջարկութեան չկատարելը՝ ատիթ կարող է լինել, որ մեր դեսպանի պահանջողութիւնները չկատարեն թէ նրանք և թէ տաճկահայ տէրութիւնը, որին նրանք կը շտապեն համոզելու թէ հին սովորութիւնները ամբողջապէս չեն պահպանուում,—մենք (Ռօզէնը) կաթողիկոսի հետ միասին, կարևոր համարեցինք հասցնել նրանց Էջմիածնի վանքի յիշեալ ծանուցագիրը (մահէրը), որպէսզի դրանով ոչնչացնենք նրանց հնարած**) այդ միայնակ արգելքը և նոյնիսկ իրանց նեղ դրութեան մէջ ձգենք,***) որ չկարողանան այլևս յետաձգել դեսպանի պահանջմունքների ցանկալի կատարումը։ Ահա այս մտքով՝ Յովհաննէս կաթողիկոսը ներկայ նոյեմ-

*) Երևում է, որ հանդիպեց, որովհետև մահէրը գրուեց ոչ միաբանութեան կողմից, ինչպէս որ պատրիարքներն էին պահանջում, այլ սինոդականների։

**) Դա պատրիարքների հնարածը չէր, այլ իսկական և հին սովորութիւն էր։

***) Քիչ յետոյ կը տեսնենք, որ ընդհակառակը, պատրիարքները իրանք նեղ դրութեան մէջ ձգեցին Ռօզէնին և Կարբեցուն։

բերի 13-ի գրութեան հետ՝ ուղարկել է ինձ Էջմիածնի բոլոր*) հոգևորականութեան կողմից մի ծանուցագիր յանուն Կ. Պոլսոյ պատրիարքի՝ Յովհաննիսի ընտրութեան մասին։

«Պարտք համարելով վերոյիշեալ բոլոր հանգամանքները ծանուցանել ի տեղեկութիւն ձեր և ընդ սմին առանձին ծրարի մէջ ուղարկելով Էջմիածնի հոգևորականութեան յիշեալ ծանուցագիրը յանուն Կ. Պոլսոյ հայոց պատրիարքի, ես ձեր տնօրէնութիւնն եմ խնդրում, որ այդ ծրարը հասցնուի Տաճկաստան մեր դեսպանին ըստ պատկանելոյն յանձնելու համար։

«Հարկ է նմանապէս դեսպանին յանձնարարել, որ նա նորից սկսէ ստիպել հայոց հոգևոր գործերի վերաբերեալ բանակցութիւնները վաղճանին հասցնելու մասին և Էջմիածնի կաթողիկոսի յանձնարարութեան այն կէտերը կատարելու, որոնք արդէն առաջադրուած են Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքներին և որոնց մասին նրանք խոստացել էին Սուլթանի թոյլտուութիւնը խնդրելու, երբ միայն կը սատանան Էջմիածնի հոգևորականութեան ծանուցագիրը Յովհաննիսի ընտրութեան մասին։ Եւ որովհետև նրանց այդ առաջարկութիւնն էլ այժմ կատարուած է, վասն որոյ նրանք այլ ևս տեղիք չպիտի ունենան որև է արգելքներ հանելու։

«Ընդ սմին խոնարհաբար խնդրում եմ նը-

*) Ասացինք արդէն, որ այդ ծանուցագիրը սինոդականների կողմից էր միմիայն, այլ ոչ «բոլոր» հոգևորականութեան։

մանապէս, որ մեր դեսպանի առանձին ուշադրութիւնը դարձնէք այն հանգամանքի վրայ, որ Կ. Պոլսոյ պատրիարքը ձգտում է ոչ միայն խորշել ոչի է կախում ունենալուց, այլ և աշխատում է Էջմիածնի բոլոր ազդեցութիւնը*) ոչընչացնել Տաճկահայերի վրայ, որոյ առաջը պէտք է անշուշտ առնել։

«Ի վերջոյ՝ պարտաւորութիւն եմ համարում, որ տաճկահայերի Էջմիածնի հետ առաջւայ յարաբերութիւնների վերականգնեցնելը մեծ օգուտ կարող է բերել ոչ միայն նախամեծար Աթոռին, այլև որպէս ձեզ էլ յայտնի է, շատ բաներում օգտաւէտ կըլինի նոյն իսկ մեր պետութեան համար, մանաւանդ, ես կարծում եմ, նրանով՝ որ այլևս այն յաջողութիւնը չի ունենայ քարոզիչների ձեռքով տաճկահայերի մէջ կաթոլիկութեան տարածման գործը, ուրեմն Տաճկաստանում մեր կուսակիցների թիւը չի նուազիլ»։

«Խնդրում եմ այս գործի հետևանքները բարեհաճէք ծանուցանել ինձ՝ Յովհաննէս կաթողիկոսին տեղեկացնելու համար և ուրախացնելու ոչ միայն նրան և մեր բոլոր հայերին, որոնք այս գործով շատ են հետաքրքրուում, նոյնիսկ տաճկահայերին, որոնք սրտանց ցանկանում են մօտենալ Էջմիածնին»։**)

*) Շուտով կը տեսնենք, որ պատրիարքը Էջմիածնի դէմ ոչինչ չի ունեցել, այլ կարբեցու դէմ, իբրև «ռուս մարդու»։

**) Акты, VIII, եր. 295, № 212.

ՄՂԲ

Հակառակ Կարբեցու և Ռօզէնի կարծածին թէ՝ Կ. Պոլսոյ պատրիարքը այլևս աւելի չպիտի գտնէ խոչնդոտներ ստեղծելու՝ բարոն Ռօզէնը 1836 թուի հոկտեմբերի 17-ից, ներքին գործոց նախարար Բլուդովից մի գրութիւն ստացաւ հետևեալ բովանդակութեամբ.*)

«Անցեալ սեպտեմբեր ամսին արտաքին գործոց նախարարն ուղարկել էր ինձ Կ. Պոլսոյ դեսպանից իր ստացած թղթերը, որ վերաբերում են տաճկահայերի Էջմիածնի պատրիարքական գահի հետ նախկին յարաբերութիւնները վերականգնեցնելու խնդրին և այդ մասին եղած բանակցութիւնների հետևանքներին։

«Այդ գրութիւններից ես տեսայ, որ Կ. Պոլսոյ հայոց պատրիարք Յովսէփը (Ստեփանոս «Աղաւնի» մականուանեալն) մեր դեսպանին վճռաբար յայտնել է՝

ա) Թէ Տաճկաստանում հայոց եկեղեցին ընդունում է Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի նախամեծարութիւնը և այդ Աթոռը կը յիշատակուի եկեղեցիների մէջ, սակայն առանց յիշուելու Յովհաննէս կաթողիկոսի անունը այնպէս, ինչպէս որ եղել է վերջին 25 տարուայ մէջ։

բ) Թէ նա չէ հրաժարուում Էջմիածնից ս.

*) Акты, VIII, № 218.

մեռոնը ընդունելու համաձայն նախկին սովորութեան, որպէս հոգևոր շնորհ, որ ուղարկուում է այնտեղի հայոց եկեղեցուոյն։

գ) Թէ նա պարտաւորում է Տաճկաստանի հայոց բոլոր եկեղեցիներում յօգուտ Էջմիածնի գանձանակ հաստատել և թէ՝ այդ մասին արած իր կարգադրութիւնն արդէն իրագործուում է, և թէ՝ նա երաշխաւորում է անխախտ և ճշտութեամբ հասցնելու՝ ինչպէս ժողոված գանձակադրամը, նոյնպէս և բոլոր և յօժարակամ նուէրները, որ կը լինի յօգուտ Էջմիածնի։ Այս իսկ պատճառով՝ նա աւելորդ է համարում Էջմիածնի գործակալի (վէքիլի) ներկայութիւնը Կ. Պոլսում։ Եւ՝

դ) Թէ նա խնդրում է Էջմիածնի Աթոռից՝ համաձայնութիւն տալ այս կէտերին և այլևս ոչինչ չպահանջել, որովհետև ներկայ հանգամանքներում բոլորովին անյարմար կը լինի ուրիշ որևէ պահանջ կատարելու»։

ՄՂԳ

«Կ. Պոլսոյ դեսպանը,—շարունակում է Բլուդովը,—իր կողմից հաղորդում է, որ այնտեղի հայոց եկեղեցու ամենագլխաւոր կապը Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի հետ, այսինքն՝ սրա նախամեծարութիւնը ճանաչել, ըստ առաջնոյն՝ պահպանուած է հաստատ և անձեռնմխելի, և ուրեմն քանի որ այս ամուր հիմքը

չէ քանդուած՝ Էջմիածնի ազդեցութիւնը տաճկահայերի վրայ շատ էլ չէ կարող թուլանալ։ Իսկ եթէ նախամեծար Աթոռը խոհեմութեամբ գործէ, այն ժամանակ կարելի կը լինի օգուտ քաղել որևէ յարմարաւոր դէպքից Կ. Պոլսոյ հայոց եկեղեցին մօտեցնելու իր Պեռի հետ և վերականգնել առաջուայ յարաբերութիւնները։ Այս դէպքը կարող է ներկայանալ, օրինակի համար, երբ Էջմիածնից ս. մեռոնի լինի բերուում Ցաճկաստան, որի մասին այնտեղի հոգևորականութիւնը, ինչպէս վերևում տեսանք. արդէն իր համաձայնութիւնը տուել է։

«Այնուհետև դեսպան Բուդէնեվը հաղորդում է, որ Էջմիածնի Սինօդի վերջին ծանուցագիրը (մահսերը) թէ ըստ բովանդակութեան և թէ ըստ ոճին, որով գրուած է, Պոլսոյ հայոց հոգևորականութեան վրայ ամենաանյաջող (անպատշաստ) տպաւորութիւն է գործել նախամեծար Աթոռի վերաբերութեամբ, ուստի և հարկաւոր է Էջմիածնի հոգևորականութեանը հասկացնել, որ Կ. Պոլսոյ հայոց հոգևորականութեան հետ ունեցած գրագրութիւնների մէջ, նոյնիսկ իր օգտի համար, թողնէ ամբարտաւանութեան և կշտամբանքների լեզուն, որ բացի գրգռելուց ուրիշ ոչինչ նպատակի չէ հասցնում։ — Ընդ սմին դեսպանը հաւատացնում է որ Էջմիածնի Աթոռի կողմից Կ. Պոլսոյ հայոց պատրիարքին ուղարկուող գրութիւնները եթէ գրուած լինին բարեկամական, և մինչև անգամ շողոքորթ լեզուով

և իրանց մէջ յարգանաց նշաններ բովանդակեն, ամենից լաւ կարող են նպաստել նախկին բարեկամութիւնը վերականգնելու և առաջուայ յարաբերութիւնները ամբողջապէս հաստատելու։

Բոլոր վերոգրեալները ի նկատի առնելով՝ ես այն համոզմունքի եկայ, որ թէև, չնայելով մեր Կ. Պոլսոյ դեսպանի բոլոր ջանքերին, ներկայ գործիս մէջ Էջմիածնի Աթոռի ձգտումները ամբողջապէս չիրագործուեցան, այնուամենայնիւ՝ այս առարկայի վերաբերութեամբ մեր տէրութեան գլխաւոր նպատակը, — աչքի առաջ ունենալով Կ. Պոլսոյ հայոց պատրիարքի պատասխանը, - սկզբում արդէն բաւականաչափ բաւարարութիւն գտած է։ Իսկ ինչ որ կը վերաբերի նոյն պատրիարքի այն պատասխանին թէ նա համաձայն չէ, որ Կ. Պոլսում առանձին մի գործակալ (վէքիլ) նստի Էջմիածնական աթոռի օգտին ժողովարարութիւն անելու և նուէրներ ընդունելու համար, և չէ ուզում նմանապէս, որ հայոց եկեղեցիների մէջ ուղղակի Յովհաննէս կաթողիկոսի անունն յիշատակուի, — մեզ համար դեռ ևս այդ մեծ կորուստ չէ*)։

Ծանուցանելով այս մասին արտաքին գործոց նախարարին, ի պատասխան նրա ինձ ուղղած գրութեանը, ես յարակցեցի թէ մտադիր եմ հաղորդել ձեզ՝ Յովհաննէս կաթողիկոսին յայտնելու համար՝ թէ մր աստիճանի կարևոր

*) Կարբեցու ականջներից հետու այս խօսքերը։

է մի առ ժամանակ ընդունելով Կ. Պոլսոյ հայոց պատրիարքի առաջարկութիւնները։

ՄՂԴ

«Դառնալով Էջմիածնի Սինոդի վերջին ծանուցագրին, — շարունակում է Բլուդովը, — և դեսպանի կարծիքին, ես էլ իմ կողմից այդ գրութիւնը բաւականին անվայելուչ եմ գրանում, վասն որոյ և յայտնեցի արտաքին գործոց նախարարին թէ պիտի խնդրեմ ձեզ, որպէսզի դուք այս բոլորը զգուշութեամբ նկատէք կաթողիկոսին և հասկացնէք նրան թէ՝ որ աստիճանի վնասակար է ծայրագոյն պատրիարքական Աթոռի և առհասարակ հայոց եկեղեցու համար վերոյիշեալ ծանուցագրի Կ. Պոլիս ուղարկելը, որ միանգամայն ցոյց է տալիս թէ Էջմիածնի հոգևորականութեան մէջ չկայ ոչ պարտուպատշաճ հեզութիւն և ոչ էլ որևէ քաղաքավարութիւն այդպիսի մի ծանր և ամեն կերպ քնքուշ խնդրի մէջ։ Վերջապէս հարկ համարելով առաջն առնել, որ ապագայումն էլ չկրկնուին այդպիսի դէպքեր, որի համար պէտք է մի կանոն սահմանել, որ այսուհետ այդպիսի կոնդակները կանխապէս ենթարկուին ներքին գործոց նախարարի քննութեանը, — ես ընդ ամին հաղորդեցի կոմս Նեսէլրոդէին՝ թէ հարկաւոր եմ համարում այս մասին ծանուցանել թէ ձեզ և թէ նոյն իսկ պատրիարք-կաթողիկոսին։ Իմ

այս բոլոր ենթադրութիւնները առաջուց յանձնեցի ես արտաքին գործոց նախարարի քննութեանը այն դիտաւորութեամբ, որ եթէ նա էլ համաձայն է իմ մտքերին, թող այդ բոլորը ենթարկէ Բարձրագոյն բարեհայեցողութեան.

«Այժմ կոմս Նեսէլրոդէն տեղեկացնում է ինձ՝ թէ այս մասին ամենահպատակօրէն զեկուցած է Թագաւոր Կայսեր, և Նորին Մեծութիւնը բարեհաճել է բարձրագոյն հրամայել, որպէսզի Էջմիածնի սինոդի կոնդակները (կամ գրութիւնները) Կ. Պոլսոյ պատրիարքի անունով՝ նախապէս քննուին ներքին գործոց նախարարութեան մէջ։

«Յայտնելով այս բարձրագոյն կամքը Էջմիածնի կաթողիկոսին, ես պատիւ ունիմ բոլոր վերոգրեալը հաղորդել ձեզ՝ ձեր կողմից պէտք եղածը կարգադրելու և հսկողութիւն ունենալու համար։

ՄՂԵ

Մեր ձեռքի տակ եղած պատմական ոչ մի գրքում՝ մենք չգտանք Էջմիածնի սինոդականների այն գրութիւնը Պոլսոյ պատրիարքին, որոյ պատճառով կաթողիկոսին և Էջմիածնի միաբանութեանը բարձրագոյն նկատողութիւն եղաւ, որպիսի նկատողութիւնը, կողմնակի կերպով, վերաբերում էր նաև բարոն Ռոզէնին, որի ձեռքի տակովն էին անցնում Էջմիածնի թղթերը։

Այդ պատճառով՝ Ռոզէնը սոխպուած եղաւ 1837 թուի յունուարի 28-ին մի ընդարձակ բացատրութիւն գրել Բլուդով նախարարին յիշեալ առթիւ։*)

Այդ բացատրութիւնից երևում է, որ Ռոզէնը Էջմիածնի սինոդականների ծանուցագիրը և նրա թարգմանութիւնը՝ուղարկել է արտաքին գործոց նախարարին, նա էլ դեսպան Բուդէնեվին։

Եթէ դեսպանը, — գրում է Ռոզէնը, — այդ գրութեան մէջ որևէ անվայել բան էր նկատում, կարող էր, առանց պատրիարքներին յայտնելու իր նկատողութիւններով հանդերձ վերադարձնել և այդպիսով ապաջը կատնուէր այն անդուրեկան տպաւորութեան, որի մասին այժմ նա հաղորդում է»։

Այնուհետև բարոնը երկար բարակ քաղուածներ է անում յիշեալ հարցի առթիւ ցարդ տեղի ունեցած գրագրութիւններից և աշխատում է ապացուցանել, որ ռուս դիւանագիտութեան այսքան տարիների անյաջողութիւնը վերագրելի է Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքների չկամութեանը, նրանց անբարեացակամութեանը դէպի Կարբեցի Յովհաննէս Կաթողիկոսը։

Վերջ ի վերջոյ Ռոզէնը խնդրում է նախարարից բացատրել այն մի քանի կէտերը Կ. Պոլսոյ պատրիարքի Բուդէնեվ դեսպանի պա-

*) Акты, VIII եր. 304—306. № 222.

տասխանի մէջ, որոնք, ըստ Ռոզէնի, մութն են և երկդիմի, և այլն։

Այս բացատրողական գրութիւնից եօթն ամիս անցաւ և նախարարից ոչ մի պատասխան չեկաւ Ռոզէնին։

Յովհաննէս կաթողիկոսը յուսահատուած, լքուած անդադար դառնում էր Ռոզէնին և մի վերջնական կարգադրութիւն էր խնդրում տաճկահայոց հետ իր յարաբերութիւնը վերականգնելու համար։

Կարքեցին մինչև անգամ գրեց բարոնին, որ ինքը սոխպուած կը լինի, վերջ ի վերջոյ, կայսեր դիմել ուղղակի, եթէ նախարարները այդ առաջնանի կը ձգձգէին իր խնդիրը։

Ռոզէնը հանգստացնում էր կաթողիկոսին և բանակցութիւնների անյաջողութիւնը ամբողջապէս Պոլսոյ ռուսաց դեսպանի թուլութեանը վերագրելով՝ խոստանում էր պաշտպան հանդիսանալ կաթողիկոսի բողոքներին, որոնց նա գտնում էր արդար և իրաւացի։

ՄՂՁ

Եւ, արդարև, ի պաշտպանութիւն կաթողիկոսին՝ Ռոզէնը 1837 թուի օգոստոսի 17-ին նորից դիմաւ նախարար Բլուդովին հետևեալ գրութեամբ*)։

«Այս տարուայ յունուարի 27-ին ես մանր-

*) Акты, VIII, № 224.

բամասնօրէն գրել էի ձեզ Կ. Պոլսոյ մէջ դեսպանի բանակցութիւնների մասին՝ տաճկահայոց Էջմիածնի Աթոռի հետ նախկին յարաբերութիւնները վերականգնելու վերաբերմամբ, բայց առ այս ես ձեզանից ոչինչ պատասխան չստացայ։ Այն ինչ Յովհաննէս կաթողիկոսը, ինձ ուղղած գրութիւնում, կրկնում է այս մասին իր ունեցած փաստերը, որոնք աւելի և աւելի եւ համոզում նրան թէ՝ Կ. Պոլսոյ պատրիարքը զանազան պատճառաբանութիւններով աշխատում է ոչ թէ մօտեցնել, այլ և բոլորովին խզել տաճկահայերի նախկին յարաբերութիւնները Էջմիածնի Աթոռի հետ և այդպիսով բոլորովին դադարեցնել սրա ազդեցութիւնը Տաճկաստանի հայոց հոգևորականութեան վրայ։ Վասնորոյ չընդունելով և մերժելով Կ. Պոլսոյ պատրիարքի առաջարկած կէտերը, որ համարում է ապօրինի և հակառակ հայոց եկեղեցու կանոններին Յովհաննէս կաթողիկոսը պահանջում է, որ բացատրուին այդ կէտերը և մանաւանդ որոշուի թէ ինչ եղանակով ս. մեռոնը պիտի Տաճկաստան ուղարկուի և, ընդ ամին, թէ ինչպէս պիտի հասցնուի յօդուտ Էջմիածնի Աթոռի ժողոված դրամները, որ վաղուց ի վեր գումարուած են այնտեղի եկեղեցիներում, նմանապէս և դրանց հաշիւը թէ անցեալ ժամանակուայ և թէ ապագայում։

«Պարտք համարելով ուղարկել ձեզ Էջմիածնի կաթողիկոսի յուլիսի 17-ին գրած բուն

պատասխանը, որից կըբարեհաճէք տեսնել թէ նա պատրաստ է այս մասին մինչև անգամ թագաւոր կայսրին անհանգիստ անել,—ես ձեզ խոնարհաբար խնդրում եմ, ի նկատի առնելով թէ կաթողիկոսի յառաջ բերած հանգամանքները և թէ իմ գրածներս, բարեհաճէք ինձ հաղորդել թէ՝ ինչ վաղճան պիտի տրուի այս գործին, որ այսքան երկար տարիներ ձգձգում է առանց յաջողութեան։ Իսկ ես իմ կողմից՝ լաւապէս հասկանալով այն պատճառները՝ որոնց համար Յովհաննէս կաթողիկոսը չէ ընդունում Կ.Պոլսոյ պատրիարքի առաջարկութիւնները, չեմ կարող չհամաձայնել, որ կաթողիկոսի ասածները թէ ս. մեռոն ուղարկելու մասին և թէ Էջմիածնի հայրապետի անուան յիշատակութեան վերաբերմամբ Տաճկաստանի հայոց եկեղեցիներում,—բոլորովին հիմնաւոր են և արդարացի։ Եթէ մինչև անգամ յաջողէին ձեռք բերել Յովհաննէսի համաձայնութիւնը կաթողիկոսական անունը չյիշատակելու մասին՝ այն ժամանակ էլ Ռուսաց տէրութիւնը չպէտք է թոյլ տայ այդ բանը, որ խախտում է հայոց եկեղեցու հին կանոնները, փնաստում է Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի նախամեծարութեանը և առհասարակ ընդհանուր հայ եկեղեցու հոգևորականութեան այս Աթոռից կախումն ունենալուն։ Չպէտք է թոյլ տալ նամանաւանդ այն պատճառով, որ Կ. Պոլսոյ պատրիարքի այդպիսի մեզ համար փնասակար առաջարկութեան

ընդունելը՝ այն միտքը պիտի արծարծէ, որպէս թէ Յովհաննէսի ընտրութիւնն ու օծումը ապօրինի է եղած։ Այնուհետև մենք ոչ միայն անզօր կը լինինք հարկ եղած դէպքում կրկնել մեր այժմեան պահանջողութիւնները, այլ և անպանճառ տեղիք պիտի տանք պարսից և միւս պետութիւններին Տաճկաստանի օրինակին հետեւել և նոյն կարգը մտցնել իրանց հպատակ հայերի մէջ ևս որոնք այժմ թէև կանարելապէս ընդունում են Յովհաննէս կաթողիկոսի հոգևոր դերիշխանութիւնը, բայց յետոյ պիտի թուլանան, մանաւանդ երբ կը տեսնեն, որ կաթողիկոսի իրաւասութեան և ազդեցութեան տակից տաճկահայերի դուրս գալը՝ մեր համաձայնութեամբն է կատարուել։ Այս պատճառով ես կարծում եմ, որ եթէ արդէն անկարելի է մեր դեսպանի ձեռքով հասոցել Կ. Պոլսոյ պատրիարքին, որ կատարէ Յովհաննէս կաթողիկոսի իրաւացի պահանջը՝ սրա անունը Տաճկաստանի հայոց եկեղեցիների մէջ յիշատակելու նկատմամբ՝ այն ժամանակ աւելի լաւ է պատրիարքին պատասխանել թէ՝ նրա առաջարկութիւնները այդ առարկայի վերաբերութեամբ՝ չեն կարող ընդունուել, որովհետև հակառակ են նոյն իսկ եկեղեցական կանոնադրութիւններին, և այդպէս ահա այս դանդատանքի վերջաւորութիւնը առժամանակ մի կախ թողնել։

«Իսկ ինչ վերաբերում է Յովհաննէս կաթողիկոսի միւս պահանջողութեանը, այն է՝ Կ.

Պոլսոյ Յովսէփ (Սամփան) պատրիարքը հաշիւ տայ իրան թէ որքան դրամ է ժողովուած անցած ժամանակներում յօգուտ Էջմիածնի վանքի, — այս կէտը, իմ կարծիքով, հաղիւ թէ կարող լինի իրագործուել, որովհետև Տաճկաստանի հայոց հոգևորականութիւնը, եթէ մինչև անգամ պատրաստակամութիւն էլ ունենայ, դարձեալ պիտի դժուարանայ մի այդպիսի հաշիւ ներկայացնելու։

«Ուրեմն ներկայ հանգամանքներում և ոչ հարկ է յեշել անգամ այս մասին. բաւական կը լինի միայն առաջարկել Կ. Պոլսոյ պատրիարքին որ նա անօրինէ Էջմիածնին հասցնել ներկայումս յօգուտ յիշեալ Աթոռի Տաճկաստանում ժողոված բոլոր գումարները, իսկ այն նուիրաբերութիւնները, որ ապագայում կը ժողովուին՝ տարէց տարի Էջմիածնի ուղարկել՝ որքանութեան մասին միայն տեղեկութիւն տալով»։

ՄՂԷ

Ռօզէնի այս թղթին Բլուդովը իսկոյն պատասխանեց, որի մէջ բարձի արտայայտած մտքերի համաձայնութիւն տալով հանդերձ՝ այնուամենայնիւ աւելացնում է, որ յիշեալ հարցի մասին վերջնական կարգադրութիւն կարող է լինել միայն «Կ. Պոլսոյ դեսպանի այստեղ (Պետերբուրգ) գալով, որ սպասում է օրերումը, և ապա, նրա հետ միասին խորհրդակցելով

կարելի կը լինի աւելի կտրուկ և յարմար միջոցի դիմել, քան թէ երկար բարակ գրագրութիւնները»։*)

Այսպէս էլ եղաւ։

1837 թուականի վերջերում Ռոզէնը փոխուելով նրա յաջորդ նշանակուեցաւ ժեներալ Գոլովինը, որ նախ քան Պետերբուրգից Կովկաս ուղևորուելը՝ հրաւիրուեցաւ այնտեղ կայացած ժողովին կամ խորհրդակցութեանը, որին մասնակցում էին արտաքին գործոց նախարարը իր օգնականով, ներքին գործոց նախարարը և Պոլսից եկած Բուտէնեվ դեսպանը։

Նիստը բանալով՝ ներքին գործոց նախարարը յայտնեց, որ ներկայ խորհրդակցութեան նիւթը լինելու է տաճկահայերի յարաբերութեան խնդիրը էջմիածնի կաթողիկոսական Աթոռի հետ։ Եւ թէ՝ բարձրագոյն հրամայուած է իրան՝ այդ հարցի առթիւ Նորին Մեծութեանը ներկայացնել նախարարութիւնների «լի ու լի և վերջնական որոշումները»։

Թէ ինչ էին նախարարութիւնների այդ «լի ու լի վերջնական որոշումները», – մի առ մի դուրս են բերուած 1838 թ. փետրուարի 8-ին Բլուդովի գրած հետևեալ ընդարձակ նամակում յանուն Կովկասի նոր կառավարչապետ Գոլովինի։

«Արտաքին գործոց նախարարը հաղորդում է ինձ, որ նա բարձրագոյն հրամանի համաձայն

*) Акты, VIII, № 225.

բաղդ է ունեցել ներկայացնելու ի բարեհայեցողութիւն Նորին Մեծութեանը՝ այս առարկայի վերաբերմամբ արտաքին գործոց նախարարութեան ունեցած բոլոր գործողութիւնը։ Այդ տեսութեան մէջ յիշեալ նախարարը ամենահպատակօրէն կայսեր զեկուցել է՝ թէ Յովհաննէս կաթողիկոսի բոլոր պահանջողութիւններին անմիջապէս բաւականութիւն տալու համար ներկայումս գլխաւորապէս երեք արգելք կայ՝ ա) Բարձրագոյն Դռան կանկածոտութիւնը, բ) Տաճկահայերի Սինոդի (ազգային ժողովի ուզում է ասել) երկիւղը և գ) Տաճկահայ հոգևորականութեան անձնական ձգտումները (շահերը)։

«Ամեն մի միջամտութիւն տաճկահպատակների գործերում Բարձրագոյն Դռանը պիտի թուի որպէս քակտումն մեր բարեկամական կապերի, որովհետև նա, Բ. Դուռը չի կարող իրան երևակայել հոգևոր իշխանութիւն՝ աշխարհականից առանձին, և ուրեմն այնպէս երկնչի օտար տէրութեան ազդեցութիւնից իր հպատակների վրայ։

«Բացի այդ՝ Տաճկաստանի հայերը, որոնց աշկարայ յարաբերութիւնները էջմիածնի հետ դադարել են տակաւին նախքան Արարատեան աշխարհի միանալը Ռուսիոյ հետ,*) Թիւրքիոյ բնակիչների սոսկալի դասակարգն են կազմում և նոյնիսկ այդ պատճառով՝ տաճկաց

*) Ընթերցողը, հարկաւ, չի մոռացել, որ այս բանը տեղի ունեցաւ Ռուսաց երևսից, Ենիքեմի հաստատութեան առթիւ։

առանձին հսկողութեան առարկայ են դարձած։ Չէ կարելի չյիշել նաև օտար տերութիւնների դեսպանների անընդհատ թելադրութիւնները, որոնցով նրանք յամենայն դէպս աշխատում են Բ. Դռան դէպի մեզ ունեցած վստահութիւնը թուլացնել։ Նոյնպէս յայտնի է, որ Տաճկաստանի հայերը, ըստ դա անութեան, երկուսի են բաժանուած,—կաթոլիկ և լուսաւորչական, որոնք միմեանց անհաշտ թշնամիներ են և աշխատում են Բ. Դռան սրտմտութիւնն ու կասկածները միմեանց վրայ դարձնել։

«Դրանցից լուսաւորչականները թէև հարկ եղած յարգանքը դէպի Էջմիածնի Աթոռը պահում են, նրան նախամեծար համարելով, այնուամենայնիւ Կ. Պոլսոյ հոգևորականութիւնը երկիւղ է կրում աշկարայ կերպով ճանաչել այդ նախամեծարութիւնը, ուստի և խոյս է տալիս ընդունել ս. Մեռոն տանող հանդիսաւոր դեսպանութիւնը և Յովհաննիսի անունը եկեղեցիների մէջ յիշատակելը։ Այս ամենը մեզ այն եզրակացութեան է բերում, որ Տաճկաստանի հայ հոգևորականութիւնը Էջմիածնի նախամեծար Աթոռի հետ բոլորովին մօտեցնելու համար՝ հարկաւոր է միմեայն համբերութիւն ու խոհեմ զգուշութիւն և չպէտք է դիմել ոչինչ վճռական միջոցների, որոնք կարող են միայն յետաձգել մեր նպատակի իրագործումը։

«Ընդհակառակը՝ հարկաւոր է խիստ շրջահայեցողութեամբ գործել, առանց Բ. Դռան կասկածներն յարուցանելու և առանց ամրապնդելու այն երկիւղը, որ արդէն ծագել է նրա հպատակ հայ հոգևորականութեան մէջ։

ՄՂԸ

«Նախարարութեան այսպիսի դատողութիւնների վրայ հիմնուած գործունէութեան մասին, —շարունակում է Բլուդովը,—նա, արտաքին գործոց նախարարը, զեկուցել է թագաւոր կայսեր, և Նորին Մեծութիւնը՝ իր Բարձրագոյն հաւանութեանը արժանացնելով՝ բարեհաճել է հրամայել ինձ, որ ձեր (Դոլգովինի) միջոցով, քաղաքավարի կերպով հասկացնուի Յովհաննէս կաթողիկոսին թէ՝ ներկայ հանգամանքներում կարելի չէ չափազանց պահանջներ անել և մի առժամանակ պէտք է բաւականանալ նրանով, ինչ որ մեր դեսպանատունը կարողացաւ վաստակել տաճկահայ հոգևորականութիւնից յօգուտ Էջմիածնի Աթոռի, այսինքն թէ՝ Կ. Պոլսոյ և Երուսաղէմի հայոց պատրիարքները ճանաչում են այդ Աթոռի նախամեծարութիւնը, համաձայն են Էջմիածնից ս. Մեռոնը ստանալու և Տաճկաստանում գանձանակ են սահմանում յօգուտ Էջմիածնի վանքի նուիրաբերութիւններ ժողովելու։

Յովհաննիսի մնացեալ պահանջողութիւնների իրագործելը՝ կախուած է ժամանակակից և բարեպատեհ հանգամանքներից։ Ժամասացութիւն-

ների ժամանակ նրա (Յովհաննիսի) անուան յիշատակութեան համար հարկ է, որ Էջմիածնի Աթոռին հոգևոր հպատակութեան այդպիսի հանդիսաւոր արտայայտութիւնը՝ այն տեղի հայերին չզրկէր իրանց անձնական ապահովութիւնից, իսկ Էջմիածնի հաւատարմատար (վէքիլի) շրջունակ Տաճկաստանում գտնուիլը նուիրաբերութիւններ ժողովելու համար՝ առժամանակ մի հեղութեամբ կարող է Կ. Պոլսոյ պատրիարքի անձնական վերանկողութեամբ փոխարինուել, առ որ նա իր յօժարակամ պատրաստակամութիւնն է յայտնել։

Այժմ Կ. Պոլսոյ պատրիարքն առաջարկել է նմանապէս, որ ինքը իր կողմից մի հոգևորական ուղարկէ Էջմիածնից ս. Մեռոնը բերելու, և այս առաջարկութեան կատարելն առայժմ կարելի է համաձայնում միայն այն պայմանով, որ Յովհաննէս կաթողիկոսն պատրիարքի դեսպանին ընդունէ ոչ թէ մեծամտութեամբ և ամբարտաւանութեամբ, այլ ընդհակառակը, հարկ եղած վայելչութիւնը պահպանէ և ջանայ հոգևոր հովանաւորին վայելուչ հեզութեամբ և հաճոյակատար վարմունքով թելադրել պատկանելի յարգանք դէպի Ծայրագոյն իշխանութիւնը տաճկահայերի վրայ և այդպիսով հաստատ հիմք դնէ այս իշխանութեանը։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այս անգամուայ Կ. Պոլիս ս. Մեռոն տանելն ամենևին չի կարող և չպէտք է կանոն դառնայ, որ միշտապէս նոյն ձևով ուղարկուի։

—Ժամանակին կարելի կը լինի՝ առանց Կ. Պոլսոյ պատրիարքի ինքնասիրութեանը կպչելու, համաձայնեցնելու նրան, որ ս. Մեռոնը ընդունէ այն հոգևորականների ձեռքով, որոնց Յովհաննէս կաթողիկոսը յատկապէս կուղարկէ Պոլիս։ Իսկ տաճկահայերի բարձրագոյն հոգևորականութեան ներկայ որամարութեանը նայելով պէտք է մինչև անգամ ցանկալ, որ ս. Մեռոնի Պոլիս հասցնելը կատարուի այն հոգևորականների ձեռքով, որ այդ քաղաքից կուղարկուին, որովհետև դրանով կպահպանուի Էջմիածնի Աթոռի նախամեծարութեան դաղափարը, քանի որ այն սրբազան նիւթը ստանալու համար նրան հն դիմում։ Առաջիկայ երեք տարուայ մէջ ամեն բան կարող է փոխուել. Յովհաննիսի ուղարկած բարձրաստիճան հոգևորականը Տաճկաստանի հայոց պատրիարքների մօտ վայելուչ և իր պաշտօնին ու աստիճանին արժանի ընդունելութիւն կը գտնէ և ս. Մեռոնի հասցնելու առաջուայ սովորական կարգը հանդիսաւոր և հաստատ կերպով կը վերահաստատուի։

ՄՂԹ

«Հիմա մնում է,—շարունակում է Բլուդովը—առանձնապէս յիշել Յովհաննէս կաթողիկոսի երկու պահանջների մասին։

«Սրանցից առաջինը այն է, որ Կ. Պոլսոյ պատրիարքից մանրամասն հաշիւ պահանջուի

անցեալ ժամանակում յօգուտ Էջմիածնի վանքին ժողոված գումարների մասին. բայց խոկոյն երևում է. որ այդ բանը ոչ միայն հեշտ կատարելու բան չէ, այլ և անհիմն և անհամապատասխան Էջմիածնի կաթողիկոսի պատուին. որովհետև,—ինչպէս արդարացի կերպով նկատել էր բարձր Ռօզէնը,— եթէ մինչև անգամ այնտեղի հայոց հոգևորականութիւնը առ այս իր պատրաստակամութիւնն էլ ցոյց տայ, դարձեալ նա շատ պիտի դժուարանայ այդպիսի հաշիւ տալու։

«Յովհաննէս կաթողիկոսի երկրորդ պահանջը վերաբերում է այն խնդրին, թէ Պոլսոյ հայերը նախկին սովորութեան համաձայն՝ կընդունեն արդեօք նրան իբրև ընդհանուր հոգևոր պետի, ժամանակ առ ժամանակ՝ բարձրաստիճան հոգևորականների ձեռքով ուղարկելիք հովուապետական օրհնութեան կոնդակները։ Սրա պատասխանը կարող է լինել այն, որ դեռ ևս մօտիկ ժամանակ հայոց պատրիարքները Պոլսում ամենայն յարգանքով Յովհաննէս կաթողիկոսի կոնդակները ընդունեցին։ Ոչ ոք չի արգելում նրան ուղարկել այսուհետև էլ, միայն թէ այդ կոնդակները, այս առթիւ եղած բարձրագոյն կարգադրութեան համեմատ, ուղարկուին ներքին գործոց նախարարութեան միջոցով և իրանց մէջ ոչինչ այնպիսի բան չբովանդակեն, որ կարողանար վիրաւորել այնտեղի հայոց Սինոդի (ազգային ժողով) ինքնավարութիւնը։

«Սրանով կատարած լինելով կայսեր կամ-

քը, ես խոնարհաբար խնդրում եմ ձեզ հաղորդել ինձ այն պատասխանը, որ ձեզ կըտայ Յովհաննէս կաթողիկոսը, որպէսզի յայտնեմ արտաքին գործոց նախարարին՝ համաձայն նրա ցանկութեան»։*)

3

Գոլովինի միջոցաւ՝ Յովհաննէս կաթողիկոսին հաղորդուեցաւ այս կարգադրութիւնը և նա, ի հարկէ յակամայից, իր համաձայնութիւնը տուեց։ Միայն այս անգամ կաթողիկոսը տէրութեան ուշադրութիւնը դարձրեց այն բանի վրայ որ ռուս-տաճկական պատերազմից յետոյ՝ վերջին 12 տարուայ մէջ՝ Թիւրքիոյ զանազան տեղերում բարեպաշտ հայերը կտակներով բաւականաչափ կալուածներ էին ընծայել Էջմիածնին, որոց եկամուտները պատրիարքները ստանալով՝ Աթոռին տեղեկութիւն չէին հաղորդում։

Արդ՝ կաթողիկոսը ուզում էր իմանալ տէրութեան կամքը՝ թէ այս հանգամանքում ինքը ինչպէս վարուի։**)

Կարբեցու այս առաջարկութիւնը Գոլովինը ի պաշտօնէ հաղորդեց ներքին գործոց նախարարին։ Եւ նրա ու արտաքին գործոց նախարարի հետ եղած խորհրդակցութիւնից յետոյ՝ կաթողիկոսի թուղթը՝ ուղարկուեցաւ Կ. Պոլսոյ

*) Акты, VIII, № 226.
**) Акты, IX, № 145.

դեսպանին՝ Հայոց պատրիարքին հասցնելու։

Կաթողիկոսի թուղթը, համաձայն բարձրագոյն նախընթաց հրահանգի, գրուած էր շատ մեղմ, քաղաքավարի լեզուով, շողոքորթութեամբ։

Թուղթը նախ քննել և հաւանել էր Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը, յետոյ քննել և հաւանել էին նաև նախարարները։

Ի վերայ այսր ամենայնի՝ յիշեալ թուղթը (կոնդակը) դեսպանին ուղարկելով՝ նրան ապրսպարուած էր, որ ըստ պատկանելոյն յանձնուի միմիայն այն դէպքում, եթէ տեղական հանգամանքները կշռելուց յետոյ՝ դեսպանատունը ինքըն ևս, իր կողմից, հարկաւոր կը համարէ թղթի յանձնումը։*)

Եւ թուղթը յանձնուեցաւ պատրիարքարանին։—Նշանակում է՝ դեսպան Բուտէնեվը տեղական հանգամանքները լաւ կշռել էր։ Այնքան հրահանգներից և զգուշութիւններից յետոյ՝ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։

Սակայն...բանից դուրս եկաւ, որ կամ Բուտէնեվը միանգամայն անտեղեակ էր այն օրերի տեղական հանգամանքներին և կամ, որ մեզ աւելի հաւանական է թւում, իր ազդեցութեամբ սարքուած որոգայթը՝ իր սպասած հետևանքը չունեցաւ։ Եւ այսպիսով՝ Կ. Պոլսոյ դեսպանատունը այս գործումը, ըստ առածին՝ «յոնքը շինելու տեղակ՝ աչքը հանեց»։

*) Акты, IX, № 147.

ՅԱ.

Այդ միջոցին, այն է 1839 թուի, մարտի 13-ին, Ստեփաննոս Աղաւնի պատրիարքը, որ ինչպէս տեսանք, 8 տարի շարունակ պարացընում էր ռուսական դեսպանին իր դիպլոմատիքական խաղերով,—գահնկէց եղաւ։

Ստեփաննոս պատրիարքի այս գահընկէցութիւնը՝ շատ նման է Ցամարա դեսպանի ժամանակ գահընկէց եղած Յովհաննէս պատրիարքի գահընկէցութեանը, որ ինչպէս իր տեղում տեսանք, Յովսէփ Երկայնաբազուկ Արղութեանի կաթողիկոսացմանը հակառակ էր։ Եւ ինչպէս այն ժամանակ, նմանապէս և այժմ՝ արտաքին քաղաքականութեան ծրագրի իրագործման համար՝ ճակատն ի քիրտ՝ աշխատում էր ինքը հայ ժողովուրդը, նրա կարճամիտ, անգիտակից ամբոխը, թելադրուած մի որևէ «գենապան Իսկէնդերից», կամ մի որևէ «պասմաճի Պետրոսից», կամ վերջապէս մի որևէ թոկից փախած «Գուլաքոզից» (Վարժապետեան Ներսէս պատրիարքի օրով)։

Մեր նպատակից դուրս է Ստեփաննոսի գահընկէցութեան պատմութիւնը անել այստեղ,—այսքանս միայն կասենք, որ երբ այդ գահընկէցութեան առթիւ Կ. Պոլսոյ հայ ժողովուրդը կուսակցութիւնների բաժանուեցաւ և Ստեփաննոս պատրիարքին փոխարինեց Յակոբը,—Մար-

զուանի և Ամասիայի առաջնորդը,—ճիշտ ահա այդ ժամանակ, երբ ժողովրդական կրքերը դեռ չէին հանգստացած, դեսպան Բուտէնեվը շատ յարմար դրսկէ համարեց՝ Յովհաննէս կաթողիկոսի կոնդակը՝ նորընտիր Յակոբ պատրիարքին յանձնել։

Սակայն որքան մեծ եղաւ Բուտէնեվի զարմանքը, երբ լսեց, որ պատրիարքը ստատիկ վիրաբերուած է զգում իրան՝ դեսպանի այս միանգամայն անտեղի միջամտութեամբ՝ Էջմիածնի կաթողիկոսարանի և Կ. Պոլսոյ պատրիարքարանի մէջ։

Եւ իր այս կարծիքը՝ Յակոբ պատրիարքը անմիջապէս և ուղղակի, հաղորդելով Կարբեցուն, բողոքեց թէ՝ նա, բոլորովին զուր տեղը, կարծում է թէ ռուսական դեսպանի միջոցաւ ճնշում գործելով պատրիարքների վրայ՝ կարող է իր ցանկացածին հասնել։

Թէ նրան, իբրև հոգևոր կաթողիկոսի, իբրև հոգևոր պետի վայել չէ դեսպանի ոյժի վրայ յենուել և այլն։

Յակոբ պատրիարքի այդ նամակը և իր պատասխանը այդ նամակին՝ Յովհաննէս կաթողիկոսը ուղարկեց Գոլովինին։—Վերջինս կարդաց, հաւանեց կաթողիկոսի պատասխանը և ուղարկեց ներքին գործոց նոր նախարար՝ կոմս Ստրոգոնովին՝ նրա հեռաւոր տնօրէնութեանը։

Ստանալով Կարբեցու պատասխանը՝ կոմս

Ստրոգոնովը՝ 1840 թ. մայիսի 10-ին՝ Գոլովինին հետևեալ նամակը գրեց։*)

ՅԲ

«Ստանալով անցեալ 1839 թուի օգոստոսի 2-ին ձեր գրութեան հետ՝ Հայոց Յովհաննէս կաթողիկոսի պատասխան-կոնդակը յանուն Կ. Պոլսոյ պատրիարքի թէ այն դրաժների մասին որ ժողովուած են հոռաճկահայերի յօժարակամ նուիրաբերութեամբ յօգուտ Էջմիածնի վանքի, և թէ նոյն հայերի յարաբերութիւնների մասին դէպի Էջմիածնական Աթոռը,—ես խնդրեցի ձեզ, որ այս խնդիրը լաւ կշռելու համար՝ հաղորդէք ինձ Կ. Պոլսոյ պատրիարքի նոյնիսկ բուն նամակը, որին պատասխանն է ծայրագոյն պատրիարք կաթողիկոսի յիշեալ կոնդակը։

«Այդ նամակից, որ բարեհաճել էիք ինձ ուղարկել ի միջի այլոց, երևում է, որ Կ. Պոլսոյ Յակոբ պատրիարքը ձգտում է դադարեցնել Պոլսոյ մեր դեսպանի ձեռքով եղած բոլոր յարաբերութիւնները կաթողիկոսի հետ Էջմիածնի Աթոռի վերաբերութեամբ և մինչև անգամ բոլորովին դադարեցնել մեր դեսպանի միջամտութիւնը այս գործերում։ Առանձին ուշադրութիւն է դարձնում նմանապէս այն հանգամանքի վրայ, որ Բուտէնեվ դեսպանի պահանջողութիւնը թէ իրան յանձնուի Տաճկաստանում.

*) Акты, IX, № 147.

եղած Էջմիածնապատկան բոլոր անշարժ կալուածների ցուցակը՝ վատ տպաւորութիւն է գործել այնտեղի հայերի վրայ և տեղիք է տուել այնպէս մեկնելու, որ իբր թէ կաթողիկոսը կասկածում է՝ չլինի թէ Էջմիածնի Աթոռի եկամուտները տաճկաստանցիք իրանց օգտին են գործադրում։

«Քննելով այս գործի բոլոր հանգամանքները և ի նկատի առնելով որ Կ. Պոլսոյ պատրիարքի պահանջը, որպէսզի Էջմիածնի՝ Տաճկաստանի հետ ունեցած գործերում բոլորովին դադարեն մեր դեսպանի ազդեցութիւնը և միջամտութիւնը,— քաղաքական առարկայ է, որ այս մասին առանձին զգուշութիւն է պահանջում, ես կարևոր համարեցի վերոյշեալ երկու կոնդակների հետ միասին ուղարկել ի տեսութեան արտաքին գործոց նախարարին։ Ընդ սմին ես նրան բացատրեցի, որ եթէ նա, կոմս Նէսէլրոդէն, կշռելով գործին վերաբերեալ բոլոր հանգամանքները, որոնք իրան աւելի մօտիկից են յայտնի, այնպէս կընդունէ, որ կաթողիկոսի այդ պատասխանով կոնդակը մերժում է Ցակոբ պատրիարքի վերոյիշեալ պահանջողութիւնը, և ուրեմն վերահաստատում է մեր տէրութեան ընդունած ձևը՝ Էջմիածնի գործերի վերաբերութեամբ բանակցել Տաճկաստանի հետ մեր դեսպանի ձեռքով, և քանի որ, ըստ իմ կարծեաց, չէ բովանդակում իր մէջ ոչ մի ամբարտաւանութիւն կամ անվայելուչ բան,— թող անօրինէ ուղարկել ըստ պատկանելոյն»։

ՃԳ.

«Առ այդ,—շարունակում է Սարգոնովը,—կոմս Նէսէլրոդէն ծանուցանում է ինձ այժմ թէ առանձին ուշադրութեամբ քննելով Յովհաննէս կաթողիկոսի պատասխանող կոնդակը, որով նա հերքում է Ցակոբ պատրիարքի ձգտումն՝ դադարեցնել իր հետ յարաբերութիւնները կայսերական դեսպանատան միջոցաւ, նա, կոմս Նէսէլրոդէն, համակարծիք է ինձ հետ, որ յիշեալի մէջ ոչինչ ամբարտաւան և պախարակելի բան չկայ։ Բայց քանի որ այդ հայրապետական կոնդակի բովանդակութիւնը և այն հանգամանքները, որ տեղիք են տուել Կ. Պոլսի պատրիարքի պահանջողութեանը, կարող էին վատ ազդեցութիւն ունենալ այդ պատրիարքի Էջմիածնի Աթոռի հետ ունեցած յարաբերութիւնների վրայ, վատն որոյ կոմս Նէսէլրոդէն կարևոր է համարել այս գործում առանձին զգուշութեամբ վարուել։ Այդ պատճառով կաթողիկոսի յիշեալ կոնդակը դեսպան Բուտէնեվին ուղարկելով կոմսը յանձնարարել է նրան յանձնել ըստ պատկանելոյն միայն այն դէպքում, եթէ ըստ տեղական հանգամանքների նա ոչինչ արգելք չի գտնի առ այն։ Հակառակ դէպքում, բաւականանալ միայն վստահեցուցիչ հաւաստիա-

ցնումներով, որպէսզի նուազեցնուի Յակոբ պատրիարքի արտայայտած երկիւղը, հաւաստիացնել նրան, որ Էջմիածնի Աթոռի տաճկահայերի բարձրագոյն հոգևորականութեան վերաբերաբերեալ գործողութիւնների գլխաւոր նպատակը է պահպանել իրանց դաւանութեան միութիւնը, օգուտները և ամրապնդել այն հոգևոր կապը որ ի վաղուց հետէ եղել է նրանց հետ։

Ի հետևումն սրան դեսպան Բուտէնեվը արտաքին գործոց նախարարին հաղորդում է թէ քանի որ փորձով յայտնի է այնտեղի հայ հոգևորականութեան կասկածաւոր բնութիւնը, յիշեալ կոնդակի Կ. Պոլսոյ պատրիարքին յանձնելը, իբաւ որ, կարող էր նրա մէջ նոր երկիւղ և կասկած յարուցանել և դրանով ինասել յաջողութեամբ վերականգնեցրած նրա յարաբերութիւններին դէպի Էջմիածնի Աթոռը։ Այդ պատճառաւ Բուտէնեվն աւելի օգտակար է համարել կոնդակ չյանձնել, այլ յորդորել և համոզել Կ. Պոլսոյ պատրիարքին համեմատ նախորդութեան իրան տուած հրահանգներին։ Ընտրելով այս բանի համար մի հաւատարիմ անձն նա յանձնել է սրան բացատրել Յակոբ պատրիարքին այն բոլոր հանգամանքները, որոնք դեսպանատունը հարկադրել են ուղղակի միջամտելու Էջմիածնի Աթոռի գործերում, և զգուշութեան այն միջոցները, որ դեսպանատունը միշտ գործ է դրել իր բանակցութեան մէջ Կ. Պոլսոյ հայոց հոգևորականութեան հետ,

որպէսզի տեղիք չտայ անհիմն կասկածների և կամ որևիցէ անբաւականութեան տաճկաց տէրութեան կողմից։ Ընդ սմին բացատրուած է նաև, որ կայսերական Արքունիքի միակ նպատակն է, որպէսզի Էջմիածնի Աթոռի և Թիւրքիոյ հայոց մէջ ամրապնդուի այն սիրալիր մթաբանութիւնը և վաղուց ի վեր եղած հոգևոր կապը, որ նրանց փոխադարձ օգուտներն են պահանջում։

«Այս բոլոր բացատրութիւնները Յակովբ պատրիարքն ընդունել է հարկ եղած ուշադրութեամբ և գոհունակութեամբ, որ վրկին հաստատեցրել է թէ մտադիր է անքակտելի պահել իր պարտաւորութիւնները դէպի հայոց ծայրագոյն պատրիարք-կաթողիկոսը։ Այնուհետև դեսպանը, համոզուելով որ անօգուտ կըլինի յիշեալ կոնդակի յանձնելը, թողեց այդ կոնդակը դեսպանատունը պահելու։

ՅԳ.

Յակոբ պատրիարքը հազիւ մէկ ու կէս տարի պաշտօն վարեց և ապա բարկացած ամիրաների վրայ, որ իր հրաւէրներին և յորդորներին չանսալով, ազգային գործերը երեսի վրայ էին թողել,—մի օր պատրիարքարանի դռները կողպեց, հեծաւ ձին և գնաց ս. փրկիչ հիւանդանոց, ասելով «եթէ ես չպիտի

կարողանամ գործ կատարել, էլ ինչու համար պատրիարքարանում մնամ»։

Պատրիարքի այս ցոյցի համբաւը մայրաքաղաքում տարածուելով՝ մեծ շշուկ և աղմուկ առաջացրեց հայ ժողովրդի մէջ, որոնց ձայնը մինչև նախարարութեան հասաւ։

Չորս օրից յետոյ, եպարքոսը հայ ամիրաներից երեք հոգի կանչեց Բ. Դուռը՝ իրողութիւնը և նրա պատճառը ստուգելու համար։

Իրանց անձը անախորժութիւններից ազատելու համար՝ ամիրաները յայտնեցին եպարքոսին իբր թէ, պատրիարքը նորերումս խելագարուել է։ Եւ պատրիարքարանի փակելն ու հիւանդանոց առանձնանալը, նրա մտաւոր կարողութիւնների խանգարման հետևանքն է։

Եպարքոսը Պօլսոյ հայ ջոջերի այդ զբաղարտութիւնը հալած իւղի տեղ ընդունելով, պալատի աւագագոյն անդամի հետ խորհուրդ կազմեց և Սուլթանի հրամանով, Յակոբին հրաժարեցնելով, ըստ ցանկութեան ամիրաների՝ նորից Ստեփան Աղաւնիին պատրիարքական Աթոռի վրայ բազմեցրեց։

Սակայն պատրիարքների այս փոփոխութեամբ, ռուսական դեսպանը դարձեալ ոչինչ չշահեց։

Կ. Պօլսոյ Հայոց պատրիարքարանը իր որոշման հաստատ մնաց և էջմիածնական գործերի վերաբերութեամբ, այլևս ոչինչ բանակցութիւն չունեցաւ ռուսաց դեսպանատան հետ,

մինչև Յովհաննէս կաթողիկոսի մահը, որի անունը ոչ մի անգամ չյիշատակուեցաւ Տաճկաստանի հայ եկեղեցիներում։

Յետ

Այսպէս ուրեմն՝ Կարբեցին, իբրև ամենայն հայոց կաթողիկոս, ոչ միայն իր նպատակին չհասաւ, այլ նա չուզեցաւ նաև ռուս քաղաքավարութիւնից իր ակնկալած ջերմ և անկեղծ աջակցութիւնն ու պաշտպանութիւնը իր ձգտումների և ձեռնարկութիւնների վերաբերմամբ տաճկահայերի հետ։ Եւ Յովհաննէսը ստիպուած էր կրկին, ամեն ինչ տանել։

Աւելի ոչ ոք չէր էլ կարող լինել։

Որովհետև Պասկեվիչը Կարբեցուն կաթողիկոս ընտրելիս ունեցաւ յատկապէս նրա համար, որպէսզի նա մի մունջ հոգու գործիք լինի ռուս կառավարութեան ձեռին։

Նախքան Կարբեցուն ընտրելը՝ Պասկեվիչն իր մտքում արդէն ծրագրել էր, որ պէտք է կոչով ձեռնարկել հայոց եկեղեցու կանոնադրութեան վերակազմութեանը՝ քանի որ դեռ կենդանի է նրա հեղինակը, «որ իր թոյլ ընդունակութեամբ ոչինչ ընդդիմութիւն չի ցոյց տուել մասին (կանոնադրութեան մասին) մտցնելիք թարգմանութիւններին և հարկ եղած կարգ ու կանոններին, այն ինչ երևի թէ հայրապետիս խորին ծերութեան պատճառով

շուտով կը նշանակուի մի ուրիշը, որ շատ կարելի է մի յամառ և ըմբոստ անձնաւորութիւն լինի և այն ժամանակ տէրութեան համար դժուար կը լինի հաշտեցնել հայոց հոգևոր վարչութեան բարեկարգելու մասին իր դիտաւորութիւններն այդպիսի մի քահանայապետի մասնաւոր ձգտումների հետ...։

«Որովհետև հայոց կաթողիկոսի նշանակութիւնը մեծ է իր ազգի աչքում և նրա իրաւասութիւնը տարածւում է ամենուրեք բնակուող հայերի վրայ, վասն որոյ եթէ այդ պաշտօնն ստանձնէ մի ընդհանուր եվ ձեռներեց անձն, որ խորամանկութեան և ըմբոստութեան հակամիտ լինի, այն ժամանակ երբ տէրութիւնը ձեռնամուխ լինի հայոց հոգևոր գործերի վարչութիւնը լաւացնելու, նա կարող է դիմել Տաճկաստանի եւ Պարսկաստանի հայերին և նրանցով դիմադրել ռայտեռի խստամական իշխանութեան բարի դիտաւորութիւններին»։*)

Եւ յիրաւի, Յովհաննէս Կարբեցին Պասկեվիչի այս ցանկութեան համապատասխանող մի կաթողիկոսացու էր, երբ նա, Պասկեվիչը, նախարարին վերոյիշեալ տողերն էր գրում դեռ 1828 թուի նոյեմբեր ամսին։

Եւ կաթողիկոս դառնալով՝ Կարբեցին միանգամայն ապացուցեց, որ Պասկեվիչը իր հաշիւներում սխալուած չի եղել։

*) Акты VII, եր. 262.

32

Եթէ բաղդը չժպտաց Յովհաննէս կաթողիկոսին՝ իր ազդեցութիւնը տաճկահայերի վրայ տարածելու, գէթ ձևի համար էլ է՝ իր անունը նրանց եկեղեցիներում յիշատակել տալու, նրանց մօտ նուիրակներ ուղարկելու և նրանց նուիրաբերութիւնները իր ձեռքը ձգելու համար,—այդ դժխեմ բաղդը նրան չժպտաց նաև Էջմիածնի միաբանութեան աչքումը գոնէ պատշաճաւոր յարգանք ու պատիւ վայելելու, գէթ նրանց համակրութիւնը ժառանգելու։

Առաջին դէպքի անյաջողութիւնը՝ վերագրելի է գլխաւորապէս արտաքին, քաղաքական հանգամանքներին. իսկ վերջին դէպքի անյաջողութիւնը՝ վերագրելի է Կարբեցուն իրան, անձնական անշնորհքութեանը, նրա զանազան ոչ գովելի յատկութիւններին։

Գիտնալով հանդերձ թէ ինքը ինչ ձևով կաթողիկոս ընտրուեցաւ, գիտնալով հանդերձ, որ Ներսէս Աշտարակեցու նման զօրեղ ախոյեան ունի իր հանդէպ կանգնած, գիտնալով որ այդ մեծ ախոյեանի ազդեցիկ կուսակիցները, արքանեակները ամեն ժամ իր շուրջը ման են գալիս և իրան լրտեսում,—Կարբեցին այնքան կարճամիտ, անխոհեմ գտնուեցաւ, որ փոխանակ դրանց շահելու, գոնէ նրանց բորբոքման համար նորանոր առիթներ չտալու, օձումիցը

յետոյ ձեռք առնելով Էջմիածնի և եկեղեցու կառավարութիւնը, սկսեց գործել միահեծան իշխանութեամբ՝ առանց խորհրդակցելու ոչ սինոդականների և ոչ էլ նմանապէս փորձառու, ծերունի Եփրեմի հետ։

Յոյսը միանգամայն կառավարութեան վրայ դրած՝ միմիայն նրա ոյժի վրայ յենուած՝ Յովհաննէս Կաթողիկոսը, հէնց առաջին քայլափոխից՝ մեծ աշառութեամբ սկսեց ղեկավարուել։

Ումից որ որևէ շահ կամ ակնկալութիւն ունէր՝ իրան էր մօտեցնում, սիրաշահում, իսկ իրան չհամակրողներին ոչ միայն արհամարհում, այլ նոյնիսկ հալածում էր։

Յէ

Մենք տեսանք ընթերցող, որ նոր օծուած կաթողիկոսին կառավարութիւնը սկզբում արգելեց, առանց իր նախընթաց թոյլտուութեանը, եպիսկոպոս ձեռնադրելու։

Մինչև այդ իրաւունքն կառավարութիւնից ստանալը՝ Կարբեցին իր կուսակից միաբաններին՝ իսկոյն նուիրակի պաշտօններով Ռուսաստանի զանազան կողմերն ուղարկեց,—այսինքն՝ Թիֆլիզ. Կախէթ, Շուշի, Շամախի, Նուխի, Գանձակ և այլն։

Դրանց նուիրակութեան գլխաւոր շարժառիթը, աւելի ճիշտ ասած, պատրուակը, առաջիկայ գարնան կատարուելիք մեռոնօրհնէքն էր։

Նուիրակները, ինչպէս յայտնի է, Մայր Աթոռի համար նուէրներ հաւաքելիս՝ չեն մոռանում նաև իրանց գրպանը։—Ուրեմն Կարբեցին՝ վարդապետներին նուիրակութեան պաշտօնով, այս ու այն կողմ ուղարկելով, որքան որ մի կողմից Մայր Աթոռին էր շահեցնել ուզում՝ միւս կողմից էլ դրանց, այդ նուիրակներին, իրրև իրան կուսակիցներին։

Երբ կայսեր հաճութեամբ՝ կառավարութիւնը յայտնեց կաթողիկոսին թէ՝ նա կարող է առանց կառավարութեան միջամտութեանը եպիսկոպոսներ ձեռնադրել, — նա, կաթողիկոսը իսկոյն վեց նուիրակ վարդապետներին էլ եպիսկոպոսացրեց։

Ձեռնադրուածները բոլորն էլ Կարբեցու իրան մարդիկն էին և հակա-Ներսիսեաններ։

Այս իրողութիւնը նամանաւանդ մեծ անբաւականութիւն հանեց միաբանութեան մէջ, որոնց թւում աւելի արժանաւորները կային, մանաւանդ որ ընտրութիւնը կատարուել էր կաթողիկոսի անձնական հաճոյքով, առանց Եփրեմի և սինոդականների խորհրդակցութեան։

Այս ձեռնադրութիւնները Յովհաննէսը կատարեց 1832 թուի գարնանը՝ մեռոնօրհնէքից յետոյ։ Նոյն տարուայ ամառը՝ և աշնանը նա ձեռնադրեց Տաճկաստանից եկած հինգ վարդապետների։ Ձեռնադրեց նաև Մոսկուայից՝ Խաչատուր Լազարեանի յանձնարարականով՝ եկած Միքայէլ վարդապետ Սալլաթեանին և իր ազ-

գական մի տեղացի վարդապետին և երկու ուրիշ վարդապետների։

ՅԸ

Այս ձեռնադրութիւնները մի կողմից, և միւս կողմից Կարբեցու ինքնակամ և յաճախ ամբարտաւան կառավարութիւնը, Դանիէլի հաստատած և Եփրեմի վերահաստատած սինոդական կարգ ու կանոնների*) բացարձակ արհամարհումը,— այս ամենը առիթ տուին Էջմիածնի միաբանութեան մէջ՝ Կարբեցու դէմ մի ընդդիմադիր կուսակցութեան կամ խմբի կազմակերպմանը, որ որոշեց բաց ճակատով կռուել կաթողիկոսի դէմ՝ նրան սանձահարելու, թերևս և տապալելու նպատակով։

Այդ ընդդիմադիր խմբի պարագլուխներից մէկն էր Արդուինցի Գրիգոր արքեպիսկոպոսը, որ առաջինը ասպարէզ նետուեցաւ և միայնակ 1833 թուի մայիսի 31-ին կաթողիկոսին մատուցած իր բողոքագրով, և կամ ինչպէս նա ինքը իր թղթի ճակատին գրել է «կարեկցական առաջդեցութեամբ»։

Գրիգոր արքեպիսկոպոսը նշանակուած էր կաթողիկոսական փոխանորդ Երևանի թեմում։ Բայց նա այնտեղ ստացած տենդի պատճառով՝ չկարողացաւ երկար մնալ։ Երևանից Էջմիածին

*) Մենք արդէն ասել ենք, որ այդ սինոդոսի մասին իր տեղում կը խօսենք։

վերադառնալով՝ Գրիգոր արքեպիսկոպոսը կաթողիկոսին խնդրեց, որ իրան նուիրակ ուղարկէ Նոր-Նախիջևան, սակայն Կարբեցին չհամաձայնեց՝ չվստահանալով մի կողմից՝ առանց Ներսիսի թոյլտուութեանը նրա թեմին պատկանող քաղաքը իր կողմից նուիրակ ուղարկելու և միւս կողմից՝ չկամենալով Գրիգոր արքեպիսկոպոսին, իբրև իրան անհամակրողի, Ներսիսի մօտ տեսնելու։

Նուիրակութիւնը չյաջողելուց յետոյ՝ Արդուինցի Գրիգորը՝ իր հիւանդութիւնը պատճառ բերելով՝ խնդրեց թոյլ տալ իրան Կովկասեան հանքային ջրերը գնալ բշժկուելու համար և հոգալ իր ճանապարհածախքը։

Կաթողիկոսը մերժեց և այդ խնդիրը, որովհետև կասկածում էր, թէ Գրիգոր արքեպիսկոպոսը, հիւանդութեան պատրուակով շտապում է Կովկասի լեռները անցնել և Աշտարակեցու մօտ գնալ՝ իրան, կաթողիկոսի դէմ օրոգայթներ լարելու։

Անճարացած՝ Արդուինցին տուեց կաթողիկոսին իր վերոյիշեալ բողոքագիրը, որ մենք ամբողջովին արտագրում ենք ահա։*)

ՅԹ

«Երբ Երևանից հրաժարուելով վերադարձայ ես ս. Աթոռս, այն օրուանից ակնկալած սպա-

*) Դիւան Հ. պատմ. գիրք Ա-Բ. եր. 275-280.

սում էի ս. Աթոռիս, սրբազնամար միաբանութեան և հայրենի ազգի բարեկարգ կառավարութեան, սակայն երկար ժամանակ իմ ամենայն յուսով լուռ մնալս ի դերև անցաւ, իսկ սրբազան Սինոդի առ ձեզ առաջարկութիւնն էլ չկատարուեցաւ և չէ կատարուում

«Աթոռայիններիս հեռաւորներից և մերձաւորներից շատերի նախատակած լինելը՝ ձեզ քաջ յայտնի է։

«Մի կողմ թողնելով Թիֆլիզի շատ տիլուսները, գտնէ մտաբերեցէք այլազուան հոգեւոր գործոց մինիստր Գեր. Բյուզովի գրութիւնը Վրաստանի կուսակալ Բարոն Ռոզէնին և ծերունազարդ սրբազնագոյն հայրապետին, ուր նա գրում է թէ Էջմիածնի վանքի կառավարութիւնը խանգարուած է և այլն։

Եւ ուրիշ շատ բաներ կան, որոնք պատճառ են խանգարման ս. Աթոռիս, միաբանութեան և մեր ազգի այս վերջին տպարաղդութեան, որ տեսնում էի և լսում, բայց յոգուտ հասարակաց ոչինչ հնար չգտնելով՝ ես յուսահատուեցայ և անճարացած ու տիպուած՝ բարուք համարեցի մայիս ամսին այստեղից հրաժեշտ տալ, որի համար և խնդրեցի ձեզանից Բեսարաբիայի նուիրակութիւնը, ապա թէ ոչ՝ ինչու պէտք էր ինձ այսպիսի ցաւագարութեանս ժամանակ նուիրականութեան գործը։

«Եւ երբ այդ էլ չկամեցաք ինձ տալ, դարձեալ խնդրեցի՝ հրաման տալ ինձ գտնէ Եգորս-

կու (Պեատիգորսկ) ջերմուկները գնալ բժշկուելու համար իմ՝ ձեզ յայտնի տկարութիւններիս պատճառով. բայց այդ մասին էլ հրամայեցիք ինձ թէ՝ «այդ ճանապարհը մոռացիր, ես չեմ կամենում քո այստեղից հեռանալը»։

ՅԺ

«Հոգեւոր Տէր — գտնում է Արդուինցին Կարբեցուն—բարեհաճեցէք վերահաստատել սինոդի կարգը և Դանիել ու Եփրեմ սրբազնագոյն հայրապետների պէս հաստատ հիմանց վրայ կապուեցէք նրա հետ և կարճեցէք այլևայլ գրութիւնները։ Յաջորդներից, առաջնորդներից, նուիրակներից և ուրիշներից այն ստացուածները, որոնցից ս. Աթոռին արդիւնք պիտի հասնին, թող ձեր սրբազնագոյն տէրութիւնը սրբազան սինոդի համաձայնութեամբ, ուր և կամի՝ գրի անցկացնէ ու այնպէս ստանայ եկեղեցիների և ժողովրդականների բոլոր արդիւնքն ամբողջովին և ոչ թէ առանձին-առանձին, որպէսզի էլ չասուի թէ՝ այս իմն է և այս Աթոռին. այլ թող բոլորն Աթոռն ստանայ և սինոդի ձեռքով հասցնէ գանձարանին, ինչպէս որ այդ լինում էր վերոյիշեալ հայրապետների ժամանակ։ Նաև եթէ կարելի է, ձեր անձնականն էլ այդպէս անուի, ըստ որում դուք մեր ամենիս գլուխը լինելով, ամեն ինչ ձերն է, վասն որոյ թող ամեն ինչ Աթոռի գանձարանում մնայ և

այնտեղից ծախսուի ձեր բարձագոյն հրամանով և սինոդի գիտութեամբ, որովհետև շատ բան ի զուր կորչում է, ինչպէս դուք էլ գիտէք, և մենք իզուր բամբասում ենք զանազան անձերից ու կամ մէկզմէկ վիրաւորում։ Նոյնպէս բարեհաճեցէք պաշտպանութիւն ցոյց տալ հիւանդացած միաբաններին, որովհետև շատերը, թեթև տկարութեան միջոցին անխնամ մնալով յետոյ անբուժելի են դառնում և դժուարութեամբ են բժշկւում։ Միատեսակ գութ և խնամք ունեցէք գէպի միաբանութիւնը և իւրաքանչիւրին բաւականութիւն տուէք՝ իրանց կարգի և սովորութեան համեմատ պատուելով։ Հոգ տարէք միաբանաց սեղանի կարգաւորութեան մասին և վերացրէք զանազան քրթմնջիւնները։

«Դրանց հետ միասին կարգադրեցէք, որ պատարագիչներն ու աւագերէցները անխափան լինին։ Եթէ կը բարեհաճէք՝ տնօրինեցէք, որ առաջուայ սովորութեամբ, ուխտաւորների անասուններին վանքից երեք օր կերակուր տան, որպէսզի ուխտաւորները փոխանակ գոհ գնալու և բարեհամբաւելու, մի գուցէ վիրաւորուելով երթան ժողովրդին գայթակղեցնեն»։

ՑԺԱ.

«Ըստ իմ պարտականութեան — շարունակում է Գրիգոր արքեպիսկոպոսը — այսքանս բաւական եմ համարում, և ուրիշ աւելի շահաւէտ

և օգտակար կարգադրութիւնները թող ձերդ սրբազնագոյն տէրութիւնը և սրբազան սինոդը ինքն տնօրինէ ամենայն բարեհաճութեամբ և հաստատութեամբ ի յաւիտենական պայծառութիւն ս. Աթոռիս և ի մշանջենաւոր ազատութիւն հայոց ազգիս հոգևորականաց և մարմնաւորականաց զանազան նախատինքներից։ Սակայն եթէ այսուհետև ևս ս. Աթոռիս կառավարութիւնը դարձեալ պէտք է առանց բարեկարգութեան մնայ և բոլոր հոգևորականներս առհասարակ հետզհետէ պէտք է օտարներից մեր կոչման և եկեղեցուն անվայելուչ նախատինքները կրենք, այն ժամանակ ոչ թէ իմ անձին օգուտ բերող նուիրակութեան գործը պատճառ կը բռնեմ Աթոռից հեռանալու համար և ջերմուկները պատճառ կը բերեմ յայտարարուած տկարութիւններից ապաքինուելու համար, կամ թէ ձեր բարձր հրամանով վերոյիշեալ ճանապարհը կը մոռանամ, այլև, առանց նուիրակութեան և արծաթի յետևից ընկնելու, ահաւասիկ սոյն իմ իսկական գրութեամբս խոստանում եմ չմնալ այստեղ, այլ գնալ Աստաբազար, ուր ասում են մի լաւ բժիշկ կայ, որից գուցէ մի դիւրութիւն կը գտնեմ, եթէ չկարողանամ էլ բոլորովին բժշկուիլ։ Մի համարէք այնպէս, որպէս թէ յանդգնութիւն եմ անում սորանով, այլ ընդունեցէք որպէս իսկական ցաւակցութիւն հարազատ և ջերմեռանդ սրտից և սպագայում ձեր սրբազնագոյն տէրութեան սուրբ անուան

յաւիտենական անմահ յիշատակութիւն, իսկ ձեր կենդանութեան օրով մեզ ներկայ եղածներիս իբրև մեծ ուրախութիւն, ըստ այնմ թէ՝ երբ վշտանում է մի անդամը՝ բոլոր անդամները վշտանում են նրա հետ, իսկ եթէ մի անդամը փառաւորւում է, բոլոր անդամներն ուրախանում եմ նրա հետ։

«Ուրեմն՝ եթէ սրանից յետոյ առանց զանցառութեան և կամ օրէցօր յետաձգելու՝ կըբարեհաճէք վերացնել անհամաձայնութիւնները և մի արժանաւոր կառավարութիւն կը հաստատէք ի յաւիտենական պարծանս միաբանութեան և ձեր անուան, այն ժամանակ անձիս ցաւագրութիւն այլևս պատճառ չեմ բերի, այլ ուրախանալով ճշմարիտ բարեկարգութիւն և կառավարութիւն հաստատուելու վրայ՝ երեսս գետնին կը խոնարհեցնեմ և գլուխս կդնեմ ձեր սուրբ ոտների տակ ու սրտիս և հոգուս ուրախութեամբ կը մնամ այստեղ սուրբ Աթոռումն մինչև շնչիս սպառուիլը, համարելով այդ ինձ համար ոչ թէ ցաւագրութիւն, այլ որպէս առողջութիւն կենաց։

«Մնամ ձեր ցանկալի կենաց երկարութեան համար ջերմեռանդ աղօթարար՝ յետին միտքան սրբոյ Աթոռոյս, և խոնարհ ծառայ՝ Արդուինցի Գրիգոր արքեպիսկոպոս։ 1833, մայիսի 31 ի ս. Էջմիածին»։

ՑԺԲ

Յովհաննէս կաթողիկոսը շատ լաւ իմանում էր, որ այս թղթի տակ թէև մի միաբան է ստորագրել, բայց միաբանութեան մեծագոյն մասը, և առաւելապէս հասկացող մասը, համամիտ է այդ թղթի բովանդակութեան հետ։ Ուստի ինչպէս Արդուինցի Գրիգոր արքեպիսկոպոսին, նմանապէս և նրա հետ համամիտ եղողներին չը վշտացնելու և դժգոհութիւններին ուտրտունջներին վերջ տալու նպատակաւ՝ յանձն առաւ որոշ բաւարարութիւն տալ միաբանութեանը, որի պահանջների մէջ առաջին տեղը բռնում էր սինոդոսի վերահաստատութիւնը նոր կաթողիկոսի կողմից, որ իր օծման նախընթաց օրը՝ սովորական երդումն թէև կերաւ, սակայն նոյն երդմնագրի մէջ սինոդոսի վերահաստատման և նրա կանոնների պահպանման համար՝ առանձին խոստում տուած չէր։

Եւ, միաբանութեան կարծիքով, հէնց այդ երդմնաւոր խոստման բացակայութիւնից էր, որ նորընտիր կաթողիկոսը՝ սկզբից և ետ սկսեց արհամարհել և սինոդ և միաբանութիւն։

Այսպէս թէ այնպէս՝ Արդուինցի Գրիգորի վերոյիշեալ թղթի ազդեցութեան տակ՝ Կարբեցին երկրորդ անգամ գրաւոր երդում կերաւ և իր նախկին խոստումների վրայ աւելացրեց նաև հետևեալը։

«...Հաստատ կամքով կամենալով անկորուստ պահպանել իմ նախորդներիս՝ Տէր Դանիէլ և Եփրեմ ամենայն հայոց սրբազնագոյն կաթողիկոսների գրաւոր կանոնադրութեան և բարեկարգութեան գրաւոր շաւիղները, նոցա մտքի, յօժարութեան և կամքի համեմատ՝ ընդունեցի Աթոռիս սրբազան սինոդոսի մինչև այսօր եղած նոյն կարգը։ Բայց որովհետև այս սինոդոսի անդամներից ոմանք մեռնելով պակասեցան, ուստի և նոցա տեղ այս սինոդոսի համահաճ ընտրութեամբ՝ ընտրուեցան միքանի անձինք նոյն խորհրդական անդամակիցներից,* որոնց և վերահաստատեցինք առաջինների կարգում այս մեր գրութեամբ։ Վասն որոյ և իմ ազատական ընտրութեամբ (?!) յանձն առնելով վերոյիշեալ երկու սրբազնագոյն կաթողիկոսների գրքիս 12 – 40 երեսներումը գրածներն սրբազան սինոդոսի և իմ պարտաւորութիւնների լրութեանց համար, ուխտում եմ և երդւում ահաւոր Աստուծոյ և Քրիստոսի ս. Խաչի և Աւետարանի անունով և խոստանում եմ սրանում առաջուց գրած կանոններն ու օրինադրութիւնները պահել ամենահարազատ կամքով, անպղտոր սրտով և իստակ հոգւով անխախտ և անջրելի ամրութեամբ, և առանց բոլորովին շեղուելու նոցա մէջ սահմանադրած օրէնքների և կանոնների համաձայն՝ առանց ակնառութեան, և համեմատ այսուհետև հետզհետէ ինձանից և սրբազան սինոդոսից գրաւոր հաւանական վճիռներով սահ-

մանադրել կանոններով, որոնք կը դրուին ժամանակի հանգամանքների պահանջի համեմատ.

«Եւ ահա՛ ի հաստատութիւն և որպէս իսկական վկայութիւն ապագային իմ ուխտի, երդման և խոստման և խօսքերիս՝ ստորագրում եմ իմ ձեռքովս և արձանացնում իմ սեփական կնիքը դնելով։ Կաթողիկոս ամենայն հայոց Յովհաննէս»։

ՅԺԳ

Բայց կաթողիկոսի այս ստորագրութեամբ միաբանութիւնը չբաւականացաւ։ Այլ համարելով այն իբրև սոսկ մի ձևականութիւն, սկսեցին շուտ-շուտ ժողովուիլ միմեանց հետ և աւելի դրական մի հետևանքի հասնելու մասին խորհել ու գործել։

Հէնց այդ օրերումն էր, այն է՝ 1833 թուի աշնանը, որ Նոր-Նախիջևանից Էջմիածին վերադարձաւ Ներսիսի սիրելի Սիմէօն Բզնունեանց արքեպիսկոպոսը՝ թոփալ (կաղ) մականունով, և անբաւականների պարագլուխ և ղեկավար դարձաւ իսկոյն։

Հաւանական է կարծել որ Սիմէօն եպիսկոպոսի այդ միջոցին Էջմիածին գալը՝ պատահականութիւն չէր, այլ դիտաւորեալ բան, նոյնիսկ Ներսիսի թելադրութեամբ։

Սիմէօն արքեպիսկոպոսը բացի այն, որ Ներսիսի բանակի մարդ էր, այլ նա առանձնա-

պէս վշտացած էր Կարբեցուց որի ընտրութեան, ինչպէս իր տեղում յիշել ենք, մասնակցելու համար Թիֆլիզից չհրաւիրուեցաւ Էջմիածին։ Եւ Կարբեցու երեսից պատուաւոր աքսորի ենթարկուեցաւ դեպի Բեսարաբիա, որտեղ այժմ լսելով Էջմիածնում տեղի ունեցած անցքերն՝ փութաց այնտեղ։

Այսպէս թէ այնպէս՝ Բգնունեանցի գլխով՝ Կարբեցու հակառակորդները շունչ և հոգի առան և նրա շուրջը խմբուելով՝ կանոնաւոր նիստեր սկսեցին կազմել կաթողիկոսի դէմ մաքառելու համար։

Նրանք իրանց միջից ութ հոգի ընտրեցին, որոնք միաբանութեան կողմից՝ կաթողիկոսի հետ բանակցելու էին։

Այդ ութ անձինքն էին՝ 1) Բգնունեանց Սիմէօն արքեպիսկոպոսը, 2) Արդուինցի Գրիգոր արքեպիսկոպոսը, 3) Տէր-Մարուքեանց Նիկողայոս եպիսկոպոսը, 4) Ղրիմցի Յովհաննէս վարդապետը, 5) Տաթեւացի Գէորգ վարդապետը, 6) Արարատեանց Ստեփաննոս վարդապետը, 7) Շահխաթունեանց Յովհաննէս վարդապետը և 8) Շահազիզեանց Մարտիրոս վարդապետը։ Այս ութ անձինքը 1833 թուի նոյեմբերի 16-ին խմբովին ներկայացան կաթողիկոսի և հետևեալ յայտարարութիւնը մատուցին նրան։*)

*) Акты, VIII, եր. 273-276. № 194. և Դիւան Հայոց պատմ. գիրք Ե. եր. Ա-Բ եր. 283-294.

ՅԺԴ

«Յայտնի է, որ ըստ բնական և քաղաքական իրաւանց և Աստուածային օրինաց՝ ամենայն իշխանութեանց նպատակն է ընդհանուր բարին և հասարակութեան բարօրութիւնը, առանց որոյ ոչ մի իշխանութիւն չէ օրինաւոր և չէ հաճելի Աստուծոյն, որպէս Աստուծոյ խօսքերն էլ ահեղալի որոտում են առ ամենայն իշխանաւորս և առաջնորդս ազգաց. «Մխիթարեցէք, մխիթարեցէք իմ ժողովրդեան» ասում է Աստուած և թէ՝ ով Իսրայէլի հովիւներ, մի՞թէ հովիւները իրանց անձերը պիտի արածեցնեն, չէ՞ որ հովիւները իրանց խաշները պէտք է արածեցնեն»։

Եւ սուրբ առաքեալն էլ ասում է՝

«Զգուշացէք անձանց ձերոց և բոլոր հօտիդ՝ որին Հոգին Սուրբ դրել է ձեզ տեսուչ (եպիսկոպոս) Տիրոջ Աստուծոյ այն եկեղեցին (ժողովուրդը) հովուելու, որին ազատեց իր անունով։

«Առ այս նպատակ, երբ սրբազնասուրբ աւագ կաթուղիկոս Եփրեմն իր սաստիկ ծերութեան և ցաւագարութեան պատճառաւ՝ այլևս չէր կարող վարել իր պատրիարքական իշխանութիւնը, հարկ եղաւ ընտրել նոր կաթողիկոս, որպէսզի հասարակաց սպասած բարիքը և մանաւանդ Էջմիածնի վանաց բազմատեսակ գործերը և կարգադրութիւնները, որոնք մնացած

էին մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւն ու հաստատութիւնը կամ օծումը, կաթողանային անարգել առաջ գնալ։ Սակայն մենք տեսանք և արդէն էլ տեսնում ենք, որ ձեր ընտրութիւնից և օծումից յետոյ՝ հասարակած սպասուած բարիքներից, գործերից և կարգադրութիւններից մինչև այսօր էլ ոչ թէ մի բան չառաջացաւ, այլ ընդհակառակը յառաջ եկան բազմաթիւ նորանոր անկարգութիւններ, որ և աւելացան օրէց օր ի վնաս, ի նախատինս և յապաքաղդութիւն ս. Էջմիածնի, սրա հոգևորականութեան, հասարակութեան, ժողովրդի և եկեղեցու։

ՑԺԵ

«Վասն զի ահա սինոդական կառավարութիւնը, որ հասարակ բարեաց աղբիւրն է և որ գրեթէ միայնակ մնացած թոյլ նշույլն է Էջմիածնում եղած բարեկարգ կառավարութեանց, փոխանակ հարկ եղած կազմակերպութիւնն ու հաստատութիւնն ստանալու, ընդհակառակն՝ ձեր օծուելուց յետոյ՝ օր ըստ օրէ խանգարւում է և ընկնում, որ հիմայ հազիւ թէ մնացած լինի նոյն իսկ Սինոդի անունը։ Մենք տեսնում ենք նմանապէս, որ եկեղեցու նախամեծարութեան պատիւը բոլորովին ընկած է և կաթողիկոսական իշխանութեան գօրութիւնն խոպառ թուլացած։ Աթոռի գանձարանը բոլորովին թափուր է գանձից և աղքատացած, և նրա կառավարութիւնն

ամէն մասով պղտորած ու խառնափնթորած։ Էջմիածնի մնացած պարաքերը մինչև այսօր դեռ մնում են առանց վճարուելու, այն ինչ ի նկատի առնելով վանքական հասոյթների չափը՝ չէ կարելի ասել կամ մտածել թէ անհնար է նրանց վճարելը։ Մենք տեսնում ենք նմանապէս, որ Ցաճկաստանում եղած բազմաթիւ հայոց վիճակների Էջմիածնական Աթոռի հոգևոր իշխանութիւնից անջատուելու գլխաւոր պատճառը՝ ցայսօր ոչ միայն չէ վերացել, այլ աւելի մեծացել է և արմատացել, իսկ այս կողմերի վիճակներից շատերի եկեղեցական և հոգևորական կարգերն ու կառավարութիւնն էլ տեսակ տեսակ խանգարմունքների ու անկարգութիւնների մէջ են շաղուած և մինչև այսօր ոչ մի հաստատ ուղղութիւն չեն ստացած։ Աթոռի այլևայլ ներքին և արտաքին պաշտօնատարութեանց և գրեթէ բոլոր գործերի կարգն շփոթուած է և այլայլուած և հասարակաօգուտ գործերում ոչինչ յառաջադիմութիւն չկայ։ Սրան ապացոյց կարող է լինել այսաեղի վարժարանը, որ ըստ ամենայնի անխնամ է թողնուած, առանց որևէ յառաջադիմութեան և պարտուպատշաճ անօրէնութեան։

«Վերջապէս մենք տեսնում ենք նմանապէս, թէ Աթոռի միաբանութիւնը տեսակ-տեսակ զրկանքների է ենթարկուած և շատ անբաւական է. նոյնպէս էլ մեր ամբողջ ազգի հասարակութիւնը գլխովին դժգոհ է ձեզանից և անհնարին

տխրութեան, սուգի և ողբի մէջ է ընկղմուած Աթոռս Հայրապետութեան խրթնութեան և ապերջանկութեան պատճառով, ու շատերի ջերմեռանդութիւնը դէպի այստեղի հոգևորականութիւնը օրէց օր նուազում է և պակասում։

ՅԺԶ

«Սրբազնագոյն Հայրապետ. մենք մտադիր չենք այստեղ քննելու, թէ ի՞նչ եղանակով կամ ո՞ր պիսի արժանաւոր միջոցներով կամ պարագաներով եղաւ ձեր ընտրութիւնը և կամ ամենասուրբ Հայոց պատրիարքական գահ բարձրանալը, այլ որոնում ենք միայն այն՝ թէ ինչն եղաւ պատճառն այս վնասակար անկարգութեանց և խանգարմանց, որոնք յառաջացան ձեր սուրբ օծումից յետոյ։ Եւ ահա որքան որ փնտրում ենք, մի ուրիշ պատճառաւ չենք գտնում, բացի ձեր գործերի հանգամանքները, որոնցից միայն գլխաւորները յառաջ կբերենք այստեղ։

«Նախ որ ձերդ վեհասքանչութիւնը՝ սրբազան օծումն ընդունելուց յետոյ՝ ցանկալով կառավարել անսահման իշխանութեամբ և գործել ամեն ինչ ըստ ձեր անձնական հաճոյից՝ վճռեցիք նախ և առաջ բոլորովին ոչնչացնել Էջմիածնայ վանքի սինոդական կառավարութիւնը հակառակ ձեր նախորդաց կանոնագրութեանցը և ընդդեմ կամաց և ցանկութեան հասարակութեան ամբողջ ազգի։ Այս իսկ պատճառով այժմս այն

(սինոդական) կառավարութիւնը իջած է գրեթէ վերջին աստիճանի ցածր դիրքի և նշանակութեան՝ զրկուած լինելով իր բոլոր իրաւունքներից, զօրութիւնից և իսկական սինոդի միւս առաւելութիւններից։ Ձեր այդ նպատակին ձգտելով դուք ձեր օծման ժամանակ փոխեցիք կաթողիկոսների երդման համար սահմանած իսկական ձևը և կրճատելով դուրս ձգեցիք այն յօդուածները, որ կը վերաբերէին Սինոդին և սինոդական կառավարութեան կանոնների պահպանութեանը դուք չհամաձայնեցիք երդուել ձեր նախորդաց օրինակով, ինչպէս որ հարկն էր, և այդպէս ահա սկսեցիք վարուել և վարուում էք մինչև այսօր ձեր անձնական կամաց և հաճոյից. բոլորովին առանց համաձայնութեան Սինոդի և ամենևին ուշադրութիւն չդարձնելով որևէ օրէնքների կամ կանոնների վրայ։ Եւ սրանից թէ որքան անկարգութիւններ յառաջացան մնացեալ ստորին վարչութեանց մէջ, որքան փոփոխութիւններ ներմուծուեցան վանքական ներքին և արտաքին պաշտօնավարութեանց մէջ և որքան տեսակ-տեսակ խանգարմունքներ յառաջացան— այդ ինքըստինքեան յայտնի է»։

ՅԺԷ

«Երկրորդ՝ ձեր օծման օրից մինչև այսօր ոչ միայն բնաւ ցոյց չտուիք թէ՝ ձեր հովուապետական կառավարութեան մէջ բարեհաճու-

թիւն ունիք դէպի հասարակաց բարին, այլև, որ աւելի ծանր է, ոչ էլ հոգ տարաք և կամ ցանկացաք հասարակաօգուտ գործերում որևէ բարեկարգութիւն մտցնել կամ դէպի յառաջ մղել։

„Ուստի մենք տեսնում ենք, որ մինչև հիմայ ձեր կողմից ոչ մի հասարակաօգուտ գործ, ոչ մի տնօրէնութիւն Աթոռի բարեբաղդութեան համար, ինչպէս որ հարկն է յաջողութիւն չէ գտած, նմանապէս ոչինչ փոփոխութիւն չմըտցրիք կարգ ու կանոնների և կառավարութեան մէջ, ոչ մի վնասակար անկարգութիւն չվերացրիք կամ չուղղեցիք, ոչ մի նոր օգտաւէտ կարգ ու կանոն չսահմանեցիք, որոց անհրաժեշտ պահանջ ունէր Աթոռս՝ մանաւանդ «Հայոց աշխարհի» (Ռուսիոյ հետ) միաւորելուց յետոյ։

«Երրորդ՝ փոխանակ հոգ տանելու, որ Էջմիածնի վանքի պարտքերը վճարուին, և նրա չքաւոր գանձարանը հարստանայ՝ դուք ձգտում էիք առ այն, որ անիծուլ ոսկի եւ արծաթ դիզելով բազմացնեք յատկապէս ձեր սեփական գոյքն ու գանձն եւ հարստացնեք նաեւ ձեր աշխարհական ազգականներին որ մօտիկ բնաւանաց։ Միայն այս նպատակն ունենալով դուք մինչև հիմա էլ ոչ միայն չուզեցիք մի ճիշտ հաշիւ տալ ձեր օծումից առաջ և յետոյ Աթոռի անունով ձեր ստացած արդիւնքների և դումարների մասին, կամ հարկ եղած տնօրէնութիւնն անելու վանքիս եկամուտների և նրա գանձարանը կառավարելու համար, այլ ընդհակառակը միշտ աշխատում էիք ամենայն դէպքում և զանազան անվայել միջոցներով վանքի սեպհական գոյքից եւ գանձարանից էլ մի բան աւելացնել ձեր սեպհական գանձին։ Այն ինչ՝ ձեզ հարկ էր հետևել ձեր նախորդների օրինակին և ձեր սեպհական եկամուտներն անգամ նուիրել Աթոռին, մանաւանդ վանքիս այժմեան նեղ ժամանակում»։

ՅԺԸ

«Չորրորդ՝ ձեր օծելուց յետոյ անմիջապէս ձեռնարկեցիք, ոչ բարի դիտաւորութեամբ՝ նաւաճել և ընկճել Էջմիածնի վանքի ամբողջ միաբանութիւնը և զանազան սպառնալիքներով, հրապարակեցնել նոցա ձեր իշխանութեանը, հրապարակաւ անուանարկելով կամ մեղադրելով նոցանից ոմանց զանազան մտոտի և սուտ պատճառաբանութիւններով։ Եւ ահա այդ ձև ցոյց տուիք ձեզ, որ չէք պաշտպան հասարակաց և մինչև հիմա էլ շատերի հետ թշնամաբար էք վարուում։ Այդ պատճառով իսկ ցայսօր հոգ չը տարաք կարգի դնել հասարակած (միաբանաց) սեղանը, խնամել հիւանդներին և կատարել աղքատ միաբանաց կարիոր պէտքերը, որով զրեթէ ամբողջ միաբանութիւնը, ինչպէս տեսնում ենք, յեսին թշուառութեան մէջ է գտնուում։

«Հինգերորդ՝ ձեր սուրբ օծումից թէ առաջ և թէ յետոյ՝ արժանաւորներից և անար-

ժաններից շատերին դուք անխտիր և միայն անձնական շահերից դրդուած բարձրացրիք զանազան ատիճանների ու պատիւների՝ քահանայութեան, աւագերեցութեան, խաչակրութեան և այլն։ Նմանապէս ձեր ներկայ կոչման մէջ ևս շատ արժանաւորների և անարժանների՝ ըստ ձեր հաճոյից՝ առանց Սինոդի համաձայնութեան և հակառակ եկեղեցական օրինաց ու Էջմիածնի սինոդական կառավարութեան սահմանադրութեանց, ձեռնադրեցիք եպիսկոպոս, որով տեղիք տուիք այն քանին, որ ձեր ոչ մի ձեռնադրութիւնը չէ լինում կամ չէ անցնում առանց անբաւականութեան և շփոթի։ Այս կերպ վարուեցաք դուք նաև մի քանի վարդապետներին ու աբեղաներին յանձնական խաչեր ու փիլոններ տալիս, ինչպէս նաև ումանց կայսերական ողորմութեամբ վարձատրելու միջնորդութիւն անելիս։

«Վեցերորդ՝ դուք ոչինչ փոյթ չունեցաք մինչև այսօր յայսկոյս Կովկասու գտնուած արտաքին վիճակների կանոնաւոր կարգադրութեան մասին, որոնցից շատերի մէջ բազմատեսակ անկարգութիւններ և պակասութիւններ են տեսնում, վասնզի չկայ նոցանում ոչ հոգևորական կառավարութեանց կարգ, ոչ եկեղեցական ծէսերի պատշաճաւոր կարգաւորութիւն, ոչ էլ տարեկան, որպէս հարկն է, ցուցակագրութիւն եկեղեցեաց և եկեղեցական պաշտօնէից, մկրտածների և ամուսնացածների, կենդանիների և

և ննջեցեալների և այլն, որոնց մասին ճիշտ տեղեկութիւն չունենալով՝ ինչպէս կարող էք դուք, ըստ ձեր կամ Էջմիածնի հոգևոր կառավարութեան պարտականութեան, ամեն բանի մասին ծանօթութիւն տալ այլազգաւան հոգևոր գործոց նախարարութեանը»։

ՅԺԹ

«Եօթներորդ՝ դուք չկամեցաք ըստ արժանւոյն յարգել որպէս ձեզանից երիցագունին՝ սրբազնագոյն Եփրեմ կաթողիկոսին և գոնէ նշանաւոր գործերում նրա խրատով և խորհրդով վարուել, ինչպէս որ հարկն էր և ինչպէս պահանջում է ձեր պարտականութիւնը համաձայն թագաւոր կայսեր բարձրագոյն հրովարտակին, և համաձայն այն առաջադրութեան, որ հոգևոր գործոց նախարար Բլուդովը Ն. Կ. Մեծութեան հրամանով գրած է ձեզ 1831 թուի յուլիսի 8-ին № 1345 յատուկ գրութեամբ։ Ընդհակառակը՝ եթէ դուք վարուէիք որպէս հարկ էր և օգուտ քաղէիք նորին սրբազնակատարութեան խրատներից, այն ժամանակ այնքան անկարգութիւններ և վնասներ չէին առաջանալ։

«Ութերորդ նորին սրբազնակատարութեան երիցագոյն կաթողիկոսի հրաժարական գրութեան՝ Էջմիածնի Սինոդի 1830 թուի հոկտեմբերի 15-ին № 137, առած պատասխանների մէջ, ի թիւս միւս սինոդական անդամների, դուք

էլ ստորագրեցիք, ուր յատկապէս այս խօսքերն էր գրուած թէ՝ «Նոր օծեալ կաթողիկոսը կամ (Եփրեմի) յաջորդը ով որ էլ լինի, չէ կարող նստել եկեղեցում հայրապետական աթոռի վրայ, քանի որ ձեր վեհափառութիւնը կենդանի կը լինէ և ձեր բնակարանն էլ մինչև ձեր կենաց վերջը նոյնը կըլինի, ուր որ դուք այժմ բնակւում էք»։ Հակառակ սրան՝ դուք նախ՝ օծուելուց յետոյ՝ հէնց նոյն օրն սկսեցիք նստել եկեղեցում կաթողիկոսական դահի վրայ և երկրորդ՝ քիչ ժամանակից յետոյ այնտեղ հաստատուեցիք, որ նորին սրբազնակատարութիւնն ակամայ ստիպուած էր թողնել իր բնակարանը և չնայելով իր ծերութեանն ու հիւանդութեանը գնալ բնակւել ստորին հասարակաց խցերում, ուր գտնւում է ցայժմ։ Առաջինը (հայրապետական դահի վրայ բազմելը Եփրեմի. կենդանութեամբ) մասամբ պատճառ է հանդիսանում, որով Տաճկաստանի հայք հեռանան, վասնզի եթէ դուք համաձայն վարուէիք Սինոդի որոշման, ինչպէս երբեմն արած է այդ Ղուկաս կաթուղիկոսը, որ ինչպէս շատերին յայտնի է, իր օծումից յետոյ երկար ժամանակ չէր բաղում կաթողիկոսական դահի վրայ,*) այն ժամանակ անշուշտ տաճկա-

*) Այս իրողութիւնը Պերպէրեանը այսպէս է պատմում թէ՝ որովհետև Ղուկասի ընտրութիւնը կատարուեցաւ առանց Կ. Պոլսոյ Զաքարիա պատրիարքի և հայերի դիտութեան, ուստի տաճկահայերի եկեղեցիներում 10 ամիս Ղուկասի անունը չյիշատակուեցաւ (Պատմ. Հայոց Կ. Պոլիս 1871 եր. 4)։ իսկ Մոսրեանցի տուութեանը (Պատմ. կաթող. Էջմիածնի, Մոսկուայ 1876 եր. 8) Ղուկասի անուան յիշատակութիւնը երկու տարի դադարեցրած է եղել եւ Ղուկասը՝ թէև արդէն օծուած՝ սակայն այդ բոլոր ժամանակամիջոցում կաթողիկոսական դահի վրայ չէր նստում, մինչև որ վերջապէս տաճկահայերի հաւանութիւնն ստացաւ։ Ծան. յոդ.

հայք կմիանային վեզ հետ եւ կօգնեին միւս կարևոր պարագաներում. իսկ երկրորդը՝ յայտնի է, որ ոչ միայն ձեզ չէր վայել և մինչև անգամ հակառակ էր իրաւանց, այլ և ընդդէմ թուաց ամենքին, ով որ միայն այդ մասին լսեց և բոլորեքեանք այդ մասին սկսեցին սաստիկ տրրանջալ»։

Ցի

«Զոնց առնելով այստեղ ուրիշ բաները,— շարունակում են 8 անբաւական միաբանները,— և տաւել այնպիսիները, որոնցից յառաջացան մասամբ Աթոռի, Աթոռայիններ, Ազգի և Հայրապետութեան մեծամեծ նախատինքները, ձեր անձի ու անուան վատահամբաւութիւնը և մերաղնեայ ու այլասեռ հասարակութիւններից հեռաւորներ ու մերձաւորների գայթակղութիւնը,— այս ենք եզրակացնում թէ՝ ձեր վեհասրտութեան այդպիսի գործերն ու վարմունքը յայտնի կերպով (թոյլ տուէք ասել, սրբազնագոյն Տէր) չեն վերաբերում եկեղեցու օգտին, և ոչ իսկ տէրութեան օգտին, ըստ որում մինչև այսօր ոչ մի բանով չարդարացրիք Ն. Կ. Մեծութեան համարումը, որ ամենաողորմածա-

բար հաստատեց ձեզ այդ աստիճանի և կոչման մէջ Բարձրագոյն հրովարտակով, և այդքան վերապատուեց ձեզ՝ որպէս գլխոյն ընդհանուր Հայոց ազգի։

«Այդ պատճառով, տեսնելով որ Էջմիածնի վանքի գործերն օր ըստ օրէ վատթարանում են և սուրբ Աթոռն արդէն վտանգի մէջ է, մենք՝ որպէս սրտացաւ որդիք Մօր մեր սուրբ եկեղեցու և սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, և որպէս ցաւակից անդամք մեր ընդհանուր հասարակութեան, պարտ անձին համարեցինք համարձակիլ և ներկայացնել այս բոլորը ձեր վեհաստիճանութեանը առանց որևէ մարդահաճութեան և կրքի, և քաջ գիտնալով, որ ծածկած վէրքերը անբուժելի են մնում, մենք բարուոք համարեցինք բանալ այդ վէրքերը, որպէս զի բժշկուելու դարման գտնուի, քան թէ ծածկել, որպէս զի ապագայում այս բանում մեղաւոր չմնանք, թէ մեր ազգի հասարակութեան առաջ և թէ տէրութեան առաջ, որի հպատակներն ենք։

«Ապա ուրեմն՝ թողնելով միւս կարևոր հանգամանքների ձեզ ներկայացնելը մի ուրիշ առիթի և առանձին թղթով, մենք այստեղ ամենախոնարհաբար խնդրում ենք ձեր վեհաստիճանութիւնից միայն հետևեալը».

ՅԻՍ.

«Նախ՝ որ ձեր վեհաստիճանութիւնը բարեհաճէ համաձայն միաբանութեան ցանկութեան՝ անյապաղ գրել ուր որ հարկն է և խնդրել, որ Ն. Կ. Մեծութեան Բարձրագոյն հրամանով վերահաստատուի Էջմիածնի Աթոռի սինոդական կառավարութիւնը իր բոլոր պարտուպատշաճ կարևոր հանգամանքներով ու պարագաներով և զերցաղով միասին, որով միայն կը զօրանայ և կը թագաւորէ օրէնքը յոգուտ եկեղեցու և ի բարօրութիւն հասարակութեան, որպէս և յոգուտ նոյնիսկ տէրութեան։

«Երկրորդ՝ յարգելով օրէնքները և կանոնները, այսուհետև մի բարեհաճէք ում և իցէ ձեռնադրել եպիսկոպոս ըստ ձեր կամաց և հաճոյից, այլ ըստ խորհրդոյ, ընտրութեան և համաձայնութեան Սինոդի և մեր (միաբանութեան), մինչև որ Սինոդը կանոնաւոր հաստատութիւն կը գտնէ Բարձրագոյն հրամանով, վասնզի մինչև այսօր բաւականին շատ անկարգութիւններ ու շփոթներ են յառաջացել անխիղճ ձեռնադրութեանց պատճառով։ Նոյնպէս երբէք մի բարեհաճէք միջնորդել վարձատրելու ումիցէ կայսերական ողորմութեամբ, առանց Սինոդի և մեր (միաբանութեան) խորհրդի համաձայնութեան։

Երրորդ՝ բարեհաճեցէք օրինաւոր կերպիւ Սինոդին և մեզ պարզ հաշիւ ցոյց տալ այն բոլոր արդիւնքների և գումարների մասին, որ դուք ստացել էք կամ ձեր ս. օծումն ընդունելուց առաջ Թիֆլիզում վիճակաւոր արքեպիսկո-

պոսի պաշտօնով թեմը կառավարելու միջոցին և թէ այնուհետև մինչև այժմ. և

«Զորրորդ՝ առաջարկում ենք մի բան, որ թէպէտ շատ ծանր է լոկ խօսքով յիշատակելն անգամ, որի պատճառով շատ սաստիկ մեծացաւ Աթոռի, Աթոռալինների կաթողիկոսութեան և նոյնիսկ ձեր սրբազնասուրբ անձին անարգանքն ու նախատինքը, վասն որոյ մենք սափրուած ենք նմանապէս ամենախոնարհաբար խնդրել, որ այն կնոջը, որին դուք Թիֆլիզից բերիք և որին մինչև այսօր խնամարկում էք դուք, բարեհաճէք անպատճառ արտաքսել ձեր սարկաւագի հօր տանից և գիւղից (վաղարշապատից), որ նա հեռանայ գնայ իր քաղաքը, Թիֆլիս, կամ ուր որ ինքը կը կամենայ։ Նմանապէս բոլորովին հեռացնել մեզանից և մեր միաբանութիւնից յիշեալ սարկաւագիդ և դուրս քշել, որովհետև հերիք են այնքան վնասներն ու խայտառակութիւնները, որ առաջացան դրա պատճառով։ Ձեր վեհաստիճանութեան բոլորովին չէ վայելում այդպիսի անձանց հովանաւորութիւն ցոյց տալը։

«Ի վերջոյ ամենախոնարհաբար խնդրում ենք, որ ձեր վեհաստիճանութիւնը բարեհաճի գէթ երեք օրուայ ընթացքում շնորհ անել և գրաւոր պատասխան տալ մեզ, որ մենք էլ ըստ այնմ անենք, ինչ որ արժանն է, ապա թէ ոչ, մենք էլ ուր հարկն է այնտեղ կը յայտնենք»։

ՅԻԲ

Էջմիածնի ուխտ միաբանների այս «յայտարարութիւնը», ինչպէս նրա բովանդակութիւնից տեսան ընթերցողները, մի կատաբեալ մեղադրական ակտ է, ուր մի առ մի թուած են Յովհաննէս կաթողիկոսի մեղքերը, որոնց հերքելու նա փաստեր չունէր։ Ճիշտ է դեռ երկու տարուայ իր արած կաթողիկոսութեան ժամանակամիջոցում նա չէր կարող հիմնական այս կամ այն բարեկարգութիւնը մացնել, բայց նրանից այդպիսի բան պահանջող էլ չկար։ Միաբանները նրանից այն էին պահանջում զլխաւորապէս, որ նա սանձ դնէ իր կամայականութիւններին, զօշաքաղութիւններին, որոց մէջ Կարբեցին փայլել սկսեց դեռ կաթողիկոսանալից առաջ, դեռ Թիֆլիզում առաջնորդ եղած ժամանակ։

Կարբեցու այդ ազգ յատկութիւնը այն աստիճանի ակներև էին, որ նոյնիսկ նրան հովանաւորող ժենեռալ Պանգրատեվը, Պասկեվիչին ժամանակաւորապէս փոխարինող, և ապա նոր կառավարչապետ բարձր Ռոզէնը նախարարութիւններին ուղղած իրանց թղթերում անդադար մատնացոյց են լինում կաթողիկոսի ագահութեան, նրա մոլութեան հասած փողասիրութեան վրայ։ Եւ Կարբեցու այդ աչքը ծակող պակասութիւնն եղաւ մասամբ պատճառ, որ

միևնոյն Պանդրատեվն ու Ռոզէնը՝ հովանաւորելով և պաշտպանելով հանդերձ նրան՝ աշխատեցին ջլատել նրա հայրապետական իրաւունքը եպիսկոպոս, վարդապետ և քահանայ ձեռնադրելու նկատմամբ։

Անշուշտ Կարբեցին՝ իբրև Էջմիածնի հինաւուրց միաբան, իր լաւ և վատ կողմերով ռուս պաշտօնեաներից աւելի լաւ յայտնի էր իր միաբանակիցներին, որոնք և քաղաքացիական քաջութիւն ունեցան նրա մեղքերը գրաւորապէս իր առաջը դնել՝ գիտնալով հանդերձ, որ կառավարութիւնը թէ ընտրել տուեց նրան և թէ պաշտպանում է։

ՅԻԳ

Ճիշտ է բողոքարկուները Կարբեցու հակառակորդ բանակիցն էին, բայց դրանով նրանց բողոքը. իբրև ճշմարտութեան ձայն, երբէք իր արժանիքը չէ կորցնում։

Բողոքի այդ ճշմարտութիւնը գիտնալով, գոնէ զգալովն էր, որ Կարբեցին չկարողացաւ հերքել։ Այլ սկսեց այլևայլ ձևական պահանջներ անել, որ բողոքարկուները խմբովին չներկայանան իրան, այլ իրանց միջից մէկին կամ երկուսին ջոկեն իր հետ բանակցելու, որ ինքն ինչ որ արել է՝ խորհրդակցութեամբ է արել, որ իր դրամական հաշիւներն տուել է և նորից պատրաստ է տալու, որ վանքը բարեկարգելու համար ինքն էլ է մտածել և մտածում է։

Այս իմաստով միքանի անգամ դրաւոր բանակցութիւն տեղի ունեցաւ կաթողիկոսի և բողոքարկուների մէջ, բայց վերջիններիս զարթեցրած հարցերից ոչ մինն էլ դրական արդիւնք չունեցաւ, ոչ էլ գէթ, իբրև անտեղի կամ անիրագործելի, հերքուեցաւ, ջրուեցաւ։

Կաթողիկոսը իր պատասխանների մէջ, միշտ տատամսում էր, միշտ ինչպէս ասում են, խօսքը կտուրն էր ձգում։ Եւ չէր կամենում, կամ չէր կարողանում վճռական կամ դրական մի պատասխան տալ բողոքարկուների պահանջներին, նամանաւանդ նրանց այն առաջարկութեանը, որով պահանջում էին Դանիէլ և Եփրեմ կաթողիկոսների հաստատած սինոդական կառավարութեան կանոնադրութիւնը՝ անյապաղ ներկայացնել ի հաստատութիւն Ռուսաց կայսեր։

Բողոքարկուների այս վերջին և դրական պահանջին՝ կաթողիկոսը պատասխանում էր կամ այսպէս՝ «դժուար է թւում մեզ Ն. Կ. Մեծութիւնից խնդրել սինոդոսի վերահաստատութիւնը առանց առաջուց ունենալու նրա կարգադրութեանց օրինաւոր կանոնները»։

Եւ կամ այսպէս՝ «առանց նախանձի և նենգութեան մտածէք և անօրինէք Աթոռիս օգտակարները՝ համաձայն գործի բարեկարգութեան և տէրութեան կառավարութեան ներկայ եղանակին, որն արձանագրելով առաջարկէք մեզ կարգալու և միանգամայն հաւանութիւն տալու»։

Յովհաննէս կաթողիկոսի այս տատամուռ-թեան, այս անորոշութեան ու ձգձգման գաղտնի-քը, ահա թէ ինչով պէտք է բացատրել։

ՀՀ Ազգային գրադարան
NL0418231

6896